

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ



ՀԱՅԵՐԻ  
ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՅՈՒՄԸ

ԼՈՒՌԻԹՅՈՒՆ,  
ԺԻՏՈՒՄ ԵՎ,  
ՈՒՇԼՅՈՒՄ



ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Ա 980

**Թարգմանվել և հրատարակության է պատրաստվել  
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում**

**Թուրքերենից թարգմանեց Մելինե Անումյանը  
Պատասխանատու խմբագիր՝ Հայկազուն Ալվրջյան**

Արջամ Թաներ  
Ա 980 Հայերի բռնի իսլամացումը լռություն, ժխտում և ուրացում /  
Թ. Արջամ.- Եր.: Տիգրան Մեծ, 2016. - 296 էջ:

Թուրք հայտնի պատմաբանի ներկայացվող գիրքը բաղկացած է երեք բաժնից:

Առաջին բաժնում հեղինակը խոսում է Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցով անաչառ կերպով զբաղվելու անհնարինության, այդ գործում իր կրած դժվարությունների և պետության կողմից իր դեմ կազմակերպված հալածանքների մասին:

Երկրորդ բաժնում ներկայացվում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան բանակում ծառայած հայազգի սպա Սարգիս Թորոսյանի հուշերի թուրքերեն հրատարակության շուրջ ծավալված խտրական ու կողմնակալ քննարկումների պատմությունը, որի ընթացքում Թ. Արջամի նկատմամբ դարձյալ սկիզբ է առնում զրպարտությունների, անհիմն մեղադրանքների և հալածանքների մի մեծ արշավ:

Երրորդ բաժնում հեղինակը հարուստ փաստական հենքի վրա ներկայացնում է հայերի բռնի իսլամացման և ուծացման քաղաքականությունը 1915-1918 թթ.: Թ. Արջամը պատմությանը քիչ հայտնի այս երևույթները գնահատում է որպես Հայոց ցեղասպանության կառուցվածքային տարրեր:

ISBN 978-99941-0-738-4

© Թաներ Արջամ, 2016

© Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն, 2016

Թաներ Արջամը մեկը է 1963թ. 1975թ. Թուրքիայում տեղադրել է Միջին Արևելքի ցեղասպանած ճանաչողությունը Տարածագրություն և փոստական կառավարում իսկողորմորդ

**Գիրքը թարգմանվել է  
ժիրայր Նշանյան հիմնադրամի հովանավորությամբ՝  
ի հիշատակ 1915 թ. Հայոց ցեղասպանության  
անմեղ նահապակների**

1977 թ. մարտին փակուղ է Ամբարյան կենտրոնում թաներից: 1978 թ. քաղաքական փոփոխական է դառնել Գերմանիայում: 1988 թ. աշխատանքի է տեսել Համաթուր-Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնն իր երախտագիտությունն է հայտնում Թաներ Արջամին՝ գրքի թարգմանության թույլտվության և ժիրայր Նշանյան հիմնադրամին՝ հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը հովանավորելու համար

**Թաներ Աբչամը** ծնվել է 1953 թ.: 1975 թ. Թուրքիայում ավարտել է Միջին Արևելքի տեխնիկական համալսարանի Տնտեսագիտություն և վարչական կառավարում ֆակուլտետը: 1976 թ. մարտին Թուրքիայում ձերբակալվել է սեփական խմբագրությամբ լույս տեսնող «Հեղափոխական երիտասարդություն» ամսագրում հրապարակված իր հոդվածների պատճառով:



1977 թ. մարտին փախել է Անկարայի կենտրոնական բանտից: 1978 թ. քաղաքական փախստական է դարձել Գերմանիայում: 1988 թ. աշխատանքի է անցել Համբուրգի Սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտում՝ բռնության, մշակույթի և մարդու իրավունքների ոլորտում: Այստեղ կատարված ուսումնասիրությունների արդյունքն են նրա առաջին աշխատությունները՝ «Մարդու իրավունքները և մարքսիզմը» («Այրընթը» հրատարակչություն, 1991), «Բռնությունը և կրփանքը մեր քաղաքական մշակույթում» («Իլեթիշիմ» հրատարակչություն, 1992): 1991 թ. տպագրված «Թուրքական ազգային ինքնությունը և Հայկական հարցը» («Իլեթիշիմ» հրատարակչություն) գրքով սկզբնավորվում են Հայկական հարցի ուղղությամբ նրա ուսումնասիրությունները: 1996 թ. Հաննովերի համալսարանում սոցիոլոգիայի և պատմության գծով պաշտպանել է պրենախոսություն՝ «Թուրքական ազգագրական շարժումը և Հայոց ցեղասպանությունը 1919-1922 թթ. Սրամբուլի ռազմական արտակարգ արյանի դա-

փավարությունների լույսի ներքո»: Սույն աշխարհությունը հրատարակվել է նախ՝ գերմաներով, իսկ հետագայում թուրքերենով՝ «Մարդու իրավունքները և Հայկական հարցը. Միություն և առաջադիմությունից մինչև Ազատագրական պայտերազմ» («Իմ գե» հրատարակչություն) վերնագրով: Նրա՝ 2006 թ. անգլերենով լույս տեսած «Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանավության հարցը» ("Metropolitan Books" հրատարակչություն) գիրքը 2007 թ. Միննեսոտա նահանգում շահել է «Լավագույն գիրք» մրցանակը ուսումնասիրությունների բնագավառում: Աքչամը վերջերս հրատարակել է նաև «Հայկական հարցը լուծված է. պատերազմի փարիներին հայերին ուղղված քաղաքականությունը՝ ըստ օսմանյան փաստաթղթերի» («Իլեթիշիմ» հրատարակչություն, 2008), (Վահագն Տաիրյանի հետ համատեղ կազմած) «Տեղահանություն և կոտորածներ. Ռազմական արտակարգ արյանի արձանագրությունները: Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարությունը 1919-1922 թթ.» (Բիլգի համալսարանի հրատարակչություն, 2008), «1915 թ. գրությունները» («Իլեթիշիմ» հրատարակչություն, 2010) և (Ումիթ Քուրթի հետ համատեղ հեղինակած) «Օրենքների ոգին: Հետևել Ցեղասպանության հերքին Լքյալ գույքի մասին օրենքներում» («Իլեթիշիմ» հրատարակչություն, 2012) գրքերը: Թաներ Աքչամը 2008 թ. ի վեր աշխարհում է ԱՄՆ-ի Կլարկ համալսարանի Պատմության բաժնի Հոլոքոստի և ցեղասպանությունների ուսումնասիրությունների կենտրոնում գործող «Գալուստյան/Մուգար» ամբիոնում:

Չեր առջև գտնվող գիրքը բաղկացած է երեք առանձին հոդվածներից: Առաջինն իմ պատմությունն է: Հայոց ցեղասպանության թեմայով զբաղվելու սկզբից մինչ օրս ինձ կրկին և կրկին նույն հարցն է ուղղվել և շարունակում է տրվել. ինչո՞ւ և ինչպե՞ս եմ սկսել զբաղվել Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ: Ինչպիսի՞ դժվարությունների եմ հանդիպել: Եւ ինչի՞ համար եմ դեռ շարունակում զբաղվել:

Երբ Սաբանջը համալսարանն ինձ հրավիրեց Հրանտ Դինքին նվիրված ամենամյա համաժողովում վերոնշյալ հարցերի վերաբերյալ ելույթ ունենալու, դա մի գեղեցիկ պատահականություն համարեցի և գրեցի այն ամենի մասին, ինչ գլխիս եկել էր 1991 թ. հետո: Ելույթը գրի առա խոսակցության ձևով: Հուսով եմ, որ այն դյուրընթեռնելի կլինի: Գլխավոր միտքն էլ խիստ պարզ է. Թուրքիայում Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվելը մեծ ճնշման տակ կքելու պես մի բան է: Այդ ճնշման մի կողմը որոշում է սույն թեմայի վերաբերյալ լռություն պահանելու մասին կնքված լուռ պայմանագիրը, իսկ մյուսը՝ բնաջնջելու համար պատեհ առիթի սպասող ատելության զգացումը: Մի կողմից՝ կմեկուսացվեք, դուրս կմղվեք այն շրջապատից, որին կարծում էիք, թե պատկանում եք, մյուս կողմից՝ կապրեք սպանվելու ահով: Կզգաք, որ բորոտի պես եք շրջում ձեր սեփական երկրում:

Չափազանցած չեմ լինի, եթե ասեմ, որ մինչև Հրանտ Դինքի սպանությունը շնչահեղձ էի լինում այդ օդում և մթնոլորտում: Հրանտ Դինքի սպանությունը պետության կողմից կազմակերպված և օգտագործված «բնաջնջող ատելության» հետևանքն է: Բայց և այնպես, դժբախտաբար նրա սպանությունից և էրզենթոնի դատավարություններից հետո այդ հեղձուցիչ մթնոլորտը, թեկուզ և մի փոքր, մեղմացավ: Առաջին գլխում կընթերցեք իմ գլխով անցած որոշ դեպքերի՝ իմ պատուհանից՝ վերին աստի-

ճանի անձնական չափանիշով ներկայացված պատմությունը. այսինքն՝ դա տվյալ ժամանակաշրջանի պատմությունը չէ: Կարիք չկա հավելել, որ նույնիսկ միայն իմ գլխին եկած ոչ բոլոր իրադարձություններն են ներկայացրել: Օրինակ՝ այստեղ որևէ տող չեք գտնի Հրանտ Դինքի հետ 1994 թ. հետո իմ ընկերության, ոչ էլ, Հայաստանը ներառյալ, տարբեր երկրներում իմ ունեցած ապրումների մասին: Միայն՝ որոշ անկյունաքարեր... Ներկայացրել են ոչ հայտնի բազմաթիվ դեպքերի՝ իմ դիտանկյունից արված արձանագրումը միայն:

Առաջին գլխում անդրադառնում եմ նաև թերևս մինչև 2010 թ. Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ ամբողջ հասարակության մեջ և, հատկապես, իրենց որպես առաջադեմ, ծախակողմյան և ժողովրդավար բնորոշող շրջանակներում գերիշխող վերաբերմունքին. այդ թեմայի շուրջ լռություն պահպանելու մասին կարծես թե մի լուռ պայմանագիր էր կնքվել, որը ծածկում էր ամբողջ հասարակությունը մի շղարշե վարագույրի պես:

Օսմանյան բանակում ծառայած հայ կապիտան Սարգիս Թորոսյանի հուշերի շուրջ ծավալված բանավեճը հրաշալի օրինակ է այդ վերաբերմունքի վերաբերյալ: Հենց Սարգիս Թորոսյանի հարցն էլ Ձեր ձեռքում գտնվող գրքի երկրորդ գլխի թեման է: Առաջ քաշված տեսակետները ներկայացրել են՝ անմիջականորեն հղում անելով դրանց հեղինակների հոդվածներին: Նպատակս էր ընթերցողին ցույց տալ, թե ինչ տեսակետներ են առաջ քաշվել այդ հարցի վերաբերյալ՝ անկախ հեղինակների անձեռից: Կարող եք իրավամբ հարցնել, թե սույն թեման ինչ կապ ունի «լռության մասին կնքված լուռ պայմանագրի» հետ: Դա ընդունեք որպես բանավեճի վերաբերյալ իմ մեկնաբանությունը:

Բազմաթիվ պատճառներից հատկապես մեկն են ուզում ընդգծել: Նախ՝ այդ հուշերի մասին սկսված քննարկումները ծավալվել են միմիայն Դարդանելի ճակատամարտի շուրջ: Լրիվ մոռացության է մատնվել, որ այդ հուշերի հեղինակը հայ է, և որ նրա ընտանիքն աքսորվել ու բնաջնջվել է: Կարծում եմ, որ

այդ դրությունը հրաշալի օրինակ է, որ կարելի է տալ «լռություն պահպանելու մասին կնքված լուռ պայմանագրի» վերաբերյալ:

Մեկ այլ հրաշալի օրինակ է գրեթե բոլորի կողմից անխոս ընդունված այն տեսակետը, թե կապիտան Թորոսյանը 1916 թ. պաշտոնական ճանապարհներով մուտք է գործել Ամերիկա: Այդ թեզը ոչ միայն մեծ հրճվանքով ընդունվեց հասարակական կարծիքի կողմից, այլև որակվեց որպես Թորոսյանի հուշերի կեղծ լինելու մասին ամենամեծ ապացույց: Այնինչ, եթե գեթ դույզն-ինչ հետաքրքրված լինեին այս թեմայով, կիմանային, որ 1915 թ. ապրիլից սկսած՝ արգելված էր անխտիր բոլոր հայերի՝ օրինական ճանապարհներով օսմանյան սահմաններից դուրս գալը և արտերկրից այնտեղ մուտք գործելը, նույնիսկ նրանց արգելված էր երկրի ներսում ճամփորդելը: Այդ արգելքը վերաբերում էր նաև այն հայերին, ում թույլ էր տրվել իսլամ ընդունել: Ամերիկայի քաղաքացի եղող և իրենց ձեռքին ամերիկյան անձնագիր ունեցող հայերն անգամ աքսորվել ու սպանվել էին: Եթե խնդրո առարկա հարցի վերաբերյալ լռություն պահպանելու մասին լուռ պայմանագիրը չլիներ, ապա թե՛ թեման որոշ չափով կարող էր հայտնի լինել և թե՛ Թորոսյանի՝ 1916 թ. օրինական ճանապարհներով Ամերիկա մուտք գործելու մասին թեզը չէր ընդունվի որպես մի մեծ ճշմարտություն:

Դա էլ մեզ հանգեցնում է սույն գրքի հիմնական ծավալուն գլխին, որում կընթերցեք ճամփորդության վրա 1915 թ. դրված արգելքի, մուսուլման դարձած հայերին տրված հատուկ ինքնության վկայականների մասին: Ինքնին գիրք լինելու հավակնող սույն մեծ հոդվածն անշուշտ սահմանափակված չէ միայն այդ թեմայով և ընդգրկում է շատ ավելի լայն մի ոլորտ:

Թուրքիայում հաճախ քննարկվող մի թեմա կա՝ իսլամացած հայերը: Այնպիսի օր չի լինում, որ որոշ թվով մահմեդականներ չասեն, թե հայկական ծագում ունեն, իսկ այդ փաստն օրակարգ է բերում մի շարք այնպիսի էական հարցեր, ինչպիսիք են՝ հայերի՝ 1915-ին աքսորվելու պատճառները, նրանց՝ մահմեդական

դառնալու հանգամանքները և այլն: Ձեր ձեռքում գտնվող գրքում կգտնեք այդ հարցերի պատասխանները: Ըստ էության 1915-1918 թթ. հայերի բռնի իսլամացումը շատ ավելի մեծամասշտաբ ծրագրի միայն մի մասն էր: Նպատակն իհարկե հայերի՝ որպես մշակութային, սոցիալական և քաղաքական մի ամբողջության ունեցվածքի վերացումն էր, ինչպես որ այդ մասին անկաշկանդ խոստովանել է Թալեաթ փաշան՝ 1916 թ. հոկտեմբերին Ջենալ փաշային հղած իր հեռագրում<sup>1</sup>: Այդ «վերացումը», սակայն, ներառում էր նաև հայերի մի որոշակի հատվածի, հատկապես կանանց և երեխաների ուժացումը: Հոդվածի գլխավոր թեզն այն է, որ բռնի ուժացումը եղել է Հայոց ցեղասպանության անքակտելի մասն ու կառուցվածքային տարրը:

1915-1918 թթ. ընթացքում բռնի ուժացումն իրականացվել էր փոխկապակցված չորս առանձին մեթոդներով: Առաջին՝ որոշակի չափանիշներով ընտրված հայերը բռնի իսլամացվել էին: Երկրորդ՝ հատկապես 12 տարեկան և դրանից փոքր տարիքի երեխաները, որբանոցներում հավաքվելով կամ մահմեդականների տներում ցրվելով, դաստիարակվել էին ըստ թուրք-իսլամական մշակույթի: Երրորդ՝ կանանց և հատկապես մանկամարդ աղջիկներին, բռնի կերպով իսլամացնելուց հետո, ամուսնացրել էին մուսուլման տղամարդկանց հետ: Չորրորդ՝ հատկապես այնպիսի վայրերում, ինչպիսիք էին Սիրիայի Ռաքքան և

1 Թալեաթը 1916 թ. հոկտեմբերի 7-ին Ջենալ փաշային հղած հեռագրում հետևյալ կերպ է մեկնաբանում Սիսի կաթողիկոսին աքսորելու անհրաժեշտությունը. «Ըստ էության՝ Սիսի կաթողիկոսարանի լուծարման և առաջին հերթին կաթողիկոսի՝ այնտեղից հեռացվելու նպատակն ուղղված էր այդ վայրի գոյությունը լիովին վերացնելուն, մի տեղ, որում առկա էին բազմաթիվ հայկական մեծ պատմական և ազգային արժեքներ, և որի վերաբերյալ առաջ էր քաշվում այն թեզը, թե այն իբր հայկական կառավարության ամենավերջին նստավայրն էր եղել»: Տե՛ս BOA/DH.ŞFR., no. 68/215, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր տեսչությունից չորրորդ բանակի հրամանատար Ջենալ փաշային, 1916 թ. հոկտեմբերի 7-ի ամսաթիվը կրող ծածկագիր հեռագիր:

Խառանը, վերաբնակեցվել էին մի խումբ հայեր: Գրքում կարող եք ընթերցել այն մասին, թե այդ գործընթացներից յուրաքանչյուրի ուղղությամբ ինչ քաղաքականություն էր վարում կենտրոնական կառավարությունը, և ինչպիսի ալեկոծումներ էին տեղի ունենում:

Իրականում ուժացումը, որպես ցեղասպանության կառուցվածքային տարր, կիրառվել է ոչ միայն Հայոց, այլև բազմաթիվ այլ ցեղասպանությունների դեպքում: Ամենահայտնի օրինակները նրանք են, որ գործադրվել են Ամերիկայում և Ավստրալիայում՝ բնիկ ժողովուրդների նկատմամբ: Մի կարևոր հարց. եթե ցեղասպանության գործընթացներում բռնի ուժացումն այդչափ էական դեր է կատարում, ապա ինչո՞ւ է այն մինչ օրս անտեսվել, և ինչո՞ւ դրա վերաբերյալ բավարար չափով ուսումնասիրություն չի կատարվել: Հոդվածում նաև փորձել եմ պատասխանել այդ հարցին:

Վերջում ուզում եմ երախտիքի խոսք ասել. եթե Հրանտ Դինք հիմնադրամի կազմակերպած՝ իսլամացած հայերի թեմայով գիտաժողովում ելույթիցս հետո Ահմեթ Իսսելը չպնդեր, թե «Այս զեկուցումդ անպայման պետք է մի մեծ հոդված դարձնես», ապա այս հոդվածը չէր գրվի: Սակայն հնարավորություն չէի ունենա Ահմեթ Իսսելի ցանկությունը կատարել, եթե ամբողջ ամառվա ընթացքում ընկերներս իրենց տների դռները չբացեին իմ առջև, ընկերներ, ում անունները գաղտնի եմ պահում: Սելիմ Դերինգիլը, Ումիթ Քուրթը և Խաչիկ Մուրադյանը ինձ տրամադրեցին իրենց ձեռքի տակ գտնվող փաստաթղթերը, իսկ սիրելի ընկերս՝ Հայկոն, մեծ բժախնդրությամբ թուրքերեն թարգմանեց հայկական տեքստերը: Սիրելի Դիջլեն համակ ուշադրությամբ ընթերցեց և շտկեց գրածս յուրաքանչյուր նախադասություն, ինչպես նաև հանդես եկավ առաջարկություններով, իսկ Քերեմ Ունյուվարի բժախնդիր խմբագրումից հետո գիրքը վերջնական տեսք ստացավ: Շնորհակալ եմ նրանց բոլորին:

Վուսթեր, ԱՄՆ

2014 թ. սեպտեմբերի 1

**ԹՈՒՐԻՔԱՅՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑՈՎ ԶԲԱՂՎԵԼ ԿԱՄ ԼՌՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ ԼՌՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿՔԵԼ ԲՆԱԶՆՋՈՂ  
ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՃՆՇՄԱՆ ՏԱԿՉ**

«Սյուզն Քրեյնը 19-րդ դարի գերմանացի պատմաբան և արխիվագետ Հանս ֆոն Աուֆսեսի մասին գրած իր հրաշալի հոդվածում հետևյալ հարցն է տալիս. «Պատմությունն ինչպե՞ս է «անձնական» դառնում. միայն այն ժամանակ, երբ ղոջ է մնում, թե՛ միայն այն դեպքում, երբ անձնական կյանքերը վերածվում են հանրային գիտելիքի...»: Սյուզն Քրեյնին հետևելով, սակայն մի փոքր տարբեր առումով, ուզում եմ հետևյալ հարցն ուղղել. «Անձնականը երբ է պատմական դառնում: Եթե պատմաբանը... այն անձն է, որի կյանքն անմիջականորեն ձևավորվել է իր ներկայացրած պատմության կողմից, ապա պատմագրության գլխին գալիքը դա է»<sup>3</sup>:

**Ներածություն**

Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ սկսել եմ զբաղվել 1990 թ. ի վեր: 1992 թ. «Իլեթիշիմ» հրատարակչությունը հրատարակեց «Թուրքական ազգային ինքնությունը և Հայկական հարցը» վերնագրով իմ աշխատությունը: Սակայն ինձ համար բեկումնային եղավ 1995 թ. ապրիլ ամիսը: Այդ տարեթվին Երևանում մասնակցեցի մի միջազգային գիտաժողովի

2 Սույն հոդվածը պատրաստվել է Սաբանջը համալսարանի կողմից մայիսի 31-ից հունիսի 2-ը Հրանտ Դինքի թեմայով գործնական աշխատանքների շրջանակներում կազմակերպված «Առերեսվել պատերազմի, ցեղասպանության և քաղաքական բռնության հետ» թեմայով սեմինարի համար: Հոդվածն առավելապես զրվել է ոչ թե որպես գիտական տեքստ, այլ՝ հանրամատչելի լեզվով:

3 James E. Young, "Toward a Received History of the Holocaust", 'History and Theory' հանդես, 36-րդ հատոր, համար 4, 1997 թ. դեկտեմբերի 4, էջ 21-43:

և «1915-ը ցեղասպանություն է» խորագրով ելույթ ունեցա: Աննախադեպ համարվեց, որ ես, որպես թուրք գիտնական, մասնակցեցի Երևանում տեղի ունեցած նման մի գիտաժողովի և ընդունեցի Ցեղասպանությունը, և իմ մասնակցության փաստը, հայկական աշխարհից բացի, մեծ արծագանք գտավ նաև Գերմանիայում<sup>4</sup>: Այնուհետև՝ 1995 թ. հունիսին, Էսենյուրթի քաղաքացետ Գյուրբյուզ Չափանի գլխավորությամբ Երևան տարալրագրողներից բաղկացած մի պատվիրակություն: Այդ այցը օրեր շարունակ Թուրքիայում ամենաշատ քննարկվող թեմաներից մեկը դարձավ<sup>5</sup>:

Ինչպես որ 1878 թ. Բեռլինի կոնգրեսը շրջադարձային կետ է համարվում Հայկական հարցի առաջացման առումով, այնպես էլ ինձ համար թերևս դա էր Հայոց ցեղասպանության թեմայով զբաղվելուս պաշտոնական քաղաքական մեկնարկը: Այդ ամսաթվից սկսած ինձ գտա մի աշխարհում, որը բաղկացած էր՝ ա)

4 Օրինակ՝ իմ մասնակցության թեմային մի ամբողջ էջ է հատկացրել Գերմանիայի ծախ-լիբերալ նշանավոր «Տագեսայտունգ» պարբերականը, տե՛ս «Տագեսայտունգ» 1995 թ. ապրիլի 28-ի համարը:

5 Պատվիրակության մեջ ընդգրկված էին Օրալ Չալըշյարը, Ջենգիզ Չանդարը և «Հյուրիեթ» օրաթերթից Ջեյնեփ Աթըքանը: Բացի այն, որ այդ լրագրողներն իրենց սյունակներում անդադարձան այդ թեմային, մեծ քննարկումների տեղիք տվեց նաև այն փաստը, որ Գյուրբյուզ Չափանը քաղաքացետի պաշտոն էր զբաղում և այդ պաշտոնում գտնվելով էր Ցեղասպանության հուշարձան այցելել: «Հյուրիեթ» օրաթերթն իր առաջին էջերում թեման հրապարակեց «Առաջին թուրքը՝ Ցեղասպանության հուշարձանի մոտ», «Թո՛ղ այս ատելությունը վերջանա» վերնագրերով: Նմանատիպ մի հրապարակում կարող եք գտնել «Հյուրիեթի»՝ 1995 թ. հուլիսի 4-ի համարում: Չափանը հետագայում, երբ որպես մեղադրյալ ներգրավվել է Էրզնեթրնի գործով, այս դատավարության՝ 2011 թ. հունվարի 18-ի նիստում հանդես է եկել ուշագրավ պնդումներով, համաձայն որոնց՝ Երևան այցը կազմակերպվել էր Ամերիկայի ցանկությամբ, և որ պատվիրակության կազմում այնպիսի անձանց ընդգրկումը, ինչպիսիք էին Ջենգիզ Չանդարը և Օրալ Չալըշյարը, առաջարկվել էր Թուրքիայի Ազգային հետախուզության կազմակերպության կողմից: Անշուշտ, առանձին թեմա է նաև, թե որքան վստահելի կարող է լինել «Այդընըք» պարբերականում հրապարակված այդ լուրը: (<http://gizlibelge.wordpress.com/2010/03/16/gurbuz-capanin-ermenistan-itirafi-turkes-baslatti-abd-istedi>)



սիրո և գրկախառնության, բ) հեռու մնալու և չխառնվելու (կամ էլ՝ լուռության մասին լուռ պայմանագրի), գ) ատելության և բնաջնջման ցանկության եռանկյունուց:

**Առաջին անկյունը** «սիրո և գրկախառնության» անկյունն է: Այս արտահայտությունը կիրառում են հատկապես հայկական շրջանակների վարքագիծը ներկայացնելու համար: Հիմա կպատմեն ինձ հետ պատահած մի դեպք, որպեսզի հասկանալի լինի, թե 1990-ական թվականներին հայերի համար ինչ էր նշանակում որևէ թուրքի՝ Ցեղասպանությունը բացահայտ կերպով ընդունելը: Հոլանդացի լրագրող Դորոթի Ֆորման 1997 թ. մի վավերագրական ֆիլմ էր նկարահանել՝ “Wall of Silence” («Լռության պատը») վերնագրով: Հոլանդիայի հեռուստատեսությամբ բազմիցս ցուցադրված այդ փաստագրական ֆիլմում ներկայացված են իմ և Վահագն Տատրյանի կենսագրությունները: Այդ երկու՝ միմյանցից տարբեր պատմություններից հետո ներկայացվում էր, թե ինչպես ենք մենք հանդիպել 1991 թ., և դա ինչ էր նշանակում Հայոց ցեղասպանության հարցի առումով:

Վավերագրական ֆիլմը 1999 թ. ներկայացվեց հայկական սփյուռքին՝ ԱՄՆ-ում և Կանադայում կազմակերպված մի շարք հավաքույթների շրջանակներում<sup>6</sup>: Երբեք չեմ կարող մոռանալ Լոս Անջելեսում կայացած հավաքույթներից մեկը: Վարձվել էր այն հանրահայտ սրահը, որում կազմակերպվում էր հոլիվուդյան «Օսկար» մրցանակաբաշխության արարողությունը: Հազարից ավելի մարդ էր եկել ֆիլմը դիտելու, և ես մի կարճ ելույթ ունեցա: Հանդիսատեսներից շատերը եկել էին՝ սեփական աչքերով

6 Այդ հավաքույթների կազմակերպիչը հայկական Armenian International Magazin ամսագիրն էր: Այստեղ ուզում եմ հիշատակել կազմակերպիչներից միայն երեք հոգու անունները՝ տարիներ շարունակ Հայաստանի արտագործախարար եղած, այժմ՝ Երևանում գործող CIVILITAS կազմակերպության ղեկավար Վարդան Օսկանյանը, ներկայում Հարավային Կալիֆորնիայի համալսարանում Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Սալյաի Ղազարյանը և Օքսֆորդի համալսարանի դասախոս, դոկտոր Հրաչ Զիլինգարյանը:

տեսնելու անհավատալի մի բան՝ թուրք գիտնականի՝ Ցեղասպանությունը ճանաչելու երևույթը: Երբ հավաքույթն ավարտվեց, ինձ համար անհավատալի տեսարաններ եղան: Րոպեներ շարունակ հոտնկայս ծափահարեցին ինձ: Հայերի մեջ կային մարդիկ, ովքեր չէին կարողանում արցունքները զսպել և արտասվում էին: Այնուհետև մի մեծ հերթ գոյացավ: Մարդիկ ընդամենը ուզում էին ձեռքս սեղմել: Նրանց մեջ կային այնպիսիք, ովքեր հուզված ասում էին. «Ուզում եմ Ձեզ դիպչել, որպեսզի հավաստիանամ, որ սա իրականություն է» և դիպչելու թույլտվություն խնդրում: Ապշած էի. մինչ այդ կարծում էի, թե վերին աստիճանի սովորական և այդ առումով՝ բնականոն և ոչ էական գործ են անում: Առաջին անգամ այնտեղ իմացա և հասկացա, թե ինչ խորը իմաստ ուներ իմ արածը հայերի համար: Եթե այդ հանդիպումը չլիներ, բացարձակապես չէի կարողանա իմանալ այդ մասին:

Ուզում եմ հավելել, որ չնայած նմանատիպ բազմաթիվ հանդիպումների՝ հայկական աշխարհը դյուրին կերպով չհավատաց դրան և հեշտ չընդունեց դա: Բավականին երկար տևեց այդ գործընթացը: Ինձ ճանաչող հայ ընկերներս, հատկապես Վահագն Տատրյանը, բավականին երկար ժամանակ հարկադրված եղան հայկական շրջանակներին հավաստիացնել, որ ես պետական գործակալ չեմ, որին ցանկանում են հայկական շրջանակներ խցկել, այլ՝ «լավ թուրք»:

**Երկրորդ անկյունն** այն է, ինչը բնորոշում են «լռություն պահպանելու մասին լուռ պայմանագիր»: Հենց դա էր իրեն որպես առաջադեմ-ձախակողմյան- ժողովրդավար ներկայացնող աշխարհի հիմնական դիրքորոշումը: Այդ շրջանակները, գրեթե ամբողջությամբ, երբեք գոհ չեղան ո՛չ «Հայկական հարցից», ո՛չ էլ այն բանից, որ ես զբաղվում եմ այդ հարցով: Այդ գործը մոռացության մատնվեց: Այդ շրջանակների ընդհանուր դիրքորոշումն էր՝ հեռու մնալ այս հարցից և չխառնվել դրան: Բացառությամբ մի քանիսի՝ մնացած բոլորի վերաբերմունքը, առանց

չափազանցնելու, կարող են ձևակերպել հետևյալ կերպ. «Այս խնդիրը որտեղից մեր գլխին բերեցիր, ուրիշ բանուգործ չունենա»։ Երբեք չեն մոռանա. երբ 1995 թ. Հայոց ցեղասպանության թեմայով Ստամբուլում ունեցա իմ առաջին ելույթը, այն լսելու եկած անձանց թիվը շուրջ 15 հոգի էր, նրանց մեջ էր նաև Հրանտը։ Ավելին՝ այս ժողովի մասին լայնորեն հաղորդվել էր Ստամբուլի բոլոր ծախակողմյան-առաջադեմ շրջանակներին։ Թերևս մինչև 2005 թ. գիտաժողովը, գուցե նույնիսկ մինչև Հրանտի սպանությունը այդ «առաջադեմ-ծախակողմյան» շրջանակների մեջ ինձ միշտ բորոտի պես էի զգում։

**Իսկ եռանկյունու բնաջնջող ատելության անկյունը** հայտնի է, թե որն է։ 1996 թ. սկսած մինչև Էրզնենքոնի գործով հետաքննությունը և ձերբակալությունները դարձա բազմազան հարձակումների, սպառնալիքների և արշավների թիրախ։ Հատկապես Հրանտի սպանությունից հետո «Հյուրիեթ» օրաթերթը հրապարակեց իմ մահվան հրովարտակը, որը պետք է նման լիներ Հրանտի սպանությանը։ Ինչպես որ Հրանտի՝ Սաբիհա Գյոքչենի մասին հողվածը շաբաթներ անց հրապարակվել էր «Հյուրիեթի» առաջնորդողում, նույն ձևով իմ՝ «Ակօսում» տպագրված հողվածներիցս մեկը, դարձյալ մի քանի շաբաթ հետո, հրապարակվեց «Հյուրիեթի» գլխավոր էջում։ Ստամբուլում նորից ու նորից մեղադրանքներ ներկայացվեցին իմ դեմ։ «Հյուրիեթի» արշավից ուղիղ մեկ շաբաթ առաջ էլեկտրոնային հասցեով խիստ սահմուկեցուցիչ մահվան սպառնալիքներ ստացա։ Մինչ այդ էլ էի մահվան սպառնալիքներ ստանում, բայց սա ուրիշ դեպք էր։ Անշուշտ էական էր այն, որ սպառնալիքն ստացվել էր «Հյուրիեթի» արշավի հետ նույն ժամանակաշրջանում, բայց պետք է հավելեմ, որ զգալի էր տարբերությունը։

Երկրորդ և երրորդ անկյունները, այսինքն՝ «լռություն պահպանելու մասին լուռ պայմանագիրը» և «բնաջնջող ատելությունը», ըստ էության, ամփոփում են Թուրքիայի հասարակության՝ Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ որդեգրած

դիրքորոշումը։ Թուրքիայում սույն թեմայով զբաղվելը ենթադրում է այդ դժվարին երկրնտրանքի առջև հայտնվել։ Կենտրոնական թեզս հետևյալն է. թեև բնույթների առումով այս երկու դիրքորոշումները կարող են միմյանցից տարբեր թվալ, սակայն դրանք թուրքական ազգային ինքնության ընդհանուր հակազդեցությունն են՝ ուղղված այն հարցին, որը, թուրք հանրության կարծիքով, բռնի կերպով պարտադրվել է դրսից։ Թուրքական ազգային ինքնությունը Հայոց ցեղասպանության հարցով հետաքրքրվելը համարում է արտաքին աշխարհից եկած և իր գոյությանն ուղղված մի սպառնալիք, չափից դուրս անհանգստանում է այդ հարցից և, ըստ այդմ, ցուցաբերում վերոհիշյալ եռանկյունու երկու հակազդեցությունները։ Սկզբում ավելի բնորոշ էր լուռ մնալը, համարելը, որ այս հարցը գոյություն չունի։ Բնաջնջող ատելությունը միայն 2004 թ. հետո ավելի զգալի կերպով օրակարգ մտավ և Հրանտ Դինքի սպանությամբ իր գագաթնակետին հասավ։ 2008 թ. հետո, հատկապես Էրզնենքոնի գործով հարցաքննության և ձերբակալությունների պատճառով, թվում է, թե այդ բնաջնջող ատելությունն առայժմ կորցրել է իր նշանակությունը։ Անկասկած, Հայոց ցեղասպանության հարցով զբաղվողների դեմ ուղղված ազգայնամուլական հակազդեցությունները կամ ատելության զգացմունքները կշարունակեն գոյություն ունենալ։ Սակայն ես կարծում եմ, որ եթե նրանք պետության մեջ կազմակերպված ուժերի կողմից համակարգված կերպով վերստին չկազմակերպվեն վերևից, ապա այդ ատելությունը մահացու և բնաջնջող հատկանիշ չի ունենա։

Ինչ վերաբերում է լռություն պահպանելու մասին լուռ պայմանագրին, ապա կարծում եմ, որ այն կշարունակի իր գոյությունը։ Օրինակ՝ կողմնակից եմ, որ 2013 թ. ապրիլի 24-ին մի խումբ մտավորականների սկսած՝ Ցեղասպանության հարցում «միմյանց ներելու» մասին քննարկումները բնորոշվեն որպես «լռություն պահպանելու մասին լուռ պայմանագրի» դիրքորոշում։

ման նոր ձև<sup>7</sup>: Պարզ է դառնում, որ մեր որոշ մտավորականներ Հրանտի սպանությամբ, թեկուզ և մակերեսային, այնուամենայնիվ սկսված այդ առերեսումը բավարար համարելով՝ մտածում են, թե հասել ենք հայերի և թուրքերի միջև «փոխադարձ ներման» փուլին: Կարծում եմ՝ «միմյանց ներելու» վերաբերյալ այս մտայնության մասին դեռ շատ ենք խոսելու և քննարկելու այն, բայց այստեղ ուզում եմ թեման առայժմ փակել՝ հետևյալ անատոլիական խոսքով. իրոք շատ ցավալի է, որ մտավորականների մի մասն իրեն այնպես է պահում, իբր թե «շատ քար է կրել, ու մեջքը ցավել է», կամ էլ՝ «քար է նետել, և թևերը հոգնել են»: Կարիք կա՞ ասելու, որ դեռևս ընդամենը ճանապարհի սկզբին ենք:

Իրականում մեկ այլ ճշմարտություն էլ կա, որը ցույց տվեցին «միմյանց ներելու» մասին քննարկումները: Անցյալում թուրք առաջադեմ, ձախակողմյան և ժողովրդավար շրջանակներում գերիշխող՝ Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ լուռ և անտարբեր մնալու պատճառը «սույն թեմայով զբաղվելու ռիսկային և վտանգավոր լինելը» չէր, քանզի այդ նույն շրջանակները 1990-ականներին չէին խուսափում, թեկուզ և թերի ու սխալներով, բայց և այնպես խոսել և դիրքորոշում որդեգրել ավելի ռիսկային համարվող այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսին էր, օրինակ, քրդական հարցը՝ չնայած թուրքական քրեական օրենսգրքի՝ արգելքներ սահմանող բազմաթիվ դրույթներին: Ուշագրավ է, որ մինչև 2004 թ., երբ ընդունվեց 301-րդ հոդվածը, Հայոց ցեղասպանության մասին հոդված գրելը կամ այդ մասին խոսելն արգելող որևէ քրեական հոդված չկար: Այդ պատճառով ես համաձայն չեմ այն տեսակետին, թե այդ տարիներին Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցով զբաղվե-

լը «ռիսկային և վտանգավոր է» եղել: Դա ճիշտ չէ: Այդ դրությունը ի հայտ եկավ թերևս միայն քրեական օրենսգրքում 2004 թ. կատարված փոփոխությամբ և էրգենեքոնի՝ գործուն կազմակերպության վերածվելով:

Այստեղ ուզում եմ ընդգծել մի հանգամանք, որն, ըստ իս, էական է: Արտասահմանում իմ հանդիպած մարդիկ Թուրքիան ճանաչում էին միայն «բնաջնջող ատելության» անկյամբ և այդ պատճառով կարծում, թե իմ արածը մեծ հերոսությունն է: Իսկ ես նրանց աշխատում էի բացատրել, որ իրական խնդիրը ոչ թե «բնաջնջող ատելությունն» է, այլ՝ այն լռության պատը, որին դեմ էի առնում գլխավորապես ձախակողմյան և առաջադեմ շրջանակներում, և որ ամենամեծ խնդիրն անտարբերությունն է:

Այդ պատճառով այս հարցով զբաղվելուս առաջին տարիներին առավելապես կենտրոնացել էի ոչ թե բնաջնջող ատելության և դրանց պատճառների, այլ՝ այդ անտարբերության պատճառների վրա: Պատասխանը, որ կարողացա տալ այն տարիներին, հետևյալն էր. մեզ մոտ գերիշխող է այն մշակույթը, ըստ որի՝ պատմություն դարձած-ավարտված երևույթն անցյալին է պատկանում: Պատմությամբ զբաղվելը պարապ գործ էր. անցածն անցյալ էր համարվում, և պետք էր վաղվան նայել: Ես էլ մտածեցի, թե այդ դեպքում պետք է մարդկանց ցույց տամ, որ պատմության մասին մտածելը և պատմության հետ իրենց առերեսվելն իրականում նշանակում է ներկայով զբաղվել: Այսինքն՝ ձգտում էի «առերեսումն անհրաժեշտ է ներկայիս խնդիրների լուծման համար» տիպի բաներ ասել: Այդ պատճառով էի 1992 թ. «Իլեթիշիմ» հրատարակչության կողմից լույս ընծայված առաջին գրքիս առաջաբանում այդքան մեծ տեղ հատկացրել քրդական հարցին: Մտածել էի, որ եթե կարողանամ ցույց տալ քրդական խնդրի հետ կապը, գուցե մարդիկ կարողանան հասկանալ Հայկական հարցով զբաղվելու անհրաժեշտությունը: Այդ միտքը սխալ չէր, բայց կարծում եմ, որ թերի էր և անբավարար այն պատկերացման համեմատ, որն ունեմ այսօր:

7 Նմանատիպ հոդվածների մի օրինակ կարող է ծառայել Մարգար Եսայանի «1915-ը և միմյանց ներելը» վերնագրով հոդվածը՝ հրատարակված «Թարաֆ» օրաթերթի՝ 2013 թ. ապրիլի 22-ին, տե՛ս <http://www.taraf.com.tr/yazilar/markar-esayan/1915-ve-helallesme/25899/>:

Մի կետ էլ եմ ուզում ընդգծել՝ պատկերն ամբողջացնելու համար: Հայոց ցեղասպանության հարցով զբաղվել սկսելուցս ի վեր շատ մենակություն եմ զգացել, ցավ ապրել և բարդ իրավիճակներ հաղթահարել: Սակայն այդ ժամանակաշրջանում բազմաթիվ լավ մարդկանց եմ ճանաչել և ընկերներ ձեռք բերել: Անգամ կարող եմ պնդել, որ եթե այսօր այս կետին եմ հասել, այդ հարցում խիստ կարևոր դեր է կատարել այդ լավ բարեկամներիս աջակցությունը, անշահախնդիր օգնությունը: Պարտքս եմ համարում շնորհակալություն հայտնել նրանց բոլորին:

### Ինչո՞ւ սկսեցի զբաղվել Հայոց ցեղասպանության հարցով

Ինձ ամենաշատ տրված հարցը հետևյալն է. ինչո՞ւ և ինչպե՞ս սկսեցի զբաղվել Հայոց ցեղասպանության հարցով: Հայոց ցեղասպանության թեման բոլորովին պատահաբար, զուտ պատահականությամբ եմ սկսել ուսումնասիրել: Սակայն երբ դա ասում եմ, էնգելսի «Անտի Դյուրինգ» ստեղծագործությունից հիշում եմ այն միտքը, թե պատահականությունները հայտնի անխուսափելիությունների հետևանքն են: Այսինքն՝ միգուցե այդ թեման ևս ի հայտ է եկել որպես անխուսափելիություն: Ահա պատմությունը, իսկ դուք որոշեք:

Երկար ու ցավագին քաղաքական կյանքս վերջ էր գտել երկու շատ կարևոր ու ցավալի պատմությամբ: 1986 թ. փետրվարի 25-ին Համբուրգում սիրելի ընկերս, եղբայրս՝ Քյուրշաթ Թիմուրօղլուն, սպանվել էր Աբդուլլահ Օջալանի կողմից տրված հրամանով: Դրան հետևեց 1987 թ. հոկտեմբերի 24-ին իմ մանկության և թաղի ընկեր Յավուզ Այդըն Էրոլի մահվան դժբախտ դեպքը. նա զոհվեց տարեդարձիս կապակցությամբ կազմակերպված ճաշկերույթի ժամանակ, երբ «Դև-սոլ» խումբը հարձակվեց մեզ վրա:

Այդ երկու դեպքերի պատճառով քաղաքական կյանքիս վերջակետ դրեցի և սկսեցի որոնել գիտական կարիերաս շարու-

նակելու ուղիները: Արդեն իսկ համալսարանական տարիներիս ամենամեծ երազանքը գիտնական դառնալն էր: Երբ 1976 թ. ձերբակալվեցի, Անգլիայում և Ամերիկայում փնտրում էի այն համալսարանները, որոնց դիմելու էի՝ դոկտորական թեզի համար: Քաղաքական կյանքիս ավարտը որպես հնարավորություն դիտեցի գիտական կյանք սկսելու առումով և 1988 թ. օգոստոսին աշխատանքի անցա Համբուրգի Սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտում: Նյութս կտտանքների պատմությունն էր Թուրքիայում: Այդ ուսումնասիրությունների ժամանակ հանդիպեցի մեր պատմության ընթացքում կատարված մեծ զանգվածային կոտորածների մասին հիշատակությունների: Առաջին անգամ էի ընթերցում և տեղեկանում աբդուլհամիդյան ժամանակաշրջանում հայերի դեմ իրագործված կոտորածների, Ցեղասպանության մասին: Սակայն մտքիս ծայրով իսկ չէր անցնում, որ ուսումնասիրություններ եմ անելու Ցեղասպանության վերաբերյալ:

Մի տիկին կար, ով աշխատում էր ինստիտուտի գրադարանում: Թեև հայկականության հետ ոչ մի կապ չունեի՝ սև խոշոր աչքերից բացի, սակայն ասում էր, թե մայրը լիբանանահայ է եղել: Ինձ անընդհատ ասում էր. «Դու պետք է անպայման ուսումնասիրություններ անես հայկական թեմայով. դա խիստ կարևոր հարց է: Բացի այդ՝ վերին աստիճանի ընկալելի կլինի, որ դու, որպես թուրք, ուսումնասիրում ես այդ հարցը»: Իսկ ես աշխարհին և Թուրքիային նայում էի մի միջին թուրք ծախակողմյանի պատուհանից և լուրջ կասկածներ ու մտավախություններ ունեի այդ նյութի վերաբերյալ: Ժամանակի ընթացքում ըմբռնեցի, որ այդ կասկածներս և մտավախություններս կապված են ոչ թե ծախակողմյան և առաջադեմ, այլ՝ թուրք լինելուս հետ: Հենց այդտեղ էր թաքնված նաև այն հարցի գաղտնիքը, թե ինչու Թուրքիայում չեն զբաղվում Հայոց ցեղասպանության հարցով: Այն անմիջականորեն առնչվում էր թուրքական ազգային ինքնության, մեր՝ որպես այդ ազգի անդամների, մեր իսկ մա-

սին ստեղծած պատկերացման հետ, որովհետև մեր գոյությունը հիմնված էր այդ հարցի առկայության ժխտման վրա:

### Լինել-չլինելու երկընտրանքի առաջ դժվարին դրության մեջ ընկած մի սովորական մտավորական

Հիմա արդեն իմ մեջ եղած այդ կասկածն ու անհանգստությունը բացատրում եմ որպես լինել-չլինելու երկընտրանք: Մեր՝ որպես թուրք ազգի գոյությունը հայերի բնաջնջված լինելը կամ չգոյությունն է: Առանց քննելու մեր գոյության կոորդինատները՝ անհնար է վերացնել մյուսների չգոյության պայմանը: Այլ կերպ ասած՝ հայի վերստին գոյության հնարավորությունը, այսինքն՝ Հայոց ցեղասպանության հարցով զբաղվելը մեզ համար նշանակում է զբաղվել սեփական ինքնությամբ:

Հարցի էությունը հետևյալն է. հանրապետության հիմնադրմամբ, չնայած բոլոր տարբերություններին, հասարակության բոլոր անդամներին՝ աջակողմյան թե ձախակողմյան, աշխարհիկ թե կրոնական, ալևի թե սուննի, անգամ՝ թուրք թե քուրդ, դարձրել ենք համընդհանուր հաղորդակցման ձև, որը որոշել է մեր մտային աշխարհը, մեր մտքի և գոյության կերպը: Ես կողմնակից եմ, որ նաև մեր՝ միմյանց հետ խոսելու սահմանները ևս որոշած այդ համընդհանուր հաղորդակցման ձևը բնորոշենք որպես «հաղորդակցական իրականություն»: Այդ «իրականությունը», որը մի նուրբ շղարշի պես պատել էր հասարակության բոլոր շերտերը, հենց մեր ինքնությունն էր, որը ձևավորում էր մեր զգացմունքները, հավատքի համակարգերը, այսինքն՝ մեր բոլոր սոցիալ-մշակութային հարաբերությունների ցանցը, մեր միասնականությունը և պատկանելիության զգացումը, այսինքն՝ այն ամենը, ինչ մեզ՝ մեզ էր դարձնում: Եւ այդ իրականության մեջ տեղ չկար Հայոց ցեղասպանության հարցի համար: Դրան տեղ բացելու համար հարկավոր էր, որ քննեինք և նորոգեինք մեր ամբողջ գաղափարական համակարգը, մեզ՝ մեզ դարձ-

նող բաները: Պիտի գործի անցնեինք՝ ինչ-որ իմաստով «ինքներս մեզ ժխտելով»: Դա շատ դժվար էր, որովհետև հղի էր մեր առկա ինքնությանը լրջորեն սպառնացող վտանգով: Անհնար էր, որ դա անեինք՝ առանց մի նոր ինքնության հիմնաքարերը դնելուն պատրաստ լինելու, առանց մեր այդ գոյության պայմանները քննելու և հերքելու: Հայոց ցեղասպանության հարցով զբաղվելն այդ առումով սեփական ազգային ինքնությունը վերաշինելու գործընթաց է:

Ահա հենց այդ պատճառներով, որքան այդ խեղճ կինը պնդում էր, այնքան նրան անընդհատ կրկնում էի միջին թուրք մտավորականի, լինի աջակողմյան թե ձախակողմյան, անգիր արած բաները. հարյուրամյակի սկզբին մեծ տերությունները ցանկացել էին մասնատել Օսմանյան պետությունն ու Թուրքիան: Թուրքիան ստեղծվել, հիմնադրվել էր՝ իմպերիալիստների՝ ոչնչացման քաղաքականության դեմ պատերազմելով: Այն դեպքում, երբ մենք անկախության պայքար էինք մղում ընդդեմ գրավման, ոչ մուսուլմանները (հայերը, հույները) համագործակցել էին զավթիչ իմպերիալիստների հետ: Անշուշտ, այդ պատերազմի ժամանակ փոխադարձ սպանություններ էլ էին եղել, նաև հայերի չափ թուրքեր էին սպանվել: Ավելին՝ մենք իրավացի պայքար էինք մղում. պատերազմում էինք գաղութարար գրավման դեմ՝ հանուն մեր ազգային պատվի և անկախության: Իսկ հայերը գործակից էին... և այլն, և այլն: Նման աշխարհում Հայոց ցեղասպանության հարցի համար որևէ տեղ գտնելն, իհարկե, անհնար էր:

Այդ ժամանակ մի կարևոր զարգացում եղավ. 1990 թ. Համբուրգի Սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտը ձեռնարկեց մի մեծ նախագիծ, որը կարողանալու էր ստեղծել բռնության մակրոտեսությունը: Նախագիծը պետք է որոներ այն հարցի պատասխանը, թե արդյոք հնարավոր է 20-րդ դարի երեք մեծ զանգվածային բնաջնջման դեպքերը՝ Օսվենցիմը, Գոլագը և Հիրոսիման, մեկնաբանել մեկ ընդհանուր տեսու-

թյան շրջանակում: Սույն նախագծի մի ենթաբաժինն էլ վերաբերում էր Նյուրնբերգում տեղի ունեցած նացիստների դատավարություններին: Թեման շատ պարզ էր. Նյուրնբերգը, որը նշանակում է պետական գործիչների գործած զանգվածային հանցագործությունները քննած դատավարություն, պետք է բացառությամբ համարել մարդկության պատմության մեջ, շեղում, թե՛ ապագայի մասին մի նոր ծիծեռնակ:

Ընթերցումներիս ժամանակ իմացել էի, որ կապ է եղել Նյուրնբերգյան դատավարությունների և 1919-1921 թթ. Ստամբուլում կայացած դատավարությունների միջև: Թուրքիայում կոտանքների պատմության մասին նախագիծս ավարտելու վրա էի: Գրադարանում աշխատող ընկերուհուս պնդումները օգնել էին հաղթահարել սույն թեմայի նկատմամբ ունեցածս վախն ու անհանգստությունը, և, ի վերջո, սկսեցի ուսումնասիրել 1919-1921 թթ. Ստամբուլի դատավարությունները:

Երբ այսօր հիշում եմ այդ օրերը, ծիծաղում եմ իմ միամտության, անփորձության և անտեղյակության վրա: Սակայն եթե այդ անտեղյակությունը չլիներ, չէի սկսի ուսումնասիրել այդ թեման: Մի խոսքով՝ իմ կողմից սույն հարցի ուսումնասիրության սկիզբը կապված չէ անձնական կյանքի որևէ պատմության կամ թեմայի վերաբերյալ որևէ նախնական տեղեկության հետ: Գուցե չհավատաք ասածիս, բայց մինչև 1988 թ. նույնիսկ տեղյակ էլ չէի, որ Թուրքիայում հայեր են ապրում: Ի վերջո մի շարք այնպիսի պատահականություններ, ինչպիսին էր այն փաստը, որ գործի էի անցել Հոլոքոստի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարող մի ինստիտուտում, ինչպես նաև՝ լիբանանահայ կնոջ պնդումները ինձ մղեցին այդ թեման հետազոտելուն:

Սակայն, ինչպես դա հետո էի իմանալու, այդ ամբողջ պատմությունը, մորս խոսքով ասած, ոչ այլ ինչ էր, քան, մի հոգսից դեռ նոր ազատված, գլուխս մեկ այլ հոգսի տակ դնել: Մայրս դեռ շատ գորովանքով է խոսում. «Տղան, այդչափ հոգսերից, այդքան տանջանքներից, վտանգներից ու գլխացավանքներից

հետո ինչո՞ւ նորից գլուխդ մտցրեցիր այդ փորձանքի մեջ...»:  
Մայրս դա չի ասում որպես Ցեղասպանության մասին իր մասնավոր կարծիք. ամեն մոր պես անհանգստանում է, թե որդու գլխին մի բան կգա, և ցանկանում, որ որդին այլևս հանգիստ ապրի, որդի, որի ողջ լինել-չլինելու մասին լուրերին սպասում է գրեթե ամեն օր:

Պետք է խոստովանեմ՝ Հայոց ցեղասպանության հարցով զբաղվել սկսելուցս հետո գլխիս եկածները մոռացնել չսովեցին քաղաքական կյանքիս ընթացքում ինձ հետ պատահած դեպքերը, անգամ, եթե ավելի բացահայտ ասեմ, դա ավելի դժվար էր այն ժամանակ ունեցածս ապրումներից, քանի որ արհամարիվեցի, դուրս մղվեցի և սևացվեցի այն խմբի կողմից, որի մեջ, կարծում էի, թե ընդգրկված եմ: Իմ ապրումներն իրականում այնպիսի բաներ չէին, որոնց կարող էր սովորական գիտնականը դիմանալ: Այնքան բարդ էր, որ եթե քաղաքական անցյալիս փորձառությունը չլիներ, նույնիսկ կարող է վաղուց լքած լինեի այդ ոլորտը:

Որպես նման մի օրինակ՝ պատմեմ իմ սիրելի ընկերոջ՝ Էլչին Քյուրչաթ Ահլերսի գլխին եկածների մասին: Էլչինը 2000-ական թվականների սկզբին Գերմանիայի Հաննովեր համալսարանում Հայոց ցեղասպանության թեմայով զբաղվել սկսելու համար «Հյուրիեթ» օրաթերթի առաջնորդությամբ ենթարկվեց մի ուժեղ հարձակողական արշավի, իսկ հետագայում, չկարողանալով դիմանալ իր ստացած սպառնալիքներին, որոշ իմաստով վերջակետ դրեց իր գիտական կյանքին: Էլչինը հիմա Մուղլայում ազարակ ունի, որտեղ աճեցնում է օրգանական բանջարեղեն:

## Վերադարձ Թուրքիա:

### միայնության մեջ կամ բորոտի պես դեգերելիս

Ցեղասպանության հարցով զբաղվել սկսելուս պատճառով գլխիս եկածներին անդրադարձը թերևս ճիշտ կլինի սկսել Թուրքիա վերադարձիս պատմությամբ: 16-ամյա աքսորական կյանքիցս հետո՝ 1993 թ. մայիսին, վերադարձա Թուրքիա: Նպատակս մի տեղեկատվական և փաստագրական կենտրոնի հիմնումն էր, որը կկատարեր «1876-1925 թվականներն ընդգրկող՝ օսմանահպատակների բազմակրոն և բազմամշակութային հասարակարգից դեպի ազգային պետություններ անցման գործընթացում եղած հարաբերությունների ընդհանուր և մանրամասն շարադրումը»: Այն ինստիտուտը, որտեղ աշխատում էի, ինձ հատկացրել էր այն ժամանակվա դրամով 200 հազար գերմանական մարկ (ներկայիս դրամով՝ մոտավորապես 200 հազար եվրո) և երաշխավորել, որ ինձ եռամսյա աշխատավարձ կտա:

Նախաձեռնություններիս հետևանքը միայն հիասթափությունն էր եղավ. բոլոր դռները մեկ առ մեկ փակվեցին երեսիս, քանի որ այս գործի մոտիվը «Հայկական հարցն» էր: Առաջարկս նախ ներկայացրել էի Պատմության հիմնադրամին: Այն ժամանակ հիմնադրամի նախագահ Օրհան Սիլիերն ընդունեց առաջարկս՝ ասելով. «Կույրը մեկ աչք էր ուզում, Ալլահը երկուսը տվեց»: Նա ցույց տվեց հիմնադրամի՝ էմինյոնյուում գտնվող շենքի իմ աշխատասենյակը և ծանոթացրեց գոծընկերներիս հետ: Գործս սկսելու համար հարկավոր էր հիմնադրամի ղեկավար խորհրդի պաշտոնական որոշումը, բայց ըստ Սիլիերի՝ դա ընդամենը սովորական ձևականություն էր: Սակայն Պատմության հիմնադրամը մերժեց իմ նախագիծը: Սիլիերը նման որոշում չէր ակնկալում. շատ վշտացավ և սահմանափակվեց՝ ասելով. «Հիմնադրամը դեռևս նման նախագծերի պատրաստ չէ»:

Հետագայում այդ որոշման ընդունման հարցում ազդեցիկ մի անձից իմացա, թե ինչու էր Պատմության հիմնադրամը բացասական որոշում կայացրել: Ըստ նրա՝ «Ազգային պատկանելիու-

թյունը (էթնիսիթեն) մի նորաձև հասկացություն էր, որը վերջին տարիներին հայտնագործել էր Եւրոպան: ԽՍՀՄ-ի փլուզմամբ մի էական կապ ի հայտ եկավ ազգային պատկանելիության հիման վրա արված պատմական մեկնաբանությունների միջև, և նմանատիպ մոդայիկ զբաղմունքներն առանձնապես լուրջ ու գիտական կողմ չունեին և ամբողջությամբ քաղաքական հաշվարկների արդյունք էին: Նա ենթադրում էր, որ Թուրքիայում ազգային պատկանելիության հիմնավորմամբ արվելիք ուսումնասիրությունների համար Եւրոպայից կարող էին մեծ գումարներ հոսել, բայց ինքը գիտեր, թե որն էր դրա հետին պլանը, և արգելելու էր նման նախաձեռնությունները»:

Դրանից հետո փորձեցի մի անկախ հիմնադրամ ստեղծել. մի խումբ երիտասարդ գիտնականներով հավաքվեցինք և 1995 թ. հոկտեմբերին մի մեծ ժողով հրավիրեցինք, որին մասնակցեցին Ստամբուլի համալսարաններում աշխատող 60-ից ավելի սոցիալական գիտությունների մասնագետներ, ներառյալ՝ որոշ բաժինների ղեկավարներ: Ամենաշատը տրված հարցերի մեջ գլխավորը հետևյալն էր՝ «Ինչո՞ւ Պատմության հիմնադրամը մերժեց նման մի նախագիծ»: Այդ ժողովին մասնակցում էին նաև Հիմնադրամի ղեկավար խորհրդի անդամները, այդ թվում՝ իմ նախագծին արգելք եղած անձը, բայց նրանցից ոչ ոք չպատասխանեց այդ հարցին:

Այդ ժողովի արդյունքում կազմվեց այն անձանց անվանացանկը, ովքեր ցանկանում էին աջակցել հիմնադրամ ստեղծելու ձեռնարկին: Գրանցվեցին 10-ից ավելի գիտնականների անուններ, որոնց մեծ մասը երիտասարդ էր: Այդ ժողովից ստացա այն տպավորությունը, թե այնտեղ տիրում էր «Հիմա միայն սա էր պակաս» մթնոլորտը: Թեև գիտնականները կիսաբերան խոսում էին նախագծի կարևոր և անհրաժեշտ լինելու մասին, բայց չէին ցանկանում անմիջականորեն ընդգրկվել նման ձեռնարկում: Անգամ նրանց շրջանում, ովքեր ձևացնում էին, թե աջակցում են այդ նախաձեռնությանը, մի տեսակ տիրապետող

էր «չեղած տեղից լավ է» տրամադրությունը: Օդում միշտ կախված էր «Հայկական հարցը»:

Այդ տարիներին Բիլգի համալսարանը ստեղծման փուլում էր: Լոնդոնի School of Economics-ն ակտիվորեն աջակցում էր այդ համալսարանի հիմնադրմանն ուղղված աշխատանքներին: Այդ համալսարանի՝ Բիլգիում որպես ներկայացուցիչ հանդես եկող անձը տեղեկացել էր իմ կազմակերպած ժողովի և նախածեռնությունների մասին: Նա ինձ հրավիրեց և լրիվ անսպասելի մի հարց տվեց. արդյոք չէ՞ ցանկանա այդ պրոյեկտն իրականացնել Բիլգի համալսարանի շրջանակներում: Զարմանալու հերթն իմն էր... Նա ինձ ներկայացրեց համալսարանի հիմնադիրներին, ովքեր խիստ դրական վերաբերվեցին նախագծին: Նրանք ասացին, որ ցանկանում են իրագործել պրոյեկտը, հենց համալսարանի ստեղծումն ընդունվի: Սկզբունքորեն համաձայնվեցինք: Գործունեությունս սկսելու էի որպես սոցիոլոգիայի բաժնին ենթակա մի փոքր միավոր: Ստեղծվելու էր ոչ միայն պատմության առանցքով մի կենտրոն. նպատակ էր դրվելու, որ համալսարանի գրադարանը հատկապես համալրվի մշակույթի, ինքնության, բռնության և էթնիսիթեի թեմաներով հիմնարար աղբյուրներով: Աշխատանքս սկսելու էի 1996 թ. հոկտեմբերին. նույնիսկ սենյակս պատրաստվեց: Մնում էր, որ հիմնադրամաների գույքի ղեկավար կազմը պաշտոնական որոշում կայացներ: Եւ, ըստ հիմնադիր ընկերների, դա ընդամենը սովորական ձևականություն էր:

Սակայն այդ ձևական որոշումը ևս բացասական եղավ՝ Պատմության հիմնադրամի որոշման նման: Երբ ես հանդիպեցի հիմնադիրների հետ, որպեսզի հաղորդեմ որոշման մասին, նրանք հայտնեցին, թե առաջին անգամ էր, որ իրենց ներկայացրած առաջարկը մերժվում էր հիմնադրամաների գույքի ղեկավար կազմի կողմից: Ժամեր տևած քննարկումներ էին եղել այն հարցի վերաբերյալ, որի լուծումը, կարծում էին, թե հինգ րոպեում էր տրվելու: Նախագծի դեմ հանդես էին եկել հատկապես

գիտնականները: Համալսարանի հիմնադիրներն ինձ ասացին, որ իրենք դեռ համալսարանի ստեղծման փուլում են գտնվում և այս պահին չեն ուզում խնդիրներ ունենալ գիտական շրջանակների հետ: Հայտնեցին, որ իրենք այդ պատճառով հրաժարվել են նախագծից: Այդ որոշումն ինձ համար իսկական ցնցում էր, որովհետև նախքան այդ հանդիպել էի հիմնադրամաների գույքի ղեկավար կազմի գրեթե բոլոր գիտնական անդամների հետ, և նրանք բոլորն էլ ասել էին, թե աջակցում են նախագծին: Նշանակում է, որ այն, ինչ չէին կարողացել դեմքիս ասել, ասել էին ժողովի ժամանակ:

Համալսարանի հիմնադիրները վշտացած էին, անհարմար էին զգում, ինձ խնդրեցին, որ բոլորից անկախ սկսեմ նախագիծը, և խոստացան, որ նյութական աջակցություն և ենթակառուցվածքային հնարավորություններ կապահովեն: Առաջիկայում հնարավոր էր բանակցություններ վարել այն հարցի շուրջ, թե նախագծի շրջանակում ինչպես կարելի էր աշխատել համալսարանի հետ: Ես չընդունեցի այդ առաջարկը: Պատմության հիմնադրամի և Բիլգի համալսարանի հետ ունեցած փորձս մի բան էր սովորեցրել. իրեն «առաջադեմ-ձախակողմյան-ժողովրդավար» համարող Ստամբուլի գիտական աշխարհին ես և այդ նախագիծը պետք չէինք, քանի որ այդ գործն առնչվում էր Հայոց ցեղասպանության հարցի հետ: Խնդիրն այդքան պարզ էր: Բիլգի համալսարանից մի գիտնական ընկերոջս ասածը, ըստ էության, կարող է ամփոփել այս թեման. «Թուրքիայի գիտական աշխարհը վտանգավոր է համարում Հայկական հարցի հետ որևէ առնչություն ունեցող յուրաքանչյուր նախածեռնություն: Սույն նյութով օբյեկտիվ կերպով զբաղվել ցանկացող ոչ մի անձ տեղ չունի թուրքական ակադեմիական աշխարհում»:



## Պետությունը դեր ունեցել է

Որքան էլ որ դժվար լինի, հարկ է պատասխանել այն հարցին, թե իմ նախագիծն արգելելու գործում պետությունը դեր ունեցել է, թե ոչ: Երևի 1996 թ. փետրվարին էր, երբ Գյուրբյուզ Չափանը զանգահարեց ինձ: Իր մշտական կատակային տոնով, մի քիչ էլ հոգուս հետ խաղալով՝ սկսեց ընթերցել «Թաներ Աքչամը ո՞վ է» վերնագրով մի նամակ, որում խոսվում էր այն մասին, թե ես «հայերի մարդն եմ», «թուրքերի թշնամին եմ», իսկ Գյուրբյուզ Չափանի հետ մեր Հայաստան կատարած այցն ու Ցեղասպանության հուշարձանին մատուցած հարգանքի տուրքն էլ ներկայացվում էին որպես այդ թշնամության մի օրինակ: Ինձ պես «հայրենիքի դավաճանի» հետ հարաբերություններ ունեցողներն էլ նախազգուշացվում էին: Նամակից այդ և նմանատիպ այլ նախադասություններ կարդացած Գյուրբյուզն ասել էր, որ այս դեպքին չպետք է չափից դուրս լուրջ վերաբերվել: Ես էլ շատ չէի կարևորել և մոռացության էի տվել: Մի հանդիպման ժամանակ Գյուրբյուզն ինձ նաև ասաց, որ իր արած ուսումնասիրության համաձայն՝ սույն նամակը, ամենայն հավանականությամբ, տարածվել էր Ստամբուլի անվտանգությունում աշխատող և Ազգայնական շարժում կուսակցության անդամ մի խումբ ոստիկանների կողմից:

Երևի 1996 թ. օգոստոսն էր: Բիլգի համալսարանի մի պրոֆեսորի հետ նորից քննարկում էինք այն նախագիծը: Կես կատակ-կես լուրջ ասելով՝ «Ա՛յ Թաներ, էդ Հայկական հարցին ինչո՞ւ խառնվեցիր, ուրիշ զբաղվելու բան չգտա՞ր, աստծու սիրուն», խոսեց իրեն հասած մի նամակի մասին: Իսկ երբ հարցրեցի, թե ինչու ինձ լուր չէր տվել, ասաց. «Նմանատիպ սպառնալիքներ պարունակող նամակներ այնքան հաճախ ենք ստանում, որ բոլորովին չխորացա, մոռացա, վերջացավ-գնաց»: Զարմացել էի, աջ ու ձախ զանգահարեցի և իմացա, որ այդ նամակը ուրիշ շատ անձանց էլ էր ուղարկվել:

1996 թ. նոյեմբերին ձեռք բերեցի այդ նամակը: Իրականում

խոսքը ոչ թե նամակի, այլ մի ամբողջ թղթապանակի մասին էր: Նամակը բաղկացած էր երկու էջից և կրում էր «մի խումբ թուրք մտավորականների» ստորագրությունները: Իսկ թղթապանակում տեղ էին գտել գերմանական «Տագեսցայտունգ» պարբերականում իմ վերաբերյալ հրապարակված մի հոդված, որը մի ամբողջ էջ էր գրավել, «Բազելեր ցայտունգում» տպագրված՝ մի ժողովում ունեցածս ելույթի մասին լուրը, Թեսսա Հոֆմանի գրքերից մեկի վերաբերյալ մի համառոտ հոդվածիս ամբողջական տեքստի թարգմանությունը և «Բիրիքիմ» հանդեսում էթնիկ ու մշակութային ինքնությունների մասին հրապարակված հոդվածս, և նամակում մեջբերումներ էին արված այդ աղբյուրներից: Սույն թղթապանակը ոչ թե Ազգայնական շարժում կուսակցության մի խումբ անդամների, այլ, ավելի շուտ, Հայոց ցեղասպանության հարցով հետաքրքրվող և այս թեմայի շուրջ արտասահմանում տպագրվող հրատարակություններին ի մոտո հետևող մի կենտրոնի գործն էր:

Ըստ նամակի՝ ես «թուրքերի թշնամի հայերին վաճառված» և «Թուրքիայի ու վերջինիս հիմնադիր Աթաթուրքի դեմ ատելություն սերմանող» մեկն էի: Բայց իրականում մի դավանափոխ էի, որը ծնվել էր «պապիկի հարեմում ընդգրկված մի որբ կնոջից»: «Թուրքերին դեմ եղող հայերի հետ համագործակցությանբ», «Թուրքիայում ապրող ինձ պես մի քանի սրիկաների հետ միասին» ծրագրում էի հայերից ստացած գումարներով Ստամբուլում բացել «Թուրքական պատմության նորագույն շրջանին վերաբերող փաստաթղթերի կենտրոն»: Նամակի նպատակն ինձ պես կրոնափոխներին դիմակազերծ անելն էր, հավատափոխներ, ովքեր «չէին քաշվում իրենց դավաճանությունը Թուրքիայում ևս ցուցադրելուց»: Երբեք չեմ կարողանա իմանալ, թե այդ նամակն արդյոք ազդեցություն ունեցել էր իմ նախագծի մերժման հարցում, նամակ, որն, ըստ ամենայնի, ուղարկվել էր նաև Բիլգի համալսարանում ինձ հետ առնչված անձանց:

Այն օրերին, երբ նամակն իմ ձեռքն ընկավ, տեղի էր ունեցել

Սուսուրլուքի դեպքը, որը բացահայտել էր քաղաքականության, մաֆիայի և ոստիկանության միջև անհավատալի հարաբերությունները: Այդ հարցն առնչվում էր նաև Հայոց ցեղասպանության հետ: Մամուլում հերթով ի հայտ եկած հին ազգայնամուլները խոսում էին իրենց այն պարտականությունների մասին, որ իրականացրել էին պետության կողմից հայերի և ԱՍԱԼԱ-ի ղեկավարների դեմ կազմակերպված գործողությունների ժամանակ: Ես սկսեցի անհանգստանալ իմ կյանքի համար: Ամեն առավոտ ավտոմեքենա նստելուց առաջ զննում էի մեքենայի տակը, կափարիչը բարձրացնում և ստուգում էի շարժիչը: Կոնջու ու երեխայիս մեքենա էի նստեցնում շարժիչն աշխատեցնելուց 15-20 վայրկյան հետո միայն: Այդպես ամիսներ անցան:

Այլևս անելիք չէր մնում. հասկացել էի, որ միայն երազանք էր այն հավատս, թե գիտական աշխարհում հնարավոր էր այնպիսի թեկուզ փոքր, բայց անկախ ոլորտի գոյությունը, որի դեպքում հնարավոր կլիներ յուրաքանչյուր թեմայի շուրջ հանգիստ արտահայտվել և այն քննարկել: Այլ ելք չունեի, քան վերստին Գերմանիա վերադառնալը: Երբ մտովի վերադառնում եմ այդ տարիներ և վերլուծում դրանք, հասկանում եմ, որ իմ հանդիպած դժվարությունների մեջ ինձ համար ամենացավալին, ինձ ամենամեծ վիշտը պատճառածն այն միայնության զգացումն էր, որ ունեի այն ժամանակ: Երբեք չեմ կարողանա մոռանալ այն հայացքները, որոնց արժանանում էի բոլոր այն մարդկանց կողմից, ում մոտ բացում էի Հայոց ցեղասպանության թեման. նրանք հայացքով ինձ ասում էին. «Այդ փորձանքը որտեղից բերեցիր մեր գլխին»: Ինձ մի բորոտի պես էի զգում: Այնքան, որ երբ վերադարձա Գերմանիա, մի բավականին մեծ հողված գրեցի այդ մասին, որը, սակայն, ոչ մի տեղ չհրատարակեցի: Հողվածի վերնագիրն էր՝ «Մի միայնության պատմություն կամ բորոտի պես շրջել սեփական երկրում»:

Այդ հողվածի վերջին նախադասությունները կարող են Թուրքիայում ունեցածս արկածի ամփոփումը լինել և կարևոր են այն

ժամանակվա հոգեվիճակս արտացոլելու տեսանկյունից: Դրա համար էլ դրանք մեջ եմ բերում առանց որևէ փոփոխության. «Ներսունս մի բուբ ցավ կա: Այո՛, գիտական աշխարհը դեռևս պատրաստ չէ տաբու հանդիսացող թեմաներով զբաղվող ինձ նման անձանց իր մեջ ընդունելուն... Այդ դրությունն առանձնապես չի փոխում այն, որ իմ սերնդի մարդիկ կարևոր պաշտոններ են զբաղեցնում համալսարաններում, և անգամ իրենք են համալսարան հիմնում... Այդ անձանց հավաքականության նման դիրքորոշումը խիստ ապշեցրեց, շատ վշտացրեց ինձ, մարդիկ, ովքեր ինձ հետ համախոհ էին, որ մեր պատմության բաց և ազատ քննարկումը պարտադիր է, և որոնցից ոմանք նույնիսկ իմ ընկերներն էին: Սակայն ինձ իրավունք չեմ վերապահում նրանց որևէ բան ասել: Ուրեմն՝ դեռ որոշ բաների պատրաստ չենք: Դեռևս «պատմությունը» և «ռիսկը» կողք կողքի են կանգնած... Հիմա Գերմանիայում եմ՝ ներսունս կիսատ մնացած մի զգացումով...»:

### **Լռություն պահպանելու մասին լուռ պայմանագրի գոյության մի քանի ենթադրելի պատճառներ**

Թուրքիայում արկածներիս՝ մեծ հիասթափությամբ ավարտվելը հանգեցրեց մի անխուսափելի հարցի. ինչո՞ւ, ինչի՞ համար էի միայնակ մնացել: Ինչո՞ւ ամենամտերիմներս անգամ հետաքրքրություն չէին ցուցաբերել այդ հարցի նկատմամբ, և ինչո՞ւ էի նույնիսկ ամենամոտ ընկերներիս շրջանում ինձ բորոտի պես զգացել: Երբ վերադարձա, Գերմանիայում ամենաշատը փորձեցի այդ հարցերի պատասխանը որոնել: Գլխավոր հարցս հետևյալն էր. ինչո՞ւ էինք մեր պատմությունը տաբուի վերածել և խուսափում պատմության հետ առերեսվելուց: Որո՞նք էին այդ մեծ անտարբերության պատճառները:

Սկսեցի նաև այդ թեմայով զանազան հողվածներ գրել ու հրապարակել: Ի վիճակի չեմ այստեղ կրկնելու այն ամենը, ինչ

ասացի այնտեղ, բայց ցանկանում եմ ներկայացնել այն մտքերը, որոնք էական եմ համարում. առաջինը հասարակական հիշողության կորուստն էր կամ «ամենգիան»: Կարծում եմ, որ դա երկու պատճառ ունեն: Մենք մի մշակույթ ունեինք, որն անցյալի մասին խոսելը համարում էր վերջը փորփրել կամ վեճ հարուցել: Ավելի նախընտրելի էր լռել և խուսափել դրա մասին խոսելուց, քան խոսել և վիճել դրա շուրջ: Որպես հասարակություն՝ հակված ենք այն մոռանալու և դա համարում ենք մեծ հմտություն: Թուրքերենում պատմության մասին խոսելու անհիմաստության վերաբերյալ տասնյակ խոսքեր կան: Որպես պատմության նկատմամբ անտարբերություն բնութագրվող այդ մշակույթի պատճառներն ինքնին առանձին ուսումնասիրության թեմա են:

Հիշողության կորստի երկրորդ էական պատճառը ձևավորման մեջ գտնվող ազգային ինքնությունն էր: Ֆրանսիացի պատմաբան ու հրապարակախոս Էռնեստ Ռենանի խոսքով՝ որպեսզի որևէ ազգ կարողանար ձևավորվել, հարկավոր էր, որ նրա անցյալը ձևախեղման, աղճատման ենթարկվեր: Մոռացությունը խեղաթյուրված պատմագրության ամենաամուր հիմնաքարն է: 1928 թ. այբուբենի հայտնի բարեփոխումը՝ որպես լեզվի հեղաշրջում, Օսմանյան պետության հետ ամեն տեսակի կապերի խզումը և այլ հանգամանքներ այդ նոր ազգային ինքնության կառուցման հիմնաքարը դարձան:

Պատմության հետ առերեսման վախի մյուս պատճառներից եմ համարում նաև այն ահը, թե եթե ընդունենք, որ որոշ բաներ եղել են, ապա «կմեղադրվենք» բացահայտված հանցագործությունների համար և, հետևաբար, «կդատապարտվենք»: Անում էինք այն ամենը, ինչ կաներ որևէ վատ բանի մեջ մեղադրվող կամ դրա մասին իմացող ամեն մի մարդ. լռում էինք, չէինք խոսում այդ մասին և ժխտում դա: Մեկ այլ՝ խիստ էական գործոն էր այն մտավախությունը, թե եթե սկսեմ խոսել Հայոց ցեղասպանության մասին, ապա կբացահայտվի այն փաստը, որ այն

անձինք, ում համարում ենք մեր ազգային պետության հիմնադիրներ, մեր ազգային առաջնորդների զգալի մասը մասնակցել են հայերի կոտորածներին և հարստացել հայերի ունեցվածքը կողոպտելու միջոցով: Ազգային հերոսներին որպես մարդասպան ու գող որակելը լինելու բան չէր: Մի վերջին պատճառ էլ, անշուշտ, այն անորոշությունն էր, թե եթե Հայկական հարցով սկսենք, որտեղ պիտի կանգ առնենք: Փաստ էր, որ պատմության ընթացքում գործված հանցանքները նման էին մի անհատակ ջրհորի...

Ակնհայտ է, որ այստեղ ներկայացված պատճառներն անմիջականորեն առնչվում էին թուրքական ազգային ինքնության հետ: Այս թեման քննարկելու առջև եղած ամենամեծ արգելքը մեր ազգային ինքնության ստեղծած կերպը և դրա հետևանքով առաջացած մեր մտային աշխարհն էր, հատկապես որպես ազգ մեր ունեցած համերաշխության և միասնականության զգացումը: Վերոնշյալները կարող են 1990-ականների սկզբներին սույն թեմայի շուրջ գրածներիս խորագրերը համարվել:

Ինչպես վերևում էլ նշեցի, ես հասել եմ այն կետին, որ կողմ եմ, որպեսզի այս խնդիրը քննվի առավել խորությամբ: Ինձ այնպես է թվում, որ պատմության մասին մեր չխոսելու հարցում ավելի գոյաբանական պատճառներ էլ են առկա: Թուրքիան՝ իր քրդով-թուրքով, ալևիով և սուննիով, հիմնվել է քրիստոնյաների ոչնչացման միջոցով: Մեր գոյության պատճառը նրանց չգոյությունն է: Հենց դրա համար էլ չեմ կարծում, թե քանի դեռ չենք քննարկել այդ գոյությունը և քանի դեռ չենք սահմանել դրա պարամետրերը, կկարողանանք, ինչպես հարկն է, այդ հարցի մասին խոսել:

### Արշավը շարունակվում է նաև Գերմանիայում

Թուրքիայում մեր ապրումներից ամենաշատը կինս ազդվեց: Նա հիվանդացավ և հիվանդանոց ընկավ: Մի տարի բու-

ժում ստացավ: Սպառնալիքներն ինձ սկսեցին հետապնդել նաև Գերմանիայում: Մեթոդը, որին նրանք ամենաշատն էին դիմում, գիշերվա կեսին զանգահարելն էր: Երբ վերցնում էինք լսափողը, կամ ոչ ոք չէր խոսում, կամ էլ հին օսմանյան զինվորական քայլերգն էին միացնում: Գերմանիայում իմ դեմ ուղղված հարձակողական արշավի ամենավառ օրինակը կարող են լինել 2001 թ. Մյուլիայմ քաղաքում մեր կազմակերպած մի ժողովի ժամանակ պատահած դեպքը և դրա ժամանակ ունեցածս ապրումները: Այդ շրջանում հաճախ էի Ամերիկա գնում-գալիս: Ժողովը կազմակերպած հաստատություններից մեկը Թուրք-գերմանական սոցիոլոգների միությունն էր, որը նախագահում էր Էլչին Քյուրչաթ Աիլերսը: «Հյուրիեթ» օրաթերթը ժողովի մասին լուրն առնելուն պես արշավ էր սկսել դրա դեմ:

Ժողովից առաջ գերմանական ոստիկանության հետ անմիջականորեն բանակցելով՝ խնդրել էի անվտանգության միջոցներ ձեռնարկել: Որոշ ապահովական սահմանափակ միջոցներ ձեռնարկվեցին, և կարողացանք ժողովը գումարել: Ժողովի դեմ մեկնարկած արշավի ակունքն Անկարան էր: «Հյուրիեթ» պարբերականը «Աքչամը՝ գլխավոր դերում. երկխոսության ծուղակը» վերնագրով, առանձին գլխավոր կերպար ստեղծելու համար, հրապարակումն սկսել էր միայն իմ լուսանկարը դնելով<sup>8</sup>: Հետագայում այդ հարձակումներից իր մասնաբաժինն ստացավ նաև Էլչին Քյուրչաթ Աիլերսը: Թերթը օրեր շարունակ հրատարակվեց այնպիսի վերնագրերով, ինչպիսիք են՝ «Հիվանդ ուղեղներ», «Հայրենիքի թշնամիներ», «Օձի գլուխը պետք է դեռ փոքրուց ճզմել» և այլն:

Ժողովի վերջին օրն Անկարայում գործող Երասիական ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնը և վերջինիս՝

8 «Հյուրիեթ», 22-ը մարտի, 2001 թ. (Գերմանիայի տպագրություն): Պարբերականը 2001 թ. մարտի 23-ին, 24-ին, 25-ին և 26-ին առաջին էջերում թեմայի վերաբերյալ նյութերի տպագրումը շարունակեց՝ հրահրող հրապարակումներ անելով:

այդ տարիների նախագահ Ումիթ Բոզդաղի, ինչպես նաև՝ Երասիական ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի ենթակայության տակ գործող Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի նախագահ Օմեր Էնգին Լյութերի առաջնորդությամբ մի խումբ ազգայնականներ ի պաշտոնե հարձակվեցին ժողովի մասնակիցների վրա: Ոստիկանների բարիկադները հաղթահարելով՝ ներխուժած և հայիոյելով ինձ որոնող Ազգայնական շարժում կուսակցության անդամների ձեռքից փրկվեցի թաքնվելու շնորհիվ: Ավելի ուշ ոստիկանությունը սրահից դուրս հանեց հարձակվածներին: «Հյուրիեթ» օրաթերթի՝ Էլչին Քյուրչաթի դեմ սկսած արշավը մեկ ամիս ևս շարունակվեց: Էլչինը դատական գործ հարուցեց «Հյուրիեթի» դեմ, շահեց դատը, բայց այդ հարձակումների ծանրությանը հոգեպես չդիմանալով՝ թողեց համալսարանը և, ինչպես վերևում ասել էի, հիմա Թուրքիայում զբաղվում է օրգանական գյուղատնտեսությամբ:

### Ամերիկյան արկածներս

1997 թ. վերջերին վերադարձել էի Գերմանիա: Ստամբուլում կենտրոն հիմնելու համար ինստիտուտից ստացածս գումարը հանձնեցի 15 հազար մարկ պակասորդով, քանի որ մնացած գումարով գերմանական արխիվային փաստաթղթեր էի գնել: Հետագայում իմ թանկագին ընկեր Վոլֆգանգ Գուստն այդ վավերագրերով սկսեց իր [www.armenocide.net](http://www.armenocide.net) համացանցային կայքէջի գործունեությունը: Գնածս գերմանական փաստաթղթերի մի նշանակալի մասն էլ զետեղվեց այդ կայքում՝ հարստացվելով իմ ուսումնասիրություններով:

Մի մեծ հարցական էր, թե ինչ էի անելու Համբուրգում: Ինստիտուտի տնօրեն Ժան Ֆիլիպ Ռիմցման հայտնեց, որ ինքը Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի պես մի բան հիմնելու որևէ նպատակ չունի, և որ խոսք անգամ լինել չի կարող ինձ անընդհատ աջակցելու մասին, և տեղին կլինի, որ ինձ

համար մի նոր գործ փնտրեմ: Այն, ինչ կարող էի անել որպես գիտնական, չափազանց սահմանափակ էր: Անհնարին էր, որ Գերմանիայում Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված որևէ աշխատանք գտնեի: Ակնհայտ էր, որ գործազուրկ էի մնալու և պետք է աշխատանք որոնեի այն ոլորտում, որտեղ իմ հնարավորությունները մեծանում էին, օրինակ՝ փախստականների հարցերի հետ կապված որևէ թեմայով: Կամ էլ պետք է այլ գործ գտնեի, որպեսզի կարողանայի ընտանիքս պահել:

Եթե ցանկանում էի Հայոց ցեղասպանության հարցի վրա աշխատել, միակ այլընտրանքն Ամերիկան էր: Սակայն Միջին Արևելքի տեխնիկական համալսարանում սովորածս անգլերենը լրիվ մոռացել էի. նախ անհրաժեշտ էր անգլերեն սովորել: Շատ խնդրեցի Վահագն Տատրյանին: Ի վերջո, Տատրյանի նախաձեռնությամբ, Դիրբոռնի հայկական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Դենիս Փափազյանը սկզբում՝ երեք, ապա՝ վեց ամսով ինձ Ամերիկա հրավիրեց: Գրանցվեցի անգլերենի դասընթացին: Այդ ընթացքում Այիան Աքթարի միջոցով ծանոթացա Մյուգե Գյոքչեքի հետ, ով ինձ հարցրեց, թե արդյոք կցանկանամ մեկ տարով որպես հրավիրյալ դասախոս աշխատել էնն Էրբորի՝ Միջիգանի համալսարանում: Երբեք չեմ մոռանա այն, ինչ նա ինձ ասաց, երբ նրան հայտնեցի, որ անգլերեն լավ չգիտեմ և դեռևս դասընթացի եմ հաճախում. «Սա Ամերիկան է. մենք նայում ենք ոչ նրան, թե տվյալ մասնագետը որքան հրաշալի է տիրապետում լեզվին, այլ՝ լավ տիրապետում է իր մասնագիտությանը, թե ոչ: Եթե դու քաջատեղյակ ես այդ հարցին, ապա խնդիր չկա»: Ողջ լինի, դասընթացի ծրագիրն անգամ ինքը կազմեց: Դեպի Ամերիկա այդ առաջին քայլս ձեռնարկելու տարիներին Գյոքչեքի՝ ինձ ցուցաբերած մեծ աջակցության համար երախտապարտ եմ նրան:

Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ ուսումնասիրություններ անել կարողանալու համար ամերիկյան արկածներիս այդ առաջին տարիները շատ ցավալի և վշտալի եղան:

Մինչև 2008 թ., երբ սկսեցի պաշտոնավարել Կլարկ համալսարանում, ապրեցի՝ առանց իմանալու, թե ինչ եմ անելու, ինչ եմ լինելու: Անորոշությունը և սրանից բխած վախն իմ անբաժան ընկերներն էին: Էնն Էրբորի՝ Միջիգանի համալսարանում իմ պաշտոնավարությունն ավարտվեց 2002 թ. ապրիլին: Հայտնի չէր, թե ուր էի գնալու, ինչ էի անելու: Այն օրերի երկընտրանքներս էին՝ փախստականի կարգավիճակով Ամերիկայում ապրելը, գործազուրկի կարգավիճակով Գերմանիա վերադառնալը կամ մեկ այլ արկած ունենալու համար Թուրքիա վերադառնալը: Ամեն առավոտ այդ զգացումներով էի արթնանում և անճարությունից գալարվում: Կինս ասելով, որ Թուրքիայում ունեցած ապրումներից հետո այլևս չի դիմանա մեկ այլ արկածի, մերժել էր ԱՄՆ գալ:

Այդ հեղձուցիչ օրերին, որպես մի մեծ պատահականության արդյունք, Վահագն Տատրյանի խնդրանքով Միննեսոտա համալսարանից ինձ օգնության հասան Ստեֆն Ֆայնշտայնը և Էրիկ Վայցը<sup>9</sup>: 2002-ից մինչև 2008 թ. այդ երկու հրաշալի մարդկանց մեծ աջակցության շնորհիվ մնացի Միննեսոտայի համալսարանում՝ որպես հրավիրյալ դասախոս: Սակայն Միննեսոտայում ապրեցի ահավոր անորոշության մթնոլորտում, երբ յուրաքանչյուր տարի հայտնի չէր, թե ինչ է լինելու հաջորդ տարի:

Միննեսոտա գնալս և այնտեղ անցկացրածս առաջին տարիները այնպիսի տխրության և ցավի ժամանակաշրջան էին, որպիսին մինչ այդ երբեք չէի ունեցել, և որոնք մտաբերելիս դեռ հոգիս ճմլվում է: Կինս ինձ հաղորդեց, որ բավարար էր այն ամենը, ինչ ապրել էր մինչ այդ, և որ այլևս չի ցանկանում նետվել մի անհայտ արկածախնդրության մեջ և այդ պատճառով հաստատ ԱՄՆ չի գա: Ողջ լինի՝ ասաց, որ ավելի հարմար կլի-

9 Ֆայնշտայնը հանկարծակի վախճանվեց 2008 թ. մարտին՝ սրտի կաթվածից: Թող հողը թեթև լինի նրա վրա: Երբեք չեմ մոռանա այն ջանքերը, որ նա գործադրել էր, որպեսզի մնամ համալսարանում:

նի, եթե դատերս ինձ հետ վերցնեն: Հելինը 10 տարեկան էր. նա ինձ հետ եկավ: Երբեք չեմ մոռանա այն առաջին տարիները, որոնք անցկացրել եմ աղջկաս հետ: Գիշերներն արթնանում էր և «Մայրիկ, մայրիկ, մայրիկիս եմ ուզում» ասելով՝ լալիս... Սիրտս կտոր-կտոր էր լինում: Չգիտեի՝ ինչ ասեմ նրան: Փաթաթվում էի, գրկում, մխիթարում և սպասում, որ քնի: Անգամ այսօր, երբ հիշում եմ այդ գիշերներն ու դատերս լացը, միջովս ցավ է անցնում, ու սիրտս ճմլվում է: Ինչո՞ւ էի այս երեխային արժանացրել այդ ապրումներին: Ինչ է թե Ցեղասպանության թեմայով ուսումնասիրություններ պիտի անեմ, իրավունք ունեմ՝ աղջկաս իր մորից բաժանել, դասական արտահայտությամբ՝ «Իմ բույնը քանդել»: Հավատացե՛ք, որ նույնիսկ այսօր չեմ կարող ասել, թե ի վիճակի եմ այդ հարցի պատասխանը տալ: Այլ բան չեմ կարող անել՝ բացի նախկին կնոջիցս և դատերիցս ներում հայցելը:

### Ամերիկայում իմ դեմ ուղղված արշավը

Ամերիկա ոտք դնելուս պահից սկսած մեկնարկեց նաև իմ դեմ ուղղված արշավը: Այն գլխավորում էր Թուրք-ամերիկյան միությունների խորհուրդ (ATAA) անվամբ հայտնի կազմակերպությունը, որի նախագահներից էր եղել մի ժամանակ նաև Էգեմեն Բաղըշը: Հետագայում Holdwater կեղծանվան տակ "Tall Armenian Tale" կայքէջի ղեկավար Մուրաթ Գյումենը ևս չափազանց էական դեր էր խաղալու այդ արշավում: Արշավը հիմնականում հետևյալ ուղղությամբ էր տարվում. իբրև թե ես մի ահաբեկիչ եմ, ով Թուրքիայում ամերիկացիների է սպանել և սպանություններ կազմակերպել, 1976 թ. այդ ահաբեկչական գործողություններիս պատճառով բանտ եմ նետվել Թուրքիայում:

Որպես ինձ նսեմացնող այդ արշավի մի մաս՝ համացանցում տարածվեցին տանս և աշխատավայրիս հեռախոսահամարները՝ «Դավաճանին ողջույն ուղարկիր» կոչով: Youtube-ում տե-

սագրություններ զետեղվեցին, որոնցում ներկայացվում էին իմ «ահաբեկչական գործողությունները»: Ստացա մահվան սպառնալիքներ պարունակող էլեկտրոնային նամակներ: Փորձեցին արգելել այն շնորհանդեսները, որոնք կազմակերպվել էին զանազան համալսարաններում՝ գիրքս ներկայացվելու նպատակով: Նշվելով, թե ահաբեկիչների մուտքն ԱՄՆ արգելված է, կոչեր արվեցին FBI-ի (Ֆեդերալ հետաքննության բյուրոյի) կողմից ինձ ձերբակալելու և Ամերիկայից դուրս շարտելու ուղղությամբ:

Արշավը հատկապես ակտիվացավ 2006 թ. հոկտեմբերին, երբ գիրքս տպագրվեց անգլերենով: Հրապարակվում էր գրքիս շնորհանդեսի ամսաթիվը, որը նրանք բնորոշում էին որպես «թատերական ներկայացում», մարդկանց կոչ էր արվում հավաքաբար մասնակցել «Թաներ Աքչամ կոչեցյալ միջակության խաղին»: 2006 թ. նոյեմբերին Նյու Յորքի քաղաքային համալսարանի կազմակերպած շնորհանդեսի ժամանակ նման հավաքական հարձակում նախաձեռնեցին: Նախ՝ շնորհանդեսը չսկսված՝ մի թռուցիկ տարածվեց, իսկ հետո, իմ ելույթի ընթացքում կարգախոսներ հնչեցնելով, փորձեցին խափանել շնորհանդեսը: Ամենամեծ հարձակմանն անցան գիրքս ստորագրելու պահին, երբ խմբով շարժվեցին իմ կողմը: Միայն ոստիկանության շնորհիվ կարողացա լքել շնորհանդեսի վայրը:

Իրականում այդ հարձակումներն իրականացրածների և թուրքական հյուպատոսարանների միջև շատ ամուր հաղորդակցություն էր առկա: Զգում, նկատում էի, որ հյուպատոսարանները նմանատիպ հարձակումների՝ հետին պլանում պատասպարված կազմակերպիչներն էին: Այդ դիտարկումս հաստատվեց Նյու Յորքի Քարդոզո համալսարանի Իրավաբանության ֆակուլտետում տեղի ունեցած մի դեպքի շնորհիվ: Դարձյալ այնպես, ինչպես եղել էր Նյու Յորքի քաղաքային համալսարանում, համացանցում արշավ էր սկսել Քարդոզո համալսարանի Իրավաբանության ֆակուլտետում կայանալիք շնորհանդեսն արգելելու ուղղությամբ: Երբ տեղեկացվեցի, որ այս շնորհանդեսը ևս

հարձակման էր ենթարկվելու, Քարդոզո համալսարանին խնդրեցի, որ կապ հաստատեն թուրքական հյուպատոսարանի հետ և հայտնեն, որ եթե որևէ հարձակում լինի, հյուպատոսարանն է պատասխանատու համարվելու: Համալսարանի պատասխանատուները զանգահարեցին հյուպատոսարան, և թուրքական հյուպատոսարանի իրավասուները թեև նախ ասացին, որ իրենք ոչ մի առնչություն չունեն այդ դեպքերի հետ, սակայն ավելի ուշ համալսարան զանգահարելով՝ երաշխավորեցին, որ շնորհանդեսի դեմ ոչ մի հարձակում չի լինելու, և միայն 2-3 հոգի են այնտեղ գալու՝ շնորհանդեսին հետևելու համար: Եւ իրոք հենց այդպես էլ եղավ...

Հարձակումները զագաթնակետին հասան Հրանտի սպանությունից հետո, երբ 2007 թ. փետրվարի 18-ին ձերբակալվեցի Կանադայի սահմանին: Ելույթի համար հրավիրվել էի Մոնրեալի Մըք Գիլլ համալսարան և երբ սահմանն էի անցնում օդանավակայանում, 4-5 ժամ ինձ արգելափակեցին՝ սկզբում առանց պատճառը հայտնելու: Միայն Կանադայի հասարակական ավտանգության նախարար Ստոքվել Դեյի և բազմամշակութայնության ու կանադացի ինքնության հարցով պատասխանատու պետնախարար Ջեյսոն Քեննիի հատուկ հրամանի շնորհիվ ազատ արձակվեցի: Իմ պնդումներին ի պատասխան՝ ոստիկանը որպես ձերբակալմանս պատճառ Վիքիպեդիայի էջը ցույց տվեց: Որքանով հասկացա, ինչ-որ մարդիկ իմ մասին ծանուցում էին տվել, թե «ահաբեկիչ» եմ, և Վիքիպեդիայի էջն էլ որպես ապացույց էր օգտագործվում: Այդ էջում տեղեկություններ կային առ այն, թե ես ահաբեկիչ եմ:

Ինչպես ասացի, այս ամբողջ արշավում կարևոր դեր էին խաղում Holdwater կեղծանվան տակ հանդես եկող Մուրաթ Գյումենը և Նրա կայքէջը, որում ուսանողական դեպքերի, այդ թվում՝ 1976 թ. «Հեղափոխական երիտասարդություն» ամսագրի պատասխանատու խմբագիր եղածս ժամանակ քանիցս ձերբակալություններիս և ազատազրկումներիս պատճառները

ներկայացված էին որպես «ահաբեկչական գործողություններ»: Վերոնշյալ բոլոր իրադարձությունները տեղի էին ունեցել 1974-1975 թթ. և առավելապես առնչվում էին այնպիսի դեպքերի, ինչպիսիք էին՝ թուրքիկներ բաժանելը, պաստառներ փակցնելը, երթին մասնակցելը: Հիշյալ կայքէջում այդ ազատազրկումներս որպես «ահաբեկչական գործողություն» ներկայացնելը միայն մեկ իմաստ ուներ, ձերբակալություններ, որոնց մասին անգամ որևէ թերթում ոչ մի լուր չէր հրապարակվել, և որոնք նույնիսկ ես էի մոռացել: Մուրաթ Գյումենն անմիջականորեն ծառայեցվում էր Անկարային: Դրա հետ մեկտեղ, ինչպես ստորև ցույց կտամ, այդ ծառայությունն անմիջական կապ ուներ ԷՐԳԵՆԵ-ՔՈՆԻ հետ:

### «Հյուրիեթ» օրաթերթը և Նրա արշավը

Կանադա մուտք գործելիս ժամանակավորապես ազատազրկվելուցս հետո ինձ պաշտպանելու նպատակով 2007 թ. մայիսի 15-ին և մայիսի 21-ին «Ակոս» շաբաթաթերթում լույս տեսած հոդվածներումս բացահայտեցի իմ դեմ ուղղված այդ բոլոր հարձակումները համակարգող Holdwater կեղծանվան տակ հանդես եկող անձի իրական ինքնությունը: Դրան հետևած գործընթացը կարծես Հրանտ Դինքի դեպքի ժամանակ տեղի ունեցածների պատճենը լիներ: 2007 թ. հունիսի 11-ին մահվան սպառնալիք ստացա, որից ոտից գլուխ փշաքաղվեցի: Այդ սպառնալիքը, անձիս ուղղված որոշ վիրավորանքներից հետո, այսպես էր սկսվում. «Այսօր մենք, օրինական սահմանների շրջանակներում, սկսում ենք քո և ընկերներիդ համարվող արարածների դեմ պայքարը: Սակայն եթե չկարողանանք դրանից արդյունք քաղել, կդիմենք ուրիշ՝ այլընտրանքային ուղիների»: Այն շարունակվում էր հետևյալ նախադասություններով. «Եթե աշխարհի երեսից քեզ նման ստոր միկրոքը ջնջվի, հաստատ ավելի լավ կլինի ճշմարտության և աշխարհի խաղաղության համար: Քեզ

ստոր անասունի նման սատկացնելու եմ՝ փողոցում տնքոցների հանելով»։ «Աղոթիր, որ սատանան քեզ ժամ առաջ հետը տանի, թե չէ կսկսես այս աշխարհի դժոխքն ապրել» տողերով շարունակվող սպառնալից նամակն ավարտվում էր Holdwater-ին անդրադարձով. «Կարծում ես, թե բացահայտել ես Holdwater-ին, և ցեղապաշտ-ֆաշիստ հայերն էլ իրենց կայքերում հրապարակում են մեկի մեծադիր նկարները։ Սակայն շատ ես սխալվում, որովհետև աշխարհում ներկա պահին միլիոնավոր Holdwater-ներ կան... Մի օր դու և քո հայ բարբարոս մտերիմներդ խեղդվելու եք այդ Holdwater-ի ծովում։ Վստահ եղիր... Ճշմարտությունը ցավ է պատճառում, Թաներ, այն էլ՝ ինչպիսի՞ ցավ։ Մի օր այդ ցավն այնպես ես զգալու, որ հիշելու ես, թե ինչպես էիր քեզ զգում այս տողերը կարդալիս... Ո՞վ եմ ես։ Կիմանաս, Թաներ, կիմանաս»։

Այդ սպառնալիքն ստանալուցս 10 օր անց՝ հունիսի 21-ին, «Հյուրիեթ» օրաթերթն իր առաջին էջում օրեր տևած մի արշավ սկսեց իմ դեմ։ Թերթը, որը որպես վերնագիր Նույնությամբ կրկնել էր սպառնալիքներ պարունակող նամակի արտահայտությունները, թուրքական պետության լրբբիստին գաղտնագերծ անելով, պնդեց, թե ես վտանգի եմ ենթարկել նրա կյանքը<sup>10</sup>։ «Հյուրիեթն» այդ լուրը հրապարակելուց հետո հանդես էր գալիս այն տարօրինակ պնդմամբ, թե ես «անհետացել եմ»<sup>11</sup>։ Արշավին մասնակցեցին այնպիսի սյունակագիրներ, ինչպիսիք են էմին Չյուլաշանը, Օթթայ էքշին, ովքեր հանդես եկան անձիս ուղղված վիրավորանքներով և իմ դեմ հարձակումներով։ Ես «հայկական լրբբինգի կողմից սնված մի հայրենիքի դավաճան» էի։ Այդ երգչախմբում ընդգրկվեցին նաև այնպիսի ուրիշ սյունակագիրներ, ինչպիսիք էին «Վաթան» օրաթերթից Ռուհաթ

10 «Հյուրիեթ», 21-ը հունիսի, 2007 թ., <http://www.hurhaber.com/gizli-lobiciyi-desifreetti/haber-57831>:

11 «Հյուրիեթ», 22-ը հունիսի, 2007 թ., <http://www.hurriyet.com.tr/gundem/6757024.asp?gid=180>:

Մենգին, «Աքշամ» օրաթերթից Շաքիր Սյուբերը, և այդ դեպքը իսկական լինչի դատաստանի վերածվեց։ Սկսել էի լրջորեն անհանգստանալ կյանքիս համար։

Բազմաթիվ սյունակագիրներ, ովքեր քաջատեղյակ էին այն կապի մասին, որն առկա էր «Հյուրիեթ» օրաթերթի՝ Հրանտ Դինքի դեմ կազմակերպած արշավի և նրա սպանության միջև, հրապարակեցին ինձ պաշտպանող հոդվածներ, որոնցում զուգահեռներ էին անցկացնում Հրանտի և իմ դեմ տարված արշավների միջև։ Ահմեթ Ալթանը, Իսմեթ Բերքանը, Փերիհան Մադենը, Ֆեհմի Քորուն, Ադնան Բոստանջըն և Մելիհ Փեքդեմիրը ընդամենը մի քանիսն են այդ անձանցից... Երոպայում ստեղծվեց մի համերաշխության խումբ՝ «Թող Աքշամը Հրանտ Դինք չդառնա» կարգախոսով։ Այդ արշավն ազդեցիկ էր հատկապես Ֆրանսիայում, և դրա շնորհիվ Ֆրանսիայի այն ժամանակվա նախագահ Սարկոզին անմիջականորեն դիմեց թուրքական կառավարությանը։

Ինչ վերաբերում է այն բոլոր իրավական նախաձեռնություններին, որոնց դիմեցի՝ ընդդեմ «Հյուրիեթ» օրաթերթի և իմ դեմ հանդես եկած հրապարակախոսների, ապա դրանք բոլորն էլ ապարդյուն եղան։ Իմ ոչ մի բողոքը հիմք չեղավ, որ դատական գործ հարուցվի։ Նույնիսկ մի դատախազ, կարծես թե բավարար չէր, որ անուշադրության էր մատնել իմ բողոքը, չնայած որ տուժող կողմը ես էի, հայցիս մերժումը փաստարկելիս ինձ հանցավոր հռչակեց։ Թեև թվում էր, թե սպառնալիքներ պարունակող էլեկտրոնային նամակը Հոլանդիայից էր ստացվել, սակայն տեխնիկական մասնագետների՝ իմ պատվերով կատարած վերլուծության շնորհիվ պարզեցինք, որ այն իրականում ուղարկվել էր անմիջապես Թուրքիայից։ Դատական գործ հարուցեցինք՝ համակարգչային տեղեկությունները հաղորդելով։ Ոստիկանը գտավ համապատասխան անձին, բայց քանի որ նրա տանը չգտնվեց այն համակարգիչը, որով նա ուղարկել էր նամակը, գործը կարճելու վճիռ կայացվեց։



Այս ընդհանուր պատկերին ուզում եմ մի տեղեկություն էլ հավելել, որի մասին ավելի ուշ էի իմացել: Հրանտի դեմ «թրքությունը վիրավորելու» և Ցեղասպանություն բառը կիրառելու համար հարուցված դատական գործերի գլխավոր դերակատարները Քեմալ Քերինչսիզն ու Ռեջեփ Աքքուչն էին: Վերջինս իմ դեմ ևս հարուցված դատական գործի համար դիմած անձն էր, գործ, որը կարճվեց Հրանտի սպանությունից հետո: Երոպայի մարդու իրավունքների դատարան դիմելու ընթացքում տեղեկացա, որ այդ նույն շրջանակը «Հյուրիեթի» արշավի ժամանակ և դրանից հետո ևս իմ դեմ այլ դատական գործեր հարուցելու համար մեկը մյուսի հետևից մեղադրանքներ էր ներկայացրել 2007 թ. հուլիսի 6-ին, 26-ին և նոյեմբերի 28-ին: Այդ բոլոր դիմումները մերժվել էին՝ հիմնվելով 2007 թ. հունվարի 30-ին իմ գործը կարճելու մասին որոշման վրա:

### «Հյուրիեթ»-Էրզենեքոն-Ամերիկա եռանկյունին

Էրզենեքոնի գործի հետաքննությունը մի փոքրիկ մանրամասնություն էր բացահայտել, որը վրիպել էր շատերի ուշադրությունից: Թե՛ իմ վերաբերյալ թուրքական քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով սկսված հարցաքննությունների և թե՛ ԱՄՆ-ում իմ դեմ կազմակերպված արշավի ակունքները բխում էին Էրզենեքոնից: Մեղադրական ակտում անունս հիշատակվում է առնվազն 9-10 տեղում, հատկապես՝ Աթիլա Աքսուի և Քեմալ Քերինչսիզի տված ցուցմունքներում: Դրանցից հասկացվում է, որ Քեմալ Քերինչսիզը ուղղորդել է թե՛ 301-րդ հոդվածով իմ դեմ հարուցված դատական գործը և թե՛ Ամերիկայում իմ դեմ ուղղված արշավը և ապահովել դրանց առնչվող տեղեկություններն ու նյութերը:

Օրինակ՝ Քեմալ Քերինչսիզը Սուլթանահմեթ թաղամասի դատարանում որպես արձանագրող քարտուղար աշխատող Աթիլա Աքսուից տեղեկություններ է խնդրում իմ անցյալի վերաբե-

րյալ, հատկապես՝ 1974-1975 թթ. տարիների թղթապանակների մասին: Քեմալ Քերինչսիզն իր ցուցմունքում ասում է, թե այդ տեղեկությունները խնդրել է՝ իմ դեմ Շիշլիի հանրապետական դատախազության կողմից 301-րդ հոդվածով հարուցված դատական գործը կարճելու մասին որոշման դեմ առարկելու պատճառով: Սակայն կարիք չկա նշելու, որ իրական պատճառը Ամերիկայում իմ դեմ սկսված արշավն էր:

Ինչպես վերևում ասացի, Holdwater կեղծանվան տակ հանդես եկող Մուրաթ Գյումենը համացանցային կայքէջում ներկայացրել էր, թե 1974 և 1975 թթ. ուսանողական դեպքերի կապակցությամբ ձերբակալվելուս պատճառը «ահաբեկչական գործողություններն» էին: Գյումենը «ամերիկացիների սպանության համար պատասխանատու մի ահաբեկիչ» լինելու պնդելիս որպես փաստարկ էր բերում 1974 և 1975 թթ. այդ ազատագրվումներս: Նա նաև ասում էր, թե դրա մասին տեղեկացվել էր FBI-ն (Ֆեդերալ հետաքննության բյուրոն), և որ պետք էր, որ վերջինս գործի անցներ: Սույն հարցի վերաբերյալ արածս մեկնաբանություններում ասել էի, որ այդ տեղեկությունները բացահայտ սուտ և զրպարտություն էին, և որ ինձ այդ տարիներին ազատագրել էին այնպիսի սովորական գործողությունների համար, ինչպիսիք էին թռուցիկներ տարածելը, պաստառներ կախելը և երթի մասնակցելը:

Այդ մեկնաբանություններիս պատճառով Մուրաթ Գյումենը դժվարին կացության մեջ էր ընկել: Հենց այդ պատճառով էլ Քեմալ Քերինչսիզը 1974 և 1975 թթ. վերաբերյալ հարցուփորձ անելով՝ ձգտում էր նոր տեղեկությունների հասու դառնալ: «Հյուրիեթ» օրաթերթի կողմից «հանուն թուրքական պետության լրբբիստական գործունեություն ծավալած» և պաշտպանության տակ առնված անձը հենց Մուրաթ Գյումենն էր: Իրականում մեջտեղում նոր բան չկա՝ «Հյուրիեթի» և Էրզենեքոնի համագործակցության մի միկրոօրինակ վերստին դիտարկելուց բացի...

## Եզրակացություն

Այո՛, թերևս մինչև 2008-2009 թվականները Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցով զբաղվելը թե ռիսկային ու վտանգավոր գործ էր և թե այդ գործով զբաղվող անձինք հարկադրված էին պայքարել միայնության դեմ: Լռություն պահպանելու մասին լուռ պայմանագրով բնաջնջող ատելության ճնշման տակ կքելը մի այնպիսի դժվարություն էր, որին կարողանար նորմալ գիտնականը դիմանալ: Կարծում եմ, որ այդ ամբողջ ժամանակաշրջանում սպառնալիքներին ու հարձակումներին կարողացել եմ դիմանալ թե արտերկրում ապրելուս և թե քաղաքական անցյալիս շնորհիվ: Եթե քաղաքական անցյալս չլինեի, երևի ես նույնպես այդ հարձակումներից կահաբեկվեի, կհոգնեի և կիրաժարվեի զբաղվել այդ հարցով: Այն օրերին, երբ շատ էի խեղդվում ու նեղվում, միտքս էին գալիս Անկարայի կենտրոնական փակ կալանատանը մեր վարած զրույցները: Մեր մեջ խոսում էինք, թե մինչև որ տարիքն ենք ապրելու: Իմ ամենամեծ երազանքը 27-րդ տարիս տեսնելն էր... Էհ, իսկ այդ տարիքս վաղուց էի լրացրել:

Հերոս չեմ. հարկադրված եմ խոստովանել, որ շատ եմ վախեցել այդ ողջ ժամանակաշրջանում, իրոք շատ: Սակայն չեմ կարող ասել, թե այդ սպառնալիքներն ու հարձակումներն ինձ վրա այն աստիճանի են ազդել, որ ստիպել են հրաժարվել կատարածս գործից, քանզի դրանցում որևէ նորություն չկար: Քաղաքականության մեջ իմ ակտիվ տարիներին ևս բազմաթիվ ընկերների հետ հարձակումների թիրախ էի դարձել, մահվան սպառնալիքի տակ ապրել: Հատկապես 1974-1976 և մասնավորապես 1984-1987 թվականներին դրանք հասարակ ու սովորական բաներ էին: Սակայն երբ սկսեցի Հայոց ցեղասպանության հարցով զբաղվել, հանդիպեցի նախկինում չտեսած շատ նոր երևույթների: Միայնության և մարգինալ անձ լինելու զգացում ունեցա...

Ձեզ վրա հարձակվում են հանուն այն աշխարհի, որի մի

մասնիկն եք ձեզ զգում. ուղղակիորեն թիրախ է ընտրվում այն աշխարհը, որին պատկանում եք: Ավելին՝ այն աշխարհից, որին զգում եք, որ կապված եք, հատկապես ձեր մտերիմ շրջանակից անգամ առանձնապես չեք կարողանում աջակցություն ստանալ: Ջգում եք, որ նույնիսկ այդ շրջանակն է սկսել ձեզ «իրենը» չհամարել: Ջգում եք, որ ցանկալի չեք, և ձեզ արհամարհում են. այլևս ոչ մի տեղի չեք պատկանում և ինքներդ ձեզ մի մեծ դատարկության մեջ եք զգում: Դա սարսափելի զգացում է: Երբ ասում եմ՝ սեփական երկրում բորոտի պես դեգերել, հենց այդ զգացումն եմ ուզում փոխանցել:

1970-1980-ական թվականներին չնայած տասնյակ սպառնալիքների և հարձակումների եմ ենթարկվել, սակայն միշտ պատկանելիության չափազանց ուժեղ զգացում եմ ունեցել: Երբեք չեմ կորցրել այն: Ինձ անընդհատ զգացել եմ մի թաղամասի, մի շրջանակի մեջ: Ինձ թշնամի համարողներ, ոչնչացնել ցանկացողներ կային, բայց ունեի նաև ընկերներ, բարեկամներ, որոնց հետ նույն աշխարհն էի կիսում: Երբ սկսեցի զբաղվել Հայոց ցեղասպանության հարցով, տեսա, զգացի, որ հենց այդ պատկանելիության զգացումը, կապերը վերացել են: Մարդուն ոչ մի բան այնքան մեծ ցավ չի կարող պատճառել, որքան այն աշխարհից վռնդվելը, որի մի մասնիկն է իրեն համարում: Ինձ ամենաշատը այդ միայնության և մարգինալ անձ լինելու զգացումն է ցավ պատճառել:

Կարծում եմ՝ երկու պատճառ կա, որ այսօր ողջ եմ, Հրանտի նման սպանված չեմ: Առաջինը արտերկրում ապրելս է, իսկ երկրորդը՝ Էրզնեքոնի հարցաքննությունները... Այս հարցին մոտիկից հետևածները գիտեն. եթե Էրզնեքոնի հետաքննությունն սկսվեր ոչ թե 2007 թ. ամռանը, այլ՝ մեկ տարի շուտ, թերևս Հրանտն էլ չսպանվեր և մեզ հետ լիներ:

Թուրքիայում Ցեղասպանության հարցով զբաղվելու խնդիրն ուզում եմ բաժանել հետևյալ ձևով՝ Հրանտից առաջ և Հրանտից հետո: Հիմա բազմաթիվ մարդիկ այդ թեմայով զբաղվում

են՝ նրա սպանության նկատմամբ տածած զայրույթից և Հրանտի հանդեպ ունեցած հարգանքից ելնելով: Դա, անշուշտ, լավ բան է, բայց այդ զբաղմունքի համար պետք չէր, որ Հրանտը մահանար: Իսկ Հրանտի սպանությունից առաջ ընկած ժամանակաշրջանից ինձ մնացած հուշը մի բութ ցավ է միայն: Երբ նրա տան հետևի սենյակում օդանավակայան գնալուց առաջ մինչև առավոտ նստում-զրուցում էինք, և ես նրան ասում էի. «Միայնակ ենք, Հրանտ, միայնակ. ոչ ոք չի ըմբռնում, չի գիտակցում, թե Հայոց ցեղասպանության հարցով զբաղվելը, պատմության հետ առերեսվելը որքան անմիջական կապ ունի մեր ներկայի և ապագայի հետ», նա գլխով համաձայնության նշան էր անում: Երբեք չեմ մոռանա նրա՝ այդ տարիների միայնությունն ու մարգիխալ անձ լինելու զգացումը: Եւ ի՞նչ գիտե՛ եթե այդ միայնակությունը չլիներ, միգուցե Հրանտը դեռ մեզ հետ լիներ...

Չեմ ուզում գրքիս այս գլուխը հոռետեսական տրամադրությամբ ավարտել. դա ճիշտ չի լինի... Դա անհարգալից կլինի ոչ միայն Հրանտի և նրա հիշատակի նկատմամբ, այլ նաև՝ Թուրքիայում բազմաթիվ անձանց՝ Հայոց ցեղասպանությունը ներկայացնելու ուղղությամբ գործադրած ջանքերի: Հրանտի մահը շատ բան փոխեց այս երկրում, և Հրանտը մի առաքելություն էր, ով կարծես գիտեր, որ փոփոխություն էր անելու: Նրան լռության գիրկը նետելու համար սպանողները պատճառ դարձան, որ հազարավոր լռություններ ճիշի վերածվեն: Մեր բոլորի պարտքն է շարունակել նրա սպանված օրը Ստամբուլի փողոցներում սկսված այդ ուղևորությունը՝ նրա բացած ճանապարհով: Նրա ընկերներն այդ ճամփորդության սկզբներին անգամ շատ բան հաջողեցին և շարունակելու են հաջողել:

Բավարար է միայն հետ նայել ու համեմատել Հայոց ցեղասպանության հարցի վիճակը սրանից 10 տարի առաջվա վիճակի հետ: Անկասկած, մի մեծ ճանապարհ է հաղթահարվել, սակայն սույն թեմայով դեռևս հետաքրքրված են միայն մի քանի

քաղաքներում: Շատ երկար ժամանակ կպահանջվի, որպեսզի դա ալիք առ ալիք տարածվի Անատոլիայում: Երկար ճանապարհ կա դեռ, ճանապարհի սկզբին ենք և անելու շատ բան ունենք: Պետք է ոչ թե միմյանց հրաժեշտ տանք, այլ՝ շարունակենք պատմության հետ առերեսման ճամփորդությունը, որը դեռ նոր ենք սկսել, և որն առաջմ սկզբնական անփորձ փուլում է գտնվում: Գուցե և այդ գործընթացը հարկ կլինի բնութագրել որպես նոր թուրքիացիության ինքնության ստեղծման համար ջանքի գործադրում, ջանք, որը պարտադիր է ոչ միայն որպես պատմության և բնաջնջված մարդկանց հանդեպ պատասխանատվության անհրաժեշտություն, այլ նաև հարկավոր է՝ մեր երեխաներին ավելի գեղեցիկ ապագա թողնել կարողանալու համար:

Հրանտը միայնակ էր մնում, որովհետև նրա ժամանակը անցավ, և նրա հետևի սենյակում օդանավակայան գնալուց առաջ մինչև առավոտ նստում-զրուցում էինք, և ես նրան ասում էի. «Միայնակ ենք, Հրանտ, միայնակ. ոչ ոք չի ըմբռնում, չի գիտակցում, թե Հայոց ցեղասպանության հարցով զբաղվելը, պատմության հետ առերեսվելը որքան անմիջական կապ ունի մեր ներկայի և ապագայի հետ», նա գլխով համաձայնության նշան էր անում: Երբեք չեմ մոռանա նրա՝ այդ տարիների միայնությունն ու մարգիխալ անձ լինելու զգացումը: Եւ ի՞նչ գիտե՛ եթե այդ միայնակությունը չլիներ, միգուցե Հրանտը դեռ մեզ հետ լիներ...

## ԹՈՐՈՍՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ<sup>12</sup>

Սարգիս Թորոսյանը մի հայազգի սպա է, ով ծառայել է օսմանյան բանակում նախ՝ որպես լեյտենանտ, ապա՝ կապիտան: Նրա հուշերը հրատարակվել են 1947 թ. ԱՄՆ-ում<sup>13</sup>: Պրոֆեսոր Այհան Աքթարը, պատահաբար ընթերցելով այդ գիրքը, 2012 թ. օգոստոսին այն թարգմանել է անգլերեն: Աքթարը չի բավարարվել գրքի համար 83 էջանոց մի մանրամասն առաջաբան գրելով, այլև գրքի համապատասխան մասերում 86 ծանոթագրություններ գրելով՝ հավելյալ տեղեկություններ է տվել առ այն, որ Թորոսյանի պատմածները ճշմարտությունն են արտացոլում, սակայն առարկայական սխալներ էլ են պարունակում:

Սույն գիրքը հրատարակվելուց հետո մեծ հետաքրքրության արժանացավ և մեկ տարի տևած քննարկումների թեմա դարձավ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գրքի մասին հաղորդումներ հեռարձակեցին 3 հեռուստակայաններ: «Հին մատյաններ» խորագրով մի հաղորդման մեջ գիրքը ուղիղ 2,5 ժամանոց բանավեճի առարկա դարձավ: Միայն օգոստոս ամսին օրաթերթերում գրքի վերաբերյալ 8 հոդված տպվեց:

Սկզբում գրքի՝ այդչափ մեծ հետաքրքրություն հարուցելու պատճառն այն էր, որ հուշերի հեղինակը հայ էր: Թուրք հասարակական կարծիքի համար չլսված և անսովոր բան էր, որ որևէ հայ պատերազմեր թե որպես զինվոր և թե որպես սպա, մեծ հա-

12 Սույն հոդվածը գրվել է 2014 թ. ապրիլի 17-18-ը Կլարկ համալսարանի՝ Ցեղասպանության և Հոլոքոստի ուսումնասիրությունների «Ստրեյթ» կենտրոնի կողմից Թորոսյանի առիթով կազմակերպված «Ճշմարտությունը և հիշողությունները» խորագրով ժողովի համար: Հոդվածի նպատակն էր Թորոսյանի մասին քննարկումների շուրջ ընդհանուր պատկերացում տալ այս թեմայի վերաբերյալ տեղեկություններ չունեցող ամերիկացի ունկնդիրներին:

13 **Captain Sarkis Torossian**, *From Dardanelles to Palestine: A True Story of Five Battlefronts of Turkey and her Allies and a Harem Romance*, Meadow Publishers, Boston, 1947.

շողության հասներ, և հաջողությունների համար նրան մեղալարվեր: Տասնամյակներ շարունակ պարբերական քարոզչությանը հայերը ներկայացվել էին որպես «պետության դեմ ապստամբած», «դավաճան և Թուրքիային թիկունքից հարվածած» ժողովուրդ: Կարելի է ասել, որ մի ամբողջ հանրություն ստացել էր հակահայկական կոթություն: Առաջին շուկն այդ պատճառով էր:

Գիրքն ուշագրավ կերպով ցույց տվեց նաև, որ Հայոց ցեղասպանության համար մեղադրանքները հոգեբանական ճգնաժամի են հասցրել թուրք հասարակությանը: Օսմանյան բանակում ծառայած մի հայ սպայի առկայությունը տարօրինակ ձևով ընկալվեց որպես մի հազվագյուտ փաստարկ՝ Ցեղասպանության թեզի սխալ լինելը ցույց տալու առումով: «Հյուրիեթ» պարբերականը գիրքը ներկայացրեց «Օսմանյան բանակում հայ կապիտան կա, նացիստական բանակում հրեա կապիտան չկա» վերնագրով մի հրապարակմամբ<sup>14</sup>:

Այնուհետև գրքի շուրջ գրեթե մեկ տարի տևած երկար-բարակ և լուրջ քննարկումներ եղան: Այդ բանավեճի ամբողջ ընթացքում մոտ 80 հոդված տպագրվեց, որոնցից 4-ը անգլերեն էր, այդ թվում՝ «Ինդիփենդենթ» օրաթերթի հայտնի լրագրող Ռոբեր Ֆիսքի հոդվածը: Այս ցանկին հարկ է հավելել Սաբանջը համալսարանի պատմության պրոֆեսոր Հաքան Էրդեմի՝ 2012 թ. դեկտեմբերին հրատարակված «Թորոսյանի արտառոց պատմությունը իրականի և հորինվածքի միջև» վերնագրով 382 էջանոց գիրքը<sup>15</sup>: Էրդեմի գրքի նպատակն էր ցույց տալ, թե Թորոսյանի պատմածներն ամբողջությամբ երևակայության արդյունք են և հորինվածք:

14 Տե՛ս «Հյուրիեթ» կիրակնօրյա համարը, 2012 թ. սեպտեմբերի 2:

15 **Y. Hakan Erdem**, *Gerçek ile Kurmaca Arasında Torosyan'ın Acayip Hikâyesi*, Doğan Kitapçılık, İstanbul, 2012.

## Թորոսյանի կյանքի պատմությունը

Քննարկումների ամբողջ ընթացքում առաջ քաշված մտքերին անդրադառնալուց առաջ հարկ է համառոտ ներկայացնել գիրքը: Ինչպես իր հուշերում հայտնում է Թորոսյանը, նա ծնվել է 1893 թ. Կայսերիի Դևելիում (Էվերեթ): Նրանք 5 երեխա են եղել՝ չորս տղա, մեկ աղջիկ: Նրա երեք եղբայրները՝ Մարտիրոսը, Բարսեղը և Արամը, նախքան Առաջին աշխարհամարտը մեկնել են Ամերիկա՝ որպես բանվոր աշխատելու, իսկ Թորոսյանը հաճախել է ռազմական դպրոց և 1914 թ. լեյտենանտի զինվորական աստիճանով ավարտել Հարբիյեի հրետանավորների դպրոցը: Նա Դարդանելի ռազմաճակատում հրամանատար է նշանակվում «Էրթուղրուլի» անվան միջնաբերդում: Ակտիվ կերպով մասնակցում է Դարդանելի ծովային մարտերին: Նա հայտնում է, որ փետրվարի 19-ին մի անգլիական ռազմանավ խորտակվել է իր միջնաբերդից բացված կրակի հետևանքով: Նա 1915 թ. մարտի 18-ին վիրավորվում է: Հիվանդանոցում գտնվելու ժամանակ ռազմական նախարար Էնվեր փաշան ձեռք բերած հաջողությունների համար նրան շնորհում է կապիտանի աստիճան:

Ապրիլ ամսին պաշտոնանկ է արվում՝ օսմանյան բանակում հայ զինվորների զինաթափման հրամանի շրջանակներում և ուղարկվում Ստամբուլ, քանի որ նրան հայտնում են, թե Էնվեր փաշան ցանկանում է տեսնել նրան: Ռազմական նախարարությունում նրան ասվում է, որ թեև իրեն սխալմամբ մի կարճ ժամանակով ազատագրվել են, սակայն նա, մյուս հայերի նման, չի ընդգրկվելու բանվորական գումարտակների մեջ, այլ մնալու է որպես զինվորական դասի ներկայացուցիչ: Դարձյալ Դարդանելում նշանակվում է 8-րդ դիվիզիայի դաշտային հրետանային գնդի հրամանատար և նորից մասնակցում պատերազմին:

1916 թ. սկզբին վերադառնում է Ստամբուլ և տեղեկանում իր ընտանիքի աքսորվելու մասին: Ընտանիքը հետ վերադարձնելու համար դիմում է Ռազմական և Ներքին գործերի նախարար-

ություններին, քանի որ որոշում էր կայացվել, թե զինվորականների ընտանիքները չեն աքսորվելու: Ոչ մի արդյունքի չի կարողանում հասնել իր այդ ձեռնարկներում և համոզվում է, որ իր ընտանիքն սպանվել է:

Նրա նոր պաշտոնը Ռումինիայում է լինում: Նշանակում է ստանում 46-րդ հրետանային գնդում: Նախ՝ 1916 թ. սեպտեմբերին մարտնչում է ֆրանսիական և հունական միավորումների, իսկ նոյեմբերին՝ ռումինականի դեմ: Նույն ամսին տեղի ունեցած մի մարտի ժամանակ գլխից վիրավորվում է: 1916 թ. դեկտեմբերի 5-ին մասնակցում է Բուխարեստի գրավմանը: Ռազմի դաշտում ձեռք բերած հաջողությունների համար մեդալ է ստանում Գերմանիայի, Ավստրիայի և Բուլղարիայի հրամանատարություններից:

1917 թ. մայիսին նշանակում է ստանում Իրաքի ռազմաճակատում: Մասնակցում է անգլիացիների դեմ մղվող մարտերին: Նորից է վիրավորվում: Օսմանյան բանակն սկսում է հետ քաշվել Իրաքից, և 1917 թ. դեկտեմբերին Թորոսյանը տեղափոխվում է Պաղեստինի ճակատ: Սուրբ ծննդյան օրը Հյուսիսարևելյան Սիրիայում՝ Թելլ Հալաֆ գյուղաքաղաքում (Ռաս-ուլ-Այնի մոտակայքում է) պատահաբար գտնում է քրոջը, որից իմանում է ծնողների սպանության մասին: Քրոջը թողնում է Հալեպում իր վստահությունը շահած ընտանիքների մոտ, քանի որ հարկադրված է լինում ռազմաճակատ մեկնել: Սակայն այլևս նրա գլխում ծագում է օսմանյան բանակից փախչելու և ընտանիքի վրեժը լուծելու միտքը:

1918 թ. օգոստոսին կապ է հաստատում ապստամբած արաբների հետ և 1918-ի սեպտեմբերին ճամբարը փոխում է: Այս անգամ անգլիացիների հետ միասին սկսում է թուրքերի դեմ մարտնչել: Իր խոսքով՝ հազար հոգանոց մի արաբական զորամիավորման հրամանատարն է դառնում և մասնակցում Դամասկոսի գրավմանը: 1918 թ. նոյեմբերին կապ է հաստատում հայկական լեգեոնի հետ: ԱՄՆ-ից եկած իր եղբայրները՝ Բար-

սեղը և Արամը, նույնպես այդ լեգեոնում են լինում, և երեք եղբայրները հանդիպում են: Ապա իրենց քրոջը տեսնելու համար բոլորով միասին Հալեպ են ուղևորվում, բայց իմանում են, որ նա մահացել է:

Թորոսյանն այս անգամ եղբայրների հետ միասին պատերազմելու նպատակով գնում է Հարավային Անատոլիա՝ Չուքուրովա: Մինչև 1920 թ. մարտը կռվում է հայկական լեգեոնի շարքերում, ապա պաշտոնից հեռացվում է և մի հրոսակախումբ ստեղծում, իր իսկ արտահայտությամբ, «մինչև մահ պատերազմելու և սպանելու համար», բայց որոշ ժամանակ անց, դարձյալ իր խոսքով, «հոգնում է վրեժխնդրության զգացումից»: Եւ եղբայրները որոշում են միասին Ամերիկա վերադառնալ:

Գիրքը հագեցած է նաև Թորոսյանի ապրած անհավատալիորեն բարդ և հետաքրքիր մի սիրո պատմությամբ: Այն աչքի է ընկնում մինչև ժամի և վայրկյանի հասնող մանրամասն տեղեկություններով, հատկապես՝ ռազմաճակատային մարտերի վերաբերյալ: Գրքում ընդգրկված է նաև Թորոսյանի ձեռքով գծված երկու քարտեզ՝ Դարդանելի և Պաղեստինի ռազմաճակատների վերաբերյալ, մի լուսանկար, որում պատկերված է իր՝ քրոջ հետ հանդիպումը, ինչպես նաև՝ Մանասթըրի, Բուլղարիայի, Ռումինիայի, Իրաքի, Պաղեստինի և Կիլիկիայի ճակատներում արված լուսանկարներ, որոնցից մի քանիսը շատ վատ որակի պատճառով չեն ներառվել գրքի թուրքերեն հրատարակության մեջ:

### Առաջին քննարկումները. Դարդանել

Հասարակության մեջ հեղինակի՝ մի հայ սպա լինելու հանգամանքի հարուցած առաջին հուզումի ալիքից հետո Թորոսյանի հուշերի մասին մի երկարատև քննարկում սկսվեց, որը շարունակվեց մոտ մեկ տարի: Սկզբում քննարկումը վերաբերում էր միմիայն այն հարցին, թե արդյոք Թորոսյանի՝ Դարդա-

նելի մասին ասածները ճիշտ են, թե ոչ, և բանավեճը ծավալվեց Դարդանելի ճակատամարտի կապակցությամբ մի ռազմական պատմության շուրջ:

Այդ առաջին քննարկումներին կարելի է անդրադառնալ երկու առանձին կատեգորիաներով: Առաջինը ազգայնական շրջանակների առարկություններն էին: Այդ շրջանակների գլխավոր խնդիրը հետևյալն էր. Դարդանելի գործողությունը ոչ միայն թուրք ազգային ինքնության «գոյապայքարի» էական խորհրդանիշներից մեկն էր, այլև՝ միևնույն ժամանակ որպես Հայոց ցեղասպանության այլընտրանք, թուրքերի քաշած տառապանքների խորհրդանիշը: Այդ պատճառով որևէ հայի խոսքը, թե՛ «ես էլ եմ այդ ռազմաճակատում կռվել և վիրավորվել, անգամ մեդալ եմ ստացել», ընկալվեց որպես այդ խորհրդանիշին հասցված մի մեծ հարված: Ազգայնամուլ շրջանակների համաձայն՝ այդ գիրքը «հայկական սփյուռքի վերջին խաղն էր», որն օրակարգ էր բերվում 2015 թ. Ցեղասպանության պնդումներն ընդունել տալու նպատակով: Գրքում հրապարակված տեղեկությունները «հորինվածք», «կեղծիք» և «երևակայության արդյունք» էին<sup>16</sup>: Այդ պատճառով ազգայնական շրջանակների հակազդեցությունները չսահմանափակվեցին միայն պատմաբաններով: Գլխավոր շտաբի նախագահությունն անգամ հարկադրված եղավ հանդես գալ հետևյալ հայտարարությամբ. «Դարդանելի ռազմաճակատում Թորոսյան անվամբ ոչ մի սպա չի եղել»<sup>17</sup>:

Երկրորդ առարկությունը հայտնեցին երկու պատմաբաններ՝ Սաբանջը համալսարանից: Հալիլ Բերքթայը և Հաքան Էրդեմը միաբերան պնդեցին, թե Թորոսյանի գիրքն «ամբողջությամբ հորինված է և ճշմարտության հատիկ անգամ չի պարունակում, որը գիտական տեսանկյունից կկարողանային օգտագործել

16 Որպես նման առարկության մի օրինակ՝ տե՛ս <http://www.hristiyangazete.com/2012/09/yard-docdr-atabay-ve-yard-doc-dr-sayilir-canakkaleden-filistine-kita-bi-hayal-urunu/>:

17 “Torosyan Savaşçıları”, *Hürriyet*, 16 Aralık 2012.

պատմաբանները»<sup>18</sup>: Ըստ Բերքթայի՝ Թորոսյանը ոչ միայն ընդամենը «մի հայ և Ցեղասպանության զոհերից էր...», այլ նաև, հավանաբար, «մի անձ, ով կյանքի մայրամուտին ցանկացել էր էժանագին փառք և մի քիչ էլ դրամ վաստակել»<sup>19</sup> և «տպագիր աղբյուրներն իր առջև դնելով՝ մի վեպ էր գրել»<sup>20</sup>:

Բերքթայը սույն թեմայի վերաբերյալ 34 հոդված է գրել «Թարաֆ» օրաթերթում, որի սյունակագիրն էր: Դրանցից առաջին 13-ը հրապարակվել էին 2012 թ. նոյեմբերի 24-ից առաջ, որից հետո ես ևս ընդգրկվեցի այդ քննարկումներում: Բերքթայն այդ առաջին շարքն սկսեց այն տեղեկությամբ, թե իր պապը՝ Հալիլ Նամըք բեյը, հրետանավոր սպա է եղել Դարդանելում, և այդ պատճառով ինքը մեծացել է Դարդանելի ճակատամարտերի մասին պատմություններով, և Թորոսյանին համեմատեց իր մեծ հոր՝ Հալիլ Նամըք բեյի հետ: Բերքթայի համաձայն՝ Սարգիս Թորոսյանը «Lawrence of Arabia մականվամբ մեկն էր», իսկ իր պապը՝ Նամըք բեյը, «հանգիստ և չափազանցությունների մեջ չընկնող... մի մարդ էր. նա երբեք չէր սիրում իր դերը մեծացնել»<sup>21</sup>: Բերքթայի՝ Թորոսյանին վերաբերող գլխավոր առարկությունը հետևյալն էր. «Ընտանեկան հուշերը չեն կարող պատմություն համարվել (եթե անգամ հավատարիմ են ճշմարտությանը, ինչպիսիք էին իմ պապինը և ոչ թե՛ Թորոսյանինը)»<sup>22</sup>:

Բերքթայի՝ հետագայում ևս կրկնած գլխավոր թեզը սա էր. «Պատմագրության մեջ... ամեն տեքստ չի կարող որպես աղբյուր ընդունվել, որը կարելի կլինի օգտագործել: Պետք չէ ամեն տեքստ որպես հուշագրություն ընդունել, ինչ է թե վրան «Հուշեր» է գրված. այն կարող է և վեպ լինել»: Այդ պատճառով,

ըստ Բերքթայի, Թորոսյանի հուշերը չեն կարող որպես պատմական աղբյուր կիրառվել: Բերքթայը, այդ առումով Թորոսյանի հուշերը և Դարդանելի ճակատամարտերի մասին իր ասածները ենթարկելով ճշմարտության թեստի, ընդգծեց.

«Թորոսյանն ասում է, թե Ռազմական դպրոցն ավարտելուն պես հրամանատար է նշանակվել «Էրթուղուլի» անվան միջնաբերդում. դա անհնար է, որովհետև միջնաբերդի հրամանատար կարող են լինել միայն ավագ լեյտենանտներն ու կապիտանները»<sup>23</sup>:

Թորոսյանն ասում է, թե փետրվարի 19-ին մի անգլիական ռազմանավ խորտակվել է իր միջնաբերդից բացված կրակի հետևանքով. դա անհնար է, քանզի փետրվարի 19-ին ոչ մի ռազմանավ չի խորտակվել, արդեն իսկ այդ օրը ծովամարտ չի եղել. միայն վերահաշվարկ է կատարվել, և ընդամենը որոշ նավեր են թեթև վնասվել:

Դարձյալ նույն կերպ Թորոսյանն ասում է, թե 1915 թ. մարտի 18-ի ճակատամարտում բացված կրակով անգլիական ռազմանավեր են խորտակվել: Դա ևս ճիշտ չէ. մարտի 18-ին 3 նավ էր խորտակվել, և երեքն էլ՝ ականների պայթյունից<sup>24</sup>:

Թորոսյանը խառնում է ճակատամարտերում ներգրավված անգլիական և ֆրանսիական նավերի անունները: Ասում է, թե խորտակվել է այն նավը, որն իրականում չի խորտակվել: Այլ-չը գազաթն անվանում է Աշչը, նշում, թե «Էրթուղուլի» անվան միջնաբերդում եղած ժամանակ անցել է Ալչըթեփե, մի բան, որ անհնար էր, որովհետև այդ վայրերի միջև եղած տարածությունն առնվազն մեկժամյա տևողությամբ ոտքի ճանապարհ էր<sup>25</sup>:

Նման այլ կետեր ևս հիշատակած Բերքթայը պնդեց, թե Թորոսյանն իր գիրքը գրել էր՝ «հրատարակված աղբյուրներից պատճենահանումներ անելով»: Ըստ Բերքթայի՝ Թորոսյանն

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> Halil Berktaş, "Bu 'tasdiknâme'nin içeriği gerçek dışı", *Taraf*, 01 Kasım 2012.

<sup>18</sup> Halil Berktaş, "Torosyan'ın kimliği açığa çıkınca, sorun halloldu mu," *Taraf*, 12 Aralık 2012.

<sup>19</sup> Halil Berktaş, "Walter Mitty'nin Gizli Hayatı", *Taraf*, 21 Kasım 2012.

<sup>20</sup> Halil Berktaş, "Çanakkale'de Ne Oldu Ne Olmadı", *Taraf*, 27 Ekim 2012.

<sup>21</sup> Halil Berktaş, "Bilvesile, Halil Namık Bey", *Taraf*, 25 Ekim 2012.

<sup>22</sup> Halil Berktaş, "Çanakkale'de Ne Oldu Ne Olmadı", *Taraf*, 27 Ekim 2012.

«առանձնապես լավ չէր ընթերցել 1940-ականներին իր առջև եղած աղբյուրները», այդ պատճառով էլ սխալներ էր թույլ տվել «շտապ կերպով այնպիսի տարրեր պատճենահանելիս, ինչպիսիք էին պաշտպանական ամրությունների գլխավոր գծերը, թնդանոթների տրամաչափերը և հասանելիությունը, հրետանային մարտկոցների անվանումները (դա նման էր Նյու Յորքի պողոտաների անվանումներին, որ կարելի էր գտնել որևէ հեռախոսային ուղեցույցում)»: Գիրքը Թորոսյանի երևակայության արդյունքն էր<sup>26</sup>: Այդ պատճառով այն հնարավոր չէր որպես աղբյուր օգտագործել պատմագրության մեջ:

### Իմ ներգրավումը քննարկումներում

2012 թ. նոյեմբերի 23-ին շատ անուղղակի կերպով ներգրավվեցի այդ քննարկումներում: Ցեղասպանության ընթացքում հայկական ունեցվածքի բռնագրավման խնդրի վերաբերյալ հրատարակված վերջին գրքիս կապակցությամբ «Ակոս» շաբաթաթերթին տվածս մի հարցազրույցում քննադատեցի այն, որ Թորոսյանի հուշերի վերաբերյալ քննարկումներն ընթանում են միմիայն Դարդանելի օպերացիայի ուղղությամբ և նշեցի. «Չնայած նրան, որ Թորոսյանի հուշերն անմիջականորեն առնչվում են օսմանյան բանակում քրիստոնյա զինվորների և վերջիններիս ընտանիքների բնաջնջման հարցի հետ, այդ քննարկումների ընթացքում մի բառ անգամ չի ասվել դրա մասին: Երբևէ լսել եք, թե որևէ մեկը հարցնի՝ ինչ պատահեց այդ քրիստոնյա զինվորներին, ինչ եղան նրանց ընտանիքները: Միակ նպատակը Դարդանելի հարցն է, միակ թեման՝ նավերը: Նավը խորտակվել է, թե՛ չի խորտակվել, ամսի տասնութն էր, թե՛ տասնինը: Ա՞յն գագաթն էր, թե՛ այս: Թեմաներ, որոնք կարելի է օրերով ու ամիսներով քննարկել՝ առանց որևէ արդյունքի հասնելու: Մարդ ամաչում է, դեմքը կարմրում է, երբ հետևում է

այդ քննարկումներին: Անշուշտ զարմանալի չէ, որ Ցեղասպանությունը գաղտնիք է մի երկրում, որտեղ նույնիսկ մտավորականներն են այդպիսին...»:

Բացի այդ՝ քննարկումների մասնակիցներին մեղադրեցի օսմանյան բանակում քրիստոնյա զինվորների և Հայոց ցեղասպանության հարցում Այհան Աքթարի կողմից մի փոքր կիսաբաց արված դուռը համախմբված կերպով դեմքիս փակել ջանալու մեջ և շեշտեցի, որ դա «այլ բան չէ, քան Հայոց ցեղասպանության գաղտնիքը կոծկելու ձգտում»<sup>27</sup>:

Այդ աննշան անդրադարձիցս անմիջապես հետո Հալիլ Բերքթայը գրեց ևս 6 հոդված: Համաձայն Բերքթայի՝ Հայկական հարցը կոծկելու մեջ մեղադրանքն անարդար էր, և «աշխարհը բաղկացած չէ բացառապես Հայկական հարցից: Կան ավելի մեծ և ավելի էական բաներ, ինչպիսիք են գիտական բարոյականության պահպանումը և ստի դեմ ճշմարտությունն ասելը»<sup>28</sup>: Հարցը, որին ինքն անդրադարձել է, կապված էր այն խնդրի հետ, թե Թորոսյանի գիրքը հնարավոր էր պատմագրության մեջ օգտագործել, թե ոչ, և «պատմագրության մեջ... յուրաքանչյուր տեքստ անհնար էր ընդունել որպես աղբյուր»<sup>29</sup>:

Բայց և այնպես, Բերքթայը, իմ քննադատությունների վրա հիմնվելով, ընդունեց, որ առկա են Թորոսյանի խնդրի լայն և նեղ շրջանակներ, և լայն շրջանակով փաստվում են Առաջին աշխարհամարտում հայերի աքսորը և բնաջնջումը: Ինչ վերաբերում է իր կողմից 13 հոդվածներում միայն Դարդանելի գործողությանը անդրադառնալուն, ապա դա բացատրեց երեք պատճառներով, ըստ որոնց՝ ինքը քաջատեղյակ էր Դարդանելի ճակատամարտի մասին, Այհան Աքթարի հետ իր բանավե-

<sup>27</sup> **Taner Akcam**, «İttihatçıların Başladığı İşi Cumhuriyet Hukukla Bitirdi», *Agos*, 23 Kasım 2012.

<sup>28</sup> **Halil Berktaş**, «Bu da Fazıl Say'ın 'kültürel diktatörlük' özlemi», *Taraf*, 01 Aralık 2012.

<sup>29</sup> **Halil Berktaş**, «Bir metnin 'iç kritiği' ne demektir?», *Taraf*, 08 Aralık 2012.



ճը սահմանափակված էր միայն Դարդանելի գործողությամբ, մտադիր չէր Թորոսյանի գրքի ամբողջական ուսումնասիրությունը կատարել, և Հաքան Էրդեմն էր, որպես տվյալ ժամանակաշրջանի մասնագետ, այդ մասին նախաձեռնել գիրք գրել<sup>30</sup>:

Հալիլ Բերքթայը, իմ արած քննադատությունից հետո սույն թեմայի՝ Հայոց ցեղասպանության հետ կապն ընդունելով հանդերձ, ինձ՝ «մասամբ», իսկ Այհան Աքթարին՝ «լիովին» մեղադրեց «պատմական փաստերը պաշտպանելու փոխարեն» «ընդհանուր հայասիրությանը փարվելու» և «հայկական սփյուռքում հրապարակված ամեն բան անխոհեմ համակրանքով ընդունելու ծուղակն ընկնելու մեջ»<sup>31</sup>: Ինչ վերաբերում է գրքի վերաբերյալ իր հիմնական կարծիքին, ապա շարունակեց այն պահպանել, ըստ որի՝ Թորոսյանի գիրքը «ոչ թե որոշ հատվածներում, այլ՝ ամբողջության մեջ հորինված մի գիրք է»<sup>32</sup>:

Հալիլ Բերքթայի պնդումներին պատասխանեցի մի հոդվածով, որը հրատարակվեց «Թարաֆ» օրաթերթի 2012 թ. դեկտեմբերի 14-ի համարում: Իհարկե, որևէ հուշագրություն կարող էր իրականությանը համապատասխան լինել-չլինելու թեստին ենթարկվել, սակայն Թորոսյանի հուշերի հիմնական կարևոր կողմն այն էր, որ գիրքը թե՛ միայն որպես թուրքական հաղթանակ ներկայացվող Դարդանելի գործողությանը մեր անդրադարձի ոճը փոխելու ներուժ էր ունենալու և թե՛ դուռ էր բացելու մինչ օրս բացարձակապես չարժարժված՝ օսմանյան բանակում քրիստոնյա զինվորների փաստի մասին մեր քննարկումների համար:

Ինձ հետևյալ հարցն էր հետաքրքրում. արդյոք ինչի՞ համար էին բանավիճողները նախընտրել լռել վերոնշյալ երկու հարցերի շուրջ: Դարդանելի գործողության ժամանակ թնդանոթի տրամաչափի և զագաթի անվանման հարցում «գիտական բա-

րոյականությունը պահպանելու» զգայունությունն ինչո՞ւ բոլորովին չցուցաբերվեց օսմանյան բանակում ծառայած քրիստոնյա զինվորների և նրանց ընտանիքների բնաջնջման հարցում:

### Հաքան Էրդեմ.

#### Թորոսյանի հուշերն ամբողջությամբ հորինվածք են

2012 թ. դեկտեմբերին Հաքան Էրդեմը Թորոսյանի մասին մոտ 400 էջանոց մի հաստ գիրք է հրատարակում՝ «Թորոսյանի արտառոց պատմությունը իրականի և երևակայականի միջև» վերնագրով: Նա հետևյալ փաստարկով պարզաբանեց, թե ինչու է այդ գիրքը գրել. «Եթե Թուրքիայի մի հեղինակավոր հրատարակչության և մի հարգարժան գիտնականի երաշխավորությամբ պատերազմի մասին մի հուշագրություն չհրատարակվեր, խորապես կասկածում եմ, թե այդ գրքի մասին ուսումնասիրություն անեի»<sup>33</sup>: Էրդեմի առարկությունը վերաբերում էր այն փաստին, որ Թորոսյանի հուշերը շրջանառության մեջ էին դրվել որպես պատերազմի մասին մի հուշագրություն: Այնինչ, ըստ նրա, Թորոսյանի հուշերը «ոչ մի հարցում չէին կարող աղբյուր լինել», և նա իր գիրքն էլ գրել էր, որպեսզի կարողանար ցույց տալ, թե «ինչու չէին կարող»<sup>34</sup>:

Էրդեմի գիրքը նման է ռազմաճակատային հարձակման՝ ընդդեմ Թորոսյանի հուշերի: Էրդեմը Հալիլ Բերքթայի՝ Դարդանելի գործողության համար կիրառած մեթոդը տարածում է նաև Մակեդոնիայի, Ռումինիայի, Իրաքի և Պաղեստինի ռազմաճակատների վրա: Դարդանելի առումով նրա եզրահանգումը նույնն էր, ինչ Բերքթայինը: Էրդեմի խոսքով Թորոսյանի՝ «Դարդանելի, Ռումինիայի, Մանասթըրի, Իրաքի և Պաղեստինի ռազմաճակատների մասին պատմածները սկզբից մինչև վերջ

30 Halil Bertay, "Tartışmanın dar çerçevesi", *Taraf*, 05 Aralık 2012.

31 Halil Bertay, "Tartışmanın Geniş Çerçevesi", *Taraf*, 6 Aralık 2012.

32 Halil Bertay, "Tartışmanın dar çerçevesi", *Taraf*, 5 Aralık 2012.

33 Y. Hakan Erdem, *Gerçek ile Kurmaca Arasında Torosyan'ın Acayip Hikâyesi*, s. 348.

34 "Bilim adamı yazdığıının arkasında olmaz", *Zaman*, 21 Aralık 2012.

հորինվածք են: Այդ ռազմաճակատներում տեղի ունեցած դեպքերի ընթացքը, ռազմական զորամիավորումների համարները և հրամանատարների անունները չեն համապատասխանում պատմական փաստերին... Թորոսյանն իրականում նույնիսկ ռազմական դպրոցի շրջանավարտ էլ չի եղել, հետևաբար՝ չէր կարող հրետանային սպա լինել»<sup>35</sup>:

Ըստ Էրդեմի՝ հուշերում ճիշտ էին միայն Թորոսյանի անունն ու ազգանունը, ծննդավայրը, մոր, հոր և երկու եղբայրների անունները և վերջիններիս՝ Ամերիկայում ապրած լինելը: Հավանական էր նաև, որ Հայկական լեգեոնի հետ գտնվել էր Կիլիկիայում, բայց, դրանցից բացի, ճշմարտությանը մոտ ուրիշ ոչ մի բան չկար<sup>36</sup>: Թորոսյանի գիրքը ոչ թե հուշագրություն էր, այլ՝ «սցենարից բաղկացած և հորինված մի տեքստ, որում պատմվում են այն վայրերի մասին, որտեղ հեղինակը երբեք չի եղել, ոտք անգամ չի դրել, կերպարների մասին, ովքեր երբեք գոյություն չեն ունեցել»<sup>37</sup>: Մի խոսքով՝ ամբողջությամբ հորինվածքից կազմված այդ գիրքը «ճշմարտության մասնիկ անգամ չէր պարունակում, որ գիտական առումով կարողանային օգտագործել պատմաբանները»<sup>38</sup>:

Հաքան Էրդեմի պնդումները և դրանք փաստարկող տեղեկությունները հետևյալն էին. սուտ է, որ Թորոսյանն ավարտել է ռազմական դպրոցը: Էրդեմի՝ այդ հարցում ներկայացրած փաստարկն այն է, որ երբ Թորոսյանը 1920 թ. մուտք էր գործել Ամերիկա, որպես առևտրական էր ներկայացել, 1940 թ. բնակչության հաշվառման ժամանակ ասել էր, թե մասնագիտությամբ ներկարար էր և ավարտել էր միայն դպրոցի 6-րդ դասարանը:

35 Hakan Erdem ile Gülenay Börekçi'nin yaptığı mülakat. "Torosyan'ın şaibeli hatıratı." Habertürk, 23 Aralık 2012.

36 Նույն տեղում:

37 Y. Hakan Erdem, *Gerçek ile Kurmaca Arasında Torosyan'ın Acayip Hikâyesi*, s. 261, 281.

38 Halil Berktaş, "Torosyan'ın kimliği açığa çıkınca, sorun halloldu mu," *Taraf*, 12 Aralık 2012.

Թերևս կարելի էր հասկանալ, թե ինչու է Ամերիկա մտնելիս բացքել օսմանյան բանակում պաշտոն ունենալը, սակայն էական էր այն, որ 1940 թ. ասել էր, թե միայն 6-ամյա կրթություն է ունեցել<sup>39</sup>:

Անշուշտ, հիմնական աղբյուրը, որը ցույց կտա Թորոսյանի՝ ռազմական դպրոց ավարտել-չավարտելը, տվյալ դպրոցի շրջանավարտների ցուցակն է: Դժբախտաբար այդ ցուցակները գաղտնի են պահվում Գլխավոր շտաբի պահոցներից մեկում և մատչելի չեն: Սակայն ուշագրավ է, որ այդ ամբողջ բանավեճի ընթացքում, Այհան Աքթարից բացի, ոչ ոք չբարձրացրեց այն հարցը, որ Գլխավոր շտաբի նախագահության կողմից նմանատիպ տեղեկությունները գաղտնի պահելն անհասկանալի է, և որ քանի դեռ այդ արխիվը չի բացվել, անհնար է գրել ռազմական պատմությունը: Աքթարը, իրավացի լինելով, քննադատեց այն հանգամանքը, որ Բերքթայը թեմայի շուրջ իր հեղինակած 13 հոդվածներից և ոչ մեկում բացարձակապես չի անդրադարձել այդ հարցին<sup>40</sup>: Հարկ է հավելել, որ Հաքան Էրդեմի 400 էջանոց գրքում ևս, անգամ հպանցիկ, ոչ մի անդրադարձ չկա այդ թեմային:

Էրդեմի՝ Թորոսյանի հուշագրության՝ երևակայության արդյունք լինելու մասին թեզի եկրորդ էական փաստարկն այն է, թե Թորոսյանը 1916 թ. մուտք է գործել Ամերիկա: Այդ տեղեկության լույսի ներքո կարելի էր հաստատապես ասել, թե հատկապես 1916 թվականին և դրանից հետո տեղի ունեցածների մասին Թորոսյանի պատմածները, բացառությամբ թերևս 1919 թվականին և հետագա տարիներին Կիլիկիային վերաբերող հատվածների, ամբողջությամբ երևակայության արդյունք են: Սա իրոք չափազանց կարևոր պնդում է, սակայն Հաքան Էրդեմը դա հաստատող ոչ մի փաստաթուղթ չի ներկայացնում: Միակ փաստարկն այն է, թե որպես ԱՄՆ Թորոսյանի մուտքի

39 Y. Hakan Erdem, *Gerçek ile Kurmaca Arasında Torosyan'ın Acayip Hikâyesi*, s. 291.

40 Ayhan Aktar, "Tarih yazımında askerî vesayet meselesi", *Taraf*, 29 Kasım 2012.

իրական ամսաթիվ հանդիսացող 1920 թ. դեկտեմբերի մասին նավի արձանագրության մեջ նրա անվան ուղղությամբ առկա էր մատիտով արված «1916 թ.» նշումը: Թորոսյանն իրիք ԱՄՆ էր մուտք գործել 1916 թ., թե՛ այդ ժամանակ պատերազմում էր բալկանյան ռազմաճակատում, ինչպես այդ մասին նշել է իր հուշերում: Թորոսյանի կողմից սեփական պատմությունը ներկայացնել-չներկայացնելու առումով այդ հարցը խիստ էական է, և ինչպես ցույց կտամ ստորև, Հաքան էրդեմը սխալվում է:

Շատ ուշագրավ է նաև գրքում տեղ գտած ռազմաճակատային լուսանկարների մասին էրդեմի մեկնաբանությունը: Ըստ էրդեմի՝ «հինգ ռազմաճակատի մասին մի երևակայական պատում հորինած գրողի համար համազգեստով լուսանկար անել տալը չէր կարող ավելի մեծ հոգս լինել, քան այդ պատումը ստեղծելը»: Եւ էրդեմի համաձայն՝ Թորոսյանը կարող էր «... սպայական համազգեստով այդ լուսանկարներն անել տալ Կիլիկիայում գտնված ժամանակ»<sup>41</sup>:

Եթե Թորոսյանի հուշերը ամբողջությամբ հորինվածք էին, ապա ինչո՞ւ և ինչպե՞ս էր նա այդ գիրքը գրել: Էրդեմն այդ հարցերի պատասխանն էլ է տալիս: Ըստ էրդեմի՝ Թորոսյանը «զինվորական գործի նկատմամբ հակում ունեցող, ռազմական թեմաներով գրված գրքերի, հատկապես հուշագրությունների սիրահար»<sup>42</sup> էր: Եւ նրա գիրքը հարկավոր է ընթերցել որպես «սփյուռքում անցկացրած իր առօրյա կյանքի դեպրեսիվ անհաջողությունները իր տեքստում նկարագրված արտակարգ հաջողություններով փոխհատուցել ձգտող» մեկի «դեղեկտիվ վեպ»: Նա այդ գիրքը գրելով՝ կարող էր «թե՛ փող, թե՛ հոչակ և թե՛ այդ ամենն իր հետ բերող հասարակական հարգանք ակնկալել»<sup>43</sup>:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե նա ինչպես էր այդ գիրքը

41 Y. Hakan Erdem, *Gerçek ile Kurmaca Arasında Torosyan'ın Acayip Hikâyesi*, s.348.

42 Նույն տեղում, էջ 275:

43 Նույն տեղում, էջ 349:

գրել, ապա դրա մեկնաբանությունը շատ պարզ է. «Նա այնպիսի մեկն էր, ով գրող լինելու համար շատ ժամանակ ուներ»<sup>44</sup>: Գործազուրկ էր դարձել 1929 թ. ճգնաժամի ընթացքում: 1940 թ. անցկացված մարդահամարի ժամանակ հայտնել էր, որ «6-7 տարուց ի վեր աշխատանք էր փնտրում»: Նրա «հեղինակային փորձերը հասկանալի էին դառնում այդ հետնաբեմի լույսի ներքո»<sup>45</sup>: Գործազուրկ եղած այդ տարիներին բազմաթիվ գրքեր ընթերցած Թորոսյանը ցանկացել էր «միջին ամերիկացի ընթերցողի՝ Արևելքի հանդեպ հետաքրքրությունը բավարարող, լավ վաճառք խոստացող մի գիրք հեղինակելով՝ իրեն և իր ընտանիքին փրկել այդ խրոնիկական դժվարին դրությունից»<sup>46</sup>: Գիրքն սկսել է գրել 1929 թ. և ավարտել 1947-ին<sup>47</sup>:

Էրդեմն իր գրքում նաև 1920-1930-ական թվականներին տպագրված գրքերի մի ցանկ է ներկայացնում, որոնք Թորոսյանը կարող էր կարդացած լինել: Օրինակ՝ սխալ կլիներ ենթադրել, թե նա Դարդանելի գործողության մասին գրելիս «չի օգտվել տվյալ ժամանակաշրջանին վերաբերող անգլիական գրականությունից»: Թորոսյանն «այնպիսի թեմաների մասին, ինչպիսիք են՝ զորամիավորումների համարները, աշխարհագրությունը, հրամանատարների անունները և կարևոր ճակատամարտերի ամսաթվերը, տեղեկանում էր այդ ընթերցումների շնորհիվ, հետո, երբ սկսել էր իր տեքստը գրել, այդ տեղեկությունները համեմել էր երևակայականով»: «Իր կարդացածներն ինչպես որ գիտակցաբար էր փոփոխում, այնպես էլ երբեմն անգիտակցաբար սխալներ ու վրիպումներ էր թույլ տալիս»: Մի խոսքով՝ Թորոսյանն «անում էր այն ամենը, ինչ անում են բոլոր պատմակեղծարարները»<sup>48</sup>:

44 Նույն տեղում, էջ 345:

45 Նույն տեղում, էջ 262-263:

46 Նույն տեղում, էջ 306:

47 Նույն տեղում, էջ 262 և 345:

48 Նույն տեղում, էջ 263-264:

Այստեղ իրավամբ կարող է հարց ծագել, թե այն մարդը, ում վերաբերյալ պնդում են, թե միայն վեցամյա կրթություն է ստացել, ինչպե՞ս կարող էր վերոգրյալն անելուն ընդունակ մի մտավորականի կարողություններ ունենալ: Սակայն, ինչպես ցույց կտամ ստորև, դրանից էլ ավելի կարևոր է այն փաստը, որ Թորոսյանն արդեն իսկ ինքը չէր գրել այդ գիրքը, այլ այն պատմել էր հայերենով, և անգլերեն իմացող մի անձ թարգմանել էր նրա պատմածը: Գիրքն ավարտվել էր 1929 թվականին: Այսինքն՝ Թորոսյանը հնարավորություն անգամ չէր ունեցել տեսնել, կարդալ այն գրքերի մեծ մասը, որոնց մասին նշում է Էրդեմը: Այդ դեպքում միայն մեկ բացատրություն ունի այն փաստը, որ Թորոսյանի հուշերը բովանդակային առումով նմանություն ունեն էրդեմի նշած գրքերի հետ. Թորոսյանը գտնվել է այդ ռազմաճակատներում... Արդեն իսկ Էրդեմը ևս ասելով, թե միայն այդ գրքերի ընթերցողները կարող են այդ տեղեկություններին հասու դառնալ, այդ կերպ ակամա ընդունել էր Թորոսյանի հուշերի ճշմարտացի լինելու իրողությունը:

Թորոսյանի մասին քննարկումների թեմայով մի ծավալուն հոդված հեղինակած Այհան Աքթարը մեկ ուրիշ բան էլ մատնացույց արեց: Թորոսյանի գրքում առկա են բազմաթիվ մանրամասներ, որոնք տեղ են գտել Էրդեմի նշած գրքերում, որոնց ճիշտ լինելը, սակայն, կարող ենք ապացուցել արդի ուսումնասիրությունների միջոցով<sup>49</sup>: Ըստ էության՝ նույնիսկ միայն այդ փաստն ինքնին բավարար էր ցույց տալու համար, որ Թորոսյանը սեփական պատմությունն էր պատմում՝ թեկուզ և չափազանցություններ և սխալներ թույլ տալով:

49 Ayhan Aktar, “Yüzbaşı Torosyan Tartışması yahut ‘Alaturka’ Tarihçiliğın Açmazları”, yayınlanmamış makale.

## Մեծ հետաքրքրություն էրդեմի գրքի նկատմամբ և դրան առնչվող խնդիրները

Հաքան Էրդեմի գիրքը, չնայած մի շարք այլ էական սխալների, որոնք չեն մանրամասնելու, խիստ մեծ հետաքրքրություն հարուցեց: Օրաթերթերում սույն գրքի վերաբերյալ բազմաթիվ լուրեր և Հաքան Էրդեմի հետ հարցազրույցներ հրապարակվեցին<sup>50</sup>: «Հյուրիեթ» օրաթերթը Թորոսյանի մասին քննարկումների վերաբերյալ լուրը հրատարակեց իր առաջնորդողում՝ որպես գլխավոր լուր<sup>51</sup>, իսկ Թահա Աքյոլը պնդեց, թե անհրաժեշտ է «Հաքան Էրդեմի աշխատությունը օտար լեզուներով հրատարակել և ներկայացնել աշխարհի պատմաբանների ուշադրությանը»<sup>52</sup>:

Այդ արձագանքներից հասկանալի էր, որ քննարկմանը հետևողների մտքում Հայոց ցեղասպանության մասին պնդումներն էին, եթե անգամ դրա մասին բոլորովին չէին խոսում: Այդ պատճառով Հաքան Էրդեմի գիրքն ընդունվեց որպես Ցեղասպանության մասին պնդումներն անհիմն դարձնող մեկ այլ փաստարկ, անցյալում Հայոց ցեղասպանությունն ապացուցել ցանկացած անձինք հաճախակի դիմել էին «կեղծ փաստաթուղթ արտադրելու» քաղաքականությանը: Դրա վառ օրինակներն էին 1919 թ. Արամ Անտոնյանի հրատարակած՝ Թալեաթ փաշայի հեռագրերը, որոնց կեղծ լինելը պնդվել էր հետագայում, ինչպես նաև՝ արտակարգ և լիազոր դեսպան Մորգենթաուի հուշերը: Հիմա էլ Հաքան Էրդեմն էր ապացուցել, որ Թորոսյանի հուշերը և դրանցում տեղ գտած փաստաթղթերը նույնպես կեղծ էին, ինչպես վերոնշյալ գրքերը<sup>53</sup>:

50 Միայն մի քանի օրինակներ բերենք՝ Zaman, 21 Aralık 2012; Radikal, 18 Aralık 2013; HaberTürk, 23 Aralık 2012 և Yeni Şafak, 16 Ocak 2013:

51 Տե՛ս Շեհրիբան Օղհանի «Թորոսյանի վերաբերյալ վեճը» վերնագրով հրապարակումը «Հյուրիեթի» 2012 թ. դեկտեմբերի 16-ի համարում:

52 Taha Akyol, “Torosyan Tartışması”, *Hürriyet*, 17 Aralık 2012.

53 İbrahim Kiras, “Sahte Belge Doğru Tarih”, *Star*, 20 Aralık 2012.

Հաքան Էրդեմի գրքում և վերջինիս շուրջ ծավալված քննարկումներում ևս, որպես ոչ էական մանրամասներ, աչքաթող արվեցին Թորոսյանի՝ մի քրիստոնյա զինվոր լինելու, նրա ընտանիքի աքսորվելու և բնաջնջվելու, այսինքն՝ Ցեղասպանության փաստերը, որոնք լիովին անտեսվեցին: Իսկ ես մեղադրվեցի «կողմնապահ մտավորական» լինելու մեջ, որովհետև ասացի, թե այդ հուշագրությունը չի կարող քննարկվել՝ առանց իմանալու և ըմբռնելու Հայոց ցեղասպանության համատեքստը<sup>54</sup>:

Համատեքստից դուրս գտնվելն այն աստիճանի էր, որ Հաքան Էրդեմն իր գրքում Թորոսյանի քրոջ պատմությունը ներկայացրել է թեթև հեգնանքով՝ կիրառելով «իբրև թե եղել է» արտահայտությունը: Նա առաջ է քաշել նաև այն պնդումը, թե իբր ոչ մի ապացույց չկա առ այն, թե «նրա ծնողները մահացել են 1915 թ. դեպքերի ժամանակ»<sup>55</sup>: Ամբողջ գրքում գերիշխող է չափազանց հեգնական լեզուն: Թե՛ այդ լեզուն և թե՛ գրքի՝ լայն շրջանակների կողմից ստացած հավանությունը իրականում մեկ այլ իրողության ցուցանիշն էին: Թուրքիայի թե՛ հասարակական կարծիքի և թե՛ գիտական աշխարհի համար շատ օտար էին մեծ զանգվածային կոտորածները և դրանցից փրկված մարդկանց՝ սեփական ապրումները ներկայացնելու փորձերը:

Ցանկանում եմ մի օրինակ բերել այդ օտար լինելու և Ցեղասպանության համատեքստը լիովին մոռացության մատնելու վերաբերյալ: Հաքան Էրդեմի՝ Թորոսյանի կեղծ լինելու մասին ներկայացրած ամենամեծ փաստարկն այն պնդումն էր, թե 1916 թ. Թորոսյանը գնացել էր Ամերիկա: Դա պնդել կարողանալու համար պետք է պատկերացնենք, որ 1916 թ. մի օսմանահպատակ հայ անձնագիր է ստացել և այդ անձնագրով բնականոն ճանապարհով արտասահման մեկնել և Երոպայով անցնելով՝ հասել Ամերիկա: Մինդեռ 1915 թ. ապրիլից սկսած

հայերի՝ երկիր մուտք գործելն ու երկրից դուրս գալն արգելված էր: Անհնար էր, որ որևէ հայ 1916 թ. անձնագիր ստանալով՝ արտերկիր մեկներ: Ամերիկայի քաղաքացի և ամերիկյան անձնագիր ունեցող հայերին անգամ դուրս գալու իրավունք չէր տրվել. նրանք ևս աքսորվել ու սպանվել էին: Այս պարզ ու հասարակ փաստերը լիովին մոռացության մատնվեցին այդ ամբողջ քննարկումների ընթացքում:

Երկրորդ չափանիշն էլ կար, որին հանգեցրել էր Ցեղասպանության համատեքստից հեռանալը: Գրեթե բացարձակապես օրակարգ չէր բերվել Թորոսյանի՝ Ամերիկայում անցկացրած կյանքի թեման, և բացի այդ՝ կանխակալ կարծիք պարունակող մի շարք գաղափարներ էին առաջ քաշվել հայկական սփյուռքի վերաբերյալ: Առանց որևէ ուսումնասիրություն կատարելու՝ պնդվել էր, թե Թորոսյանը չէր կարողացել հայերի շրջանում «պատմել իր ռազմական սխրագործությունների մասին, քանի որ որպես սպա ծառայել էր օսմանյան բանակում, լուրջ հակազդեցություն էր ստացել հայկական համայնքի կողմից, սփյուռքի ազգայնական շրջանակներն աչքից հեռու մի վայրում էին թաղել այդ հուշագրությունը, քանի որ այն պատկանել էր օսմանյան բանակի մի սպայի, Թորոսյանի հուշերը պատվել էին լռության քողով» և այլն, և այլն<sup>56</sup>:

Պարտադիր դարձավ քննարկմանը ներգրավել Ցեղասպանությունից փրկված հայկական սփյուռքին և Թորոսյանի ընտանիքի՝ Ամերիկայում ունեցած պատմությունը: Իրականում Այհան Աքթարը թե՛ իր գրքի հրատարակումից առաջ և թե՛ հետո շատ էր ջանքեր գործադրել՝ Թորոսյանի ընտանիքի ողջ մնացած անդամներին գտնելու գործում, հաջողացրել էր գտնել Թորոսյանի թոռնուհուն՝ Լուիզ Շրեյբերին, բայց չէր կարողացել հանդիպել նրա հետ: Աքթարն իր ձեռքի տակ գտնվող բոլոր տեղեկություններն ինձ փոխանցելով՝ խնդրեց, որ խոսեմ Շրեյբերի հետ:

54 Taha Akyol, "Torosyan Tartışması", *Hürriyet*, 17 Aralık 2012.

55 Y. Hakan Erdem, *Gerçek ile Kurmaca Arasında Torosyan'ın Acayip Hikâyesi*, s. 228-229.

56 Չակերտներով բերված արտահայտությունները պատկանում են Հաքան Էրդեմին, տես նույն աշխատության 268 և 349 էջերը:

## Թորոսյանի թոռը և նոր չափորոշիչ քննարկման մեջ

Լուիզ Շրեյբերի հետ իմ ունեցած հանդիպումը և նրա տված փաստաթղթերը լրիվ նոր ընթացքի մեջ դրեցին Թորոսյանի շուրջ բանավեճը<sup>57</sup>։ Թորոսյանը ոչ թե պատերազմական գրքեր ընթերցելու սիրահար, հանգստության և խաղաղության մեջ ուսումնասիրություններ կատարելով՝ վեպեր հորինած մեկն էր, ինչպես դա պնդում էին Հալիլ Բերքթայն ու Հաքան Էրդեմը, այլ՝ իր ապրած տրավմաների պատճառով հիվանդացած, ապրուստ հայթայթելու հարցում նեղություններ կրած, Ցեղասպանության զոհը դարձած մի մարդ։ Լուիզ Շրեյբերի ունեցած տեղեկությունները հիմնված էին իր ձեռքի տակ գտնվող փաստաթղթերի և այն նշումների վրա, որ արել էր իր մոր հետ խոսակցությունների ժամանակ, քանի որ պապը մահացել էր, երբ ինքը տակավին 6 ամսական էր եղել։ Թոռնուհու միջոցով մենք տեղեկացանք, որ.

–Թորոսյանը հիվանդ էր (հետտրավմային ստրեսի հետևանքով առաջացած խանգարում)՝ իր ապրած տրավմայի պատճառով և իր ագրեսիվ լինելու հետևանքով ոչ մի գործում չէր կարողանում երկար մնալ։ Նրա ընտանիքը լուրջ դժվարություններ էր կրել ապրուստի հարցում, և երեխաներից մեկը ստիպված էր եղել դպրոցում ուսումը կիսատ թողնել՝ ընտանիքին օգնելու համար։

–Նա հայկական շրջանակներում ևս հայտնի էր որպես կապիտան Թորոսյան։ Նա երբեք չէր թաքցրել պատերազմի ժամանակ իր հետ կատարված դեպքերը, իր ապրումների մասին հաճախ էր խոսում, բոլորին, հատկապես իր երեխաներին բազում ռազմական պատմություններ էր պատմել։

–Նա գիրքը պատմել էր հայերեն, իսկ գրի էր առել անգլերեն լավ իմացող մի հայ։ Գիրքն ավարտել էր 1929 թ.։ Նույն տարվա

57 “0 kitapta sadece dedemin savašta yaşadıkları var”, *Radikal*, 6 Ocak 2013; “Sarkis Dedem ve İnsanları”, *Radikal*, 7 Ocak 2013.

հոկտեմբերի 31-ին այն հանձնվել էր Ամերիկայի կոնգրեսի գրադարանին (Library of Congress)։ Գրքում ընդգրկված քարտեզը գծել էր սեփական ձեռքերով։

–Հրատարակչության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ գիրքը տպագրել էր տվել՝ իր գրպանից վճարելով 1.650 դոլար։ Բացի այդ, ևս 300 դոլար մուծելով, սեփական գրքից օրինակներ էր գնել։ Այսինքն՝ մենք գործ ունենք մի մարդու հետ, ով ոչ թե գիրք է գրել հարստանալու նպատակով, այլ իր գլխին եկածները ներկայացնելու և դրանք գրքով տպագրել տալու համար իր իսկ գրպանից վճարել է այսօրվա գումարով 20 հազար դոլար։

–Գիրքը հայկական շրջանակների կողմից մեծ արձագանք էր ստացել, քանի որ այնտեղ ներկայացված պատմությունը բոլորովին էլ սովորական չէր եղել։ Գրքի մասին հայերենով և անգլերենով հրապարակումներ են հրատարակվել այնպիսի պարբերականներում, ինչպիսիք են «Հայրենիք», «Պայքար», «Կռունկ» և “Mirror Spectator” թերթերը, որոնցում տպագրվել են գիրքը ներկայացնող հոդվածներ և Թորոսյանի հետ հարցազրույցներ։ Օրինակ՝ Ռամկավար կուսակցության պաշտոնաթերթը՝ “Mirror Spectator”-ը, Դաշնակցության պաշտոնական մամուլ օրգանը հանդիսացող «Հայրենիք» պարբերականը գրքի վերաբերյալ հրապարակել էին վերին աստիճանի դրական հոդվածներ։ Բացի այդ՝ «Հայրենիք»-ը կապիտան Թորոսյանի հետ մի հարցազրույց էր արել՝ այն լույս ընծայելով «Արտակարգ մի մարդ» վերնագրով<sup>58</sup>։

Այսինքն՝ ամբողջ քննարկումների ընթացքում, հատկապես Հաքան Էրդեմի գրքում Թորոսյանի և սփյուռքի մասին առաջ քաշված բոլոր թեզերը հերքվել էին։ Իրականում այդ հերքումը մեկ այլ իմաստ էլ ուներ. թուրքական գիտական աշխարհի վիճակը ողբալի էր դառնում, երբ թեման վերաբերում էր Հայոց ցեղասպանությանը և սփյուռքին առնչվող քննարկումներին։

58 Դրանց միայն մի քանի օրինակներն առկա են Հաքան Էրդեմի նշված աշխատության 268, 270 և 349 էջերում։

–Թորոսյանի ձեռքում կային նաև երկու շնորհակալագրեր, որոնցից մեկը ստորագրված էր Ռազմական նախարար Էնվեր փաշայի կողմից, իսկ մյուսը կնքված էր 21-րդ կորպուսի հրամանատարության կողմից, երբ նա գտնվել էր Ռումինիայի ռազմաճակատում:

### Թողը չի կարող վկա լինել

Ըստ էության՝ Լուիզ Շրեյբերի պատմածների շնորհիվ այլևս պետք էր, որ մի կողմ նետվեր այն պնդումը, թե Թորոսյանը ստի և հորինվածքի վրա հիմնված վեպ էր գրել, և ընդունվեր այն փաստը, որ նա պատմել էր իր կյանքի պատմությունը՝ թեկուզ և չափազանցված գույներով: Հարկավոր էր, որ քննարկումն այլևս ծավալվեր այն հարցերի շուրջ, թե ինչպես էր պետք ընթերցել մեծ տրավմայից հետո գրված այդ հուշերը, պատմագրության տեսանկյունից ինչ տեղ էին գրավում և իմաստ կրում դրանք և ինչպիսի հարաբերությունների մեջ էին իրականության հետ, սակայն այդպես չեղավ:

Հալիլ Բերքթայը և դարձյալ Սաբանջը համալսարանի պրոֆեսորներից Ջեմիլ Քոչաքը պնդեցին, թե Լուիզ Շրեյբերի պատմածները չեն կարող լուրջ ընդունվել: Բերքթայը նշեց, թե քննարկումը վերաբերում էր Թորոսյանի գրքում հանդիպող առարկայական սխալներին, որոնց շուրջ էլ պետք է ծավալվեր բանավեճը: Եւ ինձանից պահանջեց մեկ առ մեկ անդրադառնալ այն կետերին և քննարկել դրանք, որոնք ըստ իր տեսակետի սխալ էին և հերքել դրանք: Կամ Թորոսյանի տեղեկություններն էին սխալ, կամ էլ՝ իր: Ըստ Բերքթայի՝ ես խուսափում էի այդ քննարկումից և ինձ պարտված համարում: Դրա համար էլ «Թորոսյանի բուն տեքստը թողած՝ փորձում էի այլ մեթոդների միջոցով ապացուցել այն, ինչը ճիշտ էր և ոչ թե՛ հորինվածք»: Խուսափում էի նաև Հաքան Էրդեմի գիրքն ընթերցելուց<sup>59</sup>:

59 Halil Berktaş, “Dedenin hayatının tanığı, torunu olabilir mi”, *Taraf*, 9 Ocak 2013.

Բերքթայի համաձայն՝ «երրորդ սերնդի վկան չի կարող վկա համարվել»: «Եթե մի մարդ որոշ պատմական դեպքերի մասին մի բան է գրել, նրա ճիշտ կամ սխալ լինելու մասին միայն իր տարեկիցը, այսինքն՝ տվյալ իրադարձություններին մասնակցած կամ գոնե իր հետ նույն ժամանակաշրջանում ապրած անձը կարող է վկայել»: «Շատ ծիծաղելի վիճակ է, – ասում էր Բերքթայը, – որպես Թորոսյանի գրածների ճշմարտացի լինելու փաստարկ՝ ներկայացվում է իր պապին բացարձակապես չճանաչած, նրա մահվան տարեթվին ծնված, պապի «գլխին եկածների և արած գործերի մասին» միայն ընտանիքի մեջ եղած խոսակցություններից «տեղեկացած» թողը»: Ըստ Բերքթայի՝ դա պատմագրության ողբերգությունն էր<sup>60</sup>:

Պրոֆեսոր Ջեմիլ Քոչաքը ևս նման պնդումներով հանդես եկավ. «Ամբողջությամբ ծիծաղելի է Թորոսյանի քննարկման շրջանակներում նրա թողանքը փնտրելն ու գտնելը, նրա հուշերի հավաստիությունը թողան միջոցով հաստատելը և մտածելը, թե հասու ես դարձել պատմության ճշմարտությանը: Բանավոր պատմությունն ընդունելի կարող է լինել առաջին ձեռքից վկայությունների, տեղեկությունների և դիտարկումների դեպքում միայն: Թե չէ վաղուց մահացած մեծերի մասին իրեն փոխանցվածը չի կարող իմաստալից համարվել»<sup>61</sup>:

### Փաստաթղթերը կեղծ են

Խնդիրը չսահմանափակվեց միայն այն հարցով, թե հնարավոր է վստահել Լուիզ Շրեյբերի պատմածներին, թե ոչ: Մի ավելի լուրջ բանավեճ ևս ծավալվեց: Առաջ քաշվեց այն պնդումը, թե Թորոսյանի պահպանած և թողանքը մնացած երկու օսմանյան փաստաթղթերը կեղծ են: Վավերագրերի վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտած երեք գիտնականներ համա-

60 Նույն տեղում:

61 Cemil Koçak, “Ya Sarkis Torosyan doğru söylüyorsa”, *Star*, 9 Şubat, 2013.

կարծիք էին այն հարցի շուրջ, թե փաստաթղթերը կեղծ են, թեև նրանցից մեկն ավելի զգուշավոր էր արտահայտվել՝ ասելով. «Իմ անձնական կարծիքն այն է, որ դրանք կեղծ են»<sup>62</sup>:

Կեղծ լինելու վերաբերյալ առաջ քաշված փաստարկները հետևյալներն էին.

-երկու փաստաթղթերի ձեռագրերը նույնն էին, և այդ վավերագրերը նույն ձեռքով էին գրվել: Փաստաթղթերի միջև երկու տարվա տարբերություն կար: Տարբեր տարեթվերի և տարբեր հրամանատարությունների պատկանած վավերագրերի՝ նույն ձեռքով գրված լինելը ցույց էր տալիս, որ այդ երկու փաստաթղթերը կեղծ են:

-Փաստաթղթերում գրելաձևի և ուղղագրական էական սխալներ էին արված: Ըստ պրոֆեսոր Էդեմի՝ երկու վավերագրերում մոտ 25 գրելաձևի սխալ էր առկա, և «այդքան մեծ թվով սխալներով լի և տարօրինակ գրելաձև ունեցող մի փաստաթղթի՝ օսմանյան բյուրոկրատիայի կողմից գրվելն անհնար էր»: Էդեմը կարծում է, թե «փաստաթղթերի իրական չլինելը... հաստատ է՝ առանց դույզն-ինչ կասկած հարուցելու»:

-1917 թ. մայիսին պատրաստված այն փաստաթղթում, որի վերաբերյալ ասվում է, թե ստորագրվել է Աբդյուլքերիմ փաշայի կողմից, թե կնիքում և թե տեքստում 21 թիվն է նշված որպես ռազմական կորպուսի համար: Այնինչ Աբդյուլքերիմ փաշան 20-րդ կորպուսի հրամանատարն է եղել: Միայն ռազմական կորպուսի համարի սխալ նշումն ինքնին բավարար է, որպեսզի ցույց տրվի փաստաթղթի կեղծ լինելը:

-Այն փաստաթղթում, որի համար ասվում է, թե էնվեր փա-

62 **Muzaffer Albayrak**, “Sarkis Torosyan’ın Tasdiknâme Belgesi Üzerine Bir İnceleme”, հոդվածը հրատարակվել է “Gelibolu’yu Anlamak” անվամբ մի կայքէջում 2013 թ. հունվարի 9-ին: Տե՛ս [www.geliboluyuanlamak.com](http://www.geliboluyuanlamak.com); **Taha Niyazi Karaca**, “Sarkis Torosyan’a Enver Paşa’nın Verdiği İddia Edilen Belge Üzerine”, Gelibolu’yu Anlamak, 12-րդ հունվարի, 2013 թ.: Տե՛ս [www.geliboluyuanlamak.com](http://www.geliboluyuanlamak.com); **Edhem Eldem**, “Torosyan Belgeleri ve Sonrası”, *Toplumsal Tarih*, 230, Şubat 2013, s. 38-44.

շայի ստորագրությունն է առկա, թղթի բլանկը շատ կոշտ է: «Խիստ կասկածելի է, որ էնվեր փաշան այդչափ կոպիտ բլանկով թուղթ օգտագործեր»: Բացի այդ՝ մեծ է հավանականությունը նաև, որ էնվեր փաշայի ստորագրությունը ևս կեղծ լինի:

Փաստաթղթերի կեղծ լինելու մասին այդ ընդհանուր մոտեցումը նաև տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց: Առաջին մեկնաբանությունն այն փաստարկն էր, թե փաստաթուղթ աղավաղելը հայերի դասական ռազմավարությունն է եղել: «Անցյալում նման ոճի կեղծ փաստաթղթեր են ի հայտ բերվել, որոնք հերքվել են: Բոլորովին կասկած չկա, որ այսուհետ ևս նմանատիպ փաստաթղթեր են հայտնվելու: Քանզի հորինված պատմության անհրաժեշտ աղբյուրը հենց նման փաստաթղթերն են»<sup>63</sup>: Հետևաբար պետք է «կասկածով վերաբերվել Թորոսյանի մասին ամեն մի պատումի, հատկապես՝ նրա հուշագրությանը, և լրջորեն կասկածի տակ վերցնել դրա հավաստիությունը»<sup>64</sup>:

Երկրորդ մեկնաբանությունն արվեց պրոֆեսոր Էդեմի կողմից, ով ընդգծեց երկու տարբեր հանգամանք. «Փաստաթղթերը որպես իրական/կեղծ որակելու և փաստաթղթում նշված հանգամանքների իրական կամ կեղծ լինելն» իրար հետ կապ չունեն: «Բնականաբար, առաջին բանը, որ մարդու միտքն է գալիս, այն է, թե կեղծ փաստաթղթի բովանդակած տեղեկությունները չեն կարող ճիշտ լինել: Թեև հիմնականում դա այդպես է, սակայն երբեք չպետք է մոռանալ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կարող է ճիշտ բովանդակություն ունենալ և հակառակը»: Երկրորդ հանգամանքն այն էր, որ թեև փաստաթղթերի կեղծ լինելու հետևանքով շատ լուրջ կասկածներ են ծնվում Թորոսյանի ասածների վերաբերյալ, սակայն դա չի նշանակում, թե պետք է ժխտել այդ ամբողջ պատմությունը:

63 **T. Niyazi Karaca**, “Sarkis Torosyan’a Enver Paşa’nın Verdiği İddia Edilen Belge Üzerine”, *a.g.e.*

64 **Muzaffer Albayrak**, “Sarkis Torosyan’ın Tasdiknâme Belgesi Üzerine Bir İnceleme”, *a.g.e.*



Թեմայի վերաբերյալ մի երրորդ մեկնաբանություն էլ էր արվել, ըստ որի՝ փաստաթղթերը կարող էին ստեղծված լինել Թորոսյանի կյանքը պահպանելու նկատառմամբ՝ հրամանատարներին տեղեկացրած լինելով:

Ես, որպես այդ փաստաթղթերը հասարակայնությանը ներկայացրած անձ, 2013 թ. փետրվարի 22-ին<sup>65</sup> և ապրիլի 4-ին<sup>66</sup> հրատարակված երկու տարբեր հոդվածներում ներկայացրել եմ թե՛ իմ կարծիքը այն փաստաթղթերի վերաբերյալ, որոնց համար ասվում էր, թե կեղծ են, և թե՛ Թորոսյանի կյանքի մասին իմացածս նոր տեղեկությունները: Դա, միևնույն ժամանակ, Թորոսյանի թեմայով քննարկման վերջը եղավ:

### Թորոսյանի վերաբերյալ քննարկումների առաջին շրջանի ավարտը

Թորոսյանի մասին քննարկումների առաջին փուլն ամփոփող այս երկու հոդվածում հետևյալ տեղեկություններն էի տվել և այս գաղափարներն առաջ քաշել.

-Պատմության լուրջ անտեղյակություն է այն պնդումը, թե որևէ օսմանահպատակ հայ կարողացել է 1916 թ. անձնագիր ստանալով՝ մեկնել ԱՄՆ:

-Առանց այդ էլ իմ կողմից բնագրով հրապարակված այնպիսի բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, ինչպիսիք են Սարգիս Թորոսյանի՝ քաղաքացիության համար դիմումի նպատակով տված երդում պարունակող հայտարարությունը, Աշխատանքի նախարարության՝ Թորոսյանի՝ ԱՄՆ մուտք գործելու տարեթվի մասին տված պաշտոնական փաստաթուղթը և ԱՄՆ-ում անցկացված մարդահամարները շատ բացահայտ կերպով ցույց են տալիս, որ Թորոսյանն ԱՄՆ է մտել միայն 1920 թ.:

65 <http://t24.com.tr/haber/yuzbasi-torosyan-tartismalari-ya-da-suskunlugunsessiz-anlasmasi/224224>.

66 <http://t24.com.tr/haber/torosyan-tartismalari-biten-nedir/227102>.

-Թորոսյանի՝ 1942 թվականին պատկանող զինապարտության վերահաշվառման և նրա առողջական վիճակի վերաբերյալ զեկույցի պես փաստաթղթերում գրված է, որ նրա գլխի ձախ կողմում մի սպի կա: Թորոսյանն իր հուշերում պատմում է, որ 1916 թ. նոյեմբերին Ռումինիայի ռազմաճակատում ծանր վիրավորվել է գլխի ձախ հատվածում: Միայն այս տեղեկությունն ինքնին բավարար է՝ Հաքան Էրդեմի այն թեզը հերքելու համար, թե Թորոսյանն ԱՄՆ է մուտք գործել 1916 թ.:

-Հաքան Էրդեմը մեծ սխալ է գործել՝ իր գրքում հրապարակելով ոչ թե Թորոսյանի, այլ՝ մեկ այլ անձի՝ Ջոն Թորոսքիի զինապարտության վերահաշվառման վերաբերյալ զեկույցը<sup>67</sup>:

-Փաստաթղթերի վերաբերյալ քննարկումը չպետք է ծավալվի այնպիսի սև-սպիտակ երկվության միջոցով, ինչպիսին է «կեղծ-ճիշտ» դիլեման: Ոչ առարկայական պնդում է այն ենթադրությունը, թե Թորոսյանը ձևաթուղթը (բլանկը), էնվեր փաշայի ստորագրությունը և, հատկապես, կնիքը ստեղծել է ԱՄՆ-ում գտնված ժամանակ, և նրա գլխավոր նպատակն էլ եղել է հարստանալը կամ ամերիկացիներին անհեթեթություններ ասելը: Դա նշանակում է ոչ մի տեղեկություն չունենալ թե՛ կեղծ փաստաթղթեր ստեղծելու վերաբերյալ և թե՛ Ցեղասպանությունից փրկված մարդկանց՝ Ամերիկայում անցկացրած կյանքի և ամե-

67 Իմ այդ պնդումից անմիջապես հետո Հաքան Էրդեմն ինձ մեղադրեց առանց աղբյուր մատնանշելու՝ մի այնպիսի փաստաթուղթ հրապարակելու մեջ, որն անհայտ էր, թե որտեղից էի գտել, իսկ Հայիլ Բերքթայը հանդես եկավ իմ անձին ուղղված բացահայտ վիրավորանքներով: Բերքթայը ենթադրելով, թե Էրդեմը խիստ ծանր մեղադրանք է ներկայացրել, որի տակից ես չեմ կարողանալու դուրս գալ, իմ վարմունքը բնութագրեց որպես «գիտական բարոյականության ուղղակի և բացահայտ խախտում»: Նա առաջ քաշեց այն տեսակետը, թե իմ արածը «բարոյական թերություն է» (moral turpitude), և որ այդ վարմունքիս պատճառով ինձ կարող են վնդել այն համալսարանից, որտեղ աշխատում եմ: Տե՛ս Halil Berktaş, "Hakan Erdem'den bir açıklama (ve yorumum)", Taraf, 21 Mart 2013: Այնինչ խնդիրը շատ պարզ էր. Հաքան Էրդեմը չէր ընթերցել փաստաթղթերի համարների վերաբերյալ այն զգուշացումները, որոնք առկա էին այն կայքէջում, որից ներբեռնել էր դրանք, և սխալ թղթապանակ էր օգտագործել:

րիկյան հասարակության՝ այդ մարդկանց նկատմամբ վերաբերմունքի մասին: Ամերիկայում ոչ նման հետաքրքրության, ոչ էլ նման առուծախի վերաբերյալ խոսք անգամ լինել չէր կարող:

-Իմ ենթադրությունը հետևյալն էր. այդ փաստաթղթերը, ամենայն հավանականությամբ, պատրաստվել էին հրամանատարների գիտությամբ՝ այն ժամանակ, երբ Թորոսյանը ծառայում էր բանակում: Դրանց նպատակը հավանաբար կարող է լինել Թորոսյանին վտանգներից պաշտպանելը: Արդեն իսկ Թորոսյանն իր հուշերում հայտնում է, թե ինքը զգում էր, որ իր կյանքը վտանգի մեջ է, և իր հրամանատարները հատուկ ջանքեր էին գործադրել՝ իրեն պաշտպանելու նպատակով: Զինված ուժերում շատ կարևոր են «մասնագիտական բարոյական կանոնները» (Code of Conduct): Սպաներն իրենց ձեռքից եկածն անում էին՝ իրենց հետ մահվան բերան գնացած ընկերներին պահպանելու համար: Հոլոքոստի ժամանակ նույնպես բազմաթիվ «կես և քառորդ» հրեա զինվորներ ողջ են մնացել՝ իրենց հրամանատարների՝ սխալ տեղեկություններ տալու և կեղծ փաստաթղթեր պատրաստելու շնորհիվ: Կարող ենք ենթադրել, որ այստեղ ևս խոսք է գնում նման իրավիճակի մասին:

-Խիստ տարբերություն չկա Թորոսյանի հուշերի և Ցեղասպանությունից փրկված մեկ այլ հայի հուշագրության միջև: Դրանք բոլորն էլ գրվել են այն նկատառմամբ, որ տեղեկացվի հուշերի տիրոջ գլխին եկածների մասին: Դրանց մեծ մասը հայերեն են պատմվել, ապա՝ կամ որևէ ազգականի, կամ էլ մտերիմ ծանոթի կողմից անգլերեն թարգմանվել: Շատ դեպքերում նրանք իրենց սեփական միջոցներով են տպագրել տվել դրանք՝ պատրաստակամ հրատարակչություն չգտնելու պատճառով: Այնպիսի հաջող դեպքերում, ինչպիսին էր Թորոսյանինը, տպագրության գումարի մի մասը տալն ընդհանուր կանոնի պես էր: Նմանատիպ հուշագրական գրքերում շատ նորմալ է այնպիսի բաներ շփոթելը, ինչպիսիք են թվականը, որևէ մարդու կամ վայրի անվանումը, դեպքերի ժամանակագրությունը և այլն, ինչպես նաև՝

չափազանցությունների մեջ ընկնելը: Ճիշտ չի լինի, եթե ուսումնասիրողը հուշերն օգտագործի՝ առանց դրանցում առկա տեղեկություններն այլ աղբյուրներից ճշտելու:

-Այստեղ չի քննարկվում այն հարցը, թե որևէ հուշագրական գիրք կարող է օգտագործվել որպես աղբյուր, թե ոչ: Կարող ենք ասել, որ այս հարցում բոլորը գրեթե կարող են համաձայնության գալ: Մեծ տարբերություն չկա փաստաթղթի և հուշագրության միջև: Դրանք երկուսն էլ ստեղծված են: Պատմաբանը պետք է միևնույն կասկածանքով վերաբերվի ոչ միայն հուշագրությանը, այլև՝ որևէ փաստաթղթի, դա օգտագործի միայն այն դեպքում, երբ հաստատվի դրա ստույգ լինելը:

-Բանավեճն այն հարցի շուրջ է, թե Թորոսյանը, թեկուզ չափազանցություններով և սխալներով, իր սեփական կյանքի պատմությունն է պատմել, թե՞ ամբողջությամբ հորինված մի վեպ է գրել՝ իր ընթերցած ռազմական պատմությունների վրա հիմնվելով: Թորոսյանն իր գրքում իր կյանքի պատմությունն է ներկայացրել:

-Չափազանց թերի և սխալ տեսակետ է պատմական հուշագրությունները մի կողմ նետելը՝ դրանք հաստատված տեղեկությունների և փաստաթղթերի հետ համեմատելով և տեսնելով, թե դրանք որքանով են համապատասխանում ձեռքի տակ գտնվող տվյալներին: Հուշերի՝ մեզ ներկայացրած իրողությունը հնարավոր չէ ձեռք բերել միայն դրանցում առկա տեղեկությունների ճշմարտության թեստով: Այդ տեսակետի պատճառն այն հարցի էության մասին անտեղյակությունն է, թե հուշերն ինչ տեղ են գրավում պատմագրության մեջ, և ինչպես պետք է դրանք քննարկել: Հոլոքոստի վերաբերյալ հրատարակված հուշերի առումով կարելի է այս թեմայի վերաբերյալ հարյուրավոր օրինակներ բերել: Օրինակ՝ Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարներից ողջ մնացածների հուշերում ևս բազմաթիվ փաստական սխալներ կան, բայց ճիշտ չի լինի այդ սխալների պատճառով նման հուշերը հորինվածք համարել և ամբողջու-

թյամբ դեն նետել: Հուշերում ներկայացված իրականությունը միայն ապացուցված ճշմատության իրողությունը չէ<sup>68</sup>:

-Թորոսյանի հուշերի նշանակությունն այն է, որ սույն գիրքը մեր առջև կիսաբաց է անում ցայսօր չուսումնասիրված նոր ոլորտների դուռը: Օսմանյան բանակում կռված քրիստոնյա, հրեա և արաբ զինվորների առկայությունը մինչ այսօր ոչ մի ձևով չի ուսումնասիրվել: Չհետազոտված թեմա է նաև այն խնդիրը, թե ինչ է պատահել օսմանյան բանակում ծառայած քրիստոնյա զինվորների ընտանիքներին: Թորոսյանի գիրքը կարող էր ընդունվել նաև որպես այդ դռները բացելու մի հնարավորություն:

-Այն փաստը, որ բազմաթիվ գիտնականներ, այդ հնարավորությունից օգտվել փորձելու փոխարեն, մեծ վրդովմունքով և էներգիայով ձգտում են ապացուցել, թե Թորոսյանի հուշերը կեղծ են, շատ հասկանալի է և մի բացասական արձագանք է, որը պետք է լրջորեն քննարկվի:

Մինչ այժմ ո՛չ Հալիլ Բերքթայն ու Հաքան Էրդեմը, ո՛չ էլ ազգայնամոլ պատմաբանները ոչ մի պատասխան չեն տվել իմ այս գրածներին: Թորոսյանի վերաբերյալ քննարկումների մի ժամանակաշրջանն ավարտվեց՝ այս հոդվածների հետ միասին մի շարք նոր հարցերի տեղիք տալով, որոնք դեռ կարոտ են քննարկման:

### Նոր մաղթանք՝ նոր շրջանի վերաբերյալ

Բենջըմին Վիլկոմիրսկի անվամբ մի շվեյցարացի, ով պնդում է, թե ինքը հրեա է, 1995 թ. հրատարակում է "Bruchstücke. Aus einer Kindheit 1939-1948" վերնագրով մի գիրք<sup>69</sup>: Գիրքը վե-

68 Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Tom Lawson, *Debates on the Holocaust*, Manchester University Press, Manchester և New York 2010, էջ 284-285:

69 Benjamin Wilkomirski, *Bruchstücke. Aus einer Kindheit 1939-1948*, Jüdischer Verlag, Frankfurt am Main, 1995. English Edition: *Fragments: memories of a wartime childhood*, Schocken Books, New York, 1997.

րաբերում է մանկության այն օրերի հուշերին, որոնք, ըստ իր պնդման, ինքն անցկացրել է Օսվենցիմում. գիրքը կարճ ժամանակահատվածում մեծ հաջողություն է ունենում, բազմաթիվ մրցանակների արժանանում: Այնինչ, մի քանի տարի անց բացահայտվում է, որ Վիլկոմիրսկին կեղծանուն է. հեղինակի իրական անունը Բրունո Գրոժան է: Ավելին՝ նա հրեա չէ և բոլորովին էլ Օսվենցիմում չի գտնվել, այլ շվեյցարացի է և ամբողջ պատերազմի ընթացքում շատ հանգիստ կյանք է ունեցել:

Նախ՝ 1998 թ. Դենիել Գանցֆրիդ անվամբ մի շվեյցարացի լրագրող կասկած հայտնեց, թե այդ հուշերը կեղծ են, ապա պատմաբան Ստեֆըն Մեխլերը մի երկարաշունչ ուսումնասիրություն անելով՝ ապացուցեց, որ Վիլկոմիրսկին շինծու անուն է, իսկ հուշերը հորինվածք են: Սակայն Մեխլերը, չնայած հուշերի կեղծ լինելուն, շնորհակալություն հայտնեց հեղինակին՝ նոր բնագավառ բացելու համար: Ըստ Մեխլերի՝ Վիլկոմիրսկին խիստ տպավորիչ գիրք էր գրել, որը պատմում էր, որ պատերազմից շատ տարիներ անց անգամ վերապրածները դեռ չէին կարողանում դուրս գալ համակենտրոնացման ճամբարներից<sup>70</sup>:

Այդ: Վիլկոմիրսկին գուցե և մի հասարակ պատմակեղծարար էր, և նրա հորինած հուշերը պետք էր աղբը նետել: Սակայն նրա գիրքը մեկ այլ՝ շատ ավելի համակարգված երևույթ էր ի հայտ բերել: Իրապես էլ թերևս տասնյակ հազարավոր երեխաներ էին ընկել նացիստական համակենտրոնացման ճամբարներ, և սակայն այդ հարցը գրեթե մոռացվել էր: Այդ պատճառով իրենց իրական ինքնության բացահայտումից առաջ մանուկ հասակում համակենտրոնացման ճամբարներ ընկած և ողջ մնացած հրեաները շնորհակալություն հայտնեցին Վիլկոմիրսկուն՝ իրենց քաշածը հասկանալու հարցում օգնելու համար, որովհետև Վիլկոմիրսկին, լինի հորինված թե իրական, տեղեկություն էր տալիս մի այնպիսի՝ մինչ այդ չարժարժված թեմայի շուրջ,

70 Tom Lawson, *Debates on the Holocaust*, Manchester University Press, Manchester և New York, 2010, էջ 285-287.

ինչպիսին էր հրեա երեխաների՝ Հոլոքոստի ընթացքում ունեցած ապրումները: Եւ բազմաթիվ հրեաներ, Վիլկոմիրսկուց խիզախություն ստանալով, սկսեցին պատմել ու գրել իրենց գլխին եկածների մասին:

Թորոսյանի գրքին հնարավոր էր գոնե առնվազն այդ տեսանկյունից մոտենալ: Դժբախտաբար, դրա փոխարեն սույն հարցի շուրջ քննարկումը ծավալվեց չափից շատ անձնական վիրավորանքներ հասցնելու ճանապարհով: Ինչո՞ւ Թորոսյանի հուշերին չկարողացան այնպիսի մոտեցում ցուցաբերել, ինչպիսին եղավ Վիլկոմիրսկու՝ ամբողջությամբ հորինվածք հանդիսացող գրքի վերաբերյալ ծավալված քննարկման ժամանակ: Իրոք անհրաժեշտ է բանավիճել դրա պատճառների շուրջ:

Թերևս դրա պատճառներից մեկն այն հանգամանքն է, որ հուշերի՝ որպես ճշմարտություններ հայտնի փաստերից շեղվելը խիստ անհանգստացնում է պատմաբաններին: Սակայն մենք ստիպված ենք սովորել այլ կերպ ընթերցել հուշերը: Քանզի հուշերի նկատմամբ ցուցաբերվող բացասական վերաբերմունքը նաև ցույց է տալիս, թե մենք ինչպես ենք հասկանում զուհերին: Նշանակում է ծայրահեղ հակազդեցություն ցուցաբերել կամ անուշադրության մատնել նրանց, լուրջ չընդունել ու չհասկանալ նրանց ապրումները: Շատ հավանական է, որ հենց այդ է կապիտան Թորոսյանի հանդեպ ցուցաբերված այդ վարմունքի պատճառը:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԸ՝ ԲՈՆԻ ՈՒԾԱՑՈՒՄ

### Ներածություն

Տարածված կարծիք է, թե ցեղասպանությունը սահմանափակվում է միայն կամ հիմնականում ֆիզիկական բնաջնջմամբ: Այնինչ դա ճիշտ չէ: Բռնի ուժացումը ևս ցեղասպանության գործընթացների անքակտելի մի մասն է: Օրինակ՝ 1915-1918 թթ. Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքում հայերի հանդեպ նույնպես կենտրոնացված և համակարգված կերպով գործադրվել է բռնի ուժացման քաղաքականությունը, որն իրագործվել է երեք տարբեր ձևերով: Առաջինը «կամավոր» և/կամ բռնի կրոնափոխությունն է: Աքսորի հատկապես սկզբնական ժամանակաշրջանում հայերին հնարավորություն է տրվել, ցանկության դեպքում, կրոնափոխվել, և բազմաթիվ հայեր ողջ մնալու համար «կամավոր կերպով» ընտրել են մահմեդականությունը:

Հետագայում հրաժարվել են այդ «կամավոր կրոնափոխությանը» հնարավորություն ընձեռող քաղաքականությունից. հատկապես 1916 թ. գարնանային ամիսներից սկսած՝ ողջ մնացած հայերին կանգնեցրել են «կամ իսլամ, կամ մահ» երկընտրանքի առջև, ավելի ճիշտ՝ կամ մահմեդական կրոնն ընդունել, կամ էլ Դեր Զոր քսորվել: Հայերը գիտեին, որ Դեր Զոր քսորվելը նշանակում էր մեռնել: Եթե ցանկանում էին ողջ մնալ, միայն մեկ ընտրություն ունեին՝ ուզած թե չուզած մահմեդականություն ընդունել:

Բռնի ուժացման քաղաքականության երկրորդ կարևոր հենքը 12 տարեկանից ցածր տղա և աղջիկ երեխաների հանդեպ գործադրվածն է, երբ մանուկները հարկադիր կերպով մուսուլման են դարձել, ցրվել որբանոցներում և մահմեդականների տներում, որտեղ դաստիարակվել են թուրք-իսլամական մշակույթին համապատասխան: Հայ երեխա վերցրած ընտանիք-

ները նյութապես պարզևատրվել են, հատկապես՝ ամսավարձ ստացել: Ուժացման երրորդ հենքը մանկամարդ աղջիկների բռնի ամուսնացումն էր մահմեդական տղամարդկանց հետ: Այս բոլոր հարցերի շուրջ կենտրոնից անընդհատ հրամաններ են հղվել շրջաններ:

Հարկ է անդրադառնալ նաև բռնի ուժացման քաղաքականության չորրորդ հենքին: Աքսորի և բնաջնջման սկզբնական շրջանում՝ հատկապես 1915 թ. մայիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում, սահմանափակ թվով հայերի թույլատրվել էր բնակվել Հալեպում, Ռաքքայում, Ռայս-ու-Այնում, Դեր Զորում և այդ բնակավայրերի շրջակայքում: Այդ վերաբնակեցման ընթացքում կրոնի հարցում որևէ պարտադրանք չի եղել. հայերին թույլ է տրվել քրիստոնեություն դավանել, սակայն թուրքերենը պարտադիր է եղել՝ որպես կրթության և հաղորդակցման լեզու: Այդ քաղաքականության գլխավոր տարրերն են եղել հայ երեխաների՝ թուրքական դպրոցներ հաճախելու, թուրքերենով կրթություն ստանալու պարտադրանքը և հայերենով թերթեր հրատարակելու և այլ բաների համար սահմանված արգելքները: Այդ քաղաքականությունը, որից հետագայում հրաժարվել են, ազդել է սահմանափակ թվով հայերի ողջ մնալու վրա:

### Ինչո՞ւ է անտեսվել բռնի ուժացման հարցը

Չնայած բռնի ուժացումը Հայոց ցեղասպանության կառուցվածքային տարրերից մեկն է, այնուամենայնիվ, սույն խնդիրը մինչ օրս էականորեն անտեսվել է. որևէ համակարգված ուսումնասիրություն չի կատարվել այս թեմայի վերաբերյալ: Դա վերաբերում է ոչ միայն Հայոց ցեղասպանությանը: Օրինակ՝ ամերիկացի և ավստրալացի տեղաբնիկների ծուլումը չնայած իրականացվել է համակարգված կերպով, ցեղասպանագիտական ուսումնասիրություններում առանձնապես ուշադրության չի արժանացել: Ինչո՞ւ:

Կարելի է ասել, որ դա ունի մի քանի հայտնի պատճառներ: Առաջին՝ ցեղասպանություն հասկացությունն ի հայտ է եկել որպես իրավաբանական կատեգորիա, երկրորդ՝ հրեաների ցեղասպանությունը (Հոլոքոստը), գտնվելով ցեղասպանագիտական ուսումնասիրությունների կենտրոնում, վերածվել է մի փորձաքարի, որն ամեն բան ըստ իրեն է չափում: Երրորդ էական պատճառն այն է, որ լուրջ կասկածներ են առկա այն հարցի վերաբերյալ, թե ինչ ենք հասկանում ուժացում կամ բռնի ուժացում ասելով, և թե արդյո՞ք այն կարող է ցեղասպանության տարրերից մեկը համարվել:

Վերոնշյալին հարկ է հավելել ևս երկու կարևոր գործոն, որոնք վերաբերում են միայն Հայոց ցեղասպանությանը: Առաջինը բռնի կրոնափոխության, երեխաների հավաքագրման և թուրք-իսլամական մշակույթի համաձայն դաստիարակելու, ինչպես նաև՝ մանկամարդ աղջիկների բռնի ամուսնությունների հարցերի վերաբերյալ ձեռքի տակ առկա աղբյուրների վիճակն է, իսկ երկրորդը՝ թուրքական կառավարության հարյուրամյա ժխտողական քաղաքականության բացասական հետևանք: Այժմ որոշ պարզաբանումներ տանք այս ընդարձակ ցանկում տեղ գտած ամեն մի կետի վերաբերյալ:

### Լեմկինի՝ ցեղասպանության սահմանումը և 1948 թ. կոնվենցիան

Ինչպես հայտնի է, ըստ 1948 թ. ընդունված Ցեղասպանության մասին կոնվենցիայի, որևէ հանցագործություն ցեղասպանություն համարել կարողանալու համար անհրաժեշտ է երկու էական տարր: Առաջինը mens rea անվանվող մտային չափանիշն է՝ հանցագործության գիտակցումը, որը համառոտ կերպով հայտնի է նաև որպես «դիտավորության» տարր: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ հանցանք գործած անձը շարժված լինի թիրախ վերցրած խմբին մասնակիորեն կամ ամբողջովին բնաջն-

ջելու նպատակով: Ինչ վերաբերում է երկրորդ էական չափանիշին, ապա այն հանցագործության ֆիզիկական տարրն է, որը կոչվում է նաև *actus reus*<sup>71</sup>:

Այդ հանցագործությունները 1948 թ. կոնվենցիայում սահմանված են որպես 5 առանձին կոնկրետ հանցագործությունների տեսակներ: Եթե դիտավորության տարրն առկա է, ապա այդ հանցագործություններից որևէ մեկն առանձին իրականացվելու դեպքում անգամ բավարար է ցեղասպանություն համարվելու համար<sup>72</sup>:

Եթե (ե) հողվածը (մի խմբի պատկանող երեխաներին բռնի կերպով մեկ այլ խմբի փոխանցելը) որպես բացառություն ընդունենք, ապա այդ հանցագործության կատեգորիաներին մոտիկից նայելու դեպքում կտեսնենք, որ բռնի ուժացումը ոչ մի ձևով ցեղասպանության հանցագործություն չի համարվել<sup>73</sup>: Այնինչ, երբ սույն հարցը սկսել է քննարկվել Միավորված ազգերի կազմակերպությունում, վիճակը բավականին այլ է եղել: ՄԱԿ-ի քարտուղարության՝ 1947 թ. մշակած առաջին նախագծի տեքստում «մշակութային ցեղասպանություն» վերնագրի տակ տեղ էր գտել մի հատուկ հանցագործության կատեգորիա:

71 Ցեղասպանության հանցագործության այդ երկու տարբեր տարրերի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **William A. Schabas**, *Genocide in International Law*, Cambridge University Press, Londra, 2000, էջ 151-257:

72 Չնայած հանրահայտ է, այնուամենայնիվ հարկ ենք համարում այստեղ կրկին նշել այդ հինգ հանցագործությունները. ա) խմբի անդամների սպանությունը, բ) խմբի անդամներին լուրջ ֆիզիկական կամ մտավոր վնաս հասցնելը, գ) մի ամբողջ խմբի կամ նրա մի մասի ֆիզիկական գոյությունը վերացնելու հաշվարկով կյանքի պայմանները դիտավորյալ փոխելը, դ) խմբի ներսում ծնունդներն արգելելու նպատակով միջոցներ ձեռնարկելը, ե) մի խմբի պատկանող երեխաներին բռնի կերպով մեկ այլ խմբի փոխանցելը: [http:// www.preventgenocide.org/law/convention/text.htm](http://www.preventgenocide.org/law/convention/text.htm), ներածություն, 15-ը հուլիսի, 2014 թ.:

73 Սույն հողվածի պահպանման պատճառն այն է, որ երեխաներին բռնի կերպով մեկ այլ խմբի փոխանցումն ընկալվել է ոչ թե որպես մշակութային ցեղասպանություն կամ ուժացում, այլ՝ ֆիզիկական բնաջնջում: Այս հարցին կանդադառնանք նաև ստորև:

Դրա պատճառն այն էր, որ առաջին նախագծի պատրաստման մեջ մեծ էր Լեմկինի ներդրումը: Լեմկինը 1948 թ. կոնվենցիայում արտահայտված ցեղասպանությունից բավականին տարբեր մի ցեղասպանության սահմանման հեղինակ էր, և այդ պատճառով էլ երբ 1947 թ. սկսել էին քննարկումները, Լեմկինն իր բնորոշմանը համապատասխան մի նախագիծ էր ներկայացրել: Առաջին՝ Լեմկինը ցեղասպանությունը չէր սահմանում որպես մի առանձին դեպք: Նրա համար ցեղասպանությունը երկարատև ժամանակաշրջան ընդգրկած մի գործընթաց էր: Այսպես, օրինակ, ցեղասպանություն հասկացությունն առաջին անգամ ներկայացրած իր գրքում նա նշում է, թե «ընդհանրապես ցեղասպանությունը չի նշանակում մի ազգի անմիջապես բնաջնջում» և հավելում, որ ցեղասպանությունը մի գործողություն է, որը «ծրագրվել է որպես առավելաբար ազգային խմբերի ոչնչացման նպատակով՝ այդ խմբերի գոյության գլխավոր հիմքերը սասանելուն ուղղված տարբեր գործողությունների համակարգված պլան»<sup>74</sup>: Մինչդեռ 1948 թ. սահմանումից հետո մոռացության մատնվեց Լեմկինի այն գաղափարը, որը ցեղասպանությունը բնութագրում էր որպես երկարատև, տարբեր գործողություններից բաղկացած, համակարգված բնաջնջման պլան: Գործընթացի գաղափարն իր տեղը զիջեց այն գաղափարին, որը ցեղասպանությունը սահմանում էր որպես մի գործողությամբ և հիմնականում ֆիզիկական բնաջնջմամբ հասկացություն:

Հարկ է անդրադառնալ նաև երկրորդ տարբերությանը, որն առկա էր 1948 թ. ընդունված ցեղասպանության բնորոշման և Լեմկինի նախնական գաղափարի միջև: Լեմկինի համար ցեղասպանությունը կազմված էր երկու կարևոր փուլերից: Իր խոսքով՝ «Ցեղասպանությունը երկու փուլ ունի. առաջինը ճշվող խմբի ազգային բնորոշիչների ոչնչացումն է, իսկ մյուսը՝ ճշվող

74 **Rafael Lemkin**, *Axis Rule in Occupied Europe*, Carnegie Endowment, Washington, 1944, էջ 79.

շող ազգի ազգային բնորոշիչների բռնի պարտադրումը: Վերջինս իրականացվում է կամ ճնշվող խմբին իր բնակավայրում մնալու թույլտվությամբ, կամ էլ նրա հեռացումից և տվյալ շրջանը ճնշող խմբի կողմից գաղութացվելուց հետո՝ միայն այդ տարածքի վրա»<sup>75</sup>: Այսինքն՝ Լեմկինի համար ցեղասպանության գաղափարն ավելին էր, քան միայն ֆիզիկական բնաջնջումը, և ընդգրկում էր նաև բռնության ենթարկված խմբի և վերջինիս տարածքների ազգային-մշակութային առանձնահատկությունների ոչնչացումը:

Լեմկինն ազգային-մշակութային առանձնահատկությունների ոչնչացումը բացատրելու համար կիրառում է մշակութային ցեղասպանություն արտահայտությունը: Բռնի ուժացումը կարելի է քննարկել որպես մշակութային ցեղասպանության մի էական տարր, բայց ուժացում-ցեղասպանություն փոխառնչությունը խնդրահարույց է, և այն դարձել է լուրջ բանավեճերի նյութ: Այդ քննարկումներից առավել հայտնի է 19-րդ դարի երկրորդ կեսից հետո Ավստրալիայի բնիկ ժողովրդին պատկանող երեխաներին բռնի կերպով սպիտակամորթ ընտանիքներում ցրելը և ուժացնելը: Հարցը շատ պարզ է. միայն բռնի ուժացմամբ սահմանափակվող որևէ գործողություն կարելի է ցեղասպանություն կոչել, թե՞ ոչ<sup>76</sup>:

75 Նույն տեղում:

76 1980-ական թվականներին սկսված քննարկումները նոր չափանիշ են ձեռք բերում, երբ Ավստրալիայի ֆեդերալ կառավարությունը սույն հարցը քննելու նպատակով մի հատուկ հանձնաժողով է ստեղծում, որը պետք է այդ գործադրումն անվաներ ցեղասպանություն: Հանձնաժողովը զեկույցը հրապարակել է 1997 թ.՝ “Bringing them Home” վերնագրի ներքո: Սույն զեկույցի ամբողջական տեքստը տե՛ս <https://www.humanrights.gov.au/publications/bringing-them-home-stolen-children-report-1997> ներածություն, 22-ը հուլիսի, 2014 թ.: Բռնի կերպով հավաքված տեղացի երեխաների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս **Robert Manne**, “Aboriginal Child Removal and the Question of Genocide, 1900-1940”, Dirk Moses (ed.), Genocide And Settler Society, Frontier Violence and Stolen Indigenous Children in Australian History, Berghahn Books, New York ve Oxford, 2005, էջ 217-244: 1945 թ. հետո տեղի ունեցած դեպքերը սխալմամբ որպես ցեղասպանություն սահ-

Վերադառնանք բռնի ուժացման և ցեղասպանության փոխառնչության հարցին: Սույն խնդիրը հասկանալու համար հարկ է ի մտոտ անդրադառնալ Լեմկինի՝ ֆիզիկական բնաջնջման և մշակութային բնաջնջման միջև դրած տարբերությանը և մշակութային ցեղասպանություն հասկացությանը: Այս հարցը չափազանց էական դեր է կատարել ՄԱԿ-ում 1946 թ. սկսված և 1948-ին Ցեղասպանության մասին կոնվենցիայով ավարտված քննարկումներում:

Ցեղասպանության կոնվենցիայի վերաբերյալ առաջին նախագիծը մշակվել էր 1947 թ. ՄԱԿ-ի քարտուղարության կողմից: Լեմկինն անմիջականորեն մասնակցել էր ցեղասպանության բնորոշման առաջին նախագծի պատրաստման գործին, և նրա ներդրման շնորհիվ այդ առաջին նախագծում ներառվել էր մի հատուկ քրեական կատեգորիա՝ որպես «մշակութային ցեղասպանություն»: Սույն նախագիծն ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ հանցագործությունները դասակարգվել էին երեք առանձին գլխավոր վերնագրերի ներքո. 1) ֆիզիկական ցեղասպանություն (այս վերնագրի տակ սահմանվել էին խմբի ֆիզիկական ոչնչացման նպատակը հետապնդող չորս առանձին հանցագործությունների կատեգորիաները), 2) կենսաբանական ցեղասպանություն (այս վերնագրի տակ առկա էին երեք առանձին հանցագործությունների կատեգորիաների սահմանումները, ինչպիսիք էին, օրինակ, խմբի՝ ծնելիության միջոցով զարգացմանն արգելք լինելու նպատակով խմբի անդամներին անպտուղ դարձնելը և/կամ հարկադիր արհեստական վի-

մանելու մասին տե՛ս **Russell McGregor**, “Governance, Not Genocide, Aboriginal Assimilation in the Postwar Era,” Dirk Moses (ed.), Genocide And Settler Society, էջ 290-311: Սույն հարցի վերաբերյալ առաջ քաշված թեզերի՝ ցեղասպանություն հասկացության քննարկման տեսանկյունից իմաստի մասին տե՛ս **Robert van Krieken**, “Rethinking Cultural Genocide: Aboriginal Child Removal and Settler Colonial State Formation”, Oceania, 75:2, 2004 թ. դեկտեմբեր, էջ 125-151:

ժեցումը, խմբի անդամների տղամարդկանց ու կանանց մի-մյանցից հեռացնելը և նրանց ամուսնանալուն արգելք լինե-լը), 3) մշակութային ցեղասպանություն (այս վերնագրի տակ մեկտեղվել էին հինգ առանձին հանցագործությունների կա-տեգորիաներ, որոնք նպատակ էին հետապնդում վերացնել մի խմբի ազգային-կրոնական հատկանիշները):

Մշակութային ցեղասպանություն համարվող հանցագոր-ծությունների մեջ առկա էին այնպիսի ոճիրներ, ինչպիսիք էին ազգային լեզվով խմբի հաղորդակցվելուն արգելք լինելը, խմբի երեխաներին մեկ այլ խմբի փոխանցելը, խմբի մշակույ-թը ներկայացնող անձանց արքորելը, խմբի ազգային լեզվով տպագրված գրքերի կամ կրոնական ստեղծագործություննե-րի համակարգված կերպով ոչնչացումը և նոր հրատարակու-թյունների արգելումը, խմբի կրոնական և պատմական գր-քերի ոչնչացումը կամ այլ նպատակներով օգտագործումը, խմբի պատմական, արվեստի կամ կրոնական արժեքները ներկայացնող և կրոնական արարողությունների ժամանակ կիրառվող փաստաթղթերի և նյութերի ոչնչացումն ու ցրու-մը<sup>77</sup>:

Սույն նախագծի շուրջ համապատասխան հանձնաժողովնե-րում արված քննարկումների ժամանակ որոշ անդամներ այս հասկացությանը դեմ հանդես եկան և առաջ քաշեցին այնպի-սի փաստարկներ, ինչպիսին է, օրինակ, այն հիմնավորումը, թե «անընդունելի է գրադարանի փակումը համարժեք դարձնել զանգվածային բնաջնջմանը»: Արդյունքում հրաժարվեցին մշա-կութային ցեղասպանություն հանցագործության սահմանումից: Որպես մշակութային ցեղասպանություն որակվող հանցագոր-ծություններից միայն մեկը պահպանվեց՝ մի խմբի պատկանող երեխաներին մեկ այլ խումբ փոխանցելը: Դրա պատճառն էլ այն էր, որ քննարկումների ժամանակ որոշ երկրներ առաջարկեցին այդ հանցագործությունն ընկալել որպես «կենսաբանական»

77 <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>.

կամ «ֆիզիկական ոչնչացում», և այդ առաջարկներն ընդուն-վեցին<sup>78</sup>:

Արդյունքում կենսաբանական ցեղասպանության սահման-ման մեջ ընդգրկված հոդվածները ևս ամփոփվեցին մի հոդվա-ծում, և մշակութային ցեղասպանությունը, որպես հանցագոր-ծության կատեգորիա, դուրս մղվեց, ու ցեղասպանությունը, ըստ էության, բնորոշվեց միայն ֆիզիկական ցեղասպանության առանցքում: Դրա ամենակարևոր պատճառն այն էր, որ գա-ղութներ ունեցող և/կամ բազմաթիվ գաղթականների ապաս-տան տված պետությունները մտավախություն ունեին, թե մշա-կութային ցեղասպանություն հանցագործությունը կընդգրկի նաև թե՛ իրենց երկրներում և թե՛ իրենց գաղութներում կատար-ված գործողությունները: Պատահական չէր, որ հենց Ֆրանսի-ան, Բելգիան, ԱՄՆ-ը, Կանադան, Ավստրալիան և Լատինական Ամերիկայի երկրները նախաձեռնեցին այդ գործը:

Լեմկինը հետագայում գրած իր հուշերում ափսոսանք է հայտնելու, որ բավարար չափով չի պայքարել կոնվենցիայում «մշակութային ցեղասպանություն» հանցագործությունն ընդգր-կելու համար. «Այս հասկացությունը հաջողությամբ կարողացա պաշտպանել առաջին երկու նախագծում: Այն մի խմբի լեզվի, սովորույթների ու ավանդույթների, հուշարձանների, պահոցնե-րի, գրադարանների, եկեղեցիների, մի խոսքով՝ մի ազգի հոգու սրբազան հարստությունը հանդիսացող մշակութային հատկա-նիշների ոչնչացումն էր: Սակայն կոմիտեում այդ գաղափարին աջակից բավարար չափով մեծամասնություն չկար... և մեծ ցա-վով որոշեցի չպնդել այդ հարցում»: Լեմկինը շատ է ափսոսա-

78 Բոլոր հոդվածների և հատկապես մշակութային ցեղասպանության շուրջ ծավալված քննարկումների մասին տե՛ս **Matthew Lippman**, "The 1948 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide: Forty-Five Years Later", *Temple International and Comparative Law Journal*, 8:1, 1994, էջ 1-84; կամ՝ **M. Lippman**, "The Drafting of the 1948 on the Prevention and Punishment of the Crime of Genocide", *Boston University of International Law Journal* 3:1, 1985, էջ 1-65:



ցել, որ հարկադրված հրաժարվել է իր համար «մեծ իմաստ պարունակող» այդ հարցից<sup>79</sup>: Մշակութային ցեղասպանություն հասկացությունից հրաժարվելու բնական հետևանքներից մեկը եղավ այն, որ բռնի ուժացումը մոռացության մատնվեց, և ցեղասպանությունը համարժեք համարվեց միայն ֆիզիկական ոչնչացմանը:

### Հոլոքոստի ուսումնասիրությունների բացասական կողմի հետևանքը

Խնդիրը չի սահմանափակվում միայն 1948 թ. սահմանումով: Այն հանգամանքը, որ հետագա տարիներին ցեղասպանագիտական ուսումնասիրությունները, ըստ էության, ձևավորվել են Հոլոքոստի օրինակի շուրջ, ևս էական ազդեցություն է ունեցել սույն հարցի վրա: Այդ ուսումնասիրություններում Հոլոքոստը, համարվելով բոլոր ցեղասպանությունների «մայրը», գտնվել է ամեն ինչի կենտրոնում: Սկսել են յուրաքանչյուր իրադարձության՝ ցեղասպանություն համարվել-չհամարվելը որոշելու համար այն համեմատել Հոլոքոստի հետ: Հոլոքոստից բացի՝ այլ զանգվածային ցեղասպանությունների հարցերով հետաքրքրվողները, որպեսզի ապացուցեն, որ իրենց օրինակները նույնպես ցեղասպանություն են, ձգտել են դրանք նմանեցնել Հոլոքոստին:

Այնինչ առկա է մի չափանիշ, որը զատում է Հոլոքոստը բազմաթիվ այլ հայտնի ցեղասպանությունների տեսակից: Նացիստները չեն վարել իրենց դավանած ցեղապաշտական տեսությանը համապատասխան՝ հրեաներին բռնի կերպով գերմանական մշակույթը պարտադրելու, նրանց մշակութային առանձնահատկությունները ոչնչացնելու քաղաքականություն: Եթե մի կողմ դնենք սկզբնական տարիներին կիրառված այն

79 John Docker, "Are Settler-Colonies Inherently Genocidal? Rereading Lemkin," Dirk Moses (ed.), *Empire, Colony Genocide, Conquest, Occupation and Subaltern Resistance in World History*, Berghahn Books, New York, Oxford, էջ 82.

քաղաքականությունը, ըստ որի՝ հրեաներին թույլ էր տրվում դուրս գալ Գերմանիայից, ապա կարող ենք արձանագրել, որ նացիստների՝ հրեաների նկատմամբ վարած քաղաքականությունը բաղկացած էր ընդամենը մեկ ընտրությունից՝ ֆիզիկական բնաջնջում: Հրեաները հիմնականում միայն ոչնչացվել են: Մշակութային բնաջնջումը (տվյալ դեպքում՝ բռնի ուժացումը) երբեք այլընտրանք չի եղել:

Անշուշտ, նացիստները ևս հետևել են բռնի ուժացման քաղաքականությանը: Նոր կարգը, որ նրանք նպատակադրվել էին ներմուծել Եւրոպա, բնորոշվում է նաև որպես ցեղական կայսրություն. ուներ երկու հիմնաքար՝ բնաջնջում և գերմանացում: Գերմանացման դեպքում դիտավորությունը միայն բռնի ուժացումն էր, որը երբեմն բնութագրվում էր որպես նաև «վերագերմանացում»՝ կախված այն խմբից, որը պետք է ուժացվեր: Այդ քաղաքականության կապակցությամբ նացիստական ՍՍ կազմակերպության «ցեղագետները» 1939 թ. սկսած պարտավորվեցին գրավյալ տարածքներում «ապահովել մաքրությունը ցեղական տեսանկյունից»: Այդ մասնագետներից ակնկալվում էր, որ նրանք պետք է որոշեին Արևելյան Եւրոպայի գերմանացի և ոչ գերմանացի բնակչությունը և զատեին մեկը մյուսից: Այդ ուղղությամբ զարգացրել էին չորս տարբեր կատեգորիաներ՝ ա) ցեղի առումով լավագույնը, բ) լավը և միջինը, գ) սահմանայինները և դ) ցեղի առումով անհամապատասխաններն ու օտար արյուն ունեցողները<sup>80</sup>:

Այս քաղաքականությունը կիրառվեց թե՛ էթնիկական ծագման առումով ենթադրաբար գերմանացի ժողովուրդների և թե՛ սլավոնական ժողովուրդների նկատմամբ: Նացիստները, թեև ոչ համակարգված կերպով, այնուամենայնիվ սլավոնական հան-

80 Այդ ծրագրի մանրամասների մասին տե՛ս Isabel Heinemann, "Another Type of Perpetrator": The SS Racial Experts and Forced Population Movement in the Occupied Regions", *Holocaust and Genocide Studies*, հատոր 15, No. 3, 2001, էջ 387-411:

րությունների շրջանում կատարեցին այնպիսի բաժանումներ, ինչպիսիք են՝ հյուսիսային, արևելյան, հարավային և այլն, ու հավատում էին, որ վերոնշյալ կատեգորիաներից առաջին կամ երկրորդ խմբի մեջ ընդգրկված որոշ սլավոնական խմբեր, ինչպիսիք են, օրինակ, չեխերն ու լեհերը կամ էլ հյուսիսային եվրոպացիները (սորվեգներ, շվեդներ և այլն) կկարողանան ծուլվել: «Գերմանացման» քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն երեխաներով, բայց հատկապես պատերազմի երկրորդ կեսից սկսած նացիստներն սկսեցին հավաքել լեհ, չեխ, ուկրաինացի և այլ ազգերի պատկանող երեխաների, որոնց համարում էին, թե պատկանում են «արժեքավոր ցեղի-guttrassig (racial valuable)»: Այդ մանուկներին կամ տեղավորեցին մասնավոր անձանց տներում, կամ էլ խնամատար ընտանիքների հանձնելով՝ պահանջեցին ուժացնել նրանց: Սակայն նացիստական ուժացման քաղաքականությունը հնարավոր չեղավ ընդգրկուն և համակարգային կերպով գործադրել թե՛ բազմաթիվ հակասությունների և թե՛ պատերազմի ընթացքի ու այլ պատճառների հետևանքով: Եթե դրան հավելենք նաև այն փաստը, որ Հոլոքոստը հիմնականում իրականացվեց որպես հրեաների բնաջնջում, ապա կարող ենք հավաստել, որ նացիստական ուժացման քաղաքականության հարցն առանձնապես մեծ տեղ չի գրավել ցեղասպանագիտական ուսումնասիրություններում<sup>81</sup>:

81 Բավականին շատ աղբյուրներ կան նացիստների կողմից լեհ, չեխ, սերբ, ուկրաինացի, բուլղար, սլովակ և այլ սլավոնական ժողովուրդների նկատմամբ գործադրված և հրեաների դեմ ուղղված քաղաքականության տարբերությունների մասին: Որպես սկիզբ՝ կարելի է ընթերցել հետևյալ աշխատությունները՝ **John Connelly**, "Nazis and Slavs: From Racial Theory to Racial Practice", *Central European History*, հատոր 32, No. 1, 1999, էջ 1-33; **Isabel Heinemann**, "The Kidnapping of 'Racially Valuable' Children and Nazi Policy in Occupied Eastern Europe", Dirk Moses (ed.), *Genocide And Settler Society, Frontier Violence and Stolen Indigenous Children in Australian History*, էջ 244-267: Նացիստների՝ տվյալ թեմայի վերաբերյալ գրած աշխատությունների մի օրինակ է՝ **Egon Leuschner**, *Nationalsozialistische Fremdvolkpolitik, Rassenpolitisches Amt der NSDAP*, Berlin, 1942:

Այս խնդրի ուշագրավ կողմն այն է, որ Նյուրնբերգում նացիստների դատավարության ժամանակ դատախազը սլավոն երեխաների բռնի հավաքագրումն ու գերմանացումը որակել էր որպես նացիստների ցեղասպանական քաղաքականության մի մաս: Բացի այդ՝ մարդկայնության դեմ գործված հանցագործություն և ցեղասպանության մի մաս էր որակվել նաև նացիստների կողմից թշնամի համարված բնակչությանը որոշ շրջաններից բռնի կերպով դատարկելը և այլ վայրերում վերաբնակեցնելը, ինչպես նաև՝ տվյալ բնակչության արտադրողականությանն արգելք լինելը: Այսինքն՝ Նյուրնբերգյան դատավարությունում որպես էական տարր քննարկված մի հանգամանք հետագայում անտեսվելու էր ցեղասպանագիտական ուսումնասիրություններում<sup>82</sup>:

### Ինչո՞ւ է անտեսվել բռնի ուժացման հարցը

Լեմկինը, ֆիզիկական բնաջնջումից բացի, խոսում էր նաև մշակութային բնաջնջում կատեգորիայի մասին, բայց ինչ էր պետք հասկանալ դրա տակ: Բռնի ուժացումը որքանով կարող էր մշակութային ցեղասպանության տեսակ համարվել: Այստեղ նախ և առաջ հարկավոր է կիրառվող հասկացությունների վերաբերյալ պարզություն մտցնել: Առաջին հերթին պետք է տարբերակում մտցնել բնական ուժացման և բռնի ուժացման միջև: Մարդկության պատմությունը լի է երկար ժամանակաշրջան տևած և որպես բնական գործընթաց տեղի ունեցած ուժացման օրինակներով: Որպես «բնական» գործընթացի հետևանք կատարված ուժացումը չի կարող քննվել ցեղասպանական հանցագործության շրջանակներում, եթե անգամ այն իրականացվել է անհավասար իրավունքներ ունեցողների և իշխանության միջև հարաբերությունների ու մի շարք անարդարությունների միջոցով:

82 **Isabel Heinemann**, "The Kidnapping of 'Racially Valuable' Children and Nazi Policy in Occupied Eastern Europe", էջ 257.

Եթե մի կողմ դնենք «բնական» ուժացումը, ապա հարկ կլինի տալ հետևյալ էական հարցի պատասխանը. բռնի կրոնափոխությունը, հարկադիր կրթությունը և բռնի ամուսնությունը, այսինքն՝ բռնի ուժացման քաղաքականությունը, որն ի վերջո նպատակ ունի ոչնչացնել ճնշվող խմբի լեզուն ու մշակույթը և նրան բռնի կերպով ընդգրկել հարձակվող խմբի մեջ, պետք է արդյոք ցեղասպանություն համարվի:

Այս հարցին պատասխան տալ կարողանալու համար նախ հարկ է մանրամասն անդրադառնալ այն հարցին, թե Լեմկինն ինչ է ասել ուժացման և/կամ բռնի ուժացման վերաբերյալ, քանի որ նա ցեղասպանություն հասկացության հեղինակն է: Առաջին բանը, որ աչքի է զարնում նրա գրածների մեջ, այն է, որ նա տարբեր դիրքորոշում է ցուցաբերում սույն հարցի վերաբերյալ՝ պայմանավորված այն բանով, թե ինչ խնդիրների է հանդիպում: Օրինակ՝ «Axis Rule in Occupied Europe» («Անտանտի երկրների կողմից ղեկավարումը գրավյալ Եվրոպայում») վերնագրով իր գրքում, որում առաջին անգամ է ներկայացնում ցեղասպանություն հասկացությունը, երբ բացատրում է, թե ինչ է ցեղասպանությունը, ոչ բռնի կրոնափոխություն, ոչ էլ ուժացում եզրերը չի օգտագործում:

Սույն գրքում կա ցեղասպանության տեխնիկայի վերաբերյալ մի ենթավերնագիր, ուր Լեմկինը մեկնաբանում է ցեղասպանության տեխնիկան ութ տարբեր ոլորտներում (քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական): Այդտեղ ևս նա չի կիրառում ուժացում և բռնի կրոնափոխություն հասկացությունները: Սակայն եթե ուշադրությամբ ընթերցվեն հատկապես մշակութային, կենսաբանական և կրոնական բնագավառներում ցեղասպանության տեխնիկայի մասին նրա գրածները, կերևա, որ Լեմկինն այդ վերնագրերի տակ ներկայացնում է մեզ հայտնի բռնի ուժացումը: Այսպես՝ մշակութային ոլորտում կիրառվող տեխնիկան բացատրելիս նա բերում է այնպիսի օրինակներ,

ինչպիսիք են ճնշվող խմբի լեզվի օգտագործման արգելքը կրթության մեջ, մամուլում ու այլ հրատարակություններում և ճնշող խմբի լեզվի (տվյալ դեպքում՝ գերմաներենի) պարտադրումը կրթության մեջ կամ ճնշվող խմբի անդամների՝ միմյանց հետ ամուսնանալու արգելքը<sup>83</sup>:

Թեև նա ուղղակիորեն չի ասում այդ մասին, սակայն Լեմկինի՝ այս գրքում գրածներից կարող ենք եզրակացնել, որ նա միայն բռնի ուժացումը բավարար չի համարում՝ այն որպես ցեղասպանություն բնորոշելու համար: Օրինակ՝ երբ բացատրում է, թե ինչու է ցեղասպանության նման հասկացության կարիքն զգացվում, նշում է, որ բռնի ուժացումը մեկնաբանելու համար կիրառվող այնպիսի բնութագրումներ, ինչպիսիք են «ապագայնացումը - denationalization» և «գերմանացումը - Germanization», բավարար չեն: Ըստ Լեմկինի՝ նմանատիպ հասկացություններն օգտագործվում են ուժեղ ազգերի կողմից՝ իրենց տիրապետության տակ գտնվող մյուս ազգային խմբերին բռնի ուժով իրենց ազգային հատկանիշներն ընդունել տալը բացատրելու համար: Այդ պատճառով այդ հասկացությունները թերևս մեկնաբանում են ցեղասպանության մշակութային, տնտեսական և սոցիալական չափանիշները, բայց դուրս են մղում ցեղասպանության մյուս չափանիշները, օրինակ՝ կենսաբանական և, հատկապես, ֆիզիկական բնաջնջմանը վերաբերող չափանիշները և որևէ բան չեն ասում այդ մասին: Լեմկինի խոսքով՝ «օրինակ, եթե մեկը կիրառում է լեհերի «գերմանացում» բնորոշումը, այդ դեպքում տվյալ արտահայտությունը նշա-

83 **Rafael Lemkin**, *Axis Rule in Occupied Europe*, Carnegie Endowment, Washington, 1944, էջ 79-95: Սույն գրքի համապատասխան բաժինը հնարավոր է ընթերցել նաև այս հասցեի միջոցով՝ <http://www.preventgenocide.org/lemkin/AxisRule1944-3.htm> Լեմկինը միայն մի տեղ՝ «Ապագայի համար առաջարկներ» ենթավերնագրի տակ, 54-րդ համարի հղման մեջ է ուժացում բառը կիրառում, բայց այստեղ այն օգտագործվում է ուժացումը արգելելու համար փորձամասնություններին պաշտպանելու միջոցները քննելու համատեքստում:

նակում է, որ լեհերը, որպես մարդ, պահպանվել են, և գերմանացիները նրանց միայն պարտադրել են իրենց ազգային հատկանիշները: Նման եզրը չափազանց անբավարար է այն գործընթացը բացատրելու համար, որը ներկայացնում է մի բնակչության՝ ֆիզիկական առումով հարձակման ենթարկվելը, աքսորվելը և հարձակվող խմբի կողմից նրա բնակավայրի գրավումը»<sup>84</sup>:

Այսինքն՝ Լեմկինի “Axis Rule in Occupied Europe” գրքի գլխավոր միտքն այն է, որ բռնի ուժացումը կարող է ցեղասպանության մի տարրը համարվել, բայց միայն այն չի կարող ցեղասպանություն սահմանվել: Այսպես, օրինակ, նացիստները վարել են բռնի ուժացում հանդիսացող գերմանացման քաղաքականություն, որը նացիստների իրականացրած ցեղասպանության մի մասն է, բայց՝ ոչ հենց ինքը:

Լեմկինը սույն խնդրին անդրադառնում է նաև «Ցեղասպանության պատմություն» (“History of Genocide”) վերնագրով գրքի համար արած նախապատրաստությունների ժամանակ, մի աշխատություն, որը հնարավորություն չի ունեցել ավարտին հասցնել: Լեմկինն այս գիրքը ցանկանում էր գրել երեք գլխավոր բաժիններով, որոնք նվիրված էին լինելու անտիկ դարաշրջանին, միջնադարին և ժամանակակից շրջանին: Նա ծրագրել էր ներկայացնել և վերլուծել 63 տարբեր ցեղասպանություններ, որոնցից 9-ը կատարվել էին անտիկ դարաշրջանում, 13-ը՝ միջնադարում, իսկ 41-ը՝ ժամանակակից շրջանում<sup>85</sup>: Լեմկինը նպատակադրվել էր այս գրքի ամեն մի բաժինը գրել մի սխեմայի համաձայն, որը բաղկացած էր լինելու ընդհանուր 8 հոդվածից: Այդ հոդվածներն էին. 1. Պատմական հետնաբեմը, 2. Ցեղասպանությանը տեղիք տվող պայմանները, 3. Ցեղասպանության մեթոդներն ու տեխնիկան, 4. Ցեղասպանները,

5. Քարոզչությունը, 6. Զոհերի պատասխանները, 7. Դրսում գտնվողների կեցվածքները և 8. Եզրահանգում:

Լեմկինն այս սխեմայում ուժացում հասկացությունը մի անգամ է կիրառում: Ուշագրավ է, որ նա ուժացմանն անդրադառնում է ոչ թե որպես ցեղասպանություն իրագործողների քաղաքականության, այլ՝ որպես զոհերի կողմից ցեղասպանությանը տված պատասխան: Այսինքն՝ ցանկում տեղ գտած 6-րդ հոդվածի բովանդակության մեջ... Դրանից բացի՝ ուշադրություն է գրավում նաև այն, որ նա բռնի կրոնափոխությունը հիշատակում է երրորդ բաժնում, ցեղասպանության մեթոդներին և տեխնիկային անդրադառնալիս<sup>86</sup>:

Լեմկինն այս գրքում տարբեր ձևերով անդրադառնում է ուժացում հասկացությանը: Նա մասնավորապես սույն թեմայի վերաբերյալ մի հատուկ վերնագիր է առանձնացրել «Ցեղասպանության ուսումնասիրությունների ներածություն» բաժնում, սակայն անհասկանալի է մնում, թե նա ցանկացել է սա որպես առանձին գիրք գրել, թե «Ցեղասպանության պատմությունը» գրքի առաջաբանը դարձնել: Նպատակը պարզություն մտցնելն է մշակութային ցեղասպանության և ուժացման միջև եղած առնչության հարցում: Նա այստեղ ուժացման և մշակութային ցեղասպանության միջև եղած տարբերությունը բացատրել կարողանալու համար ուժացումն արտահայտում է «ցրում, տարածում» իմաստն ունեցող diffusion հասկացությամբ: Նա նկատի ունի երկարատև գործընթացում տեղի ունեցած բնական ուժացումը:

Ըստ Լեմկինի՝ մշակութային ցեղասպանությունը տարբերվում է երկարատև գործընթացում մշակութային արժեքների կորստյան իմաստն ունեցող ցրումից: Ամենաէական տարբերությունն այն է, որ մշակութային ցեղասպանությունն ի հայտ է գրգռվում հարձակման միջոցով:

86 Michael A. McDonnell և Dirk Moses, “Raphael Lemkin as historian of genocide in the Americas”, *Journal of Genocide Research*, 7(4), 2005թ. դեկտեմբեր, էջ 505.

84 Նույն տեղում, էջ 80:

85 Steven Leonard Jacobs (ed.), *Lemkin on Genocide*, Lexington Books, Plymouth, 2012, էջ x.

գալիս ոչ թե ժամանակի ընթացքում հալչել-կորչելու միջոցով, այլ՝ որպես հանկարծակի բեկում: «Մշակութային ցեղասպանությունը քիչ թե շատ անսպասելի գործողություն է. այն չպետք է շփոթվի որևէ մշակույթի փուլային փոփոխման հետ»: Լեմկինը հարցնում է, թե «ցեղասպանության և ցրման միջև ամենագլխավոր տարբերությունը ո՞րն է», և հենց ինքն էլ տալիս է այդ հարցի պատասխանը. «Նախ և առաջ ցեղասպանությունը որևէ մշակույթի ոչնչացման առումով ամբողջական և ուժգին փոփոխություն է [և այդ] մշակութային ցեղասպանությունն իրագործողների նախապես ծրագրված նպատակը»: Լեմկինը խոսում է նաև մի երկրորդ տարբերությունից, ըստ որի՝ «մշակութային ցեղասպանությունը (ինչպես դա նկատելի է կրոնափոխության դեպքում) չի պարտադրում նոր մշակույթով փոխարինումը, սակայն զոհ եղող խմբի անդամներին ուժգին կերպով թուլացնելով՝ կարող է [նրանց] անպաշտպան թողնել ֆիզիկական բնաջնջման դեմ: Եթե մշակութային ցեղասպանությունը դիտվի որպես ընդամենը մի քայլ ֆիզիկական բնաջնջման ուղղությամբ, ապա դժվար չի լինի այն ցրումից տարբերելը»<sup>87</sup>:

Լեմկինն ուժացման և մշակութային ցեղասպանության միջև եղած այդ երկրորդ տարբերությունը բացատրելիս մի արտահայտություն է օգտագործում, ըստ որի՝ պարտադիր չէ, որ բռնի կրոնափոխությունն անպայման մշակութային ցեղասպանություն նշանակի: Սակայն իր այս գրքում, անդրադառնալով բազմաթիվ մասնավոր դեպքերի, բացահայտ կերպով գրում է, որ բռնի կրոնափոխությունը մշակութային ցեղասպանության տեխնիկաներից մեկն է: Որպես օրինակ է բերում 14-րդ դարում Երոպայում հրեաների բռնի քրիստոնեացումը կամ Լատինական Ամերիկայում իսպանացիների վարած գաղութացման քաղաքականությունը: Նա տեղացիներին բռնի կերպով քրիստոնյա դարձրած իսպանացի քահանաներին մեղադրում է «նուրբ կերպով մշակութային ցեղասպանություն հանցագործության

մեջ»: Աշխատության մեջ ուժացման այնպիսի կոշտ քաղաքականության դրսևորումներ, ինչպիսիք են գաղութարարների կողմից բնիկների մշակութային գործունեության արգելումը, պարտադիր կրթության նպատակ հետապնդող դպրոցների բացումը, աղջիկ երեխաներին բռնի ձևով իրենց ընտանիքներից զատելը, բնորոշում է որպես ցեղասպանական քաղաքականության մեթոդներ<sup>88</sup>:

Լեմկինը, չնայած իր այս անտիպ գրքում հանդիպող բացահայտ կերպով ներկայացված դատողություններին, առաջ է քաշում նաև այնպիսի գաղափար, թե բռնի ուժացումը չի կարող ցեղասպանություն համարվել: Հատկապես ՄԱԿ-ում տեղի ունեցած քննարկումներից առաջ ենթադրելով, որ սույն հասկացության դեմ ուժեղ քննադատություն է լինելու, 1946 թ. նոյեմբերին "New York Times"-ին մի նամակ գրելով՝ ձգտում է բացահայտ և պարզորոշ սահման դնել բռնի ուժացման և մշակութային ցեղասպանության միջև: Նրա նպատակը եղել է մշակութային ցեղասպանություն հասկացության պահպանումը: Նրան են պատկանում հետևյալ տողերը. «Միջազգային օրենքների նպատակներին համապատասխան՝ [մշակութային ցեղասպանության] սահմանումը չպետք է սահմանափակվի այնպիսի կենսաբանական մեթոդներով, ինչպիսիք են, օրինակ, սպանությունը, անդամալուծ դարձնելը կամ ծնելիության արգելումը: Այն նմանապես չպետք է սահմանվի միայն այնպիսի լուրջ գործողություններով, ինչպիսին է միջազգայնորեն արտահայտված անհանդուրժողականությունը»<sup>89</sup>:

Նրա նման տեսակետները կրկնվելու են նաև քննարկումների ընթացքում. «Մշակութային ցեղասպանությունը խիստ տարբեր

87 Steven Leonard Jacobs (ed.), *Lemkin on Genocide*, էջ 41.

88 Michael A. McDonnell և Dirk Moses, "Raphael Lemkin as historian of genocide in the Americas", 508.

89 Dirk Moses, "Raphael Lemkin, culture, and the concept of genocide", Donald Bloxham և Dirk Moses (eds.), *The Oxford handbook of genocide studies*, Oxford University Press, New York և Oxford, 2010; էջ 38.

Է չափավոր ճնշումների միջոցով իրականացվող բռնի ուժացումից. այն կատարվում է այնպիսի ճանապարհներով, ինչպիսիք են բռնի կերպով երեխաներին մի խմբից մյուսը փոխանցելը, տվյալ ազգի մտավորականների բնաջնջումը, մասնավոր ոլորտներում [անգամ] ազգային լեզվի օգտագործման արգելումը, գրքերի հրկիզումը և պատմական ու կրոնական հուշարձանների ավերումը կամ թույլ տալը, որ դրանք այլ նպատակներով օգտագործվեն»<sup>90</sup>: Ըստ Լեմկինի՝ մշակութային ցեղասպանությունը պետք է ընդգրկի «...ոչ թե այնպիսի վարչական օրինական միջոցներ, ինչպիսին է օրինական ճանապարհով բռնի ուժացումը, այլ՝ միայն բոլոր պետությունների քրեական օրենքներում առկա և դատապարտվող այնպիսի գործողություններ, ինչպիսին է դիվերսիան, գրքերի հրկիզումը, եկեղեցիների և դպրոցների ավերումը»: Այլ կերպ ասած՝ մշակութային ցեղասպանությունը պետք է սահմանափակվի բազմաթիվ երկրների քրեական օրենսգրքով արդեն իսկ հանցագործություն համարվող բռնության գործադրումներով: Օրինական ուժացումը մշակութային ցեղասպանություն չէ<sup>91</sup>:

Ճիշտ չի լինի միայն գործնական պատճառներով բացատրել Լեմկինի այս հաստատումներն առ այն, թե բռնի ուժացումը չի կարող ցեղասպանություն համարվել: Արևմտյան քաղաքակրթության գերակայության նկատմամբ նրա խորը հավատը ևս էական դեր է կատարել նման դիրքորոշում որդեգրելու հարցում, բայց այս հանգամանքը մեր քննարկման թեմայից դուրս է: Ամփոփելով՝ հարկ է նշել, որ հիմնվելով Լեմկինի այն արտահայտությունների վրա, որոնց համաձայն՝ բռնի ուժացումը չի կարող մշակութային ցեղասպանություն համարվել, գիտական

90 Փոխանցող՝ **John Cooper**, *Raphael Lemkin and the Struggle for the Genocide Convention*, Palgrave MacMillan, New York, 2008, էջ 91-92:

91 **Dirk Moses**, "Empire, Colony, Genocide: Keywords and the Philosophy of History", D. Moses (ed.), *Empire Colony Genocide, Conquest, Occupation and Subaltern Resistance in World History*, Berghahn Books, New York ve Oxford, 2008, էջ 15-16.

աշխարհում առաջ են քաշվել այնպիսի գաղափարներ, թե բռնի ուժացումը չի կարելի ցեղասպանություն համարել, և որ Լեմկինը մշակութային ցեղասպանության տակ չի ենթադրել բռնի ուժացումը<sup>92</sup>: Դրանց համաձայն՝ անշուշտ գրանցվել է այնպիսի պրակտիկա, երբ բռնի կերպով կրոնափոխ են արել, երեխաներին մոռացնել են տվել իրենց լեզուն, կրոնն ու մշակույթը և հարկադրի կերպով դաստիարակել ըստ իշխող խմբի մշակույթի, կամ բռնի ամուսնացրել են աղջիկներին, սակայն նման գործադրումները պետք է բնորոշվեն ոչ թե «բռնի ուժացմամբ», այլ՝ մեկ այլ հասկացությամբ:

Վերոնշյալներից կարող ենք հանգել հետևյալ եզրակացության. Լեմկինի համար ցեղասպանությունը «մի ամբողջական սոցիալական նախագիծ է», և այն, ինչպես սոցիալական բոլոր նախագծերը, բաղկացած է բազմաթիվ խառը տարրերի միավորումից: Ցեղասպանություն նշանակում է մի խմբի բնաջնջմանն ուղղված ֆիզիկական, կենսաբանական և մշակութային բնաջնջման տեխնիկաների օգտագործում, որոնք անքակտելի են և փոխկապակցված<sup>93</sup>: Նույնիսկ մշակութային ցեղասպանությունը կարող է ֆիզիկական և կենսաբանական ցեղասպանությունից ավելի շուտ սկսվել՝ խմբի կրոնական ու մշակութային գործունեության և խորհրդանշանների դեմ կատարված հարձակումների տեսքով: Ըստ այդմ՝ մշակութային ցեղասպանությունը ֆիզիկական բնաջնջմանն ուղղված նախաքայլի պես մի բան է<sup>94</sup>:

Եթե բռնի ուժացումը նման ամբողջական և համակարգված գործողությունների մի մասը չի կազմում, ապա այն ինքնին ցե-

92 Որպես նման մի օրինակ կարելի է բերել **Փիթեր Բալաքյանի**՝ իմ "Young Turks' Crime Against Humanity" գրքի վերաբերյալ գրած գրախոսությունը, տե՛ս **P. Balakian**, "The weight of evidence", *Journal of Genocide Research Journal of Genocide Research*, 15:4, 2013, էջ 483-489:

93 **Dirk Moses**, "Empire, Colony, Genocide, Keywords and the Philosophy of History", էջ 13.

94 **Dirk Moses**, "Raphael Lemkin, culture, and the concept of genocide", էջ 34.

ղասպանություն չի կարող համարվել: Այստեղ ի հայտ է գալիս իրար հետ փոխկապակցված երկու հանգամանք. առաջինն այն է, թե ուժացման քաղաքականությունը գործադրված միակ քաղաքականությունն է, թե՛ ոչ, և երկրորդը՝ եթե անգամ այն միակ քաղաքականությունն է, ինչ նպատակ է հետապնդել: Այս հարցում լավ օրինակ կարող է լինել Ավստրալիան: Բռնի ուժացման վերաբերյալ ծավալված քննարկումների ժամանակ որոշ գիտնականներ, վերոնշյալ կերպով, պաշտպանել են այն տեսակետը, թե պետք է տարբերակում դնել 1945 թ. առաջ և դրանից հետո կիրառված ուժացման քաղաքականությունների միջև: Նրանց համաձայն՝ եթե 1945 թ. առաջ ուժացումն ի հայտ է եկել որպես տեղացիներին իբրև բնիկներ մեջտեղից վերացնելու նպատակին ուղղված ցեղապաշտական քաղաքականության մի մաս, ապա 1945 թ. հետո իրավիճակն այլ է: 1945 թ. հետո գործադրված ուժացման քաղաքականությունը ոչ մի կերպ տեղացի բնակչության բնաջնջման նպատակ չէր հետապնդում: Ընդհակառակը՝ այդ ժամանակաշրջանում կիրառվում էր նաև բնիկներին պահպանելու քաղաքականություն<sup>95</sup>:

Կարող ենք ենթադրել, որ նման վիճակ առկա է նաև հայերի դեմ գործադրված քաղաքականության դեպքում: 19-րդ դարի ամբողջ ընթացքում հնարավոր է հանդիպել բռնի ուժացման օրինակներ համարվող այնպիսի դեպքերի, ինչպիսիք են երիտասարդ կանանց առևանգումը և բռնի ամուսնացումը կամ բռնի կրոնափոխությունը: Արդ՝ այդ դեպքերից ելնելով՝ կարելի է ասել, թե 19-րդ դարում հայերի դեմ գործադրված քաղաքականությունը ցեղասպանություն է եղել: Դա թերևս սխալ մոտեցում կլիներ: Այստեղ ևս էական է կարողանալ տեսնել, թե բռնի ուժացման գործողությունները ինչպես են կատարվել տարբեր

ժամանակաշրջաններում՝ որպես տարբեր քաղաքականության մի մաս: Հայոց ցեղասպանության առանցքում բռնի ուժացումը կատարվում էր որպես խմբի «գոյության հիմքերը սասանելուն ուղղված տարբեր գործողությունների համակարգված ծրագրի մի մաս», ինչպես նշում էր Լեմկինը:

### Երկու կարևոր գործոն Հայոց ցեղասպանության առանցքում

Ինչպես վերևում նշեցինք, բռնի ուժացումը, որպես Հայոց ցեղասպանության կառուցվածքային մի տարր, համակարգված կերպով կիրառվել է այնպիսի ձևերով, ինչպիսիք են կրոնափոխության հարկադրումը, հայ երեխաների հավաքագրումն ու բռնի կերպով ըստ իսլամա-թուրքական սովորույթների դաստիարակումը և երիտասարդ աղջիկներին հարկադրաբար մահմեդական տղամարդկանց հետ ամուսնացնելը: Սակայն ուսումնասիրություններում այդ չափորոշիչն անտեսվել է և բավարար ուշադրության չի արժանացել:

Այդ անտեսման և մոռացման հարցում, վերևում մեր նշած ընդհանուր գործոնների հետ մեկտեղ, էական դեր է խաղացել երկու գործոն ևս: Առաջին գործոնը թուրքական կառավարության՝ Ցեղասպանությունը ժխտելու քաղաքականությունն էր: Այդ պատճառով մեր ոլորտի առաջին գիտնականները հատկապես ձգտել են ապացուցել, որ հայերի դեմ կատարվածը ցեղասպանություն է եղել: Դրա ուղիներից մեկն էլ ցույց տալն էր, թե հայերի գլխին եկածները լրիվ նույնն են եղել, ինչ՝ հրեաներինը, որովհետև ցեղասպանագիտական ուսումնասիրություններում Հոլոքոստը քաղաքական և հոգեբանական առումներով ծանրակշիռ տեղ էր գրավում: Այդ պատճառով կատարված ուսումնասիրություններում ջանքեր էին գործադրվում ցույց տալու, թե Հայոց ցեղասպանությունը որքան նման

95 1945 թ. հետո տեղի ունեցածը ցեղասպանություն անվանելը սխալ լինելու մասին տե՛ս **Russell McGregor**, "Governance, Not Genocide, Aboriginal Assimilation in the Postwar Era", Dirk Moses (ed.), *Genocide And Settler Society*, էջ 290-311:

էր Հոլոքոստին: Այդ ջանքերի մի բնական հետևանքն էլ եղավ այն, որ միայն Հայոց ցեղասպանությանը հատուկ և Հոլոքոստին չնմանվող բազմաթիվ առանձնահատկություններ անտեսվեցին: Ուսումնասիրության շրջանակներից դուրս մնացին և անտեսվեցին այնպիսի բազում խնդիրներ, ինչպիսիք են բռնի կրոնափոխությունը, հայ երեխաների հավաքումը և հատուկ որբանոցներում կամ տներում իսլամա-թուրքական մշակույթին համաձայն դաստիարակվելը ու մանկամարդ աղջիկների բռնի ամուսնությունները:

Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի ուժացման հարցի անտեսման մեջ դեր է կատարել մի երկրորդ գործոն ևս: Այն անմիջականորեն առնչվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ օգտագործվող աղբյուրների բնույթի հետ: Մինչև վերջին տարիները կիրառվող աղբյուրները հիմնականում գերմանական, ավստրիական և ամերիկյան հյուպատոսարանների զեկույցներն ու միսիոներների դիտարկումներն էին: Նրանց հաղորդած տեղեկություններն առավելաբար իսկական քաոսի տպավորություն էին ստեղծում, քան՝ համակարգված քաղաքականության: Ցեղասպանությունից վերապրածների հաղորդումները ևս հաստատում էին այդ կարծիքը:

Այս տեղեկությունների վրա հիմնվելով՝ մեկնաբանություններ արվեցին, թե կրոնափոխությունն առավելապես տեղական կառավարչի քմահաճույքին մնացած, շրջանից շրջան փոփոխվող գործադրում էր: Օրինակ՝ Թոյնբին 1916 թ. իր հրատարակած «Կապույտ գրքում» նշում է, թե կրոնափոխության դեպքերը շրջանից շրջան փոխվում էին, «որոշ վայրերում թույլատրվում էին, որոշներում՝ արգելվում»: Ըստ Թոյնբիի՝ կենտրոնական կառավարությունը բավականին լայն գործողությունների դաշտ էր թողել տեղական կառավարիչներին, և ըստ վերջինների կեցվածքի՝ «որոշ վայրերում կանայք բռնի կերպով մահմե-

դականացվում էին, իսկ այլ տեղերում դա թույլ չէր տրվում»<sup>96</sup>: 1919 թ. գերմանական փաստաթղթերը հրատարակած գերմանացի քահանա Լեփսիուսը ևս նման մեկնաբանություն է արել: Ըստ Լեփսիուսի՝ կրոնափոխության նախաձեռնությունները «ոչ ընդհանուր, միայն նահանգապետի կամ տեղական կառավարչի կամայական գործադրումներ էին»<sup>97</sup>:

Նմանապես համոզմունք կար, թե կրոնափոխությունը բավարար չի եղել հայերի կյանքը փրկելու համար, և դավանափոխները ևս հետագայում բնաջնջվել են: Ստորև Ռայմոնդ Գևորգյանի պնդումը կարելի է մի տեսակ այդ կարծիքների ամփոփումը համարել. «Բոլորովին կասկած չկա, որ Ցեղասպանության քաղաքականության սկզբից ի վեր աքսորների միջև կրոնափոխության հնարավորությունն անընդհատ օրակարգում պահվող մի տեսակ դիցաբանական հեքիաթ էր, մի անհիմն պատմություն, որպեսզի նրանք կարծեին, հավատային, թե դեռ մի ելք ունեն... Հայերի բռնի կրոնափոխությունը... Իթթիհադի կոմիտեի համար երբեք լրջորեն նախատեսված այլընտրանք չի եղել»<sup>98</sup>:

Ինչպես նշեցի, նման դատողության առաջացման պատճառներից մեկն այն էր, որ հայտնի չէր, թե օսմանյան իշխանությունները գործընթացի ժամանակ ինչ տարբեր որոշումներ են կայացրել սույն խնդրի վերաբերյալ: Համապատասխան կառավարական որոշումները կայուն չէին և ընթացքում փոփոխվում էին մի շարք պատճառներով: Քաղաքականության մեջ այդ փո-

96 Arnold Toynbee & James Bryce, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs By Viscount Bryce* Gomidias Institute, Princeton & London, 2005, էջ 645, 649.

97 Lepsius, *Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke*, Der Tempel Verlag, Potsdam, 1919, էջ XXXV.

98 Raymond Kevorkian (ed), "L'extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915-1916)", (Paris, *Revue d'histoire arménienne contemporaine* 2), հատուկ համար, Փարիզ, 1998, էջ 55.



փոխությունների մասին տեղեկանալու հնարավորություն չունեցած, այդ որոշումներից անտեղյակ ուսումնասիրողները դժվարանում էին դրությունը հասկանալու հարցում և այդ պատճառով էլ տեղի ունեցած դեպքերը մեկնաբանում էին որպես կենտրոնական որոշման չգոյություն և տեղական իշխանությունների կամայական վերաբերմունք: Այնինչ, ստորև օսմանյան արխիվային փաստաթղթերի վրա հիմնվելով, մեր ներկայացրած նոր տեղեկությունների լույսի ներքո կտեսնենք, որ իրավիճակն այլ է եղել, և իրականում խոսքը գնում է այնպիսի քաղաքականության մասին, որը հնարավոր է համակարգված համարել:

Վարչապետարանի օսմանյան արխիվում տվյալ ժամանակաշրջանին վերաբերող նյութերի դասակարգման աշխատանքների արագացման և կառավարության քաղաքականությունը որոշակի և հասկանալի դարձնող բազմաթիվ նոր վավերագրերի և տեղեկությունների բացահայտման շնորհիվ այլևս ավելի ամբողջական պատկեր ունենք սույն թեմայի շուրջ: Այդ տեղեկությունների լույսի տակ կարող ենք հանգիստ կերպով ասել, թե մեր կողմից որպես բռնի ուժացում բնորոշված բազմաթիվ գործադրումներ որևէ պլանից և ծրագրից զուրկ, շրջանից շրջան փոփոխվող գործողություններ չէին, և հակառակը՝ դրանք կենտրոնական կառավարության քաղաքականության արդյունքն էին՝ անկախ նրանից, թե ինչպես և որքանով էին գործնականում կյանքի կոչվում<sup>99</sup>:

Աքսորի և բնաջնջման գործընթացի ամբողջ ընթացքում օսմաներենում ուժացում նշանակող temsil կամ temessil հասկա-

99 Մեր ձեռքի տակ գտնվող փաստաթղթերի մեծ մասը կենտրոնից շրջաններ հղված և կառավարության քաղաքականությունը բացահայտող վավերագրեր են: Հարկ չկա հավելել, որ կառավարական որոշումները բովանդակող այդ փաստաթղթերը չեն կարող մեզ շատ բան ասել այն մասին, թե որքանով և ինչպես են համապատասխան հրամանները կատարվել շրջաններում: Այդ կապակցությամբ հարկ է տարբերակում դնել կենտրոնական քաղաքականության և վերջինիս տեղական գործադրման միջև: Այս աշխատության մեջ ըստ էության ձգտելու ենք բացահայտել, թե ինչ քաղաքականություն է վարել կառավարությունը: Հարկ է այն ընթերցել՝ դա նկատի ունենալով:

ցությունները հաճախ են կիրառվել թե՛ Սիրիա ողջ հասած հայերի բնակեցման և թե՛ հայ տղա և աղջիկ երեխաների նկատմամբ իրականացված գործադրումների ժամանակ: Հատկապես մանուկների՝ իսլամա-թուրքական մշակույթի համաձայն դաստիարակվելու ժամանակ օգտագործված մեկ այլ եզր է “bakim ve terbiye”-ն (խնամք և դաստիարակություն): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ուժացման քաղաքականությունն ընթացքում տարբեր դրսևորումներ է ունեցել և փոփոխությունների ենթարկվել: Այդ փոփոխություններին ու տարբերություններին հնարավոր է հետևել օսմանյան փաստաթղթերի միջոցով:

1915-1918 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանում գործադրված քաղաքականությունն ավելի լավ ըմբռնել կարողանալու համար հարկ է որոշ ընդհանուր դիտարկումներ անել 19-րդ դարի վերաբերյալ:

#### Կրոնափոխությունը 19-րդ դարում. որոշ ընդհանուր դիտարկումներ

Ըստ էության՝ բռնի կամ կամավոր կրոնափոխությունը (ihitida) մի գործադրում էր, որը հաճախ էր հանդիպում ամբողջ օսմանյան պատմության ընթացքում: Ավելի վաղ իրականացված կրոնափոխության դեպքերը, որոնք կարելի է որակել որպես մարդկանց անձնական կյանքին առնչվող մասնավոր դեպքեր, նոր բովանդակություն են ձեռք բերում 1839 թ. Թանզիմաթի հռչակմամբ: Օսմանյան պատմության մեջ Կրոնափոխության հաստատության բերած այդ էվոլյուցիայի վերաբերյալ առանձնապես ուսումնասիրություններ չեն արվել: Սելիմ Դերինգիլի աշխատությունները բացառություն են կազմում այս ոլորտում<sup>100</sup>:

100 Դերինգիլի՝ 19-րդ դարում Կրոնափոխության հաստատության սոցիալական բովանդակության մեջ եղած փոփոխությունների և դրա նկատմամբ կառավարության վարած քաղաքականության մասին աշխատություններն են՝ Selim Deringil, “There Is No Compulsion in Religion”: On Conversion and Apostasy

Ըստ Դերինգիլի՝ Թանզիմաթն ու Բարենորոգումները (Islahat) էական շրջադարձ են: Հատկապես Թանզիմաթով կրոնափոխությունը, զարգացող ազգայնամոլության հետ կապված, սկսել է բացահայտ սոցիալական բախման հարց դառնալ, և օսմանցիները սույն խնդրի վերաբերյալ, թեև ակամա և հարկադրաբար, այնուամենայնիվ ստիպված են եղել համակարգված քաղաքականություն զարգացնել: Իսկ այդ անհրաժեշտության ամենակարևոր պատճառն այն էր, որ նրանք այս հարցի ամնչությամբ հանդիպում էին Արևմուտքի լուրջ ճնշումներին: Արևմտյան տերությունները, գլխավորապես՝ Անգլիան, ակնկալում էին, որ օսմանցիները հավասար վերաբերմունք ցուցաբերեն իրենց բոլոր քաղաքացիների նկատմամբ, լինեն քրիստոնյա թե մահմեդական, և կանխեն քրիստոնյաների հանդեպ տարածված սոցիալական գործադրում դարձած բռնի մահմեդականացումը:

Հասկանում ենք, որ Օսմանյան պետությունն ամբողջ 19-րդ դարի ընթացքում եղել է լուրջ երկընտրանքի առջև: Մի կողմից՝ բռնի մահմեդականացման դեպքերի պատճառով ճնշումների էր ենթարկվում Արևմուտքի կողմից, բայց մյուս կողմից էլ ստիպված էր լինում հաշվի առնել մուսուլման մեծամասնության «զգայուն լինելը» այս հարցի նկատմամբ: Թե՛ չափազանց տարածված մահմեդականացման դեպքերից և թե՛ կայսրությունում Թանզիմաթից հետո առաջացած լիբերալ մթնոլորտից օգտվելով՝ բազմաթիվ իսլամացված քրիստոնյաներ ցանկանում էին վերստին վերադառնալ իրենց նախկին կրոնին: Դա լուրջ «գլխացավանք» էր օսմանյան կառավարության համար: Եւ այն ժամանակվա քաղաքականությունն էլ, հիմ-

նականում, տարվում էր նման փորձանքներին արգելք լինելու ուղղությամբ<sup>101</sup>:

Այդ «գլխացավանքից» ազատվելու ուղիներից մեկը կրոնափոխության դեպքերը հնարավորինս սահմանափակելն ու, հնարավորության դեպքում, կանխելն էր: Հատկապես 1843 թ. օգոստոսի 23-ին, երբ Հովակիմ անվամբ մի հայ գլխատվել էր վերստին քրիստոնեության վերադառնալու համար, Արևմուտքի ցուցաբերած մեծ հակազդեցությունն անխուսափելի էր դարձրել կրոնափոխության հարցում կարգավորման անհրաժեշտությունը: Սույն խնդիրը հավանաբար 1844 թ. սկզբներին քննարկվել էր Թանզիմաթի գերագույն խորհրդում, և որոշում էր կայացվել այլևս նմանատիպ մահապատիժներ չիրագործելու մասին: 1844 թ. մարտին արտասահմանյան դեսպաններին նաև երաշխիք էր տրվել առ այն, թե այլևս նման պատիժներ չեն սահմանվի<sup>102</sup>:

Սակայն խնդիրն այդքան հասարակ չէր, որովհետև իսլամական իրավունքն ավանդույթ ուներ, ըստ որի՝ իսլամից կրոնափոխվածները ենթակա էին մահապատիժ: Երբ բռնի կամ կամավոր կերպով մուսուլման դարձած որևէ քրիստոնյա ցանկանում էր դարձյալ վերադառնալ իր նախկին կրոնին, նրան մահապատիժ էր սպառնում: Բացի այդ՝ մահմեդական մեծամասնության տեսանկյունից ևս դա նորմալ գործադրում էր: Արևմտյան տերությունները ցանկանում էին արգելել այդ պրակտիկան: Այնինչ իսլամական կրոնը պահպանել պարտավորված և ամբողջ իսլամական աշխարհի խալիֆը հանդիսացող սուլթանը թե՛ գործող իսլամական իրավունքի և թե՛ մահմեդականների ակնկալիքների պատճառով չէր կարող բացահայտ կերպով հայտարարել, որ դրա համար էլ կառավարությունը գնաց սույն խնդիրը գաղտնի որոշմամբ լուծելու ճանապարհով:

in the Late Ottoman Empire: 1839-1856, *Comparative Studies in Society and History*, 42:3, Temmuz 2000, էջ 547-575; Deringil, "The Armenian Question Is Finally Closed": Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895-1897", *Comparative Studies in Society and History*, 51:02, Nisan 2009, էջ 344-371. Deringil, *Conversion and Apostasy in the Late Ottoman Empire*, Cambridge University Press, Cambridge, New York, 2012.

101 Selim Deringil, *Conversion and Apostasy in the Late Ottoman Empire*, էջ 39.

102 Նույն տեղում, էջ 73:

Այս հարցի շուրջ Թանգիմաթի գերագույն խորհրդում կայացած քննարկման ժամանակ հավատափոխին մահապատժի ենթարկելն արգելելը և այդ արգելքը շրջաններ ուղարկելը որոշվեց անել «գաղտնի գրությամբ»<sup>103</sup>: Հետագա գրություններում այդ որոշման վերաբերյալ օգտագործվեց «գաղտնի հրաման» արտահայտությունը<sup>104</sup>, և Բարեփոխումների մասին հրովարտակից հետո ևս շարունակեցին նման հրամաններ ուղարկել շրջաններ<sup>105</sup>:

Կրոնափոխությունը, հատկապես՝ դրա հարկադրանքը կանխելու երկրորդ ուղին էլ շատ խիստ ընթացակարգ պարտադրելն էր: Այսպես՝ Թանգիմաթից հետո կրոնափոխության համար ստեղծվեցին մանրամասն օրենքներ, թե որ հաստատությունների հսկողության տակ պետք է կատարվի, և ինչ գործառույթներ են անհրաժեշտ, և դրա մասին հաղորդվեց շրջաններին: Այդպիսով՝ իրականում անհատական խնդիր հանդիսացող կրոնափոխությունը, որ պետք է սահմանափակվեր մասնավոր ոլորտում, վերածվեց հասարակական ոլորտի մի կարևոր խնդրի:

Նոր դատավարական իրավունքի համաձայն՝ կրոնափոխությունը պետք է կատարվեր դատարանում՝ քաղիի ներկայությամբ: Դատարանում պետք է ներկա գտնվեր նաև կրոնափոխվող անձի մի աջակից կամ նրան բարոյական աջակցություն ցուցաբերող մեկը: Բացի այդ՝ լինելու էին նաև վկաներ, և կրոնափոխվողը պետք է հայտարարեր, որ այդ որոշումը կայացրել էր ազատ կամքով և ոչ մեկի ճնշումներին չէր ենթարկվել: Դրանից հետո միայն հնարավոր էր անցնել կրոնափոխվելու համար

103 Նույն տեղում, էջ 72-73:

104 1846 թ. ապրիլի 16-ի ամսաթիվն ունեցող այն փաստաթուղթը, որում առկա է այդ արտահայտությունը, տե՛ս նույն տեղում, էջ 51:

105 Սելիմ Դերինգիլը շրջաններ հղված զանազան հրամանների բազմաթիվ օրինակներ է բերում, որոնցում բացահայտ կերպով երևում է այդ չկամությունը, տե՛ս նույն տեղում, էջ 49-55:

անհրաժեշտ կրոնական կանոնների գործադրմանը: Պետք էր նույն գործառույթը հետագայում կրկնել համապատասխան տեղական վարչական խորհրդի առաջ: Այս հանգրվանում ներկա էին գտնվելու նաև կրոնափոխվողի մերձավորները և եկեղեցական քահանան, ովքեր հնարավորություն էին ունենալու նրան հետ պահել այդ որոշումից<sup>106</sup>:

Այդ ամբողջ մեթոդը միայն մի իմաստ ուներ. օսմանյան կառավարությունը ցանկանում էր Թանգիմաթի և Բարենորոգումների ընթացքում կանխել արևմտյան տերությունների՝ Օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու փորձերը, որոնք արվում էին կրոնական անհավասարությունը և բռնի իսլամացումը պատրվակելով: Այդ պատճառով կառավարությունը կանոնավոր կերպով շրջաններ էր հղում կրոնափոխությունն արգելել պահանջող հրամաններ: Սակայն, չնայած այդ բոլոր ձեռնարկված միջոցներին, քրիստոնյաների կրոնափոխության հարկադրանքը, որպես չափազանց տարածված պրակտիկա, շարունակեց պահպանվել 19-րդ դարի ամբողջ ընթացքում:

Որպես մի ուշագրավ օրինակ այստեղ կարելի է հիշատակել 1850 թ. սեպտեմբերի 16-ին Կրետեի մարշալ Մուստաֆա Նախիլի փաշայի ուղարկած գրությունը: Փաշան իր բավականին երկար գրության մեջ հաղորդում է, որ թեև դա չի համապատասխանում իսլամին, սակայն ռայաների կողմից աղջիկներին լեռները փախցնելը կամ մահմեդականների տներում որպես ծառա աշխատող քրիստոնյա երեխաներին ահաբեկելով՝ մուսուլմանություն պարտադրելը, հետագայում նրանց տեղական դատա-

106 Նույն տեղում, էջ 42-44: Մի կրոնափոխվողի՝ իր կայացրած որոշման կապակցությամբ քահանայի հետ առերեսման մի օրինակ տե՛ս Էրզրումի հյուպատոս Գրեյվսից (Graves) Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիին (Currie) ուղարկված զեկույցում, որը կրում է 1895 թ. ապրիլի 2-ի ամսաթիվը, Great Britain, Foreign Office, Blue Book: *Turkey. 1896, No. 1, Correspondence Respecting the Introduction of Reforms in the Armenian provinces of Asiatic Turkey*, Harrison and Sons, Լոնդոն, 1896 թ., էջ 25:

րաններ բերելով՝ իրենց մահմեդական դառնալու մասին հայտարարել տալը չափազանց տարածված գործադրումներ են: Բազմաթիվ դեպքերում այդ երեխաները վերադիմելով խոստովանում են, որ վախից ելնելով են իրենց կրոնը փոխել: Փաշայի խոսքով՝ չնայած կառավարության առաջարկած բոլոր վարչական միջոցառումներին՝ խիստ բարդ է այդ հարկադրանքները կանխելը<sup>107</sup>:

### Հայերի բռնի իսլամացումը

Ամբողջ 19-րդ դարի ընթացքում հատկապես Արևելյան Անատոլիայի շրջաններում, որտեղ հայկական հոծ բնակչություն կար, չափազանց տարածված դեպքեր էին հայկական բնակավայրերի վրա հարձակումները, նրանց կրոնափոխելու հարկադրանքները և, հատկապես, աղջիկների առևանգումները և մահմեդականների հետ բռնի ամուսնությունները: 1863 թ. «Հայկական սահմանադրություն» անվան տակ հայտնի «Հայոց կաթողիկոսարանի և պատրիարքարանի կանոնադրությամբ» կազմավորված Արևմտահայոց ազգային խորհրդի ամենակարևոր գործերից մեկը եղավ հայերի նկատմամբ կատարվող անարդարությունների մասին օսմանյան կառավարությանը զեկույց ներկայացնելը: Շրջաններից հասած տեղեկությունների հիման վրա պատրաստված այդ զեկույցների էական թեմաներից մեկը կանանց և աղջիկների առևանգումն ու բռնի ամուսնացումն էր, ինչպես նաև՝ բռնի կրոնափոխությունը<sup>108</sup>: Նման

107 BOA/A.MKT.UM, nr. 31/60, Կրետեի մարշալ Մուստաֆա Նախի փաշայից օսմանյան կառավարությանը հղված՝ 1850 թ. սեպտեմբերի 16-ի ամսաթիվը կրող գրությունը: Իմ երախտագիտությունն եմ հայտնում Սելիմ Դերինգիին սույն փաստաթուղթն ինձ տրամադրելու համար: Այս վիճակը չէր տարբերվում նաև 20-րդ դարի սկզբին: Դրա վերաբերյալ որոշ օրինակներ տե՛ս Դերինգիի նշված աշխատության 105-111 էջերում:

108 1871 թ. նման մի զեկույց տե՛ս Yves Ternon, The Armenians History of a Genocide, Caravan Books, Ann Arbor, 1981, էջ 42-43:

տեղեկություններ կային նաև անգլիացի հյուպատոսների՝ շրջաններից կանոնավոր կերպով ուղարկած զեկույցներում: Ուշագրավ էր այն հանգամանքը, որ հաճախ հյուպատոսները տվյալ հանցագործությունների վերաբերյալ իրենց պատրաստած ցուցակները ներկայացնում էին նաև տեղական իշխանություններին և զեկույցներում ընդգրկում նաև յուրաքանչյուր մեղադրանքի մասին նրանց տված պատասխանները<sup>109</sup>:

Հայոց պատրիարքը գրեթե ամեն պատեհ առիթի բարձրաձայնում էր այդ խնդիրների մասին և հատկապես մեծ տերություններին զանազան միջոցներով դիմելով՝ խնդրում միջամտել, օգնել՝ լուծում գտնելու հարցում: 1876 թ. դեկտեմբեր ամսին Բոսնիա-Հերցեգովինայի ճգնաժամի կապակցությամբ Ստամբուլում տեղի ունեցած մի կոնֆերանսի ժամանակ մասնակից պետություններին ներկայացված խնդրագիրը, 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո 1878 թ. Սան Ստեֆանոյում տեղի ունեցած խաղաղության համաժողովին Սան Ստեֆանոյի պայմանագրի դրույթները քննող ռուսական պատվիրակությանը ներկայացված զեկույցը և 1878 թ. Բեռլինի կոնֆերանսի ժամանակ ներկայացված պահանջները կարելի է բերել որպես նման միջազգային նախաձեռնությունների մի քանի օրինակներ<sup>110</sup>:

1878 թ. Բեռլինի պայմանագրով նախատեսված Հայկական բարենորոգումներում ևս կանանց և աղջիկների առևանգումներն ու բռնի կրոնափոխությունները կարևոր տարր էին կազմում: Բարեփոխումների հարցում 1878 թ. հետո առանձնապես էական զարգացում չէր գրանցվել: Բռնի կրոնափոխությունը

109 Որպես օրինակ կարելի է բերել Վանի հյուպատոսի կողմից 1890 թ. պատրաստված և նահանգապետի տված պատասխաններն ընդգրկող մի ցուցակ, տե՛ս Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, No. 1 (1892), further correspondence respecting the condition of the populations in Asiatic Turkey, Harrison and Sons, Londra, 1895, էջ 29-34:

110 Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Belge Yayinlari, İstanbul, 1976, էջ 188-252:

կամ կանանց առևանգումներն ու բռնի ամուսնությունները սովորական դեպքեր էին: Անգլիացի հյուպատոսների գեկույցները լեցուն էին այս թեմայի մասին տեղեկություններով<sup>111</sup>: Կային մարդիկ, ովքեր փորձել էին ելք գտնել՝ հյուպատոսարաններին բողոքի նամակներ գրելով և ձերբակալվել էին դրա համար: Օրինակ՝ 1893 թ. օգոստոսի 12-ին Սվասից ուղարկված մի նամակում այս տեղեկություններն էին տրվում. «Կարապետ Կապիկյանը խնդրեց թագուհուն գրել մոտ 10 ամիս առաջ առևանգված և բռնի կերպով մահմեդականություն ընդունած մի աղջկա մասին տեղեկությունները: Նա ցանկանում էր նամակն ուղարկել հյուպատոսարանի միջոցով: Նամակը բացահայտվեց, և [Կարապետը] բանտ նետվեց: Վերջերս [բանտից] ուզել էր մի երկրորդ նամակ էլ ուղարկել և բանտում շղթայակապ էր արվել»<sup>112</sup>:

Բարենորոգումների թեման 1894 թ. վերստին արդիական դարձավ: Հատկապես 1894 թ. Սասունի դեպքերից հետո բարեփոխումների վերաբերյալ արագացված բանակցությունների կարևոր դրոյթներից էին կանանց և աղջիկների առևանգումներն ու բռնի ամուսնությունները, ինչպես նաև՝ բռնի կրոնափոխությունը: 1895 թ. մայիսին երեք մեծ տերությունների (Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան) կողմից հայկական վիլայեթներում բարեփոխումներ կատարելու մասին ներկայացված նոտայի 10-րդ կետը վերաբերում էր այդ հարցին: Ըստ այդ հոդվածի՝ օսմանյան կառավարությունը չէր գործադրում 1956 թ. Բարեփոխումների մասին սուլթանական հրովարտակի 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածները, որոնք ուղղված էին կայսրության տարածքում մուսուլմանների և քրիստոնյաների հավասարության ապահովմանը: Պահանջվում էր, այդ հոդվածների ոգուն համապատաս-

111 Կայսերից առևանգված աղջիկների մասին տե՛ս Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey. 1896, No. 3, Correspondence relating to the Asiatic provinces of Turkey 1892-1893, Harrison and Sons, Londra, 1896, էջ 112:

112 Նույն տեղում, էջ 188:

խան կերպով, ժամ առաջ լուծել կրոնափոխության դեպքերի խնդիրը<sup>113</sup>:

Կանանց ու աղջիկների առևանգումներն ու բռնի ամուսնությունները, ինչպես նաև՝ բռնի կրոնափոխությունը 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ ևս տարածված գլխավոր մեթոդներից էին: Կոտորածներն սկսվեցին 1894 թ. Սասունում: Այն բանից հետո, երբ այս դեպքի մասին տեղեկացան Ստամբուլում, մեծ տերությունների, հատկապես Անգլիայի ճնշումների արդյունքում սույն հարցով զբաղվող մի հանձնաժողով ստեղծվեց և ուղարկվեց շրջաններ: Հանձնաժողովի հավաքած տեղեկությունների մեջ, կոտորածներից բացի, մեծ տեղ էին գրավում նաև հայ կանանց ու աղջիկների առևանգումները և բռնի կրոնափոխության դեպքերը: Տեղեկություններ կային նաև առ այն, որ կրոնափոխության առաջարկը չընդունածներն սպանվել էին: Հանձնաժողովին վկայություններ տված որոշ հայեր նշում էին, թե բռնի կրոնափոխության դեպքերը հատկապես տարածվել էին 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո<sup>114</sup>:

1894-1896 թթ. կոտորածների ընթացքում տարածված դեպքեր էին կանանց և երիտասարդ աղջիկներին մահմեդականների տներում փակելով՝ բռնի կերպով մուսուլման դարձնելու պահանջները, պատանիների առևանգումներն ու մահմեդականների տներում փակելը, հարձակումների ենթարկված հայկական գյուղերում ամբողջ բնակչությանը մուսուլման դառնալու

113 Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey. 1896, No. 1, Correspondence Respecting the Introduction of Reforms in the Armenian provinces of Asiatic Turkey, էջ 44-45.

114 Սույն թեմայի շուրջ որոշ օրինակներ տե՛ս Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey. 1895, No. 1 Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey), Part I, Events at Sassoon and the Commission of Enquiry at Mush, Harrison and Sons, Londra, 1895, էջ 15, 29 և 37; Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey. 1895, No. 1, Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey), Part II (Commission of Enquiry at Mush: Procès-verbaux and Separate Dispositions, Harrison and Sons, Londra, 1895, էջ 208, 286, 324, 363, 366, 368 և 376:

համար ճնշումների ենթարկելը, տղամարդկանց հավաքական ու բռնի կերպով թլպատելը, եկեղեցիները մզկիթի վերածելը<sup>115</sup> և դրանք որոշ դեպքերում Համիդիյե մզկիթ անվանելը<sup>116</sup>: 1895 թ. նոյեմբերին Խարբերդից գրող մի միսիոներ հաղորդում է, թե տվյալ շրջանի երկու գյուղերում 600 հոգի է թլպատվել<sup>117</sup>: Դարձյալ Խարբերդի մի գյուղում 70 տարեկան մի քահանայի սյունին կապելով՝ բոլորի աչքի առաջ բռնի կերպով թլպատել են<sup>118</sup>: Մեկ այլ գյուղում մի քահանայի բռնի կերպով ստիպում են եկեղեցու աշտարակից նամագի հրավիրող տեքստը կարդալ, ապա՝ սպանում<sup>119</sup>: Որոշ գյուղերում հարկադրանքով մահմեդականություն ընդունած հայերին ստիպում են սպանել այն ջրնդունած իրենց ազգականներին<sup>120</sup>:

Մեկ այլ տարածված գործադրում էր հայերին եկեղեցում հավաքելը և մեկ առ մեկ դուրս հանելով՝ մահմեդական դառնալ պահանջելը: Ով համաձայն չէր, տեղում սպանվում էր: Այդ պատճառով իրենց կյանքը փրկել ցանկացող հայերն այլընտրանք չունեին՝ մահմեդականություն ընդունելուց բացի: Ամե-

115 FO 195\1893, Մուշի հյուպատոս Չարլզ Հեմփսոնից Էրզրումի հյուպատոս Քամբրլորբեչին 1895 թ. դեկտեմբերի 11-ին ուղարկված նամակը: Այս և FO արձանագրության տակ ստորև ներկայացվող որոշ տեղեկություններ վերցված են Բեննի Մորրիսի և Դորր Ջենիի կողմից Հայոց ցեղասպանության մասին գրված գրքի առաջմ անտիպ տեքստից: Իմ շնորհակալությունն եմ հայտնում նրանց՝ այդ տեղեկություններն օգտագործել թույլ տալու համար:

116 Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, Reports by Vice Consul Fitzmaurice, from Birejik, Ourfa, Adiaman and Behesni, Harrison and Sons, Londra, 1896, էջ 4.

117 FO 195\1907, Հենրի Դվայթի՝ Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիին ուղղված նամակը՝ թվագրված 1895 թ. նոյեմբերի 27-ի ամսաթվով:

118 FO 195\1941, Էրզրումի հյուպատոս Քամբրլորբեչից արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիին 1896 թ. հունվարի 6-ին ուղարկված զեկույցը:

119 Նույն տեղում:

120 FO 195\1893, հյուպատոս Քամբրլորբեչից արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիին 1895 թ. դեկտեմբերի 12-ին ուղարկված զեկույցը:

րիկայի արտակարգ և լիազոր դեսպան Թերրելը նման որոշ օրինակներ է ներկայացնում դեկտեմբերի 15-ի, 16-ի և 29-ի իր զեկույցներում<sup>121</sup>: Նման տեղեկություններ առկա են նաև 1895 թ. դեկտեմբերի 12-ին Էրզրումում Անգլիայի հյուպատոսարանի զեկույցում: Անգլիական հյուպատոս Իչմեն հաղորդելով, որ Չարսանջաքի գավառում բազմաթիվ հայեր են սպանվել, իսկ նրանց տները՝ հրկիզվել, հայտնում է նաև, թե առաջադեմ հայերն ապաստանել են եկեղեցում, և «թուրքերը նրանց մեկ առ մեկ դուրս հանելով՝ հարցրել են՝ մահմեդականություն ընդունում են, թե ոչ: 30 հոգի, որոնց մեջ էր գտնվում նաև եկեղեցու քահանան, իրենց կրոնին հավատարիմ մնալու համար սպանվել են հենց եկեղեցու դռան մոտ»<sup>122</sup>:

Կան նաև օրինակներ առ այն, որ մահմեդականություն ընդունելը ևս չի օգնել: Օրինակ՝ Խարբերդին ենթակա 150 տուն ունեցող Հոհ գյուղում քրդերը տները կողոպտելուց հետո հայերին հարկադրում են մուսուլման դառնալ: Համաձայնություն տված բոլոր հայերը կրոնական պարտականությունն իրականացնելու համար լցվում են մզկիթ, որտեղ 62 հայեր սպանվում են՝ կեղծ կրոնափոխության պատրվակով, իսկ 10 հոգի կարողանում է փրկվել փախչելու շնորհիվ<sup>123</sup>:

121 Այդ տեղեկությունների մասին տե՛ս Խարբերդից (Էլազըր) մի միսիոների կողմից 1895 թ. նոյեմբերի 26-ին ուղարկված նամակը Ամերիկայի արտակարգ և լիազոր դեսպան Թերրելից Արտաքին գործերի նախարարությանը 1895 թ. դեկտեմբերի 15-ին ներկայացված զեկույցում, էջ 1395-1397: Դարձյալ Խարբերդից 1895 թ. դեկտեմբերի 9-ին ուղարկված նամակը արտակարգ և լիազոր դեսպան Թերրելից Արտաքին գործերի նախարարությանը 1895 թ. դեկտեմբերի 29-ին ներկայացված զեկույցում, էջ 1423-1425 և նորից Թերրելից Արտաքին գործերի նախարարությանը 1891 թ. դեկտեմբերի 16-ին ներկայացված զեկույցը, էջ 1398-1400, <http://digital.library.wisc.edu/1711.d1/FRUS.FRUS1895p2>, ներածություն, 4-ը մարտի, 2014:

122 Անգլիայի հյուպատոս Քամբրլորբեչից արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆ. Կյուրիին 1895 թ. դեկտեմբերի 12-ին ուղարկված զեկույցը: Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 2, Correspondence Relative to the Armenian Question, Harrison and Sons, Londra, 1896, էջ 270:

123 Նույն տեղում:

Կոտորածների, կանանց առևանգումների և բռնի կրոնափոխության դեպքերի մասշտաբները ցույց տալու համար բավարար են նույնիսկ միայն Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպանի՝ 1896 թ. մարտի 6-ի զեկույցում Սղերդի և վերջինիս գյուղերի վերաբերյալ ներկայացված թվերը. «Քրիստոնյաների թիվը՝ 37.000, սպանվածները՝ 15.000, կրոնափոխվածները՝ 19.000, առևանգված կանայք՝ 2.500, հրկիզված կամ մզկիթի վերածված եկեղեցիների թիվը՝ 97»<sup>124</sup>: Այս և այլ նմանատիպ չափազանց մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել տվյալ ժամանակաշրջանի ամերիկյան և անգլիական հյուպատոսարանների զեկույցներում և միսիոներների՝ շրջաններից ուղարկած նամակներում: Վեց արտակարգ և լիազոր դեսպաններ, որոնք ներկայացուցչություններ ունեին Ստամբուլում, այս զեկույցներից բացի, նաև իրենց ձեռքի տակ գտնվող այլ տեղեկությունների հիման վրա մի ամփոփ պատկեր էին պատրաստել Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Մամուրեթյուլազիզի (Խարբերդ), Դիարբեքրի, Սվասի, Հալեպի, Ադանայի, Անկարայի նահանգներում և Իզմիրի սանջակում կատարված կոտորածների, կոռուպուտների և բռնի կրոնափոխության դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև՝ դրանց նկատմամբ տեղական իշխանությունների ցուցաբերած վերաբերմունքի մասին<sup>125</sup>:

Այդ բոլոր տեղեկությունները մատնանշում են այն փաստը, որ հայերին ուղղված մահմեդական դառնալու հարկադրանքը եղել է 1894-1896 թթ. կոտորածների գլխավոր առանձնահատ-

124 Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիից վարչապետ՝ մարկիզ Սոլսբերիին 1896 թ. մարտի 6-ին ուղարկված զեկույցը, Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 8, Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, Harrison and Sons, Լոնդոն, 1896, էջ 67:

125 Ֆրանսերենով և անգլերենով պատրաստված և օսմանյան կառավարության պաշտոնյաներին և ներկայացված սույն պատկերի ամբողջական տեքստը տե՛ս Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 2, էջ 297-338:

կություններից մեկը: Դրա կարևոր պատճառներից մեկն այն էր, որ մուսուլմանները հայերի դեմ հարձակումները համարում էին կրոնական պարտականություն: Ըստ նրանց՝ իրենց արածը սուլթանական հրովարտակով որոշված մի ջիհադ էր, իսկ հայերին մահմեդական դառնալ հարկադրելը՝ դրա տարրերից մեկը: Այդ առումով շատ ուսանելի են կոտորածներից հետո օսմանյան կառավարության թույլտվությամբ ստեղծված հանձնաժողովի հետ միասին Բիրեջիքի, Ուրֆայի, Ադրյամանի և Բեսնիի նման վայրերում շրջած Անգլիայի հյուպատոս Ֆիցմորիսի զեկույցում ներկայացված դիտարկումները:

Ֆիցմորիսի համաձայն՝ մուսուլմանների շրջանում տիրապետող է հետևյալ համոզմունքը. քրիստոնյաները կարող են իրենց շնորհված իրավունքներից օգտվել, քանի դեռ չեն խախտել մահմեդական հեղինակության հանդուրժողականությունը: Այնինչ հայերը աջակցություն և հովանավորություն էին խնդրում օտար պետություններից: Ըստ մուսուլման մեծամասնության՝ այդ ցանկությունը նշանակում է մահմեդական հեղինակության հանդուրժողականության սահմանն անցնել, պայմանագիրը խախտել: Այդ պայմաններում մուսուլման հեղինակությունն ազատվում է քրիստոնյաներին պաշտպանելու ամեն տեսակի պարտավորությունից: Ֆիցմորիսը հաղորդում է նաև, որ այդ պայմաններում մահմեդականներն իրենց կրոնական պարտականությունն են համարում քրիստոնյաների կյանքի և գույքի դեմ ուղղված հարձակումները: Ըստ նրա՝ կոտորածների հետևում նման համոզմունք է առկա<sup>126</sup>:

Այստեղ հետևյալ հարցն է ծագում. 1894-1896 թվականներին կատարված բռնի մահմեդականացման գործողությունների հանդեպ ինչ վերաբերմունք էր որդեգրել կառավարությունը: Ինչպես վերևում տեսանք, կառավարությունը կրոնափոխությունը, Թանզիմաթից սկսած, ենթարկել էր մի շարք կանոնների և օրենքների: Ամենակարևոր կանոնը կամավորության սկզբունքն

126 Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, 3.

էր: Այնինչ կոտորածների ժամանակ տեղի ունեցած կրոնափոխության գործողություններից և ոչ մեկը կամավոր չէր: Այդ դեպքում անհրաժեշտ էր, որ կառավարությունը բացահայտ կերպով դեմ հանդես գար բռնի կրոնափոխության նախաձեռնություններին և ձգտեր կանխել դրանք: Մինչդեռ բազմաթիվ շրջաններում բռնի կրոնափոխության գործողությունները կազմակերպվում էին հենց տեղական իշխանությունների աչքի առաջ, նրանց տեղեկությամբ: Օրինակ՝ 1896 թ. մարտի 17-ին Դիարբեքի վերաբերյալ մի զեկույց գրած անգլիական հյուպատոս Հովվարդը հաղորդում է, որ քաղաքում տեղի ունեցող ամեն բան, կոտորածն ու կրոնափոխությունները ներառյալ, կատարվում է նահանգապետ Էնիս փաշայի վերահսկողությամբ<sup>127</sup>:

Բռնի կրոնափոխության՝ օրենքներին դեմ լինելը գիտակցող նահանգապետերն այդ պատճառով դիտումնավոր կերպով սխալ տեղեկություններ են հաղորդում Ստամբուլ, իրենց զեկույցներում ժխտում են այն պնդումները, թե հայերը բռնի կերպով են մահմեդական դարձել, և հայտնում, որ կրոնափոխության դեպքերը եղել են կամավոր<sup>128</sup>: Մեր ձեռքի տակ գտնվող փաստաթղթերի և տեղեկությունների լույսի ներքո սխալ չի լինի հետևություն անել, թե բռնի կրոնափոխության դեպքերը տեղի են ունեցել կենտրոնական կառավարության տեղեկությամբ: Սակայն դժվար է ենթադրել, թե տեղյակ լինելով հանդերձ, կամ տեղական իշխանությունների անմիջական մասնակցության դեպքում անգամ, կենտրոնական կառավարությունը համակարգված կերպով վարել է բռնի կրոնափոխության քաղաքականություն: Իսկ դրա ամենաէական պատճառն այն էր, որ ահ

127 Դիարբեքի հյուպատոս Հովվարդից Էրզրումի հյուպատոս Քամրբեքին 1896 թ. մարտի 17-ին ուղարկված զեկույցը, նույն տեղում, էջ 127:

128 58BOA A.MKT 660/35, Սվասի նահանգապետ Հալիլ փաշայից Ներքին գործերի նախարարությանը 1895 թ. նոյեմբերի 17-ին ուղարկված զեկույցը, տե՛ս **Selim Deringil**, "The Armenian Question Is Finally Closed": Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895-1897", էջ 350, 359:

կար, թե այդ խնդիրը, որպես պատրվակ, կարող էր տեղիք տալ արտաքին միջամտության:

Այդ պատճառով արտաքին ճնշումներից վախեցող օսմանյան կառավարությունը թե՛ կոտորածների փաստն է ժխտում և դրանք ներկայացնում որպես հայկական ապստամբություններ և թե՛ պնդում, որ կրոնափոխության դեպքերը ոչ մի կերպ չեն իրականացվել իր տեղեկությամբ և հսկողությամբ: Հայերը դրան են դիմում կամ քրդերից վախենալու, կամ էլ օտար պետություններին բողոքել կարողանալու համար:

Աբդուլ Համիդն իր հետ հանդիպած և այդ հարցն արծարծած Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպանին պնդում է, թե կրոնափոխությունների հարցում կառավարությունը ոչ մի դեր ու պատասխանատվություն չի ունեցել, և որ նման հարկադրանքների անընդունելի լինելու մասին գրություններ են ուղարկվել շրջաններ: Նա, ավելի առաջ գնալով, դեսպանին առաջարկում է մի պատվիրակություն ուղարկել այն շրջաններ, որտեղից նման բողոքներ են ստացվել<sup>129</sup>: Այս պատվիրակության պարտականություններից մեկը կրոնափոխության հարկադրված հայերին անհրաժեշտ երաշխիքներ տալով և նրանց անվտանգությունն ապահովելով՝ վերստին նախկին կրոնին վերադառնալու հնարավորություն ստեղծելն էր<sup>130</sup>:

Աբդուլ Համիդն ամբողջությամբ ստում էր անգլիացի դեսպանին: Իրապես էլ նման նամակագրություն կար շրջանների հետ: Քանի որ դրանք կառավարության և տեղական իշխանությունների միջև ներքին նամակագրություն էին առ այն, թե ինչ դիրքորոշում պետք էր ընդունել կրոնափոխության հարցում, ապա պետք է ճիշտ համարել դրանցում առկա տեղեկություն-

129 Արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիից վարչապետ՝ մարկիզ Սոլսբերիին 1896 թ. հունվարի 29-ին ուղարկված զեկույցը, Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, էջ 1:

130 Պատվիրակության անդամ Ֆիցմորիսի զեկույցները չափազանց կարևոր տեղեկություններ են պարունակում սույն հարցի վերաբերյալ, տե՛ս նույն տեղում, էջ 2-18:



ները: Առաջին օրինակը, որ կարելի է բերել, 1895թ. նոյեմբերի 12-13-ը կատարված նամակագրությունն է: 1895 թ. նոյեմբերի 12-ին Մամուրեթյուլազիզի (Խարբերդ) նահանգապետարանը հաղորդում է, որ «Փերի<sup>131</sup> գյուղաքաղաքի հայերը ձգտում են մուսուլման դառնալ, և Փերիի հայկական թաղամասի բնակչությունն ինքն իրեն թլպատել է», և հարցնում, թե ինչ պետք է անել: Կառավարության՝ նոյեմբերի 13-ին տված պատասխանում հաղորդվում է, թե հայերի կրոնափոխությունը «հիմնված է երկու պատճառների վրա. մեկը քրդերի հարձակումներից ու վնասներից ազատվելն է, իսկ մյուսը՝ հետագայում օտարներին դիմելով՝ հայտնելը, թե իրենք բռնի կերպով են կրոնափոխ եղել»: Այդ պատճառով կառավարությունը հաղորդում է, որ այդ դիմումը չպետք է ընդունվի: Առաջարկվում է «հարցից խուսափել»՝ մինչև լարվածությունն անցնի, և վերստին կարգուկանոն հաստատվի<sup>132</sup>:

Նման մի փաստաթուղթ էլ թվագրվում է 1895 թ. նոյեմբերի 14-ի ամսաթվով: Դիարբեքիի նահանգապետի կողմից ուղարկված գրության մեջ հաղորդվում է նաև կառավարության դիրքորոշման մասին: Դրա համաձայն՝ ամեն տեսակի թյուրիմացության արգելք լինել կարողանալու նպատակով պահանջվում է կրոնափոխությունները չընդունել և սպասեցնել դիմողներին: Եթե հայերը, լարվածությունն անցնելուց հետո, նորից դիմեն կրոնափոխվելու հարցով, միայն այն ժամանակ դիմումին պետք է ընթացք տրվի՝ գործող օրենքների շրջանակներում: Առայժմ միայն պետք է ինչ-որ կերպ հարթել խնդիրը՝ մինչև մթնոլորտը հանդարտվի: Պաշտոնական նամակագրու-

131 Ներկայիս անվանումը Աքփազար է: Թունջեյիին ենթակա Մազգիրթ գավառի գյուղաքաղաքներից մեկն է, որը երբեմն հանդիպում է նաև Չարսանջաք անվամբ:

132 BOA A.MKT.MHM, 657/24, Մամուրեթյուլազիզի նահանգապետից կառավարությանը 1895 թ. նոյեմբերի 12-ին ուղարկված հեռագիրը և կառավարության՝ 1895 թ. նոյեմբերի 13-ին տված պատասխանը: Իմ երախտագիտությունն են հայտնում Սեյիմ Դերինգիլին՝ սույն փաստաթուղթն ինձ տրամադրելու համար:

թյան մեջ գործածված արտահայտությամբ՝ կառավարությունը պահանջում է «հարցից խուսափել իմաստուն միջոցներով»<sup>133</sup>:

Սակայն, չնայած կենտրոնից ստացված հրամաններին, խիստ բարդ է հայերի՝ վերստին քրիստոնեության վերադառնալը, որովհետև բազմաթիվ շրջաններում հայերին մահ է սպառնում «քրիստոնեության վերադառնալու դեպքում»<sup>134</sup>: Դարձյալ սպառնալիքի տակ պահանջվում է, որ նրանք հայտարարեն, թե իրենց ցանկությամբ են մահմեդականություն ընդունել<sup>135</sup>: Այդ պատճառով որոշ շրջաններում հայերը, չնայած կառավարության՝ «քրիստոնեության վերադառնալու» զգուշացմանը և ճնշումներին, վախից մերժում են այն: Նրանց խնդրագրերում նախադասություններ կան, թե «Մենք կամավոր ենք կրոնափոխվել. այլևս քրիստոնեության չենք վերադառնա»<sup>136</sup>:

Եւ իսկապես, կառավարության՝ կրոնափոխությունը չընդունելը և հայերի՝ վերստին իրենց նախկին կրոնին վերադառնալ հարկադրված լինելը նոր հանցագործությունների տեղիք են տալիս: Օրինակ՝ 1896 թ. մարտին Մուշից մի զեկույց ուղարկած Անգլիայի հյուպատոսը հաղորդում է, որ 15 ընտանիք է սպանվել: Ոճրագործություններն իրականացվել են գավառապետի աջքի առաջ և նրա գիտությամբ: Այդ ընտանիքները Ստամբուլից ստացված հրամանից հետո նորից իրենց նախկին կրոնին վերադարձած հայերից են բաղկացած<sup>137</sup>:

133 BOA\A.MKT.MHM 636/25, Դիարբեքիի նահանգապետ Էնիս փաշայի՝ 1895 թ. նոյեմբերի 10-ին ուղարկված հեռագիրը, տե՛ս **Selim Deringil**, Conversion and Apostasy in the Late Ottoman Empire, էջ 215:

134 Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիից վարչապետ մարկիզ Սոլսբերիին 1896 թ. մարտի 9-ին ուղարկված հեռագիրը, Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 8, էջ 72:

135 Հյուպատոս Ֆիցմորիսի՝ 1896 թ. մարտի 5-ի զեկույցը, Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, էջ 4:

136 **Selim Deringil**, "The Armenian Question Is Finally Closed!...", էջ 355.

137 Մուշում Անգլիայի հյուպատոս Համփսոնից Էրզրումի հյուպատոս Քամբրըրբեյին 1896 թ. մարտի 2-ին ուղարկված նամակը, Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 8, էջ 106-107:

Ինչ ճակատագիր են ունեցել 1894-1896 թթ. բռնի կրոնափոխված հայերը: Այս հարցում չափազանց կարևոր տեղեկություններ կան վերոհիշյալ Ֆիցմորիսի զեկույցներում<sup>138</sup>: Նրա հաղորդումների շնորհիվ հասկացվում է, որ հետևյալ պատկերն է եղել որոշ շրջաններում հայերը կամաց-կամաց վերադարձել են իրենց նախկին կրոնին, իսկ որոշներում՝ նախընտրել ապրել որպես մուսուլման: Այդ նախապատվության գլխավոր պատճառը նոր դժբախտությունների հանդեպ անհետեղելի<sup>139</sup>: Թերևս հենց այդ վախն է որոշ շրջաններում հայերին մղել արտաքուստ մուսուլման ձևանալ, բայց գաղտնի կերպով ապրել որպես քրիստոնյա:

Զեկույցներից մեկում Ֆիցմորիսը հայտնում է իր մի դիտարկումը, որն արել է տվյալ շրջանի մահմեդական ու քրիստոնյա առաջնորդների և տեղական իշխանությունների հետ ունեցած հանդիպումների հիման վրա: Նրա՝ որպես ընդհանուր կարծիք փոխանցած խոսքը կարող է ամենալակոնիկ ամփոփումը լինել ոչ միայն կոտորածների, այլ նաև՝ բռնի կրոնափոխության քաղաքականության մասին. «Վերջին դեպքերին առնչվող տեսակետների և հակափաստարկների միջև առկա է մի ակնհայտ ճշմարտություն. օսմանյան բնակչության բոլոր շերտերում, չնայած համատարած տգիտությանը, կա բռնատիրական կառավարության հիմնական միտումն զգալու [բնազդով ըմբռնելու] մի սուր ընդունակություն: Թե՛ մուսուլմանները և թե՛ ոչ մուսուլմաններն ինձ պնդեցին, թե կառավարությունը ցանկացել է, որ այդ կոտորածները լինեն, և եթե չցանկանար, դրանք չէին լինի»<sup>140</sup>:

138 Զեկույցների ամբողջական տեքստը տե՛ս Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, էջ 4-17:

139 Ֆիցմորիսի հաղորդումները հաստատող նմանատիպ մեկ այլ տեղեկություն տե՛ս FO195\1930, Դիարբեքիի հյուպատոս Հովարդից արտակարգ և լիազոր դեսպան սըր Ֆիլիպ Կյուրիին 1896 թ. ապրիլի 21-ին հղված զեկույցում:

140 Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, էջ 14.

### Յեղասպանությունը և բռնի ուժացման քաղաքականությունը

Ինչպես դա պարզ է դառնում նաև վերոնշյալից, 1915-1918 թթ. ընթացքում տեղի ունեցած բռնի կրոնափոխության, երեխաներին հավաքելու և թուրքական-իսլամական մշակույթի ոգով դաստիարակելու, ինչպես նաև՝ աղջիկներին բռնի կերպով մահմեդական տղամարդկանց հետ ամուսնացնելու պրակտիկա, այս կամ այն ձևով, արդեն իսկ կար նախկինում: 1915-1918 թթ. տեղի ունեցածը տարբերվում էր նրանով, որ այդ քաղաքականությունն օրակարգ բերվեց որպես կենտրոնական կառավարության՝ հայերին բնաջնջելու ծրագրի մի մաս: Լեմկինի խոսքով՝ այդ կիրառումները միայն մի քանիսն էին այն զանազան գործողություններից, որոնք ծրագրվել էին որպես մի խմբի «գոյության հիմքերը սասանելուն ուղղված համակարգված պլան», և այդ հատկանիշով 1915-1918 թթ. տեղի ունեցածների և 1894-1896 թթ. կատարված դեպքերի միջև առկա էր որակական տարբերություն:

Այստեղ հարկ է անդրադառնալ այն մի քանի էական տարբերությանը, որ կա 1894-1896 թթ. և 1915-1918 թթ. միջև: Առաջին կարևոր տարբերությունը հետևյալն է. ինչպես դա ցույց են տալիս նաև վերևում մեր վկայակոչած փաստաթղթերը, 1894-1896 թթ. կառավարությունը չի վարել հայերին բռնի կրոնափոխելու կենտրոնացված քաղաքականություն: Կառավարությունը տեղյակ էր շրջաններում բռնի կրոնափոխության դեպքերի մասին. եթե անզամ անմիջականորեն չէր կազմակերպում դրանք, ապա առնվազն աչք էր փակում դրանց վրա, որոշ դեպքերում պատահում էր նաև, որ տեղական իշխանություններն անմիջականորեն կազմակերպեին այդ գործողությունները: Հատկապես օտար պետությունների միջամտության ահից բռնի կրոնափոխությունը չէր ընդունվում. կրոնափոխության՝ հայերի դիմումները հետ էին տրվում<sup>141</sup>:

141 Ֆիցմորիսն իր ուղարկած զեկույցներում տարբեր օրինակներ է բերում առ այն, որ կառավարությունը չի ընդունել կրոնափոխության դեպքերը, տե՛ս Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, էջ 1:

Մյուս կողմից՝ կառավարությունը ոչ մի հատուկ ջանք չէր գործադրում բռնի կրոնափոխության դեպքերը կանխելու ուղղությամբ: Դա էլ մեզ հանգեցնում է 1915-1918 թթ. և 1894-1896 թթ. միջև եղած երկրորդ էական տարբերությանը: 1894-1896 թթ. Արդուլ Համիդի համար կարևորը հայերին «դաս տալն էր»՝ ինչպես նաև՝ բարենորոգումների հարցում օտար տերությունների ճնշման չեզոքացումը: 1895 թ. դեկտեմբերին Անգլիայի դեսպանատանն ապաստանած Սաիթ փաշայի խոսքով՝ Արդուլ Համիդը համոզված էր, որ Հայկական հարցը կլուծվեր ոչ թե բարեփոխումների, այլ՝ արյան միջոցով<sup>142</sup>: 1897 թ. անգլիական դեսպանին ուղղված «Հայկական հարցը փակված է» արտահայտությամբ ցանկանում էր իր պայմանները թելադրել<sup>143</sup>: Այդ պատճառով անհրաժեշտ էր կոտորածների միջոցով ահաբեկել, լռեցնել բարեփոխումներ պահանջող հայերին:

Թվում է, թե 1894-1896 թթ. բռնի կրոնափոխության դեպքերը մեծավ մասամբ ի հայտ են եկել որպես հայերի կողմից թերևս նախապես չհաշվարկված վերաբերմունք: Կրոնափոխությունը ոչ թե կենտրոնական կառավարության, այլ՝ վերջինիս կազմակերպած-աջակցած կոտորածների՝ հայերին տրված մի չծրագրված այլընտրանք էր: Ֆիցմորիսն իր վերոհիշյալ զեկույցներից մեկում ուշադրություն է հրավիրում մի խիստ էական հանգամանքի վրա, որը բացահայտում է, որ կրոնափոխությունն անսպասելի հետևանք է եղել. «Մահմեդականները՝ կացիները ձեռքներին, քրիստոնյաներին չեն հարկադրել ընտրություն կատարել իսլամի և մահվան միջև: Նրանք միայն ցույց են տվել և ապացուցել բոլոր քրիստոնյաներին սպանելու իրենց վճռականությունը: Եւ վերջիններս էլ իսլամ են ընդունել՝ իրենց կյանքը փրկելու համար: Դա օբյեկտի և սուբյեկտի միջև նուրբ տրամաբանական տարբերակում է: Մահմեդականներ-

142 Roy Douglas Source, "Britain and the Armenian Question, 1894-1897", The Historical Journal, 19:1, Mart, 1976, էջ 125.

143 Նույն տեղում, էջ 132:

ի կողմից ներկայացված երկրնտրանքը իսլամ կամ մահը չէր, այնինչ քրիստոնյաների համար մահվան միակ այլընտրանքն իսլամն էր: Այդպիսով՝ հայերը սեփական կամքով մուսուլման դարձան: [Իհարկե] այնքանով, որքանով կարող է ընդունելի համարվել նման սարսափելի պայմանների տակ մարդկանց՝ որևէ կերպ ազատ կամք ունենալը կամ ազատ դերակատարներ լինելը...»<sup>144</sup>:

Ֆիցմորիսի հաղորդած տեղեկություններից ելնելով՝ կարող ենք ասել, որ 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ բռնի կրոնափոխության դեպքերը կենտրոնական կառավարության կողմից նախապես չպլանավորված, բայց տեղական պայմանների հետևանքով ի հայտ եկած դեպքեր էին: Չնախատեսված մի իրավիճակի հետ առնչված կառավարությունը մի կողմից ձգտում էր հաշվի առնել կոտորածների համար իր հավաքագրած մահմեդական մեծամասնության «զգայունությունը» և արգելք չլինել նրանց՝ հայերին բռնի կրոնափոխության մղող վերաբերմունքին: Եթե կառավարությունը վճռականորեն ցանկանար արգելել բռնի կրոնափոխությունը, ապա հարկ կլիներ դադարեցնել զանգվածային կոտորածները, բայց դա իրեն ձեռնտու չէր: Սակայն մյուս կողմից էլ ստիպված էր հաշվի առնել օտար երկրների ճնշումները և վերջիններին ցույց տալ, որ բռնի կրոնափոխությունը ծրագրված և ցանկալի չէ և այլն: Կառավարությունն այդ ամբողջ ընթացքում աշխատում էր հավասարակշռություն պահպանել այդ երկու ծայրերի միջև, «խնդրից խուսափել իմաստուն միջոցներով», ինչպես դա ասվում էր շրջաններում:

Ինչ վերաբերում է 1915-1918 թթ. ժամանակաշրջանին, ապա այս տարիներին թե՛ շատ ավելի խիստ էր շրջանների հանդեպ կենտրոնական հսկողությունը, և թե՛, ըստ էության, կառավարությունն էր որոշում կրոնափոխության քաղաքականությունը:

144 Ֆիցմորիսի՝ 1896 թ. մարտի 5-ին Բիրեջիքից ուղարկած զեկույցը, Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey, 1896, No. 5, էջ 3:

Այդ հարցում մեծ դեր է ունեցել նաև այն փաստը, որ արտաքին ճնշման գործոնը գրեթե լիովին վերացել էր: Այդ պատճառով ճիշտ կլինի ասել, որ արտաքին գործոնի փոխված դերը մեկ այլ կարևոր տարբերություն է 1894-1896 թթ. և 1915-1918 թթ. միջև: Իթիհադականներն օգտվում են պատերազմական պայմանների՝ իրենց շնորհած ազատությունից: Եթե նկատի առնենք նաև այն փաստը, որ իրենց դաշնակիցներից Գերմանիան ճնշումներ էր գործադրել՝ բողոքականներին ու կաթոլիկներին չաքսորելու համար, և դա մասամբ հաջողվել էր նրան, ապա ավելի լավ կըմբռնենք այն կարևորությունը, որն առկա էր արտաքին գործոնի՝ օսմանյան կառավարության քաղաքականությունը որոշելու հարցում:

#### Կրոնափոխությունը Ցեղասպանության սկզբում

Մինչ օրս գրեթե ոչ մի համակարգված ուսումնասիրություն չի կատարվել՝ Ցեղասպանության ընթացքում հայերի «կամավոր» կամ բռնի կրոնափոխության, երեխաներին բռնի կերպով հավաքելու, որբանոցներում կամ մասնավոր տներում ցրելու և իսլամա-թուրքական սինթեզին համապատասխան դաստիարակելու, մանկամարդ աղջիկներին բռնի կերպով մահմեդականների հետ ամուսնացնելու թեմաներով<sup>145</sup>: Այնինչ Ցեղասպանության գործընթացի սկզբից ի վեր այդ քաղաքականությունը, մասնա-

145 Այս հարցում բացառություն է կազմում Արա Սարաֆյանի ուսումնասիրությունը: Թեև Սարաֆյանը չի տեսել սույն թեմային վերաբերող օսմանյան փաստաթղթերը, սակայն նա առաջ է քաշել այն տեսակետը, որ թե կրոնափոխությունները և թե՛ երեխաների՝ մուսուլմանների տներում դաստիարակվելը եղել է կառավարության համակարգված քաղաքականությունը, և այդ պատճառով ուժացումը պետք է համարվի Ցեղասպանության առանցքային տարրերից մեկը: Մեր կարծիքով՝ դա տեղին հաստատում է: Տե՛ս **Ara Sarafian**, "The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide", Omer Bartov ve Phyllis Mack (eds.), *God's Name: Genocide and Religion in the Twentieth Century*, Berghahn Books, New York, 2001, էջ 209-221:

կի փոփոխությունների ենթարկվելով հանդերձ, գործադրվել է համակարգված կերպով, և օսմանյան փաստաթղթերում ուժացում բառի համարժեք *temsil* և *temessül* բառերը կիրառվել են բացահայտ և տարածված կերպով: Հատկապես հայ երեխաների նկատմամբ գործադրվող ուժացման քաղաքականությունը փաստաթղթերում արտահայտվել է *bakım* (խնամք) և *terbiye* (դաստիարակում) կամ *talim* (ուսուցում) և *terbiye* բառերով, և վավերագրերում այդ արտահայտությունները մեծ տեղ են գրավում<sup>146</sup>: Սույն հարցի վերաբերյալ առաջին բանը, որ պետք է ասել, այն է, որ խոսքը վերաբերում է համակարգված և կենտրոնական քաղաքականությանը, որը փոփոխությունների է ենթարկվել՝ կախված որոշակի ժամանակահատվածներից և շրջաններից:

Առաջին շրջանն ընդգրկում է 1915 թ. մայիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածը, երբ աքսորներն ու բնաջնջումը կատարվում էին մեծ արագությամբ: Հարկ է անդրադառնալ այս ժամանակաշրջանում երկու առանձին շրջաններում գործադրված տարբեր քաղաքականություններին: Առաջին շրջանն ամբողջ Անատոլիան էր, որտեղից կատարվում էին տեղահանությունները, իսկ երկրորդը՝ ներկայիս Սիրիան և Իրաքը, որտեղ ծրագրել էին տեղավորել աքսորյալներին: Սույն ժամանակաշրջանի քաղաքականությունը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. առաջին շրջանում մինչև 1915 թ. հուլիսի 1-ը հայերին թույլատրվել է մնալ՝ կրոնափոխության պայմանով, իսկ հուլիսի 1-ից հետո կրոնափոխներն անգամ աքսորվել են:

146 Բռնի ուժացումն իրականացվել է ոչ միայն հայերի նկատմամբ: Ոչ թուրք մահմեդականները ևս ենթարկվել են այդ քաղաքականությանը: Ոչ թուրք մյուս մուսուլման հանրությունների, գլխավորապես քրդերի հանդեպ գործադրված ուժացման քաղաքականության մասին տե՛ս **Taner Akçam**, *Young Turks's Crime Against Humanity*, Princeton University Press, Princeton, 2012, էջ 40-48; **Taner Akçam**, "Ermeni Meselesi Hallolunmustur" *Osmanlı Belgelerine Göre Savaş Yıllarında Ermenilere Yönelik Politikalar, İletişim Yayınları*, İstanbul, 2008, էջ 48-55:

Ինչ վերաբերում է «վերաբնակեցման վայրերին», ուր հասել են ողջ մնացած հայերը, ապա այստեղ մինչև 1915 թ. նոյեմբեր կրոնափոխության հարցում որևէ հատուկ քաղաքականություն չի գործադրվել: Միայն գործադրվել է ուժացման քաղաքականություն, որը որոշ չափով հիմնված էր վերաբնակեցման քաղաքականության վրա, և այս գործընթացում հայերին թույլատրվել է կրոնը պահպանել:

Երկրորդ շրջանն ընդգրկում է 1915 թ. նոյեմբերից հետո ընկած ժամանակահատվածը: Այս ժամանակաշրջանի քաղաքականության էությունը բոլոր վայրերում վերստին կրոնափոխության թույլտվությունն է, սակայն այս հարցում ամեն մի անհատի վերաբերյալ որոշում է կայացվում հատուկ հետաքննությունից հետո միայն: Մինչև 1916 թ. գարնանային ամիսներ տևած այս քաղաքականությունը հետագայում փոխվել է, և հայերին պարտադրվել է կամ բռնի կերպով մուսուլման դառնալու, կամ էլ մահանալու երկընտրանքը:

Ուշագրավ հարց է այն, թե ինչպես պետք է մեկնաբանել քաղաքականության մեջ տեղի ունեցած այդ փոփոխությունները: Ինչպես որ կարող են լինել այնպիսիք, ովքեր կցանկանան ասել, թե այդ փոփոխությունները ցույց են տալիս, որ օսմանյան կառավարությունը նախապես ոչ մի ծրագիր չի ունեցել այդ ուղղությամբ, այնպես էլ կարելի է առաջ քաշել այն տեսակետը, որ դրանք ի հայտ են եկել մեկ այլ մտածված քաղաքականության պատճառով: Սույն հարցի շուրջ որևէ դատողություն անելուց առաջ հարկ է ավելի մանրամասն անդրադառնալ այդ ժամանակաշրջաններին և գործադրված քաղաքականությանը:

## Աքսորի սկզբնական ժամանակաշրջանը. կրոնափոխները մնում են

Սկզբնապես կրոնափոխությունը թույլատրվել է, և կրոնափոխներն աքսորից ազատվելով՝ ցրվել են իրենց բնակության վիլայեթի սահմաններում: Առաջին փաստաթուղթը, որ գտել ենք այս հարցի վերաբերյալ, «գաղտնի» դասիչով մի ծածկագիր հեռագիր է, որը կրում է 1915 թ. հունիսի 22-ի ամսաթիվը: Ռուսների հետ 1914 թ. փետրվարին ստորագրված պայմանագրով բարենորոգումներ նախատեսված յոթ վիլայեթներ (Էրզրում, Վան, Մամուրեթյուլազիզ, Դիարբեքիր, Սվաս, Բիթլիս և Տրապիզոն) ուղարկված սույն հեռագրում պահանջվում է «Ձեր վիլայեթից (սանջակից) դեպի հարավ ուղարկված հայերից անհատական և խմբակային կերպով կրոնափոխվածներին պահել, բայց խմբակային կերպով կրոնափոխվածներին ցրել վիլայեթի (սանջակի) սահմաններում»: Խիստ ուշագրավ է, որ այս հեռագիրն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Մեր այս հաղորդումը պետք է անձնապես հայտնել նրանց, ում անհրաժեշտ է, և տվյալ հեռագրի պատճենը հեռագրատնից վերցնելով՝ ոչնչացնել»<sup>147</sup>:

Մյուս կողմից՝ գերմանական և ամերիկյան փաստաթղթերից կարելի է հասկանալ, որ կրոնափոխության դեպքերն սկսվել էին այդ հրամանից շատ ավելի առաջ: Ամերիկայի արտակարգ և լիազոր դեսպան Մորգենթաուն 1915 թ. հուլիսի 10-ին «խիստ գաղտնի» դասիչով իր ուղարկած հեռագրում հայերի զանգվածային աքսորի և բնաջնջման մասին լուրերը հաղորդելուց հետո նաև հայտնում է. «Հետապնդումներից փրկվել ցանկացող

147 BOA/DH.SFR., nr 54/100, 1915 թ. հունիսի 22-ին Ներքին գործերի նախարար Թալեթթե փաշայից Վանի նահանգապետ Ջնդեթ, Տրապիզոնի նահանգապետ Ջենալ Ազմի, Էրզրումի նահանգապետ Թահսին, Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա, Մամուրեթյուլազիզի նահանգապետ Սաբիթ, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ և Սվասի նահանգապետ Մուամմեր բեյերին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

բազմաթիվ հայեր մուսուլման են դառնում»<sup>148</sup>: Մորգենթաուն այդ տեղեկությունները հաղորդելիս վկայակոչում է հյուպատոսների և միսիոներների՝ հունիս ամսին գրած զեկույցները:

Եթե պետք է մի քանի օրինակ տալ, նշենք, որ Ամերիկայի հյուպատոս Փիթերը 1915 թ. հունիսի 10-ին իր՝ Սամսունից ուղարկած զեկույցում «Թուրքերը կրոնափոխելու համար շատ մեծ ջանքեր են գործադրում» նախադասությունից հետո հայտնում է. «Մինչ այժմ 150 ընտանիք է մահմեդականություն ընդունել, իսկ մացածներն ուղարկվել են ներքին շրջաններ»: Ըստ հյուպատոսի՝ «զնացածների մեծ մասը նույնպես ուզում է այդ 150 ընտանիքների օրինակին հետևել»<sup>149</sup>: Մերզիֆոնից գրած մի ամերիկացի ուսուցիչ նշում է. «Մահմեդականություն ընդունածներին թույլ է տրվում մնալ: Այն փաստաբանական բյուրոները, որոնք ընդունում են դիմումները, լեփ-լեցուն են իսլամ ընդունելու համար դիմող մարդկանցով: Շատերը դա անում են իրենց երեխաների և կանանց անվտանգության համար»<sup>150</sup>:

Միսիոներները ևս նույն տեղեկություններն են կրկնում, անգամ՝ որոշ թվեր հաղորդում. Մերզիֆոնում «մարդկանց հայտարարվել է, թե մահմեդականություն ընդունելու դեպքում կփրկվեն: Հազարի չափ ընտանիք է խնդրագիր հղել կառավարությանը»<sup>151</sup>: Ամերիկյան միսիոներ դոկտոր Ժ. Կ.

148 NA/RG59/867.4016/74, Արտակարգ և լիազոր դեսպան Մորգենթաունից Արտաքին գործերի նախարարությանը 1915 թ. հուլիսի 10-ին ուղարկված հեռագիրը, տե՛ս **Ara Sarafian** (ed.), United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, Gomidas Institute, Լոնդոն, 2004, էջ 52:

149 Նույն տեղում, էջ 62:

150 NA/RG59/867.4016/106, Արտակարգ և լիազոր դեսպան Մորգենթաունից Արտաքին գործերի նախարարությանը 1915 թ. հուլիսի 26-ին ուղարկված հեռագիրը, տե՛ս **Ara Sarafian** (ed.), United States Official Record on the Armenian Genocide, էջ 143:

151 Ամերիկայի հայկական և սիրիական օգնության կազմակերպության կողմից հիշատակվող միսս Գեյջ անվամբ մի ամերիկոսու դիտարկումը Մերզիֆոնում, տե՛ս **Arnold Toynbee** և **James Bryce**, The Treatment of Armenians in the Ottoman Empire, էջ 371:

Մարդենը հաղորդում է, թե Մերզիֆոն քաղաքում 13 հազարի չափ հայերից մոտ 11.500-ն աքսորվել է, իսկ 1.500-ն էլ մահից փրկվելու համար նախընտրել է մահմեդականությունը<sup>152</sup>:

Վերոնյալներից չեն տարբերվում նաև գերմանական հյուպատոսարանի զեկույցները: 1915 թ. հունիսի 25-ին գերմանական հյուպատոսը Սամսունից զեկույցում է. «Կառավարությունը հայերի տներ է ուղարկում ֆանատիկ մուսուլմաններին, որպեսզի վերջիններս հայերին քարոզեն իսլամ դավանել»: Ըստ հյուպատոսի՝ կրոնափոխ չեղողներին սպառնում են, որ հարկադրված կլինեն խիստ ծանր հետևանքների դիմանալ: Հյուպատոսը հայտնելով, որ բազմաթիվ ընտանիքներ են իսլամացվել, և որ այդ թիվը դեռ կավելանա, նաև նշում է. «Սամսունի շրջակայքի բոլոր հայկական գյուղերն իսլամացվել են»<sup>153</sup>:

Նույն վկայությունները կրկնվում են նաև հայերի հուշերում: Սամսունից աքսորված մի հայ կին իր հուշերում հայտնում է, որ գաղթի մասին հայտարարությունից հետո մի խոջա է երկու-երեք անգամ այցելել իրենց տուն և իր ընտանիքին պարտադրել իսլամ ընդունել<sup>154</sup>: 1915 թ. օգոստոսին դաշնակցականների բալկանյան գրասենյակը Մորգենթաունին ուղարկած մի զեկույցում կրոնափոխության հարցով որոշ թվեր է հաղորդում իրենց հասած մի նամակից, որն ուղարկվել էր 1915 թ. հունիսի 25-ին: Դրա համաձայն՝ «Մահմեդականություն են ընդունել Գիրեսու-

152 NA/RG59/867.4016/292, Դոկտոր Ժ. Կ. Մարդենի վկայությունը, 1916 թ. հուլիսի 3-ին Կոպենհագենում Ամերիկայի դեսպանից Արտաքին գործերի նախարարությանն ուղարկված զեկույցը, տե՛ս **Ara Sarafian** (ed.), United States Official Record on the Armenian Genocide, էջ 525:

153 DE/PA-AA/R 14086, Սամսունի հյուպատոս Կուրցֆի՝ 1915 թ. հուլիսի 4-ի զեկույցը (Կուրցֆին իր զեկույցում վկայակոչում է նաև իր՝ ավելի վաղ՝ հունիսի 25-ին ուղարկած հեռագիրը):

154 **Pailadzo Captanian**, 1915 Der Völkermord an den Armenien, eine Zeugin berichtet, Berlin, 1993, էջ 20.

նում 400 ընտանիքից 200-ը, Օրդուում՝ 250 ընտանիքից 160-ը»<sup>155</sup>:

Նման զեկույցներ ստացվում են նաև մյուս շրջաններից: Էրզրումի հյուպատոս Շոյբներ Ռիխտերը 1915 թ. հունիսի 2-ին ուղարկված իր հեռագրում հաղորդում է, որ Էրզրումում սկսել են կրոնափոխության դեպքեր, և որ «կրոնափոխվող հայերը չեն տեղահանվում»<sup>156</sup>: Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոսը հունիսի 26-ին իր ուղարկած զեկույցում հայտնում է տվյալ շրջանում կատարվող «զանգվածային կրոնափոխության» մասին<sup>157</sup>: Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վանգենհայնը այդ տեղեկությունների վրա հիմնվելով, հավելում է, թե «Տրապիզոնում հայերը զանգվածային կերպով իսլամ են ընդունում՝ աքսորից փրկվելու և իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար»<sup>158</sup>: Սվասում աշխատող ամերիկացի միսիոներ դոկտոր Կլարկը հայտնում է, որ այս քաղաքի 25 հազար հայերից շուրջ 1000-ը 1915 թ. ամռանը նախընտրել է մահմեդականությունը<sup>159</sup>:

Հյուպատոսության զեկույցներում նույնպես առկա է այն տեղեկությունը, ըստ որի՝ կրոնափոխվող հայերը չեն աքսորվում: 1915 թ. հոկտեմբերի 15-ին հայերի կոտորածները դադարեցնելու համար Գերմանիայի վարչապետ Բեթման Հոլվեգին դիմած

155 "NA/RG59/867.4016/122, «Հայ ժողովրդի բնաջնջումը Թուրքիայում», Բուխարեստում Դաշնակցության գրասենյակի՝ 1915 թ. սեպտեմբերի 5-ի զեկույցը, տե՛ս **Ara Sarafian** (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 163:

156 DE/PA-AA/Bo.Kons. Band 168, Էրզրումի հյուպատոս Շոյբներ Ռիխտերի՝ 1915 թ. հունիսի 2-ի զեկույցը:

157 DE/PA-AA/R14086, Արտակարգ և լիազոր դեսպան Վանգենհայնից կանցլեր Բեթման Հոլվեգին 1915 թ. հուլիսի 7-ին ուղարկված զեկույցը:

158 DE/PA-AA/R14086, Արտակարգ և լիազոր դեսպան Վանգենհայնից կանցլեր Բեթման Հոլվեգին 1915 թ. հուլիսի 7-ին ուղարկված զեկույցը:

159 NA/RG59/867.4016/288, Դոկտոր Ս. Ե. Կլարկի՝ 1916 թ. մայիսի 31-ի զեկույցը, որը կցված է Հոֆման Ֆիլիպի՝ Ստամբուլում Ամերիկայի դեսպանությունից Արտգործնախարարությանը 1916 թ. հունիսի 12-ին ուղարկված զեկույցին:

Գերմանիայի բողոքական եկեղեցու առաջադեմ հոգևոր առաջնորդները հաղորդում են, որ «մահմեդականություն ընդունել որոշած հարյուրավոր քրիստոնյա ընտանիքներ ազատվել են աքսորից»<sup>160</sup>: 1916 թ. հունիսի 28-ին Սվասի հյուպատոսարանի քարտուղար Վերթը Գերմանիայի դեսպանատուն ուղարկած իր մի զեկույցում նշում է, որ Սվասում կրոնափոխվողները մնում են իրենց տեղերում<sup>161</sup>: Սակայն կրոնափոխ լինելու հետևանքով աքսորված հայերը հաճախ փոքր խմբերով ցրվել են շրջակայքի նահանգներում և գավառներում: Կայսերիում աշխատող ամերիկացի միսիոները հայտնում է. «... մեր հաստատություններից վերցված կանանցից աքսորվեցին նրանք, ովքեր մերժեցին մահմեդականություն ընդունել... Իսլամ ընդունածներին թույլ տրվեց մնալ, սակայն նրանք ցրվեցին գյուղերում»<sup>162</sup>:

Նման պատկեր էր նաև սևծովյան շրջաններում: Սամսունում Ամերիկայի հյուպատոս Վ. Փիթերը հաղորդում է, որ Սամսունի մյուլթեսարիֆը իրեն հայտնել է, թե կրոնափոխված հայերը փոքր խմբերով ցրվելու են այնպիսի մոտակա նահանգներում և գավառներում, ինչպիսիք են Տրապիզոնը, Գիրեսունը, Ֆաթսան<sup>163</sup>: Հյուպատոսի տված տեղեկությունները ճիշտ են: Իրապես էլ Սամսունի մյուլթեսարիֆը 1915 թ. հուլիսի 9-ին Ներքին գործերի նախարարությանն իր ուղարկած հեռագրում հաղորդում է, որ Սամսունում դատարկման գործողությունն ավարտ-

160 DE/PA-AA/Bo.Kons. Band 171, Վարչապետ Բեթման Հոլվեգից Ստամբուլում Գերմանիայի դեսպանատանն ուղղված գրությունը, որը կրում է 1915 թ. նոյեմբերի 15-ի ամսաթիվը:

161 DE/PA-AA/Bo.Kons. Band 172, Սվասի հյուպատոսարանի քարտուղար Վերթի՝ 1916 թ. հունիսի 28-ի զեկույցը:

162 Ստեյլա Լոուրիջի զեկույցը, տե՛ս **James L. Barton** (ed.), "Turkish Atrocities": *Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917*, Gomidas Institute, Ann Arbor, MI, 1998, էջ 117:

163 LC/HM(Sr.)/Reel 7/619, Սամսունի հյուպատոս Վիլիամ Փիթերից Հենրի Մորգենթաուին 1915 թ. հուլիսի 10-ին ուղարկված զեկույցը, տե՛ս **Ara Sarafian** (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 62:

վել է, իսկ նրանք, ովքեր մնացել են կրոնափոխ լինելու պատճառով, մեկական կամ երկուական հոգով ցրվել են իսլամական և գյուղական թաղամասերում<sup>164</sup>:

Կրոնափոխության մեկ այլ ուշագրավ հանգամանք է այն, որ քաղաքներից և ավաններից առաջատար մուսուլմանները, Արդարադատության ու Ներքին գործերի նախարարություններին հեռագրեր հղելով, պահանջել են, որ հայերը հավաքաբար մահմեդականություն ընդունեն: Օրինակ՝ 1915 թ. հունիսի 30-ին «Օրդուում բնակվող մեր բոլոր ազգականների անունից, Ֆաթսայի բնակչությունից ինժեներ Քարաքաշօղլու Մեհմեդ Թևֆիկի» ստորագրությամբ Ֆաթսայից ուղարկված մի խնդրագրում հաղորդվում է, որ Օրդուի հայերը, իրենց սրտի ծայնին անսալով, մուսուլման են դարձել, և խնդրվում ընդունել «հայ ազգականների» այդ դիմումները<sup>165</sup>: Նման մի հեռագիր էլ Օրդուից ուղարկվելու է 1915 թ. հուլիսի 1-ին: Այնպիսի հոգևոր առաջ-

164 BOA/DH.EUM, 2.Şube, nr. 10/78/1, Ջանիկի մյութեսարիֆ Նեջմի բեյից 1915 թ. հուլիսի 9-ին ուղարկված հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Սամսունից դուրս հանված հայերի վերջին քարավանը չորս օր առաջ հոգևոր առաջնորդների հետ միասին հեռացվել է, վտանգավոր լինելու պատճառով դրանից ավելի վաղ Ալաշամ քաղաքում քաղաքացիները և այդ կերպ հեռացման գործողությունն ավարտին է հասցվել, իսկ կրոնափոխվելու համար անհրաժեշտ գործողություններն իրականացնելու նպատակով մնացածները, իրենց ավաններն ու գյուղերն անմիջապես փոխելու պայմանով, մեկական կամ երկուական հոգով ցրվել են մահմեդական և գյուղական թաղամասերում, և նրանց փոխարեն տեղավորվում է գաղթական ու փախստական և իսլամական բնակչություն»:

165 BOA/DH.EUM, 2.Şube, nr. 8/61-a/3, Արդարադատության և Ներքին գործերի նախարարություններին 1915 թ. հունիսի 30-ին ուղարկված խնդրագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Խնդրում ենք, որ պետական գերագույն մարմինները հրամայեն և թույլ տան, որպեսզի վաղուց ի վեր մեր մահմեդական եղբայրների մեջ ապրած Օրդուի բնակիչ բոլոր հայ մահկանացուները, իրենց սրտի ներշնչանքով, որպես Աստծո ստրուկներ, իսլամի ճշմարիտ կրոնին արժանանալու համար կատարեն անհրաժեշտ օրինական գործողությունը, և որ պետական մարմիններն ընդունեն նման դիմումով հանդես եկած ստրուկների խնդրանքները և վերոհիշյալ աղաչանքները»:

նորդների ղեկավարությամբ, ինչպիսիք են իմամը և մյուֆթին, Արդարադատության և Ներքին գործերի նախարարություններին դիմած մի խումբ թուրքեր հաղորդում են, թե իրենց հայ եղբայրները կրոնափոխ են եղել, և որ նրանք ևս չաքսորվեն ու մասն Օրդուում, ինչպես դա արվել է որոշ այլ շրջաններում<sup>166</sup>:

Դիմումով հանդես եկողների մեջ կային նաև հայեր: Նրանք, իրենց դիմումներում նշելով, թե կրոնափոխվելու որոշումը կայացրել են առանց որևէ հարկադրանքի ենթակվելու, ամբողջովին ազատ կամքով, խնդրում են ընդունել իրենց կրոնափոխությունը: Օրինակ՝ հունիսի 28-ին Օրդուի և շրջակայքի բոլոր հայերի անունից ուղարկված հեռագրում ասվում է. «Խնդրում ենք, որ հրամայեք և հաճեք, որպեսզի ոչ մի ուժի և ազդեցության տակ չգտնված, բացառապես իրական աստվածային հավատքին և մեր խղճի ծայնին ապավինած՝ գյուղերի և քաղաքների հավատարիմ ստրուկներիս նկատմամբ, ընտանյոք հանդերձ իսլամի պատվին արժանանալու համար կիրառվեն սուրբ շարիաթի դրույթները, և որ մենք ներգրավվենք փրկված իսլամական խմբի սովորույթներում, և որ դա նշվի մեր գրանցման մեջ»<sup>167</sup>:

Որոշ դեպքերում հայերը դիմում են իրենց նոր վերցրած մահմեդական անուններով և խնդրում, որ իրենց չցրեն: Օրինակ՝ հեռագիր հղած մի խումբ հայեր, ովքեր հանդես էին եկել դեռ նոր վերցված այնպիսի թուրքական անուններով, ինչպիսիք են Օլմեզօղլու Ալի Քեմալը, մուխտար Բյունյադօղլու Ահմեդ Նիյազին և այլն, նշում են, թե իրենք ոչ մի ձևով «հնուց ի վեր կեղտոտ և

166 BOA/DH.EUM, 2.Şube, nr. 8/61-a/1, Տե՛ս Արդարադատության և Ներքին գործերի նախարարություններին մուլա Ալիզադե Մուստաֆայի, մեդրեսեի ուսուցիչ Հալիմի, Գյոզլու Քանլըզադե Թահսինի, Իմամզադե Ռեջեֆի, մյուֆթի Սաբրիի, Շեյխզադե Մուստաֆայի, Ռաշազադե Հյուսեյնի, Ֆելեքզադե Սյուլեյմանի, մեդրեսեի ուսուցիչ Ալիի, մեդրեսեի ուսուցիչ Համդիի և այլոց ստորագրություններով 1915 թ. հուլիսի 1-ին ուղարկված խնդրագիրը:

167 BOA/DH.EUM., 2.Şube, nr. 9/42/1, «Օրդուի քաղաքների և գյուղերի ընդհանուր բնակչության» անունից 1915 թ. հունիսի 28-ին Ներքին գործերի նախարարությանն ուղարկված հեռագիրը:



հայրենիքի թշնամի հայերի հետ ոչ մի հարաբերություն չունեցած» անձինք են, և որ «ի սկզբանե անմեղ լինելու պատճառով խնդրում են, որ 300 իսլամական գյուղերում երեքական և հինգական տներով չցրվեն, և եթե հնարավոր չէ, որ մասն իրենց հայրենի բնակավայրում, ապա գոնե մի մոտ տեղ ուղարկվեն, իրենց ընտանիքներն ու զավակները տեղերում թողնվեն, և բավարարվեն միայն ընտանիքի մեծերով»<sup>168</sup>:

Օսմանյան փաստաթղթերից հասկանում ենք, որ կրոնափոխությանը թույլ տալու և այդ անձանց չաքսորելու քաղաքականությունը շարունակվել է մինչև 1915 թ. հուլիսի 1-ը: Այդ ամսաթվից հետո սկսել է գործադրվել մի նոր քաղաքականություն, և հայերը կրոնափոխվելու դեպքում անգամ աքսորվել են:

#### 1915 թ. հուլիսի 1. աքսորեք, եթե անգամ կրոնափոխվել են

Հայերի «կամավոր» կրոնափոխության գլխավոր պատճառը, անշուշտ, աքսորից ու մահից փրկվելն է: Կառավարությանը դա համարում է կրոնափոխության էությանը հակասող վերաբերմունք և 1915 թ. հուլիսի 1-ից սկսած հրաժարվում այդ քաղաքականությունից: Հայերն այլևս պետք է աքսորվեն կրոնափոխվելու դեպքում անգամ: Իհարկե, ինչպես կտեսնենք, կառավարությանն առանձնապես կրոնի հարցը չի մտահոգում, և նրանց չի հետաքրքրում, թե հայերն ինչ փաստարկով են մուսուլման դարձել: Կառավարության համար իրական խնդիրը կրոնափոխ հայերի բավականին մեծացած թիվն է: Աքսորի միջոցով հայկական հոծ զանգվածը վերացնելու նպատակ ունեցող կառավարության համար դա ընդունելի դրություն չէր: Քանզի նրանք գիտեին, որ եթե անգամ կրոնափոխված էլ լինեին, հոծ զանգվածով համատեղ ապրող հայերը չէին տարրա-

168 BOA/DH.EUM.2.Şube, nr. 8/61-a/2, Օրդուից Ներքին գործերի նախարարությանը Օլմեզողլու Ալի Քեմալի և մուխտար Բյունյաթողլու Ահմեդ Նիյազիի կողմից 1915 թ. հունիսի 30-ին ուղարկված հեռագիրը:

լուծվի իսլամական մշակույթի մեջ և կշարունակեին պահպանել իրենց մշակութային ինքնությունը:

1915 թ. հուլիսի 1-ին բազմաթիվ շրջաններ ուղարկված հեռագրի միջոցով Ներքին գործերի նախարար Թալեաթը կառավարության անունից հաղորդում է կրոնափոխության դադարեցման մասին և հրամայում, որ կրոնափոխվելու դեպքում անգամ հայերն աքսորվեն: Նշյալ հեռագրում ասվում է. «Զգացվում է, որ հեռացվող հայերից ոմանք աշխատում են հավաքաբար կամ առանձին-առանձին կրոնափոխվել և ինչ-որ միջոց գտնել իրենց երկրում մնալու համար»: Հեռագրում ենթադրվում է նաև, թե հայերն «իրենց... վտանգի տակ համարելու» պատճառով են այդ ուղին ընտրում, և պահանջվում, որ «բացարձակապես նշանակություն չտրվի նմանատիպ անձանց դիմումներին»: Նման անձինք, «եթե անգամ կրոնափոխվեն էլ, դարձյալ պետք է շարունակեն ուղարկվել նշանակված վայրերը»<sup>169</sup>: Հուլիսի 9-ին Տրապիզոնից մի զեկույց գրած Գերմանիայի հյուպատոս դոկտոր Բերգֆելդը հաղորդում է, որ Տրապիզոնի նահանգապետը կրոնափոխվելու ցանկություն հայտնած հայերին ասել է. «Իսլամի կրոնին անցած հայն էլ աքսորվելու է որպես մահմեդական հայ»<sup>170</sup>:

Չնայած այդ հրամանին՝ դեռ շարունակում են հավաքական կամ անհատական կրոնափոխության դեպքեր գրանցվել: Օրինակ՝ Օրդուի Թաշլուք գավառում ապրող հայերը 1915 թ. հուլիսի 4-ին ասելով, թե «Մենք՝ Օրդուի Թաշլուքի հայերս, միասին կրոնափոխվել ենք: Խնդրում ենք մեր վերաբերյալ կատարել

169 BOA/DH.ŞFR., nr. 54/254, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինության՝ Էրզրումի, Ադանայի, Բիթլիսի, Հալեպի, Դիարբեքիրի, Տրապիզոնի, Մամուրեթյուլպահի, Մոսուլի, Վանի, Ուրֆայի, Քյութահիայի, Մարաշի, Իչեյի, Էսքիշեհիրի նահանգներ և մարզեր 1915 թ. հուլիսի 1-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

170 NA/RG59/867.4016/118, Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդի՝ 1915 թ. հուլիսի 9-ի զեկույցի թարգմանությունը, տե՛ս Ara Sarafian (ed.), United States Official Record on the Armenian Genocide, էջ 154:

սուլթանական հրովարտակի կամքի պահանջները», խնդրում են, որ ընդունվի իրենց կրոնափոխությունը<sup>171</sup>: Այն բանից հետո, երբ նման այլ դիմումներ են հղվում, կառավարությունը մեկ առ մեկ ամեն մի նահանգ հեռագրերով հրաման է արձակում և հաղորդում, թե հայերին հարկ է աքսորել, եթե անգամ նրանք կրոնափոխվեն: Օրինակ՝ 1915 թ. հուլիսի 13-ին Կայսերի ուղարկված ծածկագիր հեռագրում նշվում է. «Քանի որ հայերի կրոնափոխությունը բխում է նրանց շահերից, կրոնափոխվելուց հետո չպետք է հետաձգել նրանց աքսորելը»<sup>172</sup>:

Այն բանից հետո, երբ որոշ շրջաններից լուրեր հասան, թե պաշտոնյաները շարունակում են հայերին աջակցել կրոնափոխվելու հարցում, 1915 թ. հուլիսի 20-ին անմիջականորեն Թալեաթի ստորագրությամբ և «գաղտնի է ու պետք է անձամբ լուծվի» դասիչով մի նոր շրջաբերական էլ է ուղարկվում բոլոր շրջաններ: Հրամանը կտրուկ է՝ արգելված է, որ կրոնափոխվողները մնան իրենց տեղերում: Հեռագիրը, որն սկսվում է «Հասկացվում է, որ հեռացվող հայերից ոմանք կրոնափոխ լինելու կապակցությամբ թողնվում են իրենց տեղերում» խոսքերով, հաղորդում է այն տեղեկությունը, թե հեռագրեր են հղվել այդ կրոնափոխների ազգականներին ու շեյխուլիսլամի գրասենյակին, և որ անգամ որոշ վարչական պաշտոնյաներ օգնել են նրանց: Եւ հեռագիրն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Ինչպես այդ մասին հաղորդվել է նաև 331 թ. հունիսի 17-ի [1915 թ. հուլիսի 1-ին] ամսաթվով ուղարկված ծածկագիր հեռագրով, քանի որ բացառապես շահից բխող անհրաժեշտությամբ կատարվող նման տեսակի կրոնափոխությունները, ըստ էության, ոչ մի պաշտոնական արժեք չունեն, բացարձակապես

171 BOA/DH.EUM, 2. Şube, nr., 8/70/1, Օրդուի Թաշուրպի հայերի անունից կրոնափոխված Վարհանի ստորագրությամբ Ներքին գործերի նախարարությանը 1915 թ. հուլիսի 4-ին ուղարկված հեռագիրը:

172 BOA/DH.ŞFR., nr.54/427. Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. հուլիսի 13-ին Կայսերիի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

թույլատրելի չէ կրոնափոխների համար բացառություն անելը: Հետևաբար, շրջաբերականով հայտարարվում է, որ նախկին հաղորդումների դրույթների բացարձակ պահպանմամբ՝ չպետք է նշանակություն տրվի նման կեղծ ու ժամանակավոր կրոնափոխություններին»<sup>173</sup>:

Ինչպես երևում է փաստաթղթերից, հայերին կրոնափոխվելու դեպքում անգամ աքսորելու վերաբերյալ շրջաններ հղված հրամանը լիովին չէր գործադրվում: Տեղական պաշտոնյաներն անընդհատ կառավարությունից խնդրում էին բացառություններ անել: Մեծ է հավանականությունը, որ այդչափ հաճախակի եղած դիմումների պատճառը ունևոր հայերից ստացված կաշառքն էր: Այսպես, օրինակ, ամերիկացի միսիոներ Միրթլ Օ. Շեյնը հաղորդում է, թե իր շրջանում, չնայած կրոնափոխության արգելքին, տեղական պաշտոնյաները աչք են փակում որոշ հարուստների կրոնափոխության վրա<sup>174</sup>: Մերզիֆոնից նամակ գրած մի ականատես հայտնում է, թե հայ հարուստները միայն գումար տալով են կարողանում կրոնափոխ լինել: Կաշառքի միջոցով կրոնափոխ եղած մի հայ բողոքում է՝ գրելով. «Թե մեր կրոնից զրկվեցինք, թե մեր գումարից»<sup>175</sup>: Դիարբեքիի նահանգում տեղի ունեցած կրոնափոխության դեպքերի մասին տեղեկություններ տված ֆրանսիացի վանական Ժաքը նշում է, որ Դիարբեքիի քաղաքում 300-ի չափ հայ ընտանիքներ են ասորի ընտանիքների հետ միասին կրոնափոխ

173 BOA/DH.ŞFR., nr. 54-A/49, Ներքին գործերի նախարար Թալեաթից էրզրումի, Ադանայի, Հալեպի, Դիարբեքիի, Սվասի, Տրապիզոնի, Մամուրեթյուկազի, Մոսուլի, Վանի նահանգներ ու Ուրֆայի, Ջանիկի, Չորի, Նիղդեի, Քյութահիայի, Մարաշի, Իչեի, Էսքիշեհիրի սանջակներ 1915 թ. հուլիսի 20-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

174 Միրթլ Օ. Շեյնի ուղարկած զեկույցն այն ամենի մասին, ինչ տեսել է Քիթլիսից հարբերդ գնացող ճանապարհին, տե՛ս James L. Barton (ed), "Turkish Atrocities" Statements of American Missionaries of Christian Communities in Ottoman Turkey 1915-1917, Gomidas Institute, Ann Arbor Michigan, 1998, էջ 9:

175 Շեղագրով նշված խոսքը բնագրում թուրքերենով է, տե՛ս Arnold Toynbee և James Bryce, The Treatment of Armenians in the Ottoman Empire, էջ 389:

վել, և որ քաղաքի մյուսֆթի Իբրահիմը դրա շնորհիվ մեծ հարստություն է դիզել<sup>176</sup>:

Չգիտենք՝ հայերի ողբալի վիճակը տեղական պաշտոնյաների՝ դիմումներով հանդես գալու հարցում որևէ դեր կատարել է թե ոչ: Դա լուրջ ուսումնասիրության կարոտ թեմա է<sup>177</sup>:

Սակայն մեր ձեռքի տակ կան որոշ փաստաթղթեր առ այն, որ բնակչության՝ հայերի աքսորին արգելք լինելու համար ներկայացրած դիմումներում այդ գործոնը էական դեր է կատարել: Օրինակ՝ հուլիսի 24-ին Օրդուի Մեսուդիյե գավառից «Շարիաթի դատարանի գլխավոր քարտուղար Ռահիֆի, գյուղաքաղաքի իմամ Արիֆի, մյուսֆթի Իբրահիմի, Սերդարզադե Մուստաֆայի, Ալի Չավուզզադե Իսմայիլի» ստորագրությամբ հեռագիր հղած մի խումբ մահմեդականներ հաղորդելով, թե «Օրդուի՝ 15 տնից բաղկացած վերջին հայերի քարավանը, որը մեծավ մասամբ թույլ կանանցից և երեխաներից է բաղկացած, իրենց գյուղաքաղաք է հասել», նշում են, որ այդ հայերն իրենց մոտ փաստաթղթեր ունեն, որոնք հավաստում են, թե նրանք սեփական կամքով են իսլամ ընտրել, և որ իրենք տեսել են, թե այդ հայերն ինչպես են մզկիթում իրենց կրոնական պարտականություններն իրականացնում, և իրենք որևէ կասկած չունեն, որ նրանք իսկապես մահմեդականություն են ընդունել, ու խնդրում են չաքսորել այդ մարդկանց: Հեռագրում հետևյալ կերպ է արտահայտվում այդ խնդրանքը. «Այդ կրոնափոխները... մի մոտակա գյուղա-

176 Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History* Taurus, Londra, և New York, 2011, էջ 365.

177 Եթե հարկ է նման սրտաճմլիկ տեսարանների օրինակ բերել, ապա նշենք, որ Երզնկայի մոտակայքում մի քարավանի հանդիպած մի գերմանացի դիտորդ հաղորդում է, թե հայ կանայք իրեն աղաչում էին՝ ասելով. «Պաշտպանի՛ր մեզ, մուսուլման կղառնանք... գերմանացի կղառնանք, ինչ ուզես՝ կղառնանք, միայն թե պաշտպանի՛ր մեզ: Քեմալի կիրճ են տանում, որ մեր կոկորդները կտրեն»: Հարկ է նշել, որ հայերին պաշտպանելու նպատակով ներկայացված դիմումներում դեր են կատարել նաև նմանատիպ իրավիճակները, տե՛ս [DE/ A-AA / Bo. Kons. Band 170, Վեդել-Յարլսբերգի՝ 1915 թ. հուլիսի 28-ի զեկույցը:

քաղաքում իրենց աքսորի դեմ որևէ միջոց ձեռնարկելու համար մզկիթի դռների մոտ և փողոցներում իսլամական բնակչությանը դիմելով և աղիողորմ արտասվելով՝ օգնություն են հայցում: Հետևաբար՝ քանի որ գիտենք, որ մեր գերագույն կառավարությունը ևս համաձայն չէ թույլ տալ, որ իրենց կրոնով ամեն ձևով և լիովին շարիաթին և օրենքներին համապատասխանող այդ օսմանցիները տուժեն, մեր իսլամական գերագույն կառավարությանը խնդրում ենք, որ նրանք ոչ թե ուղարկվեն, այլ բնակեցվեն մի հարմար վայրում»<sup>178</sup>:

Նման դիմումներն այնքան շատ են, որ չնայած Թալեաթ փաշան «բազմիցս է հաղորդել, թե կրոնափոխությունները չեն կարող ընդունվել», սակայն վրդովվում է, որ դեռ այդ մասին հարցումներ են ուղղվում: Սվաս ուղարկած մի հեռագրում նա հարցնում է. «Այն դեպքում, երբ բազմիցս է հաղորդվել, թե կրոնափոխությունները չեն կարող ընդունվել, ինչո՞ւ են կրոնափոխության որոշ դեպքեր դեռ ընդունվում»<sup>179</sup>: Թալեաթը նորից ու նորից շրջաններ հեռագրեր է ուղարկում առ այն, որ «...հարկ է նման կրոնափոխություններին ուշադրություն չդարձնելու մասին նախկին հաղորդումներին համապատասխան գործել»<sup>180</sup>: Եւ մեկ առ մեկ պատասխանում է տեղական պաշտոնյաների՝ բացառություն անելու խնդրանքներին: Օրինակ՝ 1915 թ. օգոս-

178 BOA/DH.EUM, 2.Şube, nr. 10/96/5, Շարիաթի դատարանի գլխավոր քարտուղար Ռահիֆի, գյուղաքաղաքի իմամ Արիֆի, մյուսֆթի Իբրահիմի, Սերդարզադե Մուստաֆայի, Ալի Չավուզզադե Իսմայիլի ստորագրությամբ 1915 թ. հուլիսի 24-ին Ներքին գործերի նախարարությանը հղված հեռագիրը:

179 BOA/DH.ŞFR., nr. 55-A/83, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. սեպտեմբերի 5-ին Սվաս ուղարկված ծածկագիր հեռագիրը:

180 BOA/DH.ŞFR., nr. 56/88, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. սեպտեմբերի 22-ին Էսքիշեհի-րի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը: Թեմայի վերաբերյալ երկու առանձին օրինակ տե՛ս BOA/DH.ŞFR., nr. 54-A/277 և BOA/DH.ŞFR., nr. 55/93:

տոսի 3-ին Անկարայի նահանգապետարան «բացել անձամբ» դասիչով ուղարկված հեռագրում նա բացահայտ կերպով հաղորդում է, թե «Բացառապես անձնական շահերից բխող այդ հավանական կրոնափոխություններն ըստ էության ոչ մի պաշտոնական արժեք չունեն», և պահանջում «...բացարձակապես բացառություն չանել այդ կերպ իրենց բնակավայրերում մնալու միջոցի դիմող կրոնափոխների նկատմամբ և ... չարաշահումներ թույլ չտալ այս ուղղությամբ»<sup>181</sup>:

Չնայած այդ կտրուկ արգելքին՝ պատահում է նաև, որ Թալեաթը որոշ բացառիկ դեպքերում թույլ տա կրոնափոխություն և համապատասխան անձանց մնալ: Օրինակ՝ 1915 թ. օգոստոսի 18-ին Նիդդե ուղարկված հեռագրում ասվում է. «Հարմար ենք գտնում, որ հայ աղջիկներից նրանք, ովքեր կրոնափոխվել են, ամուսնացվեն մահմեդականների հետ՝ առանց անօրինականությունների տեղիք տալու»<sup>182</sup>: Ադանա ուղարկված մի հեռագրում նա հաղորդելու է, որ «...թույլ տրվի, որպեսզի ըստ երևույթին Տարսուսում գտնվող և կրոնափոխվելուց հետո Յուսուֆ Բեդրի անունն ստացած Պողոս Քալթաբջյանը ուղևորվի Իզմիր»<sup>183</sup>: Սակայն դարձյալ Թալեաթը նույն օրը Կոնիա հղած իր մի հեռագրում նշելով, թե այնտեղ կրոնափոխվելու համար դիմած «հայերի կրոնափոխությունը չպետք է ընդունվի», մերժում է այդ դիմումը<sup>184</sup>:

181 BOA/DH.ŞFR., nr. 54-A/232, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 5-ին Անկարայի նահանգապետարան ուղարկված ծածկագիր հեռագիրը: Նման մեկ այլ հեռագիր էլ 2 օր անց հղվելու է նաև Կաստամունուի նահանգապետարանին: Տե՛ս (BOA/DH.ŞFR., nr. 54-A/277):

182 BOA/DH.ŞFR., nr. 55/92, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. օգոստոսի 18-ին Նիդդեի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

183 BOA/DH.ŞFR., nr. 62/35, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1916 թ. մարտի 16-ին Ադանայի նահանգ հղված ծածկագիր հեռագիրը:

184 BOA/DH.ŞFR., nr. 55/93, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. օգոստոսի 18-ին Կոնիայի նահանգ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Ամփոփելով՝ հարկ է ընդունել, որ 1915 թ. հուլիսի 1-ից հետո հայերի՝ կրոնափոխության մասին դիմումները չընդունելու և նրանց ևս քարտրելու քաղաքականությունը ցույց է տալիս, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը չէր շարժվում միայն կրոնական մտահոգություններից ելնելով: Ուրֆան ուշագրավ օրինակ է առ այն, որ իսլամական մտահոգությունները որոշիչ չեն եղել այս հարցում: Ուրֆայից մի խումբ հայեր ցանկանում են իրենց եկեղեցին մզկիթի վերածել և հավաքաբար մուսուլման դառնալ: Այդ մասին Ստամբուլ հաղորդած Ուրֆայի կառավարչին երկու օր անց տրված պատասխանում ասվում է, թե ոչ եկեղեցու՝ մզկիթի վերածվելն է ընդունելի, ոչ էլ՝ կրոնափոխությունը<sup>185</sup>:

#### Կրոնափոխությունը դարձյալ թույլ է տրվում. 1915 թ. նոյեմբերի 4

Փաստաթղթերից հասկանում ենք, որ կրոնափոխության վրա դրված արգելքը տևել է մինչև 1915 թ. նոյեմբերի 4-ը: Այդ ամսաթվին բոլոր շրջաններ ուղարկված մի շրջաբերականով հաղորդվել է, թե կրոնափոխությունը հնարավոր է: Ըստ էության՝ հոկտեմբերի վերջին մի քանի քաղաքներ հղված մի հեռագրում ակնարկվել է, թե նոյեմբերից փոփոխություն է կատարվելու: Օրինակ՝ 1915 թ. հոկտեմբերի 25-ին Բուլուի սանջակ ուղարկված հեռագրում ասվում է. «Հայերի կրոնափոխությունը հոկտեմբերի վերջերից սկսած հնարավոր է անել սովորականի պես»<sup>186</sup>: Նման մի հեռագիր էլ 1915 թ. հոկտեմբերի 26-ին

185 BOA/DH.ŞFR., nr 55/100, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 18-ին Ուրֆայի սանջակ հղված ծածկագիր հեռագիրը:

186 BOA/DH.ŞFR., nr. 57/115, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. հոկտեմբերի 25-ին Բուլուի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Ադանա է ուղարկվում, որում ասվում է. «Ըսլահիյեի քադի Քեմալեդդին էֆենդու կողմից 1915 թ. հոկտեմբերի 14-ին Ընդհանուր անվտանգության տնօրինությանը հղված... հեռագրում հիշատակված յոզղատցի Չուլաք օղլու Ղազարոսյանին թույլ տալ հոկտեմբերից հետո ընտանյոք հանդերձ կրոնափոխվել՝ ըստ կարգի»<sup>187</sup>:

Սույն փոփոխությունը, որի մասին նախապես նշվում էր, հետագայում՝ 1915 թ. նոյեմբերի 4-ին, բոլոր նահանգներ ու սանջակներ է հաղորդվում «գաղտնի» դասիչով մի հրամանով, որում որոշ ընդհանուր օրենքներ են սահմանվում առ այն, թե ովքեր և ինչ պայմաններով կարող են կրոնափոխվել: Այս հեռագրում, որն սկսում է «Հայերի կրոնափոխության վերաբերյալ պետք է նկատի առնվեն ներքոհիշյալ հանգամանքները» նախադասությամբ, նշվում է. «1. Չուղարկվածների և ի սկզբանե էլ իրենց բնակավայրերում մնացածների կրոնափոխությունն ընդունելի է: 2. Թույլատրելի է նաև նրանց կրոնափոխությունը, ովքեր ընդհանուր աքսորի ժամանակ կենտրոնից եկած հատուկ հրամանով պահվելով՝ բացառություն են համարվել և կամ վերադարձել իրենց հիմնական բնակավայրերը, կամ էլ՝ մնացել մեկ այլ վայրում»<sup>188</sup>:

Սույն փաստաթղթից պարզ է դառնում, որ վերստին թույլ տրված կրոնափոխությունը ոչ բոլորին է վերաբերում և կարգավորվում է ըստ որոշ սկզբունքների: Սակայն փաստաթղթի լեզուն բավարար չափով բացահայտ ու պարզ չէ: Հասկանալի է, որ նման իրավիճակում հրամանի գործադրման ժամանակ

187 BOA/DH.SFR., 57/124, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. հոկտեմբերի 26-ին Ադանայի նահանգ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

188 BOA/DH.SFR., nr. 57/281, Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայից Էրզրումի, Այդընի, Հյուլավենդիգյարի, Տրապիզոնի, Վանի, Ադանայի, Բիթլիսի, Դիարբեքրի, Կոնիայի, Անկարայի, Հալեպի, Մամուրեթյուլագի, Սվասի և Մոսուլի վիլայեթներ ու Ուրֆայի, Ջորի, Կայսերիի, Մարաշի, Իզմիրի, Քասիսար-ը Սահիբի, Քարեսիի, Էսքիշեհիրի, Ջանիկի, Քալա-ի Սուլթանիեի, Միդիեի և Քյութահիայի սանջակներ 1915 թ. նոյեմբերի 4-ին հղված ծածկագիր հեռագիրը:

մի շարք խնդիրներ են ի հայտ եկել: Այդ պատճառով շրջաններից հարցեր են ստացվում, և դրանց ի պատասխան՝ որոշ պարզաբանող հավելյալ տեղեկություններ են հղվում: Օրինակ՝ 1916 թ. մարտին Կոնիայի վիլայեթ ուղարկված մի հեռագրում նշվում է. «Կրոնափոխության վերաբերյալ հրահանգի առաջին և երկրորդ հոդվածներում նշված թույլտվությունը, նախարարության հատուկ հրամանով և գրությամբ աքսորից ազատված սահմանափակ թվով անձանց վերաբերելու համաձայն, աքսորի հետաձգման պատճառով Էրեղլիում մնացած հայերի կրոնափոխությանն աջակցելը, հայեր, ովքեր աքսորվելու են ճանապարհների բացվելուն պես, չի կարող հարմար քաղաքականություն լինել»<sup>189</sup>:

Փաստաթուղթը պարզ է արտահայտվում. աքսորի պատճառով իրենց բնակավայրերից ներկա պահին հանվածներն ընդգրկված չեն կրոնափոխվողների շարքերում: Կրոնափոխությունը թույլ է տրվելու ավելի վաղ իրենց գտնված վայրում մնալու թույլտվություն ստացած անձանցից միայն նրանց, որոնց դիմումները կընդունվեն: Իսկ դա ենթակա է կատարվելիք հետաքննությանը: Այսպիսով՝ հասկանալի է դառնում, որ այդ ամսաթվից հետո կրոնափոխության հարցով անհատական մակարդակում հետաքննություններ են կատարվել, որոնց արդյունքում որոշում է կայացվել: Այդ դիմումների մի մասն ընդունվում է, մյուսը՝ մերժվում: Օրինակ՝ Մենթեշեի սանջակ ուղարկված դիմումները հաստատվելու են՝ նշվելով, թե «...կրոնափոխվելու ցանկություն հայտնած հայերի կրոնափոխությունն ընդունելու հարցում որևէ արգելք չկա»<sup>190</sup>, բայց ինչպես դա տեսնում ենք Աֆյոնի սանջակ հղված հեռագրի օրինակում, այստեղ մերժվելու է՝ շեշտվելով, թե «...անթույլատրելի է ողջ մնացած այն

189 BOA/DH.SFR., nr. 61/252, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1916 թ. մարտի 7-ին Կոնիայի նահանգ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

190 BOA/DH.SFR., nr. 57/344, Ներքին գործերի նախարար Թալեաթից Մենթեշեի սանջակ 1915 թ. նոյեմբերի 7-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

հայ կանանց կրոնափոխությունը, ում ամուսինները գտնվում են բանակում»<sup>191</sup>:

1915 թ. նոյեմբերի 4-ից մեկնարկած այս գործընթացը կարող ենք անվանել նաև որպես «բժախնդրորեն ուսումնասիրվելիք» ժամանակաշրջան: Մեր ձեռքի տակ գտնվող փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ այդ շրջանում գրեթե յուրաքանչյուր անհատական դիմումի վերաբերյալ լուրջ հետաքննություն է կատարվել: Որոշումը կայացվել է՝ ըստ այդ հետաքննությունների արդյունքի: Քանի որ օսմանյան արխիվում սույն խնդրի շուրջ չափազանց հարուստ փաստական նյութ է առկա, մենք հնարավորություն ունենք որոշ փաստեր նշելու առ այն, թե ինչպես են կատարվել այդ հետաքննությունները, և ինչ փուլերով են անցել դրանք:

Որպես սույն հարցի վերաբերյալ մի օրինակ՝ կարելի է անդրադառնալ կրոնափոխվելու համար Ստամբուլից դիմած Թաթյոսօղլու Սահակի դիմումին: Սահակը 1916 թ. ապրիլին Ստամբուլից հանդես է եկել կրոնափոխության դիմումով: Դիմումն ուղղվել է Արդարադատության և կրոնական գործերի նախարարությանը, և այդ հարցով զբաղվել է Կրոնական գործերի տնօրինությունը: Ընթացակարգը հետևյալ կերպ է եղել. նախ՝ Արդարադատության և կրոնական գործերի նախարարությունը տվյալ գործի մասին հետաքննություն անելու համար գրում է Ներքին գործերի նախարարությանը և տեսակետ խնդրում<sup>192</sup>:

191 BOA/DH.SFR., nr. 58/146, Ներքին գործերի նախարար Թալեաթից Քարահիսար-ը Սահիբի սանջակ 1915 թ. նոյեմբերի 29-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

192 BOA/DH.EUM, 2. Şube, nr., 20/42, Արդարադատության և կրոնական գործերի նախարարի անունով խորհրդակալի կողմից ներքին գործերի նախարարին 1916 թ. ապրիլի 5-ին հղված գրությունը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Հայկական համայնքին պատկանած և Կայսերի Թավլասուն գյուղից եղած, Փանգալթը Թուրնա փողոցում 19-րդ համարով խանութում նպարեղենի գործով զբաղված և նույն հասցեում էլ բնակված հանգուցյալ Թաթյոսօղլուի և 1277 թ. ծնված Սահակի կողմից տրված խնդրագրում, նշվելով բարի կամքով իսլամ ընդունելու մասին, խնդրվում է կա-

Ներքին գործերի նախարարությունը տվյալ հարցը փոխանցում է Ընդհանուր անվտանգության տնօրինությանը, իսկ վերջինս էլ հարցում է անում տվյալ նահանգի Ոստիկանության տնօրինությանը<sup>193</sup>: Ոստիկանության տնօրինությունն էլ իր կատարած հետաքննության արդյունքը հաղորդում է Ընդհանուր անվտանգության տնօրինությանը, և համապատասխան զեկույցը, կրկին նույն ատյաններով անցնելով, ներկայացվում է Արդարադատության և կրոնական գործերի նախարարությանը: Մեր բերած օրինակում Ստամբուլի ոստիկանությունը զեկուցել է, թե Թաթյոսօղլու Սահակը դաշնակցական է եղել և կրոնափոխության դիմումով հանդես է եկել վախից դրդված, և այդ զեկույցի լույսի ներքո Սահակի՝ կրոնափոխության մասին դիմումը մերժվել է<sup>194</sup>:

տարել օրենքի դրույթների ձևակերպումները, և քանի որ նա կրոնափոխության պայմաններն ընդունելու առումով ներկայում ընդունելի տարիքում է գտնվում, շտապում է հարցնել, թե նախարարության կողմից իր անձի վերաբերյալ որևէ հատուկ կարծիք կա՞, թե՞ ոչ»:

193 Նույն տեղում: Ընդհանուր անվտանգության տնօրինության՝ Ստամբուլի ոստիկանության տնօրինությանն ուղարկած գրության մեջ նշված է. «Հայկական համայնքից և Կայսերի Թավլասուն գյուղի բնակիչ, Փանգալթը Թուրնա փողոցում 19-րդ համարով խանութում նպարեղենի գործով զբաղված և նույն հասցեում էլ բնակված հանգուցյալ Սրվաջը Թաթյոսօղլուի՝ 1277 թ. ծնված որդու՝ Սահակի կողմից տրված խնդրագրում, նշվելով բարի կամքով իսլամ ընդունելու մասին, օրենքի դրույթների ձևակերպումները կատարելու վերաբերյալ խնդրանք՝ ուղղված Արդարադատության և կրոնական գործերի նախարարությունից ստացված գրության մեջ այդ մասին հաղորդվելով՝ նշվում է, թե ցանկալի է վերոհիշյալի դրույթունից և վարմունքից ենթադրելով և հետաքննություն կատարելով՝ տեղեկացնել, թե նա ինչ նպատակով է ցանկանում կրոնափոխ լինել և երբ է Ստամբուլ եկել»:

194 Նույն տեղում: «Ընդհանուր անվտանգության երկրորդ մասնաճյուղի ցուցումով հասած, 332 թ. մարտի 29-ի ամսաթիվը և 88-րդ համարը կրող նախարարության գրության պատասխանն է: Կրոնափոխվել ուզած Կայսերի բնակիչ Թաթյոսօղլու Սահակը Ստամբուլ է եկել 35 տարի առաջ, և նկատվել է, որ նա Փանգալթը թաղամասի Բոզաք գինետանն ապաստարան է տվել հետաքննության մեջ գտնվող հայ կոմիտեցիներին, և տվյալ դեպքի հետաքննությունից հասկացվել է, որ նրա այդ ցանկությունը պայմանավորված է եղել վախի գործոնով»:

Երբեմն պատահել է, որ կրոնափոխության հարցով թույլտվություն խնդրվի նաև Ռազմական նախարարությունից: Օրինակ՝ 1916 թ. հունվարի 31-ին Նիդդեի սանջակ հղված հեռագրում հաղորդվում է, որ կրոնափոխվելու համար ներկայացված դիմումի հարցով հատուկ թույլտվություն է վերցվել Ռազմական նախարարությունից: Հեռագրում ասվում է. «Գլխավոր հրամանատարության ղեկավարությունից ի պատասխան հաղորդվել է, որ հարմար է գտնվել ընդունել հայերի՝ խղճի ցանկությամբ կրոնափոխվելու վերաբերյալ խնդրանքը»<sup>195</sup>:

Կրոնափոխվելու թույլտվություն տալ-չտալու հարցում երբեմն ազդեցիկ են եղել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են «օտարերկրյա դեսպանների առկայությունը» կամ «պետության վարկանիշի խնդիրը», ինչպես դա տեսնում ենք Էդիրնեի հայերի օրինակով: 1916 թ. մարտի 6-ին Էդիրնե հղված հեռագրում հաղորդվում է, թե «Էդիրնեի շրջակայքում հայերի հավաքաբար կրոնափոխվելը շատ տգեղ կլինի և չի համապատասխանի պետության ներկայիս քաղաքականությանը», և նշվում, թե «...անպայման անհրաժեշտ է անմիջապես կարգավորել տվյալ կրոնափոխության հարցը»<sup>196</sup>: Երեք օր հետո՝ 1916 թ. մարտի 9-ին, ուղարկված մեկ այլ հեռագրում կառավարությունը շատ ավելի բացահայտ կերպով է արտահայտում իր մտահոգությունը. «... այդ ձևով և հավաքական կերպով կատարվող կրոնափոխության՝ Էդիրնեի նման դեպի Երոպա դուռ հանդիսացող վայրում տեղի ունենալը հակասում է պետության քաղաքականությանը: Հետևաբար՝ պահանջվում է, որ նախկին գրավոր ծա-

195 BOA/DH.SFR., nr. 60/183, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Նիդդեի սանջակ 1916 թ. հունվարի 31-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

196 BOA/DH.SFR., nr. 61/211, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի վիլայեթ 1916 թ. մարտի 6-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

նուցման միջոցով կրոնափոխության գործողությունը բացարձակապես չեղյալ համարվի»<sup>197</sup>:

Հիրավի, Էդիրնեում պաշտոնավարող Ամերիկայի հյուպատոսը 1916 թ. մարտին գրած մի զեկույցում հաստատում է, որ հայերին բռնի կերպով վերստին վերադարձնում են քրիստոնեությանը. «Այդ մարդիկ [կրոնափոխված հայերը] վերջերս կանչվել են [կառավարության] բնակարանավորման շրջան, և նրանց ստիպել են համաձայնվել քրիստոնեական անուններով վերադառնալ իրենց նախկին կրոնին: Ոմանք, ովքեր չգիտեին, թե հայերի վերջնական ճակատագիրն ինչ էր լինելու, չցանկացան այդ առավելությունից օգտվել և պնդեցին, որ ուզում են մուսուլման մնալ»<sup>198</sup>: Հյուպատոսը նաև հավելում է, թե լսել է, որ այդ տարբեր վերաբերմունքն ի հայտ է եկել Ավստրիայի ճնշումների հետևանքով:

Կրոնափոխությունը թույլ տալուն զուգընթաց նկատված մեկ այլ զարգացում էլ այն է, որ օսմանյան բանակում ծառայող հայ զինվորներին էլ են հարկադրել մահմեդական դառնալ: Գերմանիայի դեսպանատան գլխավոր հյուպատոս Մորդտմաննը 1915 թ. դեկտեմբերի 16-ին հետևյալ գրառումն է արել. «... մի քանի օր առաջ Ռազմական նախարարությունը հրամայել է ստիպել մուսուլման դառնալ բանակում շահագործվող բոլոր հայ զինվորներին. նրանք [հայերը] առայժմ միայն մահմեդական անուններ են ստանալու, իսկ կրոնափոխության իսկական ձևակերպումը (թալատումը) կատարվելու է հետագայում՝ նկատի առնելով պատերազմական պայմանները»<sup>199</sup>:

197 BOA/DH.SFR., nr. 61/257, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի վիլայեթ 1916 թ. մարտի 9-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

198 NA/RG59/867.00/786, Ամերիկացի հյուպատոս Գ. Բի Ռաֆիանի, Էսքոնայրի՝ 1916 թ. մարտի 18-ի զեկույցը, տե՛ս Ara Sarafian (ed.), United States Official Record on the Armenian Genocide, էջ 495:

199 DE/PA-AA / Bo.Kons.Band. 172, Գերմանիայի հյուպատոս Մորդտմաննի՝ 1915 թ. դեկտեմբերի 16-ի նոթագրումը:

Դաշնակցության Բուխարեստի կոմիտեն ևս հաղորդում է, թե իր ձեռքն ընկած տեղեկությունների համաձայն՝ հայ զինվորների բռնի մահմեղականացումը տեղի է ունեցել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: «Կոնիայի վիլայեթում գտնվող» երկաթուղում աշխատող հայ զինվորներին մահվան սպառնալիքի տակ հարկադրել են մուսուլման դառնալ: Ներկա պահին 1500-ից ավելի զինվոր է բռնի կերպով կրոնափոխվել»<sup>200</sup>:

### Սահմեղական դարձած հայերին արգելվում է ճանապարհորդել

Այն հայերը, որոնց թույլ է տրվել կրոնափոխ լինել, դեռ անվտանգության տարր են կառավարության աչքին, և նրանք պետք է հսկողության տակ պահվեն: Այդ հսկողության ձևերի ցանկը գլխավորում է ազատ տեղաշարժվելու իրավունքի արգելքը: Կրոնափոխ հայերը չեն կարողանում օգտվել այն իրավունքից, որը շնորհված է մյուս մահմեղականներին: Նրանք ճամփորդել կարողանալու համար պարտավոր են հատուկ թույլտվություն ստանալ, բայց դա շնորհելու իրավասությունը չի գտնվում տեղական իշխանավորների ձեռքին: Թույլտվությունը կարելի է ձեռք բերել միմիայն Ստամբուլից՝ անմիջականորեն նախարարությունից:

Իրականում հայերի՝ երկրի ներսում և արտերկրում ճամփորդելու արգելքը սկսվել էր 1915 թ. ապրիլի 24-ին: Այս ամսաթվին միայն «կասկածելի» և «կազմակերպության անդամ» համարվող անձանց վրա դրված այդ արգելքը կամաց-կամաց ընդլայնվելու է՝ ընդգրկելով բոլոր հայերին: Նախ՝ 1915 թ. ապրիլի 24-ին բոլոր վիլայեթներ ու սանջակներ ուղարկված մի ծածկագիր հեռագրում պահանջվում է «Կառավարության կողմից կասկածյալ

200 ONA/RG59/867.4016/226, Դաշնակցության Բուխարեստի կոմիտեի 1915 թ. հոկտեմբերի 28-ի գեկույցը, տե՛ս Ara Sarafian (ed.), United States Official Record on the Armenian Genocide, էջ 342:

ճանաչված հայերին և, հատկապես, նրանց մեջ նախաձեռնող և ակտիվ կոմիտեների առաջնորդներին և ազդեցիկ գործիչներին բացարձակապես չտալ ճամփորդության փաստաթուղթ և արտասահման գնալու ուղեգիր»<sup>201</sup>: 1915 թ. հունիսի 13-ին ուղարկված երկրորդ հրամանով այդ արգելքի ընդգրկումն ընդարձակվում է. շրջաններ հղված մի գրությամբ արգելվում է, որ դրսից որևէ հայ մտնի երկիր, իսկ ներսից դուրս գան 17-55 տարեկան հայերը<sup>202</sup>: Դրան հետևելու են շատ ավելի խիստ միջոցներ, և 1915 թ. օգոստոսի 21-ին բոլոր շրջաններ է ուղարկվելու մի շրջաբերական, ըստ որի՝ «...որ տարիքում էլ լինեն, կին թե տղամարդ՝ ոչ մի հայ երկրից դուրս չի գալու՝ առանց Գլխավոր շտաբի հրամանի»<sup>203</sup>:

Ուղևորության արգելքը չի սահմանափակվում միայն Անատոլիայում մնացած հայերով. այն նաև դրվում է Սիրիա ողջ

201 BOA/DH.SFR., nr. 52/95, Ներքին գործերի նախարար Թալեաթից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիգյարի, Դիարբեքի, Սվասի, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթյուպահիզի և Վանի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Քյութահիայի, Քարահիսարը Սահիվի, Բուլուի, Ջանիկի, Քարեսիի, Կայսերիի, Մարաշի, Նիղդեի և Էքիշեհիի սանջակներ 1915 թ. ապրիլի 24-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

202 BOA/DH.SFR., nr. 53/334, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Բասրայի, Բաղդատի, Բեյրութի, Հալեպի, Հյուղավենդիգյարի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահիզի, Մոսուլի և Վանի վիլայեթներ և Ուրֆայի, Իզմիրի, Նիղդեի, Իչելի, Բուլուի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարեսիի, Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշի, Թեքեի, Քյութահիայի, Մարաշի, Էքիշեհիի սանջակներ 1915 թ. հունիսի 13-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

203 BOA/DH.SFR., nr. 55/141, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիգյարի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթյուպահիզի և Վանի վիլայեթներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարեսիի, Քարահիսարը Սահիվի, Կայսերիի, Մարաշի, Նիղդեի և Էքիշեհիի սանջակներ 1915 թ. օգոստոսի 21-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:



հասած հայերի ճամփորդության վրա: Այդ կարգավորումը կատարվում է 1915 թ. մայիսի 31-ին ամսաթվով Նախարարների խորհրդի որոշման և դրան համապատասխան պատրաստված ու 15 հոդվածից բաղկացած հրահանգի հիման վրա, որը կարգավորում է այն հարցը, թե հայերն ինչպես են վերաբնակեցվելու նոր աքսորավայրերում: Հրահանգի 8-րդ հոդվածում արգելվում է «...սահմանված վայրում տեղավորված անձի՝ որևէ այլ տեղ գնալը՝ առանց ստանալու այն հանձնաժողովի թույլտվությունը, որին ինքը ենթակա է, և առանց ունենալու տեղական անվտանգության մարմինների հատուկ փաստաթուղթը»<sup>204</sup>:

Առաջին որոշումը, որ կարողացել են գտնել առ այն, թե հայերի վրա դրված այդ արգելքները տարածվել են նաև կրոնափոխված հայերի վրա, կրում է 1916 թ. փետրվարի 2-ի ամսաթիվը: Այդ տարեթիվին բազմաթիվ շրջաններ ուղարկված մի հեռագրում պահանջվում է, որ հայերի վերաբերյալ հրապարակված ճամփորդության արգելքի մասին 1916 թ. հունվարի 30-ի ամսաթիվը և 6698 թիվը կրող հաղորդումը «...կիրառվի նաև կրոնափոխ եղած հայերի նկատմամբ»<sup>205</sup>: Վերոհիշյալ 1916 թ. հունվարի 30-ի շրջաբերականը վերաբերում է այն հայերին, ում աքսորը հետաձգվել է, ինչպես նաև՝ դրսից եկած հայերին: Լուր է ստացվել, որի համաձայն՝ այդ հայերի մի մասն ազատորեն շրջում է տեղական վարչությունից ստացած մի շարք փաստաթղթերով: Հեռագիրն ուղարկվում է նման դեպքերն արգելելու նպատակով և պահանջում, որ «...ոչ մի հայի, քանի դեռ նախարարությունից

204 Genel Kurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri 1914-1918, Cilt 1, Genelkurmay, Ankara, 2005, s. 131-133, 427-431.

205 BOA/DH.SFR., nr. 60/208, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Ադանայի, Դիարբեքրի, Սվասի, Վանի, Մամուրեթյուլագիզի, Հալեպի, Էրզրումի, Անկարայի, Բիթլիսի, Հյուղավենդիզյարի, Տրապիզոնի, Կոնիայի, Մոսուլի վիլայեթներ և Ուրֆայի, Ջանիկի, Կայսերիի, Քյուլթահիայի, Իզմիրի, Սիդղեի, Էսքիշեհիրի, Քարեսիի, Չորի սանջակներ 1916 թ. փետրվարի 2-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

թույլտվություն չի ստացվել, ոչ մի դեպքում թույլ չտալ դուրս գալ իր գտնված գավառից»<sup>206</sup>: Փետրվարի 2-ին հատուկ հիշեցվում է, որ այդ արգելքը տարածվում է նաև կրոնափոխ հայերի վրա:

Այս հարցի վերաբերյալ շրջաններ հղված այլ հրահանգներ էլ գոյություն ունեն: Օրինակ՝ 1916 թ. փետրվարի 13-ին բազմաթիվ վայրեր ուղարկված մի հեռագրում պահանջվում է, որ «Այն հայերին, ում աքսորը հետաձգվել է, ինչպես նաև տարբեր վիլայեթներից եկած օտար... հայերից ոչ մեկին ոչ մի դեպքում թույլ չտալ դուրս գալ իր գտնված գավառից, քանի դեռ նախարարությունից թույլտվություն չի ստացվել: Դա կիրառել նաև կրոնափոխված հայերի նկատմամբ»<sup>207</sup>: Նմանապես 1916 թ. ապրիլին բազմաթիվ նահանգներ ուղարկված մի հեռագրում ասվում է. «Շրջաբերականով հաղորդվում է, որ այն հայերին, ում ունեցած ճամփորդության փաստաթղթում առկա չէ նախարարության թույլտվության մասին որևէ արձանագրություն, վերադարձնել այն վայրերը, որտեղից նրանք եկել են, և անպայման դրա մասին տեղեկություն հաղորդել այստեղ»<sup>208</sup>:

206 BOA/DH.SFR., nr. 60/172, Ներքին գործերի նախարար Թալեաթից Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզյարի, Դիարբեքրի, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթյուլագիզի և Մոսուլի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Իչելի, Սիդղեի, Բուլուի, Ջանիկի, Չորի, Քարեսիի, Երուսաղեմի, Քալա-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիփի, Քյուլթահիայի և Էսքիշեհիրի սանջակներ 1916 թ. հունվարի 30-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

207 BOA/DH.SFR., nr. 60/216, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի, Այդընի, Բեյրութի, Սիրիայի, Կաստամունուի վիլայեթներ և Բուլուի, Թեքեի, Չաթալջայի, Քալա-ի Սուլթանիյեի, Մարաշի, Իչելի սանջակներ 1916 թ. փետրվարի 13-ին հղված ծածկագիր հեռագիրը:

208 BOA/DH.SFR., nr. 64/19, Ներքին գործերի նախարար Թալեաթից Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բեյրութի, Հալեպի, Հյուղավենդիզյարի, Դիարբեքրի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուլագիզի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Իչելի,

1916 թ. հուլիսի 15-ին Հալեպ ուղարկված մի հեռագրում վերստին հիշեցվում է, որ բոլոր հայերը, անկախ նրանից՝ կրոնափոխվել են, թե ոչ, նրանց կողքին մուսուլման ընտանիքներ կան, թե ոչ, երբեք չեն կարող ճամփորդել առանց նախարարության թույլտվության<sup>209</sup>: Սակայն երբ պարզ է դառնում, որ չնայած այդ հեռագրերին՝ առանց թույլտվության ուղևորությունները շարունակվում են, Թալեաթ փաշան 1917 թ. մարտի 29-ին մի հեռագիր է ուղարկում 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային և պահանջում. «Քանի որ կրոնափոխված և չկրոնափոխված բոլոր հայերին, առանց նախարարությունից հավանություն և թույլտվություն ստանալու, Ստամբուլ և Անատոլիա չուղարկելու համար վարչական պաշտոնյաներին հաղորդագրություն է ուղարկվել, նմաններին առանց թույլտվության Ստամբուլ և Անատոլիա չուղարկելու մասին հաղորդել համապատասխան մարմիններ»<sup>210</sup>:

1917 թ. ուղարկված բազմաթիվ հեռագրերից հասկանում ենք, որ այդ վերահսկողությունը կատարվել է նաև ամեն մի անձի ճակատագրին հետևելու միջոցով: Որպես օրինակ կարելի է բերել Թալեաթ փաշայի՝ մի կրոնափոխ սպասուհի կնոջ ճակատագրի առնչությամբ կատարած դատական հետապնդումը: 1917 թ. հուլիսին Կոնիայի վիլայեթ հղված մի հեռագրում Թալեաթը գրում է. «Քանի որ պարզվել է, թե Նիզամեթին բեյի սպասուհին՝ կրոնափոխ Քադրիյեն, և նրա աղջիկը՝ Ռեմզիյեն, եկել են առանց նախարարության թույլտվության, էսքիշեհիրի սանջակին գրվել

Քյութահիայի, Քարահիսար-ը Սահիփի, Բուլուփ, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարեսի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքքեի, Կայսերիի, Մեդիսե-ի Մյուններեի, Մարաշի, Նիզդեի և էսքիշեհիրի սանջակներ 1916 թ. ապրիլի 14-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

209 BOA/DH.\$FR., nr. 66/1, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1916 թ. հուլիսի 15-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

210 BOA/DH.\$FR., nr.74/301, Ներքին գործերի նախարար Թալեաթից 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային 1917 թ. մարտի 29-ին հղված ծածկագիր հեռագիրը:

է նրանց՝ այն վայր վերադարձնելու անհրաժեշտության մասին, որտեղից նրանք եկել են: Հետայսու, քանի դեռ կրոնափոխված և չկրոնափոխված բոլոր հայերը նախարարությունից թույլտվություն չեն ստացել, նրանց՝ Ստամբուլ և այլ վայրեր գնալը չթույլատրելու մասին զգուշացման բոլոր կետերը պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ հաղորդվում է պատկան մարմիններին»<sup>211</sup>:

Ճամփորդելու արգելքի գործադրումը հատկապես հայ կանանց ու աղջիկների նկատմամբ խիստ բարդ է լինում: Դրա պատճառն այն է, որ օսմանյան քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները առևանգում էին հայ կանանց ու աղջիկներին. երևույթը չափազանց տարածված էր: Այդ առևանգումները երբեմն կատարվում էին նաև հայերին օգնելու նպատակով: 1916 թ. հոկտեմբերի 22-ին Հալեպից մի քանի հայ աղջիկների Ստամբուլ բերած մայրո Հայրի բեյի դեմ հարուցված դատական գործի շնորհիվ հնարավոր է հասկանալ, թե որքան լուրջ էր ընդունվում այդ խնդիրը: Նամակագրությունը կատարվում է անմիջականորեն ներքին գործերի նախարար Թալեաթի և էնվեր փաշայի միջև՝ «Խիստ գաղտնի և շտապ» դասիչով: Թալեաթ փաշան իր նամակում պահանջում է, որ տվյալ սպան խստորեն պատժվի<sup>212</sup>: Քանզի հայերին Ստամբուլ բերելը որոշ իմաստով նշանակում էր նրանց աջակցել փախչելու հարցում և փրկել:

1916 թ. օգոստոսի 28-ին տվյալ հարցի վերաբերյալ մի գեկույց պատրաստած անվտանգության տեսուչը հաղորդում է, թե «բազմաթիվ պաշտոնյաներ, լինեն քաղաքացիական թե զինվորական, հայերի են փախցնում», և գրանցումների ժամանակ էլ «չեն ենթարկվում հրամանին՝ իրենց գրանցումները ցույց տա-

211 BOA/DH.\$FR., nr. 79/247, Ներքին գործերի նախարար Թալեաթից Կոնիայի վիլայեթ 1916 թ. հուլիսի 30-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

212 BOA/DH.EUM.2.\$ube, nr. 8/61, Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի կողմից գլխավոր հրամանատար էնվեր փաշային 1916 թ. հոկտեմբերի 22-ին «Խիստ գաղտնի և շտապ» դասիչով ուղարկված նամակը:

լով»: Տեսուչը խնդրում է միջոցներ ձեռնարկել՝ բողոքելով, թե այդ դրությունը վտանգների տեղիք տալու աստիճանի է հասել»: Տեսչի առաջարկներից մեկն էլ այն էր, թե հայ աղջիկների անձնագրերը պետք է այնպես կարգավորել, որպեսզի դրանք ցույց տան նրանց հայ լինելը»<sup>213</sup>:

Ճամփորդելու վրա դրված արգելքի հարցում միակ բացառությունը կատարվում է այն դեպքում, երբ հայ կանայք ամուսնացած են մահմեդականների հետ: Օրինակ՝ 1917 թ. նոյեմբերի 14-ին Կոնիա հղված մի հեռագրում պահանջվում է «Կրոնափոխվելուց հետո սպաների հետ ամուսնացած հայ կանանց չարգելել Ստամբուլից բացի այլ վայրեր մեկնել»<sup>214</sup>: Ուղևորության արգելքները շարունակվում են նաև 1918 թվականին: 1918 թ. մարտի 20-ին բոլոր վիլայեթներ ուղարկված հեռագրում հրամայվում է «Հայերին թույլ չտալ տեղափոխվել և ճամփորդել անգամ վիլայեթի/լիվայի ներսում»<sup>215</sup>: Իսկ 1918 թ. մայիսի 8-ին, վերստին հիշեցնելով, որ այդ մասին նախկինում էլ է հաղորդվել, նշվում է, թե «բոլոր կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայերին» արգելվում է լքել իրենց գտնված վայրերը, քանի դեռ նախարարությունից թույլտվություն չի ստացվել: Պահանջվում է նման բան նախաձեռնած անձանց վերաբերյալ հատուկ գրանցամատյան պատրաստել և նրանց ցանկն անմիջապես ուղարկել՝ լուսանկարներով հանդերձ<sup>216</sup>:

213 BOA/DH.EUM.2.Şube, nr. 28/6, Անվտանգության տեսչից Ընդհանուր անվտանգության տնօրինությանը 1916 թ. օգոստոսի 28-ին ներկայացված զեկուցք:

214 BOA/DH.ŞFR., nr. 81/151, Ներքին գործերի նախարար Թալեաթից Կոնիայի վիլայեթ 1917 թ. նոյեմբերի 14-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

215 BOA/DH.ŞFR., 85/171, Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուլազիզի և Մոսուլի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարսիի, Քալեի-Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Էսքիշեհիի, Իջելի, Քյութահիայի, Մարաշի և Նիղդեի սանջակներ 1918 թ. մարտի 20-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

216 BOA/DH.ŞFR., 87/74, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդընի,

Հայերի վերաբերյալ ճամփորդության վրա դրված արգելքներն սկսել են մեղմանալ ամառային ամիսներին<sup>217</sup>: 1918 թ. օգոստոսի 5-ին «Իքդամ» օրաթերթը հաղորդում է, թե իրենց հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ հայերն սկսելու են վերադառնալ<sup>218</sup>: 1918 թ. օգոստոսի 21-ին «Սաբահ» օրաթերթը հայտնում է, թե «Գավառում գտնվող հայերի շրջանում ուրախություն են հարուցել այն լուրերը, թե կառավարությունը որոշել է վերջնական վայրեր տեղափոխված հայերին վերադարձնել իրենց հայրենի բնակավայրեր», և որ «մեկը մյուսի հետևից բազմաթիվ նամակներ են տպագրվել»: «Սաբահը» նաև որոշ հատվածներ է հրատարակում այդ նամակներից<sup>219</sup>: Այդ հրատարակումներին հաջորդած օրերին մամուլում լուրեր են հայտնվում առ այն, թե էնվեր փաշան հայերի վերադարձի վերաբերյալ «...հրահանգներ է տվել անհրաժեշտ մարմիններին, և որ հայերը քայլ առ քայլ վերադառնալու են իրենց հայրենի երկիր՝ ռազմական տեսանկյունից անվտանգ եղող վայրերում բնակվելու համար, ինչպես նաև հրատարակվում է Ստամբուլի հայոց պատրիարքարանի շնորհակալական խոսքը՝ վերադարձի թույլտվության կապակցությամբ<sup>220</sup>:

Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուլազիզի և Մոսուլի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարսիի, Քալեի-Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Էսքիշեհիի, Իջելի, Քյութահիայի, Մարաշի, Նիղդեի և Լիբանանի սանջակներ 1918 թ. մայիսի 8-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

217 BOA/DH.ŞFR., 90/51, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1918 թ. օգոստոսի 6-ին Մամուրեթյուլազիզի նահանգ ուղարկված ծածկագիր հեռագրից հասկանում ենք, որ կառավարությունը որոշ նախապատրաստությունների մեջ է եղել այս հարցում:

218 «Իքդամ» օրաթերթի՝ 1918 թ. օգոստոսի 5-ի համարը, տե՛ս Ադեմ Գյունայընի "The Return and Resettlement of the Relocated Armenians (1918-1920)" վերնագրով ատենախոսությունը, որը պաշտպանվել է 2007 թ., Թուրքիայի Միջին Արևելքի տեխնիկական համալսարանում, էջ 12:

219 Sabah, 21 Ağustos 1918.

220 Sabah, 25 ve 30 Ağustos 1918.

Առաջին պաշտոնական մեղմացումը տեղի է ունենում 1918 թ. օգոստոսի 19-ին, երբ բոլոր շրջաններ ուղարկված մի գրության մեջ վիլայեթի/լիվայի սահմաններում գտնվող հայերի, դարձյալ նույն վիլայեթի/լիվայի սահմաններում «մի վայրից մյուսը գնալը», ոստիկանական հետաքննությունից հետո ենթակա է տեղական պաշտոնյաների թույլտվությանը, իսկ Ստամբուլ կամ այլ նահանգներ գնալը շարունակում է արգելված լինել<sup>221</sup>:

### Ինչպե՞ս է տարբերակվելու մահմեդական դարձած հայը

Փաստաթղթերից պարզ է դառնում, որ չնայած ձեռնարկված բոլոր միջոցներին՝ առանց թույլտվության ճամփորդությունները շարունակվել են: Դրա էական պատճառներից մեկն այն է, որ խիստ դժվար էր մահմեդականությունն ընդունած որևէ հայի մյուս մուսուլմաններից տարբերելը, իսկ մյուսը, ինչպես վերևում էլ նշեցինք, հայ երիտասարդ աղջիկներին իրենց հետ վերցրած քաղաքացիական և զինվորական բյուրոկրատիայի ներկայացուցիչների կողմից այդ արգելքի անտեսումը: Դա կանխելու նպատակով որոշում է կայացվում կրոնափոխված հայերի ինքնության վկայականներում այնպիսի գրանցում անել, որի շնորհիվ կհասկացվի, որ նրանք հայ են: Այդպիսով հնարավոր կլինի կանխել մահմեդական անուն վերցրած հայերի՝ մյուս մուսուլման բնակչության մեջ անհետ կորչելը: Նրանց անձնագրերում արված այդ հատուկ նշումով կապահովվի մարդկանց տարբեր վերաբերմունքի արժանացնելը, և կոյուրացվի նրանց հետևելու գործը:

221 BOA/DH.SFR., nr. 90/176, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի և Վանի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարեսի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Էսքիշեհիրի, Իչելի, Քյուսահիայի, Մարաշի, Նիղդեի, Լիբանանի և Երզնկայի սանջակներ 1918 թ. օգոստոսի 19-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Այդ հսկողությունն ապահովելու նպատակով նախ 1916 թ. փետրվարի 1-ին բոլոր շրջաններին որոշ հարցումներ են արվում՝ կրոնափոխվածներին տրված ինքնության վկայականների վերաբերյալ: Նպատակը պարզելն է, թե այդ նոր վկայականներից հասկացվում է այդ անձանց նախկին դրությունը, թե ոչ: Շրջաններից պահանջվում է հաղորդել, թե «Կրոնափոխված հայերն ինչ ձևով են արձանագրվել բնակչության գրանցամատյաններում, և թե արդյոք նրանց տրված ինքնության վկայականներում պարզորոշ կերպով նշված են ընտանիքի անդամների անունները և նրանց կրոնափոխ լինելը»<sup>222</sup>:

1916 թ. փետրվարի 21-ին հղված մի հրամանով պահանջվելու է, որ նրանց անձնագրերն այնպես տրվեն, որպեսզի այդ տարբերությունը նկատելի լինի: «Գաղտնի» դասիչով բազմաթիվ նահանգներ ուղարկված մի հեռագրում հաղորդվել է, թե «Պարզ է դարձել, որ կրոնափոխ եղած հայերն ազատ կերպով շրջում են իրենց տրված նոր անձնագրերով», և դա կանխելու համար պահանջվում է, որ թաղամասի ոստիկանության պաշտոնյաների կողմից, առանց համապատասխան անձանց անձնագրերում «դավանափոխ է եղել» նշումը հանելու, գրվի նաև նրանց գտնված վայրի անվանումը, և «կնիք դրվի»<sup>223</sup>: Այդպիսով՝ որոշվել է համապատասխան անձանց ինքնության վկայա-

222 BOA/DH.SFR., nr. 60/207, Ներքին գործերի նախարար Թալեաթից Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի, Դիարբեքի, Սվասի, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի և Վանի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Չորի, Քարեսի, Կայսերիի, Էսքիշեհիրի, Քյուսահիայի, Նիղդեի սանջակներ 1916 թ. փետրվարի 1-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

223 BOA/DH.SFR., nr. 61/71, Ներքին գործերի նախարար Թալեաթից Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի և Վանի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Չորի, Քարեսի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Էսքիշեհիրի, Քյուսահիայի, Մարաշի և Իչելի սանջակներ 1916 թ. փետրվարի 11-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

կաններում մի հատուկ արձանագրում անել, որպեսզի համապատասխան անձանց՝ կրոնափոխված հայ լինելը հասկացվի, և ոստիկանությունն ու ժանդարմերիան գործեն այդ հատուկ կնիքին համապատասխան: Հետագա ամիսներին գավառներ ուղարկված հեռագրերով կրկին ու կրկին հիշեցվում է այդ մեթոդին դիմելու անհրաժեշտության մասին<sup>224</sup>:

1917 թ. մայիսի 22-ի ամսաթիվը կրող մի հեռագրից տեղեկանում ենք, թե ինչպես է իրականացվել այդ կիրառումը: Համապատասխան հեռագրում հիշեցվում է վերոնշյալ 1916 թ. փետրվարի 21-ի շրջաբերականի մասին, և տառացիորեն հետևյալ կերպ է կրկնվում այն գործողությունը, որը պետք է արվի. «... դավանափոխ եղած հայերի անձնագրերի հետևում պետք է գրվեն նրանց բնակության ավանների և թաղամասերի անվանումները և կնքվեն ոստիկանության ղեկավարության կողմից: Այդ մասին գրված էր 1331 թ. փետրվարի 8-ի ծածկագիր հեռագրում: Այնուհետև նրանց անձնագրերում, ում հավատափոխությունն ընդունվել է, դարձյալ նույն կերպ մեկնաբանություն գրելով՝ դրանք կնքել բնակչության ղեկավարների կողմից: Ոստիկանության և ժանդարմերիայի գրասենյակներն էլ պետք է տեղյակ լինեն, որ այդ նշանը վերաբերում է դավանափոխ հայերին, և վերջիններիս ճամփորդությունների ժամանակ նրանց նկատմամբ ըստ այդմ վերաբերմունք դրսևորեն»<sup>225</sup>:

224 BOA/DH.ŞFR., nr. 76/243-79, Ներքին գործերի նախարարության Գաղտնագրման բաժնից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Բասրայի, Բաղդատի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կոնստանդնուպոլսի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի և Վանի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուրսայի, Ջանիկի, Չաթալջայի, Երուսաղեմի, Քալա-ի Սուլթանիյեի, Մենթեշի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Իչելի, Քյուսահիայի, Մարաշի, Էսքիշեհիի, Նիղդեի և Լիբանանի սանջակներ 1917 թ. մայիսի 30-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

225 BOA/DH.ŞFR., nr. 76/238, Ներքին գործերի նախարարության Գաղտնագրման բաժնից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի,

Կրոնափոխ հայերին՝ վերահսկողության տակ պահելու առումով չեն սահմանափակվում միայն հատուկ ինքնության վկայականներ տալով: Բացի դրանից՝ չափազանց խիստ հսկողության տակ են պահվում նաև նրանց ամեն տեսակի գործողություններն ու դրությունը: 1918 թ. ապրիլի 3-ին գրեթե բոլոր վիլայեթներ ուղարկված մի հեռագրում պահանջվում է կրոնափոխ հայերի վերաբերյալ այնպիսի տեղեկագրեր պատրաստել, որոնցում կներառվեն այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են նրանց ընտանիքի բոլոր անդամների ցանկը, այն, թե ինչ գործով են նրանք զբաղվել կրոնափոխությունից հետո, և ինչպես են նրանց բնութագրում տեղի անվտանգության ուժերը կրոնափոխությունից առաջ և հետո<sup>226</sup>: Սույն փաստաթղթից պարզորոշ կերպով հասկացվում է, որ այդ հայերը, չնայած կրոնափոխ լինելուն, դեռ անվստահելի խումբ են համարվում և ենթարկվում են կասկածելի անձին արժանի վերաբերմունքի:

Բասրայի, Բաղդատի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կոնստանդնուպոլսի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի, Վանի և Ուրֆայի վիլայեթներ, ինչպես նաև՝ Իզմիրի, Բուրսայի, Ջանիկի, Չաթալջայի, Զորի, Քարեսիի, Երուսաղեմի, Քալա-ի Սուլթանիյեի, Մենթեշի, Նիղդեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Իչելի, Քյուսահիայի, Մարաշի, Էսքիշեհիի, և Լիբանանի սանջակներ 1917 թ. մայիսի 22-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

226 BOA/DH.ŞFR., nr. 86/45, 1918 թ. ապրիլի 3-ին Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կոնստանդնուպոլսի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուրսայի, Ջանիկի, Չաթալջայի, Զորի, Քարեսիի, Քալա-ի Սուլթանիյեի, Մենթեշի, Նիղդեի, Լիբանանի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Սույն շրջաբերականով առաջարկվում է վիլայեթի/իլայի ներսում ներկայում գոյություն ունեցող հայերից կրոնափոխների անունները, նրանց կրոնափոխության ամսաթիվն ու ձևը, ինչպես նաև՝ նրանց ընտանիքների անդամների անունները և ընտանիքի նահապետի հետ մտերմության աստիճանը, կրոնափոխությունից ի վեր ինչ գործով զբաղվելը և կրոնափոխությունից առաջ և հետո նրանց դրությունն ու գործողությունները և տեղի ոստիկանության կողմից ինչ կերպ ճանաչվելը ներկայացնող մի մանրամասն տեղեկագիր կազմելով՝ համակարգված կերպով և հնարավորինս արագ ուղարկել այն»:

Կրոնափոխ հայերին տրված ինքնության հատուկ վկայականները պատերազմից հետո խնդրահարույց են դառնալու Այն բանից հետո, երբ իթթիհադականները, պատերազմը տանուլ տալով, փախչում են արտասահման, նոր կառավարությունը 1918 թ. հոկտեմբերին թույլ է տալիս, որ հայերը վերստին վերադառնան իրենց նախկին բնակավայրերը: Սակայն այդ ինքնության վկայականներով շրջելը խնդիր է հարուցում Դրանից անմիջապես հետո՝ 1918 թ. նոյեմբերի 18-ին, շրջաններ հղված մի գրության մեջ նշելով, թե հայերի ներկայիս փաստաթղթերը բարդությունների տեղիք են տալիս իրենց ճամփորդությունների ժամանակ, հիշեցվում է, որ հայերի հետ վերադառնալը կառավարության հրամանն է, և պահանջվում, որ նրանց անձնագրերում առկա հանգամանքը հաշվի չառնվի, և հայերին թույլ տրվի ճամփորդել՝ առանց նոր փաստաթղթի անհրաժեշտության<sup>227</sup>:

#### Աքսորյալների հասած վայրերը.

#### սահմանափակ վերաբնակեցման քաղաքականություն

Օսմանյան փաստաթղթերից հասկացվում է, որ 1915 թ. մայիսից մինչև նոյեմբեր, որը ես անվանում եմ Ցեղասպանության առաջին շրջան, սահմանափակ կերպով գործադրվել է վերաբնակեցման քաղաքականություն ներկայիս Սիրիայի և Իրաքի շրջաններում, որոնք ծրագրվել էին որպես հայերի վերջնական քսորավայրեր: Այդ քաղաքականության համաձայն՝ նախա-

227 BOA/DH.SFR., nr. 93/57, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուդավենդիզյարի, Դիարբեքի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուվազիզի, Մոսուլի, Վանի, Ուրֆայի վիլայեթներ, ինչպես նաև՝ Իզմիրի, Բուլուսի, Ջանիկի, Չաթալջայի, Ջորի, Քարեսի, Երուսաղեմի, Քալա-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Էսքիշեհիի, Իչելի, Քյուսահիայի, Մարաշի, Նիղդեի, Էրզինջանի սանջակներ 1918 թ. նոյեմբերի 5-ին ուղարկված ծածկագիր հետագիրը:

տեսվել էր, որ հայերը վերաբնակեցվեն թե՛ արդեն գոյություն ունեցող ավաններում ու գյուղերում և թե՛ նոր հիմնվելիք բնակավայրերում: Այդ քաղաքականությունից ավելի ուշ հրաժարվելու էին, բայց և այնպես որոշ շրջաններում վերաբնակեցված հայերին թույլ էին տալու մնալ այնտեղ, ինչպես դա երևում է Ռաքքայի շրջանի օրինակով<sup>228</sup>:

Ըստ էության՝ վերաբնակեցման քաղաքականությունը հատկապես գաղութներում իրականացվող ցեղասպանական քաղաքականության անքակտելի մի մասն է. ամերիկյան կարմրամորթների կամ Ավստրալիայում բնիկների բնաջնջման գործընթացում հաճախ են դիմել այդ քաղաքականությանը: Թիրախ ընտրված խմբի կենսական պայմանների վերացումից և նրա ֆիզիկական ուժին մեծ վնասներ հասցվելուց հետո մնացած տարրերին բռնի կերպով նախապես որոշված շրջաններում բնակվել ստիպելը, ճնշող խմբի ազգային-մշակութային հատկանիշների, հատկապես՝ կրթության բռնի հարկադրանքով ճնշվող խմբի ուժացումը եղել են այդ քաղաքականության գլխավոր առանձնահատկությունները<sup>229</sup>:

228 Կ. Գաբիկյանն իր հուշերում նշելով, թե «Ռաքքայում գտնվող հայերը մասամբ ազատվել էին Դեր Ջոր տարվելու վախից և կասկածներից», հաղորդում է, որ այդ դրության մասին տեղյակ են եղել նաև Ռաքքայում գտնվող հայերը: Տե՛ս «Գուժկան Սեբաստիոյ», Կ. Գաբիկյան, «Եղեռնապարում-Փոքուն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ», «Հայրենիք» հրատարակչություն, Բոստոն, 1924 թ., էջ 472: Իմ շնորհակալությունն են հայտնում Հայկոյին՝ հայերենից թարգմանելու համար:

229 Ամենահայտնի օրինակը, որ կարելի է տալ սույն խնդրի վերաբերյալ, 1830 թ. ապրիլի 24-ին Ամերիկայի կոնգրեսի կողմից ընդունված «Indian Removal Act»-ն է («Կարմրամորթների տեղահանության մասին» օրենքը), համաձայն որի՝ որպես ամենաքաղաքակիրթ 5 ցեղեր հայտնի չերոկիներ, չիկասոներ, չոկտոներ, կրիկներ, սեմինոլներ ցեղերը 1831-1838 թթ. Միսիսիպի գետի արևելքից քսորվել են նույն գետի արևմուտքում իրենց հատկացված շրջաններ: Տեղահանության ընթացքում կարմրամորթների կրած կորուստների պատճառով «Trail of Tears» («Արցունքների հետք») անվամբ հայտնի այդ քսորն ու վերաբնակեցումը համընկնում են կարմրամորթների բնաջնջման մեջ մի էական շրջադարձային կետի հետ: Դրան հաջորդած տարիներին մի շարք օրենքներով, որոնցից առաջինը հրապարակվել

Թեև այս սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունն ընդգրկում է աքսորի միայն սկզբնական ամիսները, սակայն բավարար չափով չի ուսումնասիրվել<sup>230</sup>: Դրանում կարող են դեր խաղացած լինել զանազան գործոններ, որոնցից գլխավորը ցեղասպանության սխալ ընկալումն է, որին անդրադարձել ենք մեր գրքի սկզբում: Այն ուսումնասիրողները, որոնք համոզված են, որ 1915-1918 թթ. ընդգրկող ժամանակաշրջանի դեպքերը ցեղասպանություն են, թերևս վերաբնակեցման քաղաքականության մեջ ցեղասպանության պնդումը մեղմացնող չափանիշ են տեսել, որ իրենց ուսումնասիրություններում գրեթե բոլորովին չեն անդրադարձել այդ թեմային: Այդ ժամանակաշրջանը աշխատություններում, կարելի է ասել, անտեսվել է, կամ ժամանակավոր վերաբնակեցումը մեկնաբանվել է որպես միայն որոշ տեղական իշխանությունների՝ բարի մտադրությամբ նախաձեռնություն, որին, շատ չանցած, վերջ է տրվել:

Օրինակ՝ Սիրիայի շրջանի և ճամբարների հարցի վրա մեր ուշադրությունն առաջինը հրավիրած Ռայմոնդ Գևորգյանը ևս իր գրքում նմանատիպ մի մեկնաբանություն է անում սույն թեմայի վերաբերյալ և Ռաս-ուլ-Այն ու Դեր Զոր շրջաններում սահմանափակ կերպով կատարված վերաբնակեցման գործողությունները բնութագրում է որպես Ռաս-ուլ-Այնի կայմակամ Յուսուֆ Զիյա բեյի և Դեր Զորի մյուսթեսարիֆ Ալի Սուլաթ բեյի անձնական ձգտում<sup>231</sup>:

է 1851 թ., իսկ 1871, 1885 և 1889 թթ. ավելացել են նորերը, որոնք կոչվում էին “Indian Appropriations Act” («Կարմրամորթներին հատկացումների մասին») օրենքներ, կարմրամորթները վերաբնակեցվել են հատուկ իրենց համար պատրաստված բնակավայրերում, որոնց շուրջը փակ էր և ապահով: Այստեղ ստեղծված ենթակառուցվածքով նպատակադրվել է կարմրամորթներին բռնի ձուլել ամերիկյան հասարակությանը:

230 Այս հարցում բացառություն են կազմում Ռայմոնդ Գևորգյանի աշխատությունները: Որպես մեկ օրինակ տես նրա հետևյալ գիրքը՝ *Soykırımın İkinci Safhası, Sürgüne Götürülen Osmanlı Ermenilerinin Suriye-Mezopotamya Toplama Kamplarında İmha Edilmeleri (1915-1916)*, Belge Yayınları, İstanbul, 2011:

231 Նույն տեղում, էջ 63, 76-77:

Հարկ է նշել, որ նման կարծիքի ձևավորման հարցում էական դեր են կատարել ողջ մնացած հայերի հուշերը: Այսպես՝ Դեր Զորի դժոխքից ողջ մնալ կարողացած Մ. Աղազարյանն իր կարևոր աշխատության մեջ, որը մեզ բազմաթիվ սկզբնաղբյուրային տեղեկություններ է հաղորդում, աքսորի առաջին ամիսներին Դեր Զոր հասած հայերին շրջակա բնակավայրերում ցրելը բացատրում է որպես Ալի Սուլաթ բեյի անձնական նախաձեռնություն. «Ալի Սուլաթ բեյի անունը պետք է հատուկ հարգանքով հիշատակել... [նա] մարդասիրական զգացումներ ունեցող հազվագյուտ թուրք էր... Որևիցե բողոքի տեղիք չտալու համար հայերին խմբերով տեղավորում էր մոտակա գյուղերում: Երբ նա այնտեղ էր լինում, ամեն բան աքսորյալների օգտին և բոլորի համաձայնությամբ էր լինում»<sup>232</sup>:

Թյուրիմացության տեղիք չտալու համար հարկ է հավելել, որ անշուշտ որոշ տեղական կառավարիչների բարի մտադրություններն անվիճելի ճշմարտություն են<sup>233</sup>, սակայն այստեղ հանգամանքը, որի վրա ուզում են ուշադրություն հրավիրել, այն է, որ սխալ կլինի այդ ամբողջ սահմանափակ վերաբնակեցման գործընթացը ձգտել բացատրել զուտ որոշ ղեկավարների բարի մտադրություններով:

Մյուս կողմից՝ ուշագրավ է, որ այդ վերաբնակեցման քա-

232 Մ. Աղազարեան, Աքսորականի Յուշեր, Ադանա, տպ. Հայ Ձայնի, 1919, էջ 3: Իմ շնորհակալությունն են հայտնում Հայկոյին՝ հայերենից թարգմանելու համար:

233 Օրինակ՝ այստեղ նշված Դեր Զորի մյուսթեսարիֆ Ալի Սուլաթ բեյի անձի վերաբերյալ չափազանց դրական խոսքեր է ասում ոչ միայն Աղազարյանը, այլև այդ հարցում վերջինիս հետ համակարծիք են նաև գերմանական և ամերիկյան դեսպանությունների աշխատակիցները: Ասվածի մասին ամերիկյան փաստաթղթերից տե՛ս NA/RG59/867.4016/373, Հալեպում Ամերիկայի հյուպատոս Ջեքսոնից Արտգործնախարարությանը 1918 թ. մարտի 4-ին ուղարկված զեկույցը, Ara Sarafian (ed.), *United States Official Records on the Armenian Genocide*, էջ 590: Գերմանական փաստաթղթերից տե՛ս DE/PA-AA/R14091, Հալեպի հյուպատոս Ռյուլերից վարչապետ Բեթման Հուլվեգին 1916 թ. ապրիլի 27-ին ուղարկված զեկույցը:

ղաքականությունը չի ընդգրկվել թուրքական պաշտոնական պատմագրության տեսակետներում: Այստեղ կարող է դեր խաղացած լինել այն հարցին պատասխանելու դժվարությունը, թե «հետագայում ինչ պատահեց այդ վերաբնակեցված հայերի հետ»: Քանզի նոյեմբերից հետո հրաժարվել են այդ քաղաքականությունից, և հատկապես 1916 թ. մարտ-ապրիլից հետո տեղի է ունեցել երկրորդ կոտորածի ժամանակաշրջանը, որի նպատակն է եղել բնաջնջել Սիրիայում տեղակայված հայերին:

Հարկ է տալ հետևյալ լուրջ հարցը. այդ սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունը որչափ է նախապես ծրագրված եղել, և ինչո՞ւ են հետագայում դրանից հրաժարվել: Սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունը ինչպես որ կարող է մի գիտակցված քաղաքականության արդյունք լինել, որի հետևում որոշակի ռացիոնալ հաշվարկ է եղել, այնպես էլ կարող է ի հայտ եկած լինել որպես նախապես չհաշվարկված մի իրողության պարտադրանք: Կամ էլ ճշմարտությունն այդ երկուսի միջև մի տեղ է: Ինչպես որ դրան ստորև էլ կանդադարանանք, մեր անձնական կարծիքն այն է, որ այս հարցում էական դեր են կատարել բնակչության հետ կապված ծրագրերը, մասնավորապես՝ Սիրիա հասած հայերի թիվը: Սկզբում երիտթուրքական ղեկավարությունը եթե անգամ մանրամասն վերաբնակեցման քաղաքականություն չի զարգացրել, այնուամենայնիվ թույլ է տվել, որ հայերը տեղավորվեն այդ վայրերում, սակայն հետագայում հասկանալով, որ մեծաթիվ հայեր են հասել այդ շրջան, հրաժարվել է այդ քաղաքականությունից: Անշուշտ, այս հարցում կարող են դեր խաղացած լինել նաև այնպիսի այլ գործոններ, ինչպիսիք են պատերազմի ընթացքը, հայ աքսորյալների շրջանում տարածված հիվանդությունների՝ բանակի համար լուրջ վտանգի վերածվելը: Սույն հարցն ինքնին արժանի է առանձին ուսումնասիրության:

Ինչպես հայտնի է, հայերին Սիրիայի շրջան աքսորելու մասին առաջին պաշտոնական որոշումը թվագրվում է 1915 թ. ապրիլի 24-ով: Այդ ամսաթվից առաջ, մասնավորապես 1915 թ. մարտին հայերն այնպիսի շրջաններից, ինչպիսիք են «Իսքենդերունը, Դյորթուլը, Ադանան, Հաճնը, Ջեյթունը, Սիսը», ռազմական ու քաղաքական պատճառներով սկսել էին աքսորվել Կոնիայի կողմերը: 1915 թ. ապրիլի 24-ին համապատասխան վայրեր հղված մի հրամանով հաղորդվում է, թե որոշվել է Կոնիայի կողմերն ուղարկված այդ հայերին «առաքել Հալեպի հարավ-արևելք ու Ջոր և Ուրֆա շրջաններ»<sup>234</sup>:

Հիմնականում Չուկուրովայի շրջանի հայերով սահմանափակված այդ առաջին աքսորը դեպի Սիրիա ապրիլ ամսին Վանում տեղի ունեցած դեպքերից հետո ընդլայնվում է՝ ընդգրկելով նաև Վանը, Էրզրումի հարավում ու Բիթլիսի կենտրոնը և գավառները (հատկապես Մուշը, Սասունը և Թալուրիի կողմերը)<sup>235</sup>: 1915 թ. մայիսի 12-ին Սիրիա՝ Հալեպի վիլայեթ ուղարկված մի հեռագրում հաղորդվում է, թե ինչպիսի հիմքերով պետք է տեղավորվեն աքսորյալները, քանի որ Չուկուրովայի հայերից բացի՝ այլ վիլայեթներից էլ էին սկսել հայեր ուղարկվել: Այդ հիմքերի համաձայն՝ Սիրիա հասած հայերը պետք է, ըստ հարմարության, կան արդեն իսկ գոյություն ունեցող գյուղերում ցր-

234 BOA/DH.ŞFR., nr. 52/93, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. ապրիլի 24-ին չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային ուղարկված ծածկագիր հեռագիրը: Նույն տեղեկությունը հաջորդ օրը հաղորդվելու է նաև Մարաշ, Ադանա և Հալեպ (BOA/DH.ŞFR., nr. 52/112): Մայիսի 6-ին Հալեպից նորից արված հարցումից անմիջապես հետո մայիսի 8-ին տեղեկացվում է, որ հայերը պետք է տեղավորվեն Հալեպի հարավարևելյան կողմերում: (BOA/DH.ŞFR., nr. 52/267):

235 BOA/DH.ŞFR., nr. 52/281, Ներքին գործերի նախարար Թալեաթից Էրզրումի նահանգապետ Թահսինին 1915 թ. մայիսի 9-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը: Նույն տեղեկությունն ավելի ուշ հաղորդվելու է նաև Վանի և Բիթլիսի նահանգապետերին, տե՛ս (BOA/DH.ŞFR., nr. 52/282 ve 286):



վեն, կամ էլ տեղավորվեն նորաստեղծ գյուղերում: Բացի այդ՝ պահանջվում է նաև, որ տեղավորման ծախսերը հոգան հայերը. «Ապահովել, որ այդտեղ ուղարկված հայերը ցրվեն գյուղերում, բացի այդ՝ գյուղ հիմնելով՝ այդ կերպ վերաբնակեցնել՝ նայած, թե այդ հնարավորություններից որն է տեղանքին ավելի հարմար, և իրենց սնունդը թող իրենք հոգան, քանի որ ամբողջ ընթացքում անհնար է դրա՝ կառավարության կողմից ապահովումը»<sup>236</sup>:

Հետագայում՝ 1915 թ. մայիսի 23-ին, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Մոսուլի, Ադանայի և Հալեպի վիլայեթներ ու Մարաշի սանջակ ուղարկված տարբեր հեռագրերում, որոնցից ամենամանրամասնը Ջեմալ փաշային հղվածն է, ավելի մանրակրկիտ կերպով է նկարագրվում, թե հայերը որ վայրերից են դատարկվելու և ուր տեղավորվելու: Ըստ դրա՝ «(1) Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթները, (2) Ադանայի, Մերսինի, Քոզանի, Լիբանանի լիվանները՝ բացառությամբ բուն Ադանայի, բուն Սիսի և բուն Մերսինի, (3) Մարաշի սանջակը՝ բացառությամբ բուն Մարաշի, Իսքենդերունի, Բիլանի, Ջիսր-ի Շուգուրի և Անթաքիայի կազանները՝ բացառությամբ Հալեպի վիլայեթի կենտրոնական գավառի: Վերոհիշյալ բնակավայրերի գյուղերի և ավանների բնակիչ հայերը հանվելու են իրենց բնակավայրերից»<sup>237</sup>:

Աքսորված հայերը ցրվելու են տարբեր տեղերում՝ ըստ իրենց հասած շրջանների: «Նրանցից Վանի, Էրզրումի, Բիթլիսի վիլայեթներից հեռացածները, բացառությամբ Վանի վիլայեթին սահմանակից հյուսիսային հատվածի, տեղափոխվելու և վերա-

բնակեցվելու են Ուրֆայի սանջակում՝ բացառությամբ Մոսուլի վիլայեթի հարավային հատվածի և Ջոր սանջակի և կենտրոնի, իսկ Ադանային, Հալեպին ու Մարաշին ենթակա բնակավայրերից հեռացածներն էլ՝ Սիրիայի վիլայեթի արևելյան հատվածի, Հալեպի վիլայեթի արևելյան ու հարավարևելյան մասի կողմերում»<sup>238</sup>:

Մայիսի 23-ին ուղարկված այդ հեռագրերում նկարագրվում է նաև, թե ինչպես պետք է կատարվի վերաբնակեցումը: Ըստ դրա՝ «Ուղարկվելիք հայերը տեղափոխվելու են կառավարության կողմից նշանակված շրջաններ և բնակեցվելու այդ վայրերում: Վերաբնակեցման վայրեր հասած հայերը, ըստ իրավիճակի և տեղի անհրաժեշտության, տեղավորվելու են կամ գոյություն ունեցող գյուղերում և ավաններում իրենց իսկ կողմից կառուցվելիք տներում, կամ էլ՝ կառավարության կողմից նշանակվելիք վայրերում՝ նորաստեղծ գյուղերում»<sup>239</sup>: Ուշագրավ է այն հանգամանքը, որ որոշվել է թե՛ նոր բնակավայրեր հիմնել և թե՛ նույն շրջանից ուղարկված հայերին նորից ցրել:

Արված կարևոր զգուշացումն այն էր, որ «Հայերով վերաբնակեցվելիք գյուղերի և քաղաքների, ինչպես նաև՝ նոր հիմնվելիք հայկական գյուղերի սահմանները պետք է գտնվեն Բաղդատի երկաթուղուց ու հաղորդակցման կետերից առնվազն 25 կմ հեռավորության վրա»<sup>240</sup>: Նույն տեղեկությունները կրկնվելու են նաև 1915 թ. մայիսի 26-ին Ներքին գործերի նախարարության կողմից վարչապետարան ուղարկված տեքստում<sup>241</sup>:

Հայերի վերաբնակեցման հարցում ամենամանրամասն սահ-

236 BOA/DH.\$FR., nr. 52/335, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. մայիսի 12-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

237 BOA/DH.\$FR., nr. 53/94, Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային 1915 թ. մայիսի 23-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը: Նույն տեղեկությունը հաղորդվելու է նաև Մոսուլի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի և Դեր Ջորի սանջակներ (BOA/DH.\$FR., nr. 53/91, 92 ve 93):

238 Նույն տեղում:

239 Նույն տեղում:

240 BOA/DH.\$FR., nr. 53/94-1, Ներքին գործերի նախարար Թալեաթից չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային 1915 թ. մայիսի 23-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

241 Ներքին գործերի նախարարությունից 1915 թ. մայիսի 26-ին վարչապետարան ուղարկված գրությունը: Ամբողջական տեքստը տես «Աթի» պարբերականի 1920 թ. փետրվարի 23-ի համարում:

մանումը կատարվում է Նախարարների խորհրդի՝ 1915 թ. մայիսի 31-ին կայացրած որոշման մեջ ու վերջինիս հիման վրա մշակված ու 15 հոդվածից կազմված հրահանգում: «Պատերազմական դրությունից և արտակարգ քաղաքական անհրաժեշտությունից ելնելով՝ այլ վայրեր տեղափոխված հայերի վերաբնակեցման ու նրանց սննդի ապահովման և այլ հարցերի վերաբերյալ հրահանգ» վերնագրով հրապարակված սույն փաստաթղթի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներում վերստին մանրամասն կերպով կարգավորվում են վերոնշյալ հեռագրում նշված հանգամանքները: Տվյալ հոդվածները հետևյալներն են. «Հոդված 4-րդ. Ստեղծված վերաբնակեցման վայրեր հասած հայերը, ըստ դրության և վայրի, տեղավորվելու են կամ արդեն իսկ գոյություն ունեցող գյուղերում ու ավաններում կառուցվելիք տներում, կամ էլ տեղական կառավարիչների կողմից որոշվելիք վայրերի նորաստեղծ գյուղերում: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվելու, որ նոր գյուղերը հիմնվեն առողջական պայմաններին համապատասխան, գյուղատնտեսությանը և զարգացմանը հարմար վայրերում: Հոդված 5-րդ. Վերաբնակեցման վայրերում գյուղ հիմնելու առումով ձեռնտու, դատարկ, անտեր և պետությանը պատկանող հողատարածք գտնվելու դեպքում վերաբնակեցման համար հարմար է հատկացնել պետության սեփականություն հանդիսացող ագարակներն ու գյուղերը: Հոդված 6-րդ. Պարտադիր պայման է, որ հայերի տեղավորվելիք գյուղերի և ավանների, ինչպես նաև՝ նոր հիմնվելիք հայկական գյուղերի սահմանները Բաղդատի երկաթուղու հետ միավորվող գծերից և մյուս երկաթուղային գծերից գտնվեն առնվազն 25 կմ հեռավորության վրա»<sup>242</sup>:

Հուլիսի 5-ին և 12-ին արքայազն հայերի բնակեցման վայրերի մասին նորանոր հրամաններ են ուղարկվում, և վերաբնակեցման սահմաններն ընդլայնվում են: Նկատելի է, որ այդ

242 Genel Kurmay Başkanlığı, *Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri 1914-1918*, Cilt I, s. 131-133, 427-431.

հրամաններում ևս կրկնվում է վերաբնակեցման վայրերի՝ երկաթուղիներից 25 կմ հեռավորության վրա գտնվելու սկզբունքը: Բացի այդ՝ պահանջվում է, որ հայերը տեղավորվեն՝ տեղի մահմեդական բնակչության համեմատ 10 տոկոսի հարաբերությունը չխախտելու պայմանով<sup>243</sup>:

Հայերի վերաբնակեցմանը վերաբերող վերջին օսմանյան փաստաթուղթը, որին պետք է անդրադառնանք, կրում է 1915 թ. հոկտեմբերի 7-ի ամսաթիվը: Սույն վավերագիրը որոշում էր նաև մինչ այդ ստեղծված ճամբարները, բնակավայրերը և դրանց վարչական կարգավիճակները: Կարևոր է, որ այս փաստաթղթում առկա տեղեկություններն ամբողջությամբ համընկնում են Ռայմոնդ Գևորգյանի՝ հայկական աղբյուրների հիման վրա

243 BOA/DH.ŞFR., nr. 54/315, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. հուլիսի 5-ին Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահի, Մոսուլի վիլայեթներ, Ադանայի լքյալ գույքի հանձնաժողովի ղեկավարությանը, Ջորի, Մարաշի, Ջանիկի, Կայսերիի, Իզմիրի սանջակներ, Հալեպի լքյալ գույքի հանձնաժողովի ղեկավարությանն ուղարկված ծածկագիր հեռագիրը: BOA/DH.ŞFR., nr. 54/308, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. հուլիսի 12-ին Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Դիարբեքի, Սվասի, Մամուրեթյուպահի, Ուրֆայի, Կայսերիի, Ջանիկի, Իզմիրի վիլայեթներ ու սանջակներ ուղարկված ծածկագիրը: Բնակեցման վայրերի նոր սահմանները հետևյալն են. «Հայերի վերաբնակեցման համար հատկացված շրջանը տեսնված անհրաժեշտությունից հետո փոփոխվել և ընդարձակվել է: Նրանք պետք է ցրվեն ու բնակեցվեն 1- Մոսուլի վիլայեթի հարավային և արևմտյան շրջանում՝ ներառյալ անգամ Քերքյուքի սանջակի՝ Իրանի հետ սահմանից 80 կմ հեռավորության վրա գոյություն ունեցող ավանները և գյուղերը: 2- Ջորի սանջակի հարավում ու արևմուտքում՝ Դիարբեքի սահմանից 25 կմ-ը և Խաբուր ու Եփրատ գետերի հովիտներում գտնվող քաղաքները ներառյալ: 3- Բացի հյուսիսային հատվածից՝ Հալեպի վիլայեթի արևելքում ու հարավում և հարավ-արևմուտքում գտնվող բոլոր գյուղերում և ավաններում ու Սիրիայի վիլայեթի բոլոր գյուղերում ու ավաններում՝ Հավրանի և Քերեքի սանջակները ներառյալ, որոնք գտնվում են երկաթուղային գծերից 25 կմ հեռավորության վրա: Նրանք պետք է կազմեն այդ վայրերի մահմեդական բնակչության 10 տոկոսը»:

հաղորդած տեղեկությունների հետ: Փաստաթղթում «Հալեպը, Քաթման, Մյուսլիմեն, Սուրուչը, Ռայս-ուլ-Այնը» որոշված են որպես կենտրոնացման վայրեր, «Ռաքքան, Խառանը, Դեր Զորը»՝ վերջնական բնակավայրեր, իսկ «Դեյրյուկիաֆը, Մեսքենեն, Էբու Հյուրեյրեն, Համամը, Սըհիհյեն, Մադեն Շերիասըն, Թիբնին»՝ անցումային կետերի կանգառներ: Բոլոր ճամբարներն ու բնակավայրերը ղեկավարվելու էին «Հալեպի, Մեսքենեի, Դեր Զորի և Ռաքքայի» միջոցով<sup>244</sup>:

Սույն փաստաթղթում թեև ճամբարների և բնակավայրերի անվանումներն ամբողջական չեն, բայց այնուամենայնիվ դրանք կարևոր տեղեկություններ են հաղորդում մեզ: Ռայմոնդ Գևորգյանը հրապարակել է այդ բնակավայրերի, հատկապես ճամբարների անվանումների մի ամբողջ ցանկ: Այդ ճամբարները կարելի է ընդգրկել երեք հիմնական խմբերում: Օսմանիյեից մինչև Հալեպ գտնվող, ինչպես նաև՝ Հալեպի հյուսիս-արևմուտքում մնացած ճամբարները (Ըսլահիյե, Մամուրա, Ռաջո, Քաթմա, Ազազ և այլն), Հալեպի հյուսիսում և շրջակայքում գտնվող ճամբարները (Բաբ, Սեբիլ, Քարլըք, Լալե, Քասըղդիս, Մարրա, Մունբուժ) և Եփրատ գետի ափի երկայնքով ստեղծված (Մեսքենե, Դիփսի, Աբուհարար, Համամ, Սեբքա, Ռաքքա, Դեր Զոր և Մարաթ) ճամբարները<sup>245</sup>:

Այս ճամբարների մեծ մասը տարանցիկ ճամբարներ էին կամ նախատեսված էին հայերի համար:

244 BOA/DH.EUM.,VRK.15/71-1-6, Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրեն Շյուքրյու Քայայից 1915 թ. հոկտեմբերի 8-ին Ներքին գործերի նախարարությանն ուղարկված ծածկագիր հեռագիրը:

245 Ճամբարների մասին ավելի մանրամասն տե՛ս **Raymond Kevorkian, Soykırımın İkinci Safhası**, էջ 43-90; **Raymond Kevorkian, The Armenian Genocide: A Complete History**, էջ 630-688:

## Վերաբնակեցման վերաբերյալ որոշ դիտարկումներ

Թե՛ հայկական աղբյուրներից և թե՛ օտարերկրյա դիվանագետների զեկույցներից կարելի է հասկանալ, որ սկզբնական ամիսներին Սիրիա հասած առաջին հայկական քարավանների համար վերաբնակեցման աշխատանքներ են կատարվել: Ինչպես երևում է նաև վերոնշյալ օսմանյան փաստաթղթերից, դա տեղի էր ունենում կամ հին բնակավայրերում (գյուղերում և փոքր ավաններում) տեղավորվելու, կամ էլ նրանց կողմից առավելապես ճամբարների տեսքով նոր բնակավայրեր հիմնելու միջոցով: Այդ բնակավայրերում կազմավորված նոր հայկական համայնքների մասին հնարավոր է բազմաթիվ տեղեկություններ գտնել թե՛ դեսպանական զեկույցներում և թե՛ հայերի հուշերում: Օրինակ՝ 1915 թ. նոյեմբերի 11-ին Հալեպի արևելյան շրջան կատարած ուղևորությունից վերադարձած մի գերմանացի պաշտոնյա այս տեղեկություններն է հաղորդում. «Սաբխան [Սեբքա/Ռաքքա]... առաջին բնակավայրն է: Նախկինում մի քանի հարյուր բնակչություն ուներ, իսկ հիմա ունի 7000 հոգի (գավառակի կառավարչի խոսքերն են)... Նոր բնակավայրը տարածվում է լեռան գագաթին... Երկար ժամանակ խճաքարով էր լեցուն... 100 տուն է բարձրանում... Շուտով 250 տան շինարարությունն էլ է ավարտված լինելու... Շատերը դեռ վարձու տներում են մնում»:

Նման դիտարկումներ են արվում նաև հետագայում մահվան կենտրոն դարձած Դեր Զորի վերաբերյալ. «Բացառությամբ այն դեպքերի, երբ կյանքից նախընտրում են մահը, ղեկավարները մեծ բժախնդրությամբ մաքրում են պողոտաների բոլոր անկյունները, Սաբխայի նման՝ նոր թաղամասեր են կառուցվում, մարդկանց դրամ, հաց և այլուր է բաժանվում»<sup>246</sup>: Գերմանիայի հյուպատոս Վիլհելմ Լիթթենի կողմից Դեր Զորի ներկայաց-

246 DE/PA-AA/R 14089, Հալեպի հյուպատոս Ռյույերից վարչապետ Բեթման Հուվեզին 1915 թ. նոյեմբերի 16-ին ուղարկված զեկույցին կից՝ բժիշկ կապիտան դոկտոր Սխախտի՝ 1915 թ. նոյեմբերի 11-ի զեկույցը:

ված պատկերն ավելի վարդագույն է. «Հայերն ամբողջությամբ վայելում են իրենց ազատությունը: Կարողանում են անել այն, ինչ ուզում են, ինչպես, օրինակ, ուտելիքի հարցում, քանի որ ստիպված են իրենք գնել այն: Դրամ չունեցողը ոչ մի բան չի կարող առնել»<sup>247</sup>:

Նման տեղեկություններ հնարավոր է գտնել նաև հայկական աղբյուրներում: 1915 թ. մայիս ամսին, երբ առաջին քսորյալները հասան Հալեպ, նահանգապետարանից ստացված պաշտոնական թույլտվությամբ Հալեպի եկեղեցու շրջակայքում մի Գաղթականների կոմիտե է հիմնվում: Մինչև 1917 թ. գործած այդ կոմիտեի արձանագրություններից կարևոր տեղեկությունների ենք հասու դառնում այն «բնակեցման քաղաքականության» վերաբերյալ, որը ձգտում էին կիրառել հատկապես 1915 թ. ամառային և աշնանային ամիսներին<sup>248</sup>:

Մեկ այլ կարևոր փաստ է այն, որ կառավարության իրավասունները մասնակցում էին Գաղթականների եկեղեցական կոմիտեի ժողովներին: Օրինակ՝ 1915 թ. հունիսի 17-ին նման մի ժողովի մասնակցած կառավարության պաշտոնյան կոմիտեից պահանջել է երկկողմանի ծնողագուրկ երեխաների ցանկը, և կոմիտեն տվել է պահանջված տեղեկությունները: Այդ ժամանակաշրջանում Հալեպում որբանոցներ էին բացվել թե՛ կառավարության, թե՛ Հայոց եկեղեցու և թե՛ այլ բարեսիրական

կազմակերպությունների կողմից: Հալեպի եկեղեցու հիմնածորբանոցը շարունակել է գործել մինչև 1917 թ. սկիզբը<sup>249</sup>:

Ինչպես վերևում նշեցինք, Հալեպ առաջին անգամ Չուկուրովայի շրջանի հայերն են հասել, որոնք անմիջապես ցրվել են շրջակա գյուղերում և ավաններում: Գերմանական փաստաթղթերում նույնպես տեղեկություններ կան առ այն, որ Չուկուրովայի հայերն առաջինն են հասել այդ շրջան, և որ հրաման է տրվել նրանց ցրել Հալեպի գյուղերում<sup>250</sup>: Գաղթականների եկեղեցական կոմիտեի անդամները գնացել են նաև այդ բնակավայրեր և աշխատել այդ վայրերին ևս օգնության հասնել: Օրինակ՝ Մունժուր և Բաբ շրջաններ այցելած կոմիտեի անդամները հաղորդել են, թե չնայած կառավարության՝ այս վայրին հատկացրած օգնությունը լիովին բավարար չէ, սակայն «արժանի է դրվատանքի»: Մունժուրում գտնվող հայ քսորյալներն իրենց գոհունակությունն են հայտնել գավառապետից և տեղի չերքեզ բնակչությունից<sup>251</sup>: Որոշվում է Մաարայում բնակչության պատասխանատու օսմանյան պաշտոնյա Նևրուզ փաշային շնորհակալական նամակ գրել՝ հայ գաղթականների հանդեպ ցուցաբերված «խնամքի և պաշտպանության» համար<sup>252</sup>: Կոմիտեի զեկույցներում նշված է, թե Իդքիլի շրջան բերված հայերը կառավարության կողմից տեղավորվել են «հարմար տներում»<sup>253</sup>: Սակայն այդ բոլոր վայրերում կառավարության օգնությունը

247 DE/PA-AA/R14090, Հյուպատոսարանի պաշտոնյա Լիթթենից 1916 թ. փետրվարի 6-ին ուղարկված զեկույցը, որը տեղ է գտել Հալեպի հյուպատոս Ռյուլերից վարչապետ Բեթման Հոլվեգին 1916 թ. փետրվարի 9-ին ուղարկված զեկույցում:

248 Տեղեկությունները վերցված են **Վահրամ Շեմմասյանի** "Humanitarian Intervention by the Armenian Prelacy of Aleppo During the First Months of the Genocide" վերնագրով անտիպ հոդվածից: Իմ շնորհակալությունն եմ հայտնում Վահրամին՝ այս չափազանց կարևոր աշխատությամբ ինձ հետ կիսվելու և դրանից օգտվելու հնարավորություն տալու համար: Էջերի համարները տրված են՝ ըստ իմ ձեռքի տակ գտնվող տեքստի:

249 Նույն տեղում, էջ 10: Առաջին աշխարհամարտի ամբողջ ընթացքում թե օսմանյան կառավարության և թե բարեգործական կազմակերպությունների կողմից բացված որբանոցների մասին բազմաթիվ ուսումնասիրություններ կան: Այս թեմայի վերաբերյալ ամենամանրամասն եռահատոր աշխատությունը պատկանում է **Լիպարիտ Ազատյանին**: Տե՛ս «Հայ որբերը Մեծ եղեռնի», տպարան «Ապրիլ», Լոս Անջելես, Կալիֆորնիա, 1995:

250 DE/PA-AA/BoKon/169, Հալեպի հյուպատոս Ռյուլերից վարչապետ Բեթման Հոլվեգին 1915 թ. հունիսի 3-ին ուղարկված զեկույցը:

251 **Vahram L. Shemmassian**, "Humanitarian Intervention", էջ 17:

252 Նույն տեղում, էջ 20:

253 Նույն տեղում, էջ 18-19:

բաժանելու հարցում նկատելի է անկարգություն և ծրագրի բացակայություն<sup>254</sup>:

Ռայմոնդ Գևորգյանը ևս նմանատիպ տեղեկություններ է հաղորդում Ռաքքայի, Ռաս-ուլ-Այնի և Դեր Զորի մասին: Ռայմոնդը նշելով, թե Ռաքքայում Հայոց պատրիարքարանի և ամերիկյան ու շվեյցարական կազմակերպությունների կողմից օգնություն է բաժանվել, հայտնում է նաև, որ մյութեսարիֆը կառավարական օժանդակություն է ստացել՝ մի քանի հազար աքսորյալների տեղավորելու համար: Մի խումբ հայեր «...մի քանի ամսվա ընթացքում կարողացել էին առևտրական կամ մանր արհեստագործական խանութներ բացել... [Հայերը] մինչև 1916 թ. հունիս ամիսը մի կերպ նորմալ կյանքի պայմաններ գտան և, անկասկած, այնպիսի զգացումի փարվեցին, թե կարծես այստեղ կարող էին ընդմիշտ ապրել»<sup>255</sup>:

Դեր Զորում ևս 15 հազարի չափ հայեր էին տեղավորվել քաղաքում, և ինչպես Ռաքքայում, այստեղ ևս... մյութեսարիֆ Ալի Սուաթ բեյի կողմից աջակցություն ստանալով՝... չէին հապաղել աշխուժացնել տեղի առևտուրն ու արհեստները»<sup>256</sup>: 1916 թ. ամռանը Ցեղասպանության երկրորդ ալիքը կազմակերպելու համար Դեր Զորի նորանշանակ մյութեսարիֆ Սալիհ Զեքին ապշահար է մնացել այն տեսարանից, որին ականատես է դարձել այստեղ գալով: Մի ականատեսի հաղորդումների համաձայն՝ Սալիհ Զեքին «...կատաղեց, երբ տեսավ հատկապես շուկան և այստեղ հայերի զարգացող վիճակը: Վերջիններս այս վայրը մի իսկական Հայաստանի էին վերածել, ինչպես Դամասկոսում, Համմայում և Հումուսում: Եւ շուկայի մեծ մասը նրանց ձեռքում էր»<sup>257</sup>:

Դրությունը չէր տարբերվում նաև Դեր Զորին ենթակա Ռաս-

254 Նույն տեղում, էջ 18:

255 Raymond Kevorkian (ed), *L'extermination des déportés arméniens*, 36.

256 Նույն տեղում, էջ 38:

257 Նույն տեղում:

ուլ-Այնում: Ըստ 1914 թ. օսմանյան մարդահամարի՝ 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո նաև 20-30 չեչեն ընտանիքի կողմից բնակեցված Ռաս-ուլ-Այնի բնակչությունը 2.667 հոգի էր: Հայ աքսորյալների՝ այստեղ հասնելուց հետո այս վայրը վերածվել էր մի ճամբարի, որում 50 հազար մարդ էր ապաստանել: «Մինչև 1916 թ. փետրվար ամիսը այդ պաշտոնում մնացած շրջանի կայմական Ցուսուֆ Զիյա բեյը... թույլ տվեց նման հնարավորություն ունեցող աքսորյալներին՝ ապրել քաղաքում ու նաև զբաղվել մանր առևտրով... Չորս ամսվա ընթացքում՝ 1915 թ. փետրվարից մինչև 1916 թ. վերջը, այդ ճամբարը, նման ոճի այլ հաստատությունների հետ համեմատած, ցուցաբերեց գրեթե նորմալ համարվող պայմաններով գործունեություն»<sup>258</sup>:

Ստամբուլում հայերենով հրատարակվող «ժամանակ» թերթի խմբագիրներից Երվանդ Օտյանի՝ իր աքսորի տարիների մասին հուշերում Համայի վերաբերյալ հաղորդումները ևս չեն տարբերվում նախորդներից. «Շուկայի խանութների գրեթե կեսը հայերի ձեռքում էր: Արաբների խանութների մեծ մասը փակվել էր, քանի որ նրանք վերցվել էին զինվորական ծառայության: Բազմաթիվ հայ նպարավաճառներ, մսագործներ, մթերավաճառներ, մանրավաճառներ, արդուզարդ վաճառողներ, ինչպես նաև՝ վարսավիրներ, կոշկակարներ, ատաղձագործներ, ատամնաբույժներ, լուսանկարիչներ, դեղագործներ, հացթուփներ, դերձակներ, դարբիններ [կային]: Համայում առաջին լուսանկարչատունը հայերն էին բացել: Առաջին անգամ ռեստորան (2 հատ) բացած անձինք ևս հայ էին»<sup>259</sup>:

Հետագայում այդ ճամբարները կամաց-կամաց փակվելու էին՝ հատկապես որպես մի նոր ժամանակաշրջանի հետևանք, որը մեկնարկելու էր 1915 թ. նոյեմբերից:

258 Նույն տեղում, էջ 30-31:

259 Yervant Odian, *Accursed Years: My Exile and Return from Der Zor, 1914-1919*, Gomidas Institute, Լոնդոն, 2009, էջ 106.

## Սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունը չի կարող չընդգրկել մահվան դեպքերը

Այստեղ հարկ է կանխել մի թյուրիմացություն: Այն փաստը, որ սկզբում գործադրվել է սահմանափակ վերաբնակեցման քաղաքականություն, չի նշանակում, թե Սիրիա հասած գաղթականների վիճակը լավ է եղել, կամ՝ մահեր չեն գրանցվել: Ճիշտ է, մինչև 1916 թ. մարտ ամիսը Սիրիայում զանգվածային կոտորած չի եղել, բայց սովը և հատկապես համաճարակային հիվանդություններն իսկական կոտորածի էին նման: Այդ պատճառով սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունը հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության մի մասն է, և այն պետք է ընկալվի միայն այդ բնաջնջման գործընթացի համատեքստում: Հիմնված ճամբարներին և բնակավայրերին մի թեթև հայացք գցելը մեզ բավարար կլինի՝ դրանում համոզվելու համար:

Օրինակ՝ Դեր Ջորի մասին վերոնշյալ վարդագույն պատկերը ներկայացրած հյուպատոս Լիթթենը Դեր Ջորի և Սաբհայի (Սեբ-քա?) միջև ընկած շրջանը բնութագրում է որպես «դիակների տեղ»: Գերմանացի բժիշկը, որի դիտարկումները բերեցինք վերևում, հաղորդում է, թե Դեր Ջորում աշխատած մի կառավարական բժիշկ իրեն ասել է, որ օրական շուրջ 150-200 մարդ է մահանում<sup>260</sup>: Վերևում Դեր Ջորի մյուսթեսարիֆ Ալի Սուաթի մասին դրական արտահայտված Աղազարյանը հետևյալ տեղեկություններն է հաղորդում 1915 թ. օգոստոսի վերաբերյալ. «Դեր Ջորից դեպի անապատ գաղթը սկսվել էր առանց որևէ փոխադրամիջոցի: Քարավանները տարվում էին մինչև Անե և Մոսուլ: Անապատը հետզհետե սկսել էր լցվել հայերի դիակների հոտով: Քաղաքում համատարած էին վիրավորանքն ու ստո-

րացումը: Շուկա գնացող ամեն հայի համար ծեծը, թուքումուրը և հայիոյանքն անխուսափելի էին դարձել: Ամեն տարիքի և տեսակի հայեր, տներ տարվելով, մինչ երեկո անվճար և սովահար աշխատեցվում էին: Մեզ վիճակվել էր ստրկությունից էլ վատթար մի կյանք»<sup>261</sup>: Վիճակն ավելի վատ էր ավանի գրեթե կողքին՝ գետի մյուս ափին հիմնված համակենտրոնացման ճամբարում. «Օրական 300-350 մահ էր գրանցվում: Նրանց դիակները կամ ջուրն էին թափում, կամ էլ բնական փոսերը լցնելով՝ հողով ծածկում: Կային մայրեր, ովքեր երեխաների դիակները կրծքներին՝ օրեր շարունակ իրենց մահվանն էին սպասում կամ գնում, մահացածների փոսերի մոտ պառկում»<sup>262</sup>:

Որպես համակենտրոնացման ճամբարներ ստեղծված վայրերում ևս պատկերն այլ չէր: Հալեպի հյուպատոս Ռյոսլերը հայտնում է, թե իրեն փոխացնվել էր, որ շրջանում նշանավոր համակենտրոնացման ճամբարներից մեկը եղող Բաբում 1916 թ. հունվարին 2 ու կես օրում 1.029 հայ էր մահացել<sup>263</sup>:

Դրությունը չէր տարբերվում նաև մյուս ճամբարների վիճակից, որի մասին կարելի է մանրամասն տեղեկություններ քաղել հատկապես հայկական աղբյուրներից: Այս վայրերում բազմաթիվ մահեր են գրանցվում այնպիսի հիմնական պատճառներով, ինչպիսիք են ուտելիքի պակասը, համաճարակային հիվանդությունները, անօթևան լինելը:

Եթե մի թեթև հայացք գցենք արևմուտքից դեպի արևելք ձգվող ճամբարներին, ապա կտեսնենք, որ, օրինակ, Օսմանիյեից կես ժամվա հեռավորության վրա գտնվող Մամուրա ճամբարում, որը 1915 թ. օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին միջինը տեղավորել է մոտավորապես 80 հազար հայի,

261 Մ. Աղազարեան, Աքսորականի յուշեր, էջ 14-15:

262 Նույն տեղում, էջ 16:

263 DE/PA-AA/R14090, Հյուպատոսարանի պաշտոնյա Լիթենի՝ 1916 թ. փետրվարի 6-ի զեկույցը, որը տեղ է գտել Հալեպի հյուպատոս Ռյոսլերից վարչապետ Բեթման Հովվեգին 1916 թ. փետրվարի 9-ին ուղարկված զեկույցում:

260 DE/PA-AA/R 14089, բժշկական ծառայության կապիտան դոկտոր Սխախթի՝ 1915 թ. նոյեմբերի 11-ի զեկույցը, որը կցված է Հալեպի հյուպատոս Ռյոսլերից վարչապետ Բեթման Հովվեգին 1915 թ. նոյեմբերի 16-ին ուղարկված զեկույցին:

«Ամեն օր 600-700 հոգի էր մահանում... Հանգուցյալներին մեկը մյուսի վրա էին դարսում՝ առանց թաղելու: Ամբողջ շրջանը նրանցով էր լցված»<sup>264</sup>:

Դրությունն առանձնապես չէր տարբերվում նաև Իսլահիյե ճամբարում. մի գերմանացի միսիոներ հաղորդում է. «Իսլահիյե ճամբարն ամենացավալի բանն է, որ երբևիցե տեսել եմ... Ճամբարի մուտքին բազմաթիվ անթաղ դիակներ կան... Թաղման կոմիտեն միայն մեկ օրում 580 դիակ թաղեց»<sup>265</sup>: 1915 թ. աշնանը այս շրջանի ճամբարներում շրջած հոգևորական Պալաքյանը հետևյալն է գրում Իսլահիյեի մասին. «Այնպիսի օրեր եղան, երբ մարդիկ տասնյակհազարավոր վրանների տակ ոչ թե տանյակներով, այլ՝ հարյուրներով էին մեռնում: Այլևս առողջ մարդ չէր մնացել, որպեսզի դիակները հավաքեր ու թաղեր»<sup>266</sup>:

Ռաջո, Քաթմա և Ազազ ճամբարներում «Խմբված դիակներն իրար վրա էին դարսված կտորներից ստեղծված վրանների տակ... Ամեն կողմում դիակներ կային...»: Արամ Անտոնյանը նշում է, թե այդ ճամբարներում 1915 թ. ամբողջ աշնանը 60 հազար հոգի է մահացել տիֆից ու սովից<sup>267</sup>: Տարբեր չէր նաև Բաբ ճամբարի վիճակը: 1915 թ. նոյեմբերի վերջին այս ճամբար եկած Տաճատ Արսլանյանը փոխանցում է. «Վրանների մոտ գտնվող բազմաթիվ մեռյալներ և հոգի սովողներ ընդամենը դուրս էին նետվում այն գերեզմանափորների կողմից, որոնց հայ աքսորյալների միջից ընտրել էին պաշտոնյաները... Այստեղ վայրեր կային, որոնք որպես գերեզման էին օգտագործվում մեռյալների համար, որոնցից շատերը՝ կիսամերկ կամ մորեմերկ, այդ վիճակում օրերով թողնված էին, շորերը հանված և անգերեզման: Աստված իմ, այդ ինչ տեսարան էր...»<sup>268</sup>:

264 Raymond Kevorkian (ed.), *L'extermination des déportés arméniens*, էջ 19.

265 Նույն տեղում, էջ 20:

266 Նույն տեղում:

267 Նույն տեղում, էջ 28:

268 Նույն տեղում, էջ 87:

Բաբ ճամբարում մեռյալներին հնարավորինս հարգալից կերպով և սովորույթի համաձայն թաղելու պարտականությունն ստանձնած Տաճատ Արսլանյանը հաղորդում է, որ 1915 թ. վերջից մինչև 1916 թ. փետրվարի վերջը մոտավորապես 50-60 հազար հայ է վախճանվել<sup>269</sup>: Դրան նման էր նաև Մեսքենեի համակենտրոնացման ճամբարի վիճակը: Ամերիկյան ֆիրմայում պաշտոնավարող մի գերմանացի, երբ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին այցելում է այդ շրջանը, տեղեկանում է, որ ճամբարի բաց լինելու ամբողջ ընթացքում 60 հազարից ավելի մարդ է մահացել և այնտեղ թաղվել<sup>270</sup>:

Դիփսի ճամբարը բաղկացած է երկու գրեթե հակադիր բաժիններից: Հիմնական մեծ բաժինն այն հատվածն է, որտեղ չքավորներն են մնում, և գրեթե բոլոր մարդիկ հիվանդ են կամ մահամերձ: Ճամբարն արդեն իսկ հիվանդանոց է կոչվում: Ամբողջ ճամբարը լեցուն է մարդու կղկղանքով և աղբով: Դիակները մեջտեղում փտում են, և անհնար է ճամբարում բնակվել՝ հոտի և կեղտի պատճառով: Մարդիկ գիտակցելով, որ մեռնելու են, միակ ելքը տեսնում են երեխաներին վաճառելու մեջ<sup>271</sup>:

Վերոնշյալ Ռաս-ուլ-Այն ճամբարում, որի պայմանները դրական էին գնահատվել, 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. փետրվար մահացած մարդկանց թիվը շուրջ 14 հազար է: Սիրիայի ճամբարների թեմայի վերաբերյալ ամենամանրամասն ուսումնասիրության հեղինակ Ռայմոնդ Գևորգյանը նշում է, որ 1915 թ. աշնան ամիսներից մինչև 1916 թ. փետրվար Սիրիա հասած 850

269 Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History*, էջ 636.

270 DE/PA-AA/R14094/A 28162; Հալեպի հյուպատոս Ռյոսլերից վարչապետ Բեթման Հոլվեգին 1915 թ. սեպտեմբերի 27-ին ուղարկված նամակը:

271 BNU/Andonian, Folder 57: Dipsi, "The Deportations of the Armenians of Dipsi". Հատվածը մեջբերել է **Խաչիկ Մուրադյանի**՝ "Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1917" վերնագրով անտիպ առենախոսության 5-րդ գլխում: Մեր շնորհակալությունն ենք հայտնում ԲՆ. Մուրադյանին՝ իր աշխատության մեջ տեղ գտած այս և ստորև բերվելիք տեղեկություններն օգտագործել թույլ տալու համար:

հազար հայ աքսորյալներից մոտ 300 հազարը վախճանվել է Սիրիայի ճանապարհներին կամ ճամբարներում<sup>272</sup>:

Օսմանյան փաստաթղթերում ևս կարելի է գտնել այն փաստը, որ սովն ու հիվանդությունները մեծաթիվ զոհերի պատճառ են դարձել հայերի շրջանում: Հոկտեմբերի 17-ին Սիրիայի վիլայեթ հղված մի հեռագրում նշվում է, թե լուր է ստացվել, ըստ որի՝ շրջանում գտնվող գաղթականների մեջ այնպիսի հիվանդությունների պատճառով, ինչպիսիք են տենդը, տիֆը և դիզենտերիան, օրական առնվազն 70-80 հոգի է մահանում, և որ այդ ամսաթվին Հալեպում գտնվող՝ Ներքին գործերի նախարարությանը ենթակա Գաղթականների և աշիրեթների վերաբնակեցման տնօրեն Շյուքրյու բեյի հետ կապ հաստատելով՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն<sup>273</sup>: 1915 թ. հոկտեմբերի 26-ին Հալեպ ուղարկված մի հեռագրում նույնպես հաղորդվելով, թե լուր է ստացվել առ այն, որ «Հայերի քարավաններում ամեն օր սովից մահվան դեպքեր են գրանցվում», տեղեկացվում է, թե «նրանց սննդի ապահովման համար... դրամ է առանձնացվել չորրորդ բանակի հրամանատարության կողմից»<sup>274</sup>: Ինչպես ստորև կտեսնենք, այդ համաճարակային հիվանդությունները Հալեպ քաղաքում գտնվող ոչ տեղացի հայերին աքսորելու և շրջակա ճամբարները դատարկելու պատճառներից մեկն են լինելու:

272 Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History*, էջ 693: Մեկ առ մեկ ամեն մի ճամբարում մահացածների թվի մասին տե՛ս Raymond Kevorkian, *Soykırımın İkinci Safhası*, էջ 110-112.

273 BOA/DH.SFR., nr. 57/71, Ներքին գործերի նախարարությունից Սիրիայի վիլայեթ 1915 թ. հոկտեմբերի 17-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

274 BOA/DH.SFR., nr. 57/110, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. հոկտեմբերի 26-ին Հալեպի վիլայեթ հղված ծածկագիր հեռագիրը:

## Միջանկյալ ամփոփում

Այստեղ ցանկանում ենք բացատրել, որ այդ տարածված մահերը պետք է դիտվեն որպես վերոնշյալ սահմանափակ վերաբնակեցման քաղաքականության մի մաս: Սկզբում գործադրված սահմանափակ վերաբնակեցման քաղաքականության փաստը չի կարող որպես փաստարկ օգտագործվել առ այն, թե հայերի դեմ կատարվածը ցեղասպանություն չի եղել, ինչպես հաճախակի դա պնդվում է թուրքական պաշտոնական թեզերում: Սակայն ճիշտ չէ նաև Ցեղասպանությունը քննել միայն որպես ֆիզիկական բնաջնջում և այդ պատճառով չանդրադառնալ այդ վերաբնակեցման քաղաքականությանը: Ինչպես վերևում նշեցինք, մինչ օրս Հայոց ցեղասպանության թեմայով գրված աշխատություններում քանի որ Ցեղասպանությունն ընկալվել է որպես ֆիզիկական բնաջնջում, կամ ընտրել են վերաբնակեցման քաղաքականության մասին ընդհանրապես չխոսելու ուղին, կամ էլ այն մեկնաբանվել է միայն «բարի մտադրությունների տեր տեղական կառավարիչների» առկայությամբ: Անշուշտ, ինչպես դա տեսնում ենք վերոհիշյալ Ալի Սուաթի օրինակում, որոշ տեղական իշխանավորների բարի մտադրությունները կասկած չեն հարուցում, սակայն այստեղ իմ պնդումը վերաբերում է նրան, որ սահմանափակ վերաբնակեցումը դիտվի որպես Հայոց ցեղասպանության անքակտելի կառուցվածքային մի մաս:

Վերաբնակեցման վայրերում և, հատկապես, ճամբարներում մահերի թվի աճը նաև անմիջական առնչություն ունի Սիրիա հասած հայ աքսորյալների թվի ավելացման հետ: Բացի այդ՝ 1915 թ. հոկտեմբերի վերջից և նոյեմբերի սկզբից քաղաքականության փոխվելը և Հալեպի շրջանում գոյություն ունեցող ճամբարները դատարկել սկսելը ևս մահվան դեպքերի աճի հետևանք եղան: Այդ պատճառով, օրինակ, եթե 1915 թ. ամառային ամիսներին Սիրիայում չի կարելի խոսել մեծ կորուստների մասին, ապա զարմանք չի հարուցում այն փաստը, որ հիմնական



կորուստները գրանցվել են 1915 թ. աշնանային և 1916 թ. գարնանային ամիսներին: Արդեն իսկ 1916 թ. մարտ-ապրիլ ամիսներին երկրորդ բնաջնջման ալիքն է բարձրանալու, և հատկապես Դեր Զորի անապատներում շուրջ 200 հազար հայեր են ոչնչացվելու:

Այստեղ ծագում է չափազանց կարևոր մի հարց. ինչի համար են հրաժարվել այդ սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունից: Անհնար է մեր կողմից այստեղ այդ հարցը մանրամասն քննելը, և սույն թեման մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է: Սակայն ամփոփ կերպով անդրադառնալու դեպքում կանդենք, որ թե՛ սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությանը դիմելու և թե՛ հետագայում դրանից հրաժարվելու հետևում մի ռացիոնալ պատճառ է առկա: Միություն և առաջադիմություն կուսակցությունը հաշվարկում էր, թե Սիրիա կհասնի սահմանափակ թվով հայություն, որն էլ կբնակվի նոր վայրերում՝ առանձնապես խնդիր չհարուցելով և չանցնելով տեղի մահմեդական բնակչության 10 տոկոսը: Այն փաստը, որ Սիրիա հասած հայերի թիվն ակնկալվածից շատ ավելին էր, ինչպես նաև՝ այդ մարդկանց վերաբնակեցման դեպքում մի նոր «Հայկական հարցի» ի հայտ գալու հավանականությունը երիտթուրքական իշխանություններին մղել է հրաժարվել վերաբնակեցման քաղաքականությունից: Հատկապես 1916 թ. մարտին սկսած երկրորդ կոտորածի ալիքն անմիջականորեն կապ ունի Սիրիա հասած հայ բնակչության՝ մուսուլման բնակչության 10 տոկոսն անցնել սկսելու հետ<sup>275</sup>:

Իհարկե այս հարցում էական դեր են կատարել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են պատերազմի ընթացքը, հայերի շրջանում տարածված հիվանդությունների՝ բանակի ռազմունակությանը մեծ սպառնալիք դառնալու չափերի հասնելը,

275 Սույն խնդրի վերաբերյալ մեր առաջ քաշած թեզի մանրամասները տես *“Young Turks’s Crime Against Humanity”* վերնագրով մեր աշխատությունում, հատկապես՝ 8-րդ և 9-րդ բաժիններում:

իթթիհադականների կողմից Արևելյան Անատոլիայից հայերի աքսորը հիմնականում ավարտին հասցնելը և, հատկապես, Սիրիայով զբաղվելու համար հազիվ 1915 թ. օգոստոսին հնարավորություն ունենալը: Սույն թեման սպասում է իր երիտասարդ ուսումնասիրողներին:

### Ուծացման քաղաքականության հիմքերը

Սահմանափակ վերաբնակեցման քաղաքականության ժամանակաշրջանում արդյոք բռնի ուծացման քաղաքականություն գործադրվել է, որը, ինչպես նշեցինք, տևել է 1915 թ. մայիսից մինչև նոյեմբեր: Այս հարցի պատասխանը դրական է: Սակայն այդ ուծացումը չի ներառում բռնի կրոնափոխությունը: Ձեռքի տակ եղած փաստաթղթերից ստացել ենք հետևյալ պատկերը. նույն շրջանից իրենց աքսորավայր հասած հայերը, ավելի փոքր մասերի բաժանվելով, վերստին ցրվել են կամ տարբեր գյուղերում, կամ էլ նորաստեղծ բնակավայրերում: Հայերին թույլ է տրվել պահպանել սեփական լեզուն, անգամ նոր վերաբնակեցման վայրեր այցելելու թույլտվություն է տրվել քահանաներին, որպեսզի ժողովուրդը կարողանար իր կրոնական պարտականությունները կատարել<sup>276</sup>: Այսինքն՝ բռնի ուծացումը, ըստ էության, արտահայտվում էր հայոց լեզվի օգտագործման ու կրթության ոլորտներում, բայց կրոնափոխություն չէր պարտադրում:

Աքսորավայրերում գործադրված քաղաքականության հիմնական գծերը կարելի է նկատել 1915 թ. հունիսի 23-ին Մոսուլի և Դեր Զորի շրջաններ ուղարկված մի հեռագրում: Վերջինում

276 Այդ թույլտվությունը տրվել է Ջեմալ փաշայի կողմից: 1915 թ. հունիս ամսվա ընթացքում Սիսի հայոց կաթողիկոս Սահակը տարբեր հանդիպումներ է ունենում Ջեմալի հետ: Վերջինս այդ հանդիպմանը թե՛ թույլ է տալիս հոգևորականներ ուղարկել և թե՛ հանդես գալիս աքսորյալների կենսապայմանները կարգավորող այլ նախաձեռնություններով: Տես *Khatchig Mouradian*, “Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1917”, գլուխ առաջին:

պահանջվում է միևնույն շրջանից եկած հայերին մասնատելով՝ զանազան վայրեր ուղարկել, երբեք թույլ չտալ, որ նոր բնակավայրերում հայկական դպրոցներ բացվեն, և պարտադրել, որ երեխաներին ուղարկեն պետական դպրոցներ: Բացի այդ՝ ըստ հեռագրի անհրաժեշտ է, որ նորաստեղծ հայկական բնակավայրերը միմյանցից գտնվեն 5 ժամ հեռավորության վրա, և որ այդ բնակատեղիները չհիմնվեն շրջակա բնակավայրերի նկատմամբ գերիշխող դիրքում և պաշտպանության հնարավորություն չընձեռեն: Նաև պահանջվում է, որ հեռագրի բովանդակությունը համապատասխան անձանց հաղորդելուց հետո ոչնչացնեն այն<sup>277</sup>:

Սույն հեռագրի վերաբերյալ հարկ է ընդգծել երեք հանգամանք: Առաջին՝ այս հեռագիրն ուղարկվել է մեր կողմից վերը բերված՝ 1915 թ. հունիսի 22-ին ամսաթիվը կրող այն հեռագրից գրեթե 3 օր հետո, որով թույլ էր տրվում կրոնափոխությունը, և այդ առումով մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ մատնացույց է անում, որ նույն օրերին (հունիսի 22-ին և 23-ին) որոշ քաղաքական որոշումներ են կայացվել: Երկրորդ՝ ուշագրավ է, որ այս հեռագրում ևս, նույն՝ հունիսի 22-ի հեռագրի նման, պահանջվում է «համապատասխան անձանց հաղորդելուց հետո ոչնչացնել»: Երրորդ կարևոր հանգամանքն այն է, որ սույն հեռագիրն ուղարկվել է նախքան աքսորյալների քարավանները՝ Սիրիա հասնելը: Այդ առումով սխալ չի լինել ասել, թե մեծ զանգվածների հասնելուց առաջ աքսորավայրերում որոշ նախապատրաստական աշխատանքներ են կատարվել:

Դրանից մեկ շաբաթ անց՝ 1915 թ. հուլիսի 1-ին, երկրորդ հեռագիրն է ուղարկվում, որն ավելի ընդգրկուն է: «Գլխավոր հրամանատարության ղեկավարության կողմից հաղորդվել է հայերին վերաբերող որոշումներին հավելել նաև ներքոհիշյալ հանգամանքները» նախադասությամբ սկսվող այդ հեռագիրը հետևյալ հրամաններն է բովանդակում. «(1) Ռուսաստանին սահմանակից Արևելյան Անատոլիայից և Զեյթունից, Սիրիայից, Ադանայից, առափնյա շրջաններից ցրված կերպով այն կողմեր տարված և տարվելիք հայերի միջև հաղորդակցումը թե՛ երկրի ներսում և թե՛ դրանից դուրս պետք է լինի թուրքերենը: (2) Նորաստեղծ հայկական շրջաններում բացարձակապես չպետք է թույլ տրվի հայկական դպրոցներ բացել, և բոլոր հայ երիտասարդներն ու երեխաները պետք է կրթվեն պետական դպրոցներում: (3) Առայժմ միայն Ստամբուլում է թույլ տրվելու հայերեն թերթեր հրատարակել, իսկ մյուս վիլայեթներում հայկական պարբերականներն արգելվելու են»<sup>278</sup>:

Սակայն նկատում ենք, որ 1915 թ. հոկտեմբերի վերջերից և նոյեմբերի սկզբներից սկսած որոշ փոփոխություններ են տեղի ունենում վերաբնակեցման քաղաքականության մեջ, ու վերջ է տրվում հատկապես Հալեպի ու շրջակայքի հայերի բնակեցմանը: Մեր ձեռքի տակ գտնվող օսմանյան փաստաթղթերից հասկանում ենք, որ երիտթուրքերը, հուլիսի վերջերից սկսած, որոշում են մինչ այդ իրենց կողմից միայն Ստամբուլից համակարգվող աքսորի հետ կապված գործերին այս անգամ Հալեպից հետևել: Հատկապես խնդիր համարվող Արևելյան Անատոլիայից հայերի աքսորի՝ ավարտին հասցված լինելը և

277 BOA/DH.ŞFR, nr 54/122, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. հունիսի 23-ին Մոսուլի վիլայեթ և Ջորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Հայ բնակչության վերաբնակեցման ընթացքում նույն կազայի և լիվայի ժողովրդին առանձին-առանձին շրջաններում տեղավորելով՝ վերաբնակեցման վայրերում թույլ չտալ հայկական դպրոցներ բացել և հարկադրել, որ երեխաները հաճախեն պետական դպրոցներ: Ուշադրություն դարձնել և ձգտել, որ հիմնվելիք գյուղերը միմյանցից գտնվեն 5 ժամանոց հեռավորության վրա և այնպիսի վայրում, որը նրանց հնարավորություն չի ընձեռի իշխելու կամ պաշտպանվելու: Հեռագիրը ոչնչացնել՝ դրա բովանդակությունն անհրաժեշտ անձանց հաղորդելուց հետո»:

278 BOA/DH.ŞFR, nr 54/261, Ներքին գործերի նախարար Թալեաթից Սիրիայի, Հալեպի և Մոսուլի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի և Ջորի սանջակներ 1915 թ. հուլիսի 1-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Սիրիայում ենթադրվածից շատ ավելի հայ աքսորյալների կուտակումը այլևս անխուսափելի են դարձնում, որ Հալեպը դառնա ցրելու կենտրոն:

Հուլիսի 29-ին Հալեպ հղված մի հեռագրում ասվում է, թե «Քանի որ հայերն ուղարկվում են տարբեր ճանապարհներով ու միջոցներով, անհնար է աքսորը կենտրոնից ղեկավարել և վերաբնակեցման վայրերն այստեղից նշանակել», և հաղորդվում, որ ըստ էության անհրաժեշտ է դարձել աքսորն իրականացնել անմիջապես շրջանի տարածքով<sup>279</sup>: Օգոստոսի 13-ին Հալեպ ուղարկված մի հեռագրում նշվում է, թե «Հայերի աքսորը ներկա պահին շարունակվում է: Հալեպի վիլայեթը որպես հանձնման կետ է ընդունվել», և շեշտվում, որ Հալեպը հռչակվում է կենտրոն, որտեղ կազմակերպվելու են հայերին ընդունելու և ցրելու գործերը»<sup>280</sup>:

Այդ որոշման համաձայն՝ Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունը մի նոր մասնաճյուղ է կազմավորում Հալեպում, և աշիրեթների ու գաղթականների վերաբնակեցման տնօրեն Շյուքրյու Քայան օգոստոսի վերջին Հալեպ է հասնում՝ այստեղի գործերը կազմակերպելու համար: Իրավիճակի մասին հաղորդվում է բոլոր վիլայեթներին ու սանջակներին<sup>281</sup>, իսկ Շյուքրյու բեյի տեղակալ է նշանակվում Արդուլահադ Նուրին<sup>282</sup>: Շրջանի ղեկավարներին հղված հեռագիր-հրամա-

նով հաղորդվում է՝ աքսորի հետ կապված գործերի առնչությամբ կապ հաստատել Շյուքրյու բեյի հետ և գործել նրանից ստացված հրամանի համաձայն<sup>283</sup>: Իսկ որոշ մյուսթեսարիֆներ հանդիպման համար հրավիրվում են Հալեպ՝ հոկտեմբերի սկզբին նախատեսված մի ժողովի մասնակցելու<sup>284</sup>:

Հենց շրջանում կայացված առաջին որոշումը կարգավորում է դեռ նոր կազմավորվող ճամբարների՝ վարչական առումով փոխառնչությունները: Դրա համար մի հրահանգ է մշակվում և ներկայացվում կառավարության հաստատմանը: Կառավարությունը հաստատում է այդ հրահանգը և Հալեպում գտնվող Շյուքրյու բեյին 1915 թ. սեպտեմբերի 20-ին ուղարկված մի հեռագրում հաղորդում, որ «Աքսորը կարգավորելու և արագացնելու մասին հրահանգը խորհրդի կողմից նպատակահարմար համարվելով՝ այն գործադրելու անհրաժեշտության մասին հաղորդվել է անհրաժեշտ վիլայեթներին և լիվաներին<sup>285</sup>»: Մեր կարծիքով խոսքը վերոհիշյալ՝ 1915 թ. հոկտեմբերի 7-ի ամսաթիվը կրող ծածկագիր հեռագրի մասին է, որը վերաբերում է այն հարցերին, թե ինչ նպատակների համար են ճամբարները հատկացվել, և ինչպես պետք է լինեն վարչական բաժանումները:

279 BOA/DH.ŞFR., nr. 54-A/167, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. հուլիսի 29-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

280 BOA/DH.ŞFR., nr. 54-A/389, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 13-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

281 BOA/DH.ŞFR., nr. 55-A/16, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 31-ին Կոնիայի, Անկարայի, Հյուդավենդիզյարի, Ադանայի, Հալեպի վիլայեթներ, ինչպես նաև՝ Իզմիրի, Էսքիշեհիրի, Քյութահիայի, Քարաիհսար-ը Սահիփի և Մարաշի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

282 BOA/DH.ŞFR., nr. 56/385, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների

և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. սեպտեմբերի 12-ին Հալեպում գտնվող Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրեն Շյուքրյու բեյին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

283 BOA/DH.ŞFR., nr. 56/69, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից Մոսուլի, Սիրիայի վիլայեթներ և Ուրֆայի, Ջորի և Այնթափի սանջակներ 1915 թ. սեպտեմբերի 18-ի ծածկագիր հեռագիրը:

284 BOA/DH.ŞFR., nr. 56/173, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից Ուրֆայի և Ջորի սանջակներ 1915 թ. սեպտեմբերի 26-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

285 BOA/DH.ŞFR., nr. 56/85, Ներքին գործերի նախարար Թալեթից Հալեպում Գաղթականների հարցերով տնօրեն Շյուքրյու բեյին 1915 թ. սեպտեմբերի 20-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Շյուքրյու բեյի՝ շրջանում կատարած աշխատանքների արդյունքում կայացվում է ևս 2 վերին աստիճանի կարևոր որոշում: Առաջինը վերաբերում է Հալեպ քաղաքում գտնվող՝ դրսից եկած «օտար» հայերի հեռացմանը և Հալեպի շրջակայքի ճամբարների դատարկմանը: 1915 թ. հոկտեմբերի 17-ին Հալեպ հղված հեռագրում հաղորդելով, թե «Գաղթականների հարցերով տնօրեն Շյուքրյու բեյի կողմից անհրաժեշտ է համարվել Հալեպում գտնվող օտար հայերին, առանց բացառություններ անելու, ուղարկել Ռաքքա, Ջոր ու Քերեք, և դա հարմար է գտել նաև նախարարությունը», պահանջվում է անհրաժեշտ պատրաստությունները տեսնել<sup>286</sup>:

Դարձյալ Շյուքրյու բեյի՝ 1915 թ. հոկտեմբերի 26-ի հեռագրից հասկանում ենք, որ այդ հարցը քննարկվել է չորրորդ բանակի հրամանատարության (Ջեմալ փաշայի) հետ, և համաձայնություն ձեռք բերվել հայերի նոր բնակավայրերի, ինչպես նաև՝ այն հարցի շուրջ, թե ինչ հարաբերակցությամբ պետք է կատարվի վերաբնակեցումը: Հեռագրում հաղորդվել է, թե «Սիրիայի վիլայեթի շրջաններում փաստաթղթով վերաբնակեցվելիք հայտնի գաղթականների վերաբերյալ քննարկում է եղել չորրորդ բանակի հրամանատարության հետ», և արդյունքում «...որոշվել է հարավից սկսած Շերիա գետի \*\*\* և \*\*\* և էլասի գետի կողմը հիմնական գիծ ընդունել, և այդ գծի արևմուտքից չանցնելով՝ հայերին բնակեցնել Շերիայում գտնվող քաղաքում և ավաններում՝ տեղի բնակչության 10 տոկոսը չգերազանցելու պայմանով»<sup>287</sup>:

286 BOA/DH.ŞFR., nr. 57/53, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. հոկտեմբերի 17-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

287 BOA/DH.ŞFR., nr. 494/109, Շյուքրյու բեյից 1915 թ. հոկտեմբերի 26-ին Հալեպից Ներքին գործերի նախարարությանը հղված ծածկագիր հեռագիրը, որում աստղանիշներով նշված հատվածներում տվյալ շրջանին պատկանող չքանակեցված տեղանունները թեև գրված են, սակայն ծածկագրի քարտուղարը ևս չի կարողացել ընթերցել ու, դրանք տառ առ տառ գրելով, նախընտրել է այդպես թողնել:

Երկրորդ կարևոր որոշումը վերաբերում է շրջանում մանրակրկիտ կերպով մարդահամար անցկացնելու հարցին: Հալեպի և Սիրիայի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի սանջակ 1915 թ. դեկտեմբերի 8-ին ուղարկված տարբեր հեռագրերում մեկ առ մեկ նշվում են այն վայրերը, որտեղ պետք է մարդահամար անցկացվի: Դրանց մեծ մասն ընդգրկում է այն տարածքները, որոնցում գտնվում են այնպիսի ճամբարներ, ինչպիսիք են Խառանը, Մաարան, Իդլիբը, Բաբը, Մենջիբը, Ռաքքան: Ձգտում են հատկապես գրանցել նաև տվյալ շրջանի քոչվոր աշիրեթներին<sup>288</sup>:

Ինչպես նախկինում նշել ենք, բնակչությանն ուղղված քաղաքականության ու վերաբնակեցման և ուժացման քաղաքականության միջև մի անմիջական կապ կա: Բնակչության մարդահամար անցկացնելու կարևոր պատճառներից մեկը շրջանում գտնվող հայերի թիվն իմանալն է և, հատկապես, ճշտելը, թե ինչպիսին է նրանց թվային հարաբերակցությունը մահմեդական բնակչության համեմատ<sup>289</sup>: Անհրաժեշտ պատրաստությունները տեսնելուց հետո հերթը հասել է Հալեպը դատարկելուն: Սկսել են դատարկել այն ճամբարները, որոնք գտնվում են Դեր Ջորի ուղղությամբ: Ներքին գործերի նախարարության արձանագրությունների մեջ առկա են կանոնավոր զեկույցներ, որոնք ուղարկվել են հունվարի վերջից սկսած՝ զանգվածաբար Դեր Ջոր հասած քարավանների և նրանց թվերի վերաբերյալ<sup>290</sup>:

288 BOA/DH.ŞFR., nr.58/231; BOA/DH.ŞFR., nr.58/230 ve BOA/DH.ŞFR., nr.59/91.

289 Այդ մասին մանրամասն տե՛ս **Taner Akçam**, *Young Turks' Crime Against Humanity* գրքի 8-րդ և 9-րդ գլուխները:

290 1916 թ. հունվարի 31, «Հալեպի ճանապարհով 1500 հայ էլ է եկել», (BOA/DH.EUM, 2.Şube, nr 69/5, Դեր Ջորի մյութեսարիֆ Ալի Սուաթից 1916 թ. հունվարի 31-ին Ներքին գործերի նախարարությանն ուղարկված ծածկագիր հեռագիրը), Դեր Ջորի մյութեսարիֆ Ալի Սուաթի՝ տարբեր ամսաթվերի ուղարկած նման այլ զեկույցներ տե՛ս BOA/DH.EUM, 2. Şube, nr 69/6, 7, 8, 9:

Ճամբարների դատարկման հետ կապված զարգացումներին կարելի է հետևել նաև գերմանական ու հայկական աղբյուրներում: Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոսլերը հաղորդում է, թե, դեկտեմբերի սկզբից սկսած, Ադանայից մինչև Հալեպ ձգվող տարածքի ճամբարներն սկսել են դատարկվել<sup>291</sup>: Նման տեղեկություններ է հայտնում նաև Ռայմոնդ Գևորգյանը՝ Արամ Անտոնյանի գրառումների վրա հիմնվելով. «1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. հունվար, Սիրիայի հյուսիսը այնտեղ աքսորված հայերից մաքրելու մասին որոշման ընդունումից հետո... մեկ առ մեկ փակվում են այն ճամբարները, որոնցից գրեթե բոլորը գտնվում են Հալեպի շրջակայքում՝ Մամուրան, Իսլահիյեն, Ռաջոն, Քաթման, Ազազը, Բաբը, Ախթերիմը, Մուսբուզը և Մառնան, իսկ այդ ճամբարներում ողջ մնացածներն ուղարկվեցին Եփրատի ճանապարհով կամ էլ՝ Ռաս-ուլ-Այն»<sup>292</sup>:

1916 թ. մարտից այս անգամ էլ սկսում են դատարկել Ռաս-ուլ-Այնի և Հալեպի արևելքում գտնվող մյուս շրջանները և հայերին այնտեղից Դեր Զոր ուղարկել: Ապրիլի սկզբին Ռաս-ուլ-Այնում մի մեծ կուտակում է լինում, և Զորի սանջակ ուղարկված հեռագրում նշվելով, թե «Լուր է ստացվել առ այն, որ Դեր Զոր ուղարկվելու համար մինչ այժմ Ռաս-ուլ-Այնում մեկտեղված հայերի քարավաններից շատ քչերն են առաքվել, իսկ մեծ մասն այդտեղ է գտնվում», պահանջվում է «դրանց... բոլորին արագ ջանքերով և կարճ ժամանակամիջոցում որոշված վայրեր ուղարկել»<sup>293</sup>:

Դատարկման գործողություններին զուգահեռ՝ հայերի ճամբարների գտնված վայրերը հայտարարվում են արգելված շր-

291 DE/PA-AA/R14090, Հալեպի հյուպատոս Ռյոսլերից կանցլեր Բեթման Հովեգին 1916 թ. փետրվարի 9-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

292 Raymond Kevorkian (ed.), *L'extermination des déportés arméniens*, էջ 24, 32-33:

293 BOA/DH.ŞFR., nr. 62/199, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. ապրիլի 1-ին Զորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

ջան: Արգելվում է տվյալ շրջանում թե՛ օտարերկրացի և թե՛ ոչ մուսուլման առևտրականների հայտնվելը՝ նպատակից անկախ: 1916 թ. փետրվարի 13-ին հղված մի հեռագրում նշվում է. «Քանի որ հարմար չի համարվել, որ հայերի ուղարկված և վերաբնակեցված վայրեր որոշ օտարերկրացիներ, այդ թվում՝ ամերիկահպատակ առևտրականներ գնան-գան, կամ էլ անգամ առևտրի նպատակով որոշ օսմանցի ոչ մուսուլմաններ շրջեն այդ տեղանքում, կառավարության կողմից պահանջվում է անվտանգության տարրերին թույլ չտալ ճամփորդել նման շրջաններում»<sup>294</sup>:

Դրան հետևած մեկ այլ որոշում կտրականապես արգելում է աքսորյալներին օգնություն բաժանելու փորձերը: Թե՛ օգնություն բաժանել ձեռնարկողները և թե՛ նման երևույթների հանդեպ աչք փակած պետական պաշտոնյաները «խստորեն կպատժվեն»<sup>295</sup>: Բռնի մահմեդականացումը, օգնության արգելումը և ճամբարների դատարկումն ու մարդկանց մահվան հետ դեմահանդիման բերելը միմյանց զուգահեռ ընթացող գործընթացներ են: Ամերիկյան դեսպանատան զեկույցն ամփոփում է այդ իրավիճակը. «Բռնի կրոնափոխությունը շարունակվում է: Տեղական իշխանություններն արգելում են օգնություն ցուցաբերել և սպառնում նման ցանկություն ունեցողներին. սովից և ուժասպառությունից գրանցված մահվան դեպքերն արագորեն ավելանում են»<sup>296</sup>: Այդ ամենը 1916 թ. ամռանը կազմակերպվելիք երկրորդ բնաջնջման ալիքի գուժկաններն են լինում:

294 BOA/DH.ŞFR., nr. 61/32, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. փետրվարի 13-ին Հալեպի, Ադանայի, Մոսուլի, Դիարբեքրի վիլայեթ և Ուրֆայի ու Զորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

295 Ներքին գործերի նախարար Թալեաթից օսմանյան բանակի գլխավոր հրամանատարությանը 1916 թ. մարտի 25-ին ուղարկված գրությունը, Genelkurmay Başkanlığı, *Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri*, Cilt 2, 5:

296 NA/RG59/867.48/420, Հոֆման Ֆիլիպից 1915 թ. սեպտեմբերի 7-ին Վաշինգտոն ուղարկված հեռագիրը, Ara Sarafian (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 541:

#### Նոյեմբերի 4-ը և դրանից հետո տեղի ունեցած դեպքերը կրոնափոխության ժամանակ

Ինչպես վերևում նշեցինք, մինչև նոյեմբերի 4-ը նոր վերաբնակեցման վայրերում տեղավորվելու ընթացքում չէին ցանկանում, որ հայերը կրոնափոխվեն, և որքանով որ տեղյակ ենք, մինչ այդ ժամանակաշրջանը որևէ պարտադրանք չի եղել<sup>297</sup>։ Դա կարելի է նկատել նաև որոշ աքսորյալների հուշերում։ Օրինակ՝ Երվանդ Օտյանը հայտնում է, որ 1915 թ. աշնանը Սիրիայի նահանգապետ և չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի հրամանով հավաքել են հատկապես արհեստավոր հայերին և տեղավորել Դամասկոսի և Համայի շրջանում։ Ինքը ևս մի մասնագիտություն է հորինում և ընտրվածների մեջ ընդգրկվում. «Որպես արհեստավոր՝ սկսելու ենք աշխատել կառավարությանը պատկանող գործարաններում։ Հատկապես դերձակ, կոշկակար, ծուլող վարպետ, ատաղծագործ և ջուլիակ են պահանջում»<sup>298</sup>։ Օտյանի գրածներից հասկանում ենք, որ գործի ընդունված անձանցից չէին պահանջում կրոնափոխ լինել։ Դա լինելու էր հետագայում։

1915 թ. նոյեմբերի 4-ի որոշմամբ թույլ է տրվում, որ ցանկացողները մահմեդականություն ընդունեն։ Համապատասխան որոշումն ուղարկվել էր բոլոր վիլայեթներին, ներառյալ՝ աքսորավայրերը։ Դրան հետևած ամսին՝ 1915 թ. դեկտեմբերի 21-ին, միայն որպես բնակվելու շրջան որոշված վիլայեթներ ուղարկված մեկ այլ հեռագրում հատկապես շեշտվում է, որ կրոնա-

297 Մինչ օրս որևէ տեղեկություն չունենք 1915 թ. ամառային ամիսներին հայերին կրոնափոխություն պարտադրելու վերաբերյալ։ Թահա Չիչեքը Ջեմալ փաշայի մասին գրած իր կարևոր աշխատության մեջ, Ավստրիայի հյուպատոսարանի վրա հիմնվելով, այդ տեղեկությունն է հաղորդում 1915 թ. ամռան վերաբերյալ, սակայն հյուպատոսության փաստաթուղթը, որը նա վկայակոչում է որպես աղբյուր, թվագրվում է 1916-ով։ Տե՛ս **Taha Çiçek, War and State Formation in Syria Cemal Pasha's Governorate During World War I 1914-17 Routledge, New York, 2014, էջ 70:**

298 **Yervant Odian, Accursed Years: My Exile and Return from Der Zor, էջ 97.**

փոխությունն ընդգրկում է նաև այդ շրջանները։ Հեռագրում հաղորդվում է, թե որոշում է ընդունվել, որ «Այլ շրջաններից վերաբնակեցման համար բերված հայերից նրանք, ովքեր ցանկություն ունեն, նոր շրջաններ հասնելու ամսաթվից սկսած կարող են կրոնափոխվել՝ ըստ կարգի»<sup>299</sup>։

Կրոնափոխության թույլտվությունը դեռևս չէր նշանակում բռնի իսլամացում, բայց այդ թույլտվությանը զուգահեռ՝ կայացվում է մի վերին աստիճանի կարևոր որոշում ևս, և հայերին արգելվում է կրոնական պարտականությունները կատարել։ Հայ հոգևորականներին հավաքելով՝ մի հատուկ ճամբար են ուղարկում։ Այդ հարցում ուրիշ այլընտրանքներ էլ են լինում, և 1915 թ. նոյեմբերի 3-ին Ջեմալ փաշայի կարծիքն են հարցնում, թե այդ այլընտրանքներից ո՞ր մեկն ավելի հարմար կլինի<sup>300</sup>։ 1915 թ. նոյեմբերի 7-ի ամսաթիվը կրող մի հեռագրից հասկանում ենք, որ Ջեմալ փաշան առաջարկել է Սիսի կաթողիկոսին երեք քահանաների ուղեկցությամբ ուղարկել Երուսաղեմ, իսկ մյուս հոգևորականներին աքսորել Մենքիչ։ Եւ հայ

299 BOA/DH.ŞFR., nr 59/83, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. դեկտեմբերի 21-ին Հալեպի, Սիրիայի և Մոսուլի վիլայեթներ և Ուրֆայի ու Ջորի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը։

300 BOA/DH.ŞFR., nr 57/265, Ներքին գործերի նախարար Թալեաթից չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային 1915 թ. նոյեմբերի 3-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Գաղթականների հարցերով տնօրեն Շյուքրյու բեյից ստացված հեռագրում հաղորդվում է, որ Սիսի կաթողիկոսը և մյուս բոլոր հոգևոր առաջնորդները միասին ուղարկվեն Մենքիչ, կաթողիկոսարանի հոգևոր կազմն աքսորվի, և Հալեպի, Ջորի, Ռաքքայի և անգամ Հավրանի ու Դամասկոսի հայերի հետ նյութական և հոգևոր կապերի շարունակությանն արգելք լինելով և կաթողիկոսին մեկ-երկու քահանայի հետ Մենքիչում թողնելով՝ մյուսներին ուղարկեն Մաարրա, կամ էլ կաթողիկոսին Երուսաղեմ ուղարկելով՝ մյուսներին թողնեն Մենքիչում. թե՛ նրանց ուժն ու հոգևոր միասնությունն է կտրվելու, իսկ վսասակարությունը՝ չեզոքացվելու, և թե՛ կաթողիկոսությունը որևէ այլ հատուկ պաշտոնի չվերածվելով՝ վերացվելու են կաթողիկոսի կյանքն ու հոգևոր պաշտոնը։ Այդ կապակցությամբ լուր տալ պետության կարծիքի վերաբերյալ»։

հոգևորականներն աքսորվում են Մենքիչի համակենտրոնացման ճամբար<sup>301</sup>:

Պատահական չէ, որ հայ հոգևորականներին աքսորելը և հայերի կրոնափոխության թույլտվությունը տեղի են ունեցել նույն օրերին (նոյեմբերի 3-7-ը), իսկ այդ երկու որոշումներն ավելի հասկանալի դարձրեցին դարձյալ նույն օրերին Հալեպի շրջանը դատարկելու մասին ընդունված որոշումը: Սույն երեք կարևոր որոշումների՝ գրեթե նույն օրերին կայացված լինելու փաստը ցույց է տալիս այն էական փոփոխությունը, որը կատարվել էր թե՛ սահմանափակ վերաբնակեցման և թե՛ կրոնափոխության քաղաքականության մեջ:

#### **Վերջին քայլը կրոնափոխության ուղղությամբ. կամ իսլամ, կամ աքսոր**

Հալեպի և շրջակայքի ճամբարները դատարկելու և հայ հոգևորականներին հավաքելու և մի հատուկ համակենտրոնացման ճամբար ուղարկելու քայլերին հետևում է մեկ այլ որոշում: Թեև վերջինիս ստույգ ամսաթիվը դեռևս չենք ճշտել, այնուամենայնիվ 1916 թ. սկսած՝ թե՛ Անատոլիայում մնացած և թե՛ Սիրիայի որոշ շրջաններում բնակեցված հայերը կանգնել են հետևյալ երկընտրանքի առջև՝ կամ իսլամ, կամ Դեր Զոր աքսոր: Օրինակ՝ 1916 թ. հուլիսի 10-ին Կոնիա, 1916 թ. հուլիսի 18-ին էլ Դիարբեքիր ուղարկված հեռագրերով պահանջվում է այլ վայրերից այդ կողմեր եկած և դեռևս չաքսորված հայերին Դեր Զոր ուղարկել<sup>302</sup>: Դեր Զորն այլևս նոր կոտորածի կենտրոնն է: Հայերը գիտեին, որ

301 BOA/DH.SFR., nr. 57/325, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1916 թ. նոյեմբերի 7-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

302 BOA/DH.SFR., nr.65/176, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. հուլիսի 10-ին Կոնիայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը, BOA/DH.SFR., nr. 66/21, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. հուլիսի 18-ին Դիարբեքիրի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

այնտեղ ուղարկվելու դեպքում սպանվելու էին: Այդ պատճառով հնարավորություն ունեցողները ուրիշ ճար չունեին՝ մահմեդականություն ընդունելուց բացի: Հասկանում ենք, որ անմիջական կապ կա երկրորդ կոտորածի ալիքի մասին որոշման և հայերին մահմեդական դարձնելու քաղաքականության միջև:

Բռնի մահմեդականացման այդ վերջին ալիքին կարելի է հետևել գերմանական և ամերիկյան հյուպատոսական զեկույցների միջոցով: Օրինակ՝ 1916 թ. հունվարին Հալեպի հյուպատոս Ռյուսլերը նշում է. «Այդ աքսորը մահ է նշանակում: Թերևս նրանց [հայերին] փրկելու նպատակով մյութեսարիֆը հաղորդել էր, թե մահմեդականություն ընդունողները զերծ են մնալու»: Ռյուսլերը հայտնում է, որ «բազմաթիվ անձինք են կրոնափոխվել»<sup>303</sup>: Այնթափում Ամերիկայի հյուպատոս Ջեսի Ջեքսոնի՝ 1916 թ. փետրվարի 8-ի զեկույցը ևս չի տարբերվում վերոնշյալից: Ջեքսոնը հաղորդում է, թե Այնթափից չաքսորված 300-400 հայ ընտանիքներին հայտարարվել է, որ «...եթե մահմեդական դառնան, կարող են մնալ»<sup>304</sup>:

Նման զեկույցներ ստացվում են նաև Սվասից: Գերմանիայի հյուպատոսության քարտուղար Վերթը 1916 թ. հունիսի 27-ին գրում է. «[Երեկ] երեկոյան այստեղ մնացած, ճանապարհների և շինարարության վրա աշխատող և առաջապահ գնդում գտնվող հայերը արվեստի դպրոց հաճախող հայերի և բոլոր հույների հետ միասին բանտարկվեցին այստեղի հայկական եկեղեցում: Հույներն ու մահմեդականություն ընդունած հայերը շատ ծանր բրածեծի ենթարկվելուց հետո ազատ արձակվեցին: Մյուս հայերին իշխանությունները խորհուրդ տվեցին իսլամ ընդունել. հաղորդվեց, որ չընդունելու դեպքում աքսորվելու են

303 DE/PA-AA/R 14090, Հալեպի հյուպատոս Ռյուսլերից կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. հունվարի 31-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

304 NA/RG59/867.4016/275, Հալեպի հյուպատոս Ջ. Բ. Ջեքսոնից 1916 թ. փետրվարի 8-ին Ամերիկայի դեսպանություն ուղարկված զեկույցը, **Ara Sarafian, United States Official Documents on the Armenian Genocide**, Հատոր I, The Lower Euphrates, Armenian Review, Boston, Mass., 1993, էջ 117:

և անհայտ մի վայր ուղարկվելու: Հայերը չորրորդ արարից են վախենում»<sup>305</sup>:

Նույն հյուպատոսը 1916 թ. հուլիսի 23-ի զեկույցում հայտնում է. «Ամեն կարգի հայ բժիշկներ, սպանալիքների ենթարկվելով, հարկադրվում են մուսուլման դառնալ: Բոլորն էլ ստիպված եղան փոխել կրոնը: Առողջապահական գործերի մի հայ պաշտոնյա, որ չէր համաձայնել, ժամանակավորապես բանտարկվեց»<sup>306</sup>: Անատոլիայից եկած Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխը, ով նման տեղեկություններ էր հավաքում, զեկույցում նշում է. «Ապրիլ ամսվա վերջին ... Էրեզլիի և Սվասի միջև ընկած տարածքն ամբողջությամբ մաքրված էր»: Հայերը «...կամ տեղահանվել են, կամ՝ մահմեդականացվել, կամ էլ՝ սպանվել», - հայտնում է նա և հավելում, - «այլևս հայերենը չի լսվում այս շրջանում»<sup>307</sup>:

Նման զարգացումներ են գրանցվում նաև Սիրիայում: Հալեպի հյուպատոս Ռյուսլերի՝ 1916 թ. ապրիլին ուղարկած զեկույցի համաձայն՝ այդ հարցում առաջին աշխուժությունը նկատվել է Հալեպում: «Փետրվարի վերջին և մարտի սկզբին ոստիկանությունը կազմեց բանվորական գումարտակներում ծառայող հայերի ցանկեր, և լուրեր տարածվեցին, թե ոստիկանության կողմից քստորվելուց փրկվելու միակ ուղին մուսուլմանությունն ընդունելն է»: Ռյուսլերը նաև հաղորդում է, որ կրոնափոխվողների փաստաթղթերի ձևակերպումն այնպես էին անում, թե իբր հայերը կամավոր կերպով էին նման դիմումներով հանդես եկել»<sup>308</sup>:

305 DE/PA-AA/Bo.Kons. Band 172, Սվասի հյուպատոսության քարտուղար Վերթից 1916 թ. հունիսի 27-ին Ստամբուլում Գերմանիայի դեսպանություն ուղարկված զեկույցը:

306 DE/PA-AA/R14092, Սվասի հյուպատոսության քարտուղար Վերթից Ստամբուլում Գերմանիայի դեսպանություն 1916 թ. հուլիսի 23-ին ուղարկված զեկույցը:

307 DE/PA-AA/R14092, Արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխից կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. հուլիսի 10-ին ուղարկված զեկույցը:

308 DE/PA-AA/R14091, Հալեպի հյուպատոս Ռյուսլերից կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. ապրիլի 27-ին ուղարկված զեկույցը:

Դամասկոսում Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու Ալի Քեմալ բեյն ամիջականորեն ստանձնել է բռնի իսլամացման պարտականությունը և շրջում է տվյալ շրջանում՝ գործընթացն արագացնելու համար: «Գործողությունը խիստ պարզ էր: Իթթիհադականները հազարավոր ձևաթղթեր էին պատրաստել, որոնցում պետք էր միայն հին ու նոր անունները գրել և ստորագրել: Բոլորին մի նոր անուն և համար էր տրվում... Համայում 4-5 օրվա ընթացքում 5000 հայ է մուսուլման դարձել»<sup>309</sup>:

Այնթափցի Գրիգոր Պողարյանը քարտուղար է աշխատում Համայում կրոնափոխության փաստաթղթերի ձևակերպման գործերով զբաղվող բյուրոյում: Նա իր օրագրում հայտնում է, թե կրոնափոխության համար երկու տարբեր մեթոդներ էին կիրառվում: Առաջին՝ տան ղեկավարը մի հրապարակում հայտարարում էր, թե ընտանյոք հանդերձ մուսուլմանություն է ընդունել: Նրան և ընտանիքի անդամներին տրված նոր թուրքական անուններն ընթերցվում և հայտարարվում էին հրապարակում: Իսկ մյուս մեթոդը ցանկ պատրաստելով՝ գրավոր դիմում ներկայացնելն էր: Այդ դիմողներին նոր անձնագրեր են տրվում, որոնցում մի նշում է արվում նրանց կրոնափոխված լինելու մասին: Պողարյանն իր հուշերում հայտնում է. «Մենք երկրորդ մեթոդն ընտրեցինք: Նախընտրեցինք այն գործընթացը, որի դեպքում դա կարող էինք անել՝ առանց մորս, քույրերիս ու եղբայրներիս այնտեղ տանելու: Իմ անունը դարձավ Շեհաբ-Շահաբ և այդ կերպ գրանցվեց, իսկ մորս անունը՝ Մերիեմ... Ակնհայտ էր, որ դա ձևականություն է, և հատկապես գյուղերում ապրող բազմաթիվ մարդիկ տեղյակ անգամ չէին, թե ինչեր են կատարվում»<sup>310</sup>:

309 Yervant Odian, Accursed Years, s. 114-115.

310 Գրիգոր Պողարեան, Ցեղասպան Թուրքը, Վկայութիւններ՝ Քաղուած Հրաջըով Փրկուածներու Չրոյցներէն, Պէյրուս, տպ. Շիրակ, 1973, էջ 188-189: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ումիթ Քուրթին թարգմանության համար:



Համայնի շրջանի մի գյուղում ապրող Վահրամ Տատրյանը հաղորդումները հաստատում են Պողարյանի տեղեկությունները: Դրանց համաձայն՝ իր գտնված շրջանում անվանացանկերը հավաքաբար էին պատրաստվում՝ առանց մեկ առ մեկ ստորագրելու: Գյուղ եկած պաշտոնյային մի ցուցակ է տրվել, որոնցում առկա էին գյուղի բոլոր հայերի անունները, պաշտոնյան էլ խոստացել է ամեն մի անվան դիմաց մի թուրքական անուն գրել<sup>311</sup>:

Ջեմալ փաշայի կողմից՝ Խառանի դաշտավայրում գտնվող հայերին Դամասկոս և Երուսաղեմ ուղարկելու գործին նշանակված Չերքեզ Հասան Ամջան իր հուշերում հայտնում է, որ այդ գործն սկսել է 1916 թ. օգոստոսի վերջին, և որ իրեն տրված առաջին տեղեկությունը եղել է «...բոլոր գաղթականների կրոնափոխության գործն իրականացնելը»<sup>312</sup>: Այդ գործն անելու համար հատուկ խոջաներ էին նշանակվել: Ինչ վերաբերվում է նրանց, ովքեր չեն ընդունում կրոնափոխությունը, ապա նրանց մահվան են դատապարտվում՝ սննդից զրկվելով<sup>313</sup>:

Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Մետերնիխը 1916 թ. մայիսի իր զեկույցում հաղորդում է, թե իրեն էլ են լուրեր հասել առ այն, որ հայերին բռնի կրոնափոխելու համար մի արշավ է մեկնարկել: Մետերնիխը սույն խնդրի շուրջ զրուցել էր երիտթուրքական առաջնորդներ Հալիլ Մենթեշեի և Թալեաթ փաշայի հետ, բայց վերջիններս կտրականապես հերքել էին այդ լուրերը<sup>314</sup>: Այնինչ Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսը 1916 թ. հունիսի 30-ին նշում է, որ իր շրջանի «...գրեթե բոլոր

հայերը հարկադրվել են մահմեդական դառնալ<sup>315</sup>: Դա [կրոնափոխությունը] շատ բյուրոկրատական գործողություն է. ընդունում և ապա՝ անվանափոխում»<sup>316</sup>: Համայնում հայերին 2 օր ժամանակ է տրվել՝ մտածելու և որոշում կայացնելու համար<sup>317</sup>:

Դրանցից չեն տարբերվում նաև Երուսաղեմից հասած լուրերը: Հյուպատոս Բրոդեն հայտնում է, թե հայոց պատրիարքն իրեն ասել է. «Արևելյան Հորդանանի շրջանում բնակեցված հայերին բռնի մահմեդական են դարձրել»: Հյուպատոսի տված այլ տեղեկությունների համաձայն՝ հայերի վերաբնակեցման գործերով զբաղվող [Հյուսեին] Քազըմ բեյին մեղմ համարելով՝ ազատել են այդ պաշտոնից, նրա տեղը նշանակված Քեմալը կոպիտ միջոցների է դիմել, և այդ ճնշումների հետևանքով 3.500 հոգի փոխել է իր կրոնը<sup>318</sup>:

Կարելի է արձանագրել, որ այս ամբողջ գործողությունն ավարտվեց 1916 թ. ամռանը: Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսը 1916 թ. հունիսի 30-ին հայտնում է, թե տվյալ շրջանի «համարյա բոլոր հայերը բռնի կերպով մահմեդական են դարձել»<sup>319</sup>: Հալեպում Ամերիկայի հյուպատոս Ջեսսե Ջեքսոնի մոտ ևս նման տեղեկություններ են հանդիպում 1916 թ. հոկտեմբերին, ըստ որոնց՝ հազարավոր մարդիկ հարկադրաբար մուսուլման են դարձել Համայում, Հումուսում և Մարաշում<sup>320</sup>: Այդ ամբողջ

311 **Vahram Dadrian**, *To the Desert: Pages From My Diary*, Gomidas Institute, Ann Arbor, 2006, էջ 164-165.

312 Çerkes Hasan Bey'in Hâtîrâtı, "Tehcîrin İç Yüzü," *Alemdar*, 28 Haziran 1919.

313 Նույն տեղում, *Alemdar*, 20 Haziran 1919.

314 DE/PA-AA/R14091, Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխից վարչապետ Բեթման Հոլվեգին 1916 թ. մայիսի 11-ին ուղարկված զեկույցը:

315 246DE/PA-AA/Bo.Kons. Band 173, Դամասկոսի հյուպատոս Լոյթվեդ Հարդեգից Գերմանիայի դեսպանություն 1916 թ. հունիսի 30-ին ուղարկված զեկույցը:

316 DE/PA-AA/R14093, Հալեպի հյուպատոս Հոֆմանից Գերմանիայի դեսպանատուն 1916 թ. հունիսի 29-ին ուղարկված զեկույցը:

317 **Raymond Kevorkian**, *The Armenian Genocide, A Complete History*, s. 676-7.

318 249DE/PA-AA/R 14092, Երուսաղեմի հյուպատոս [դոկտոր] Բրոդեի՝ 1916 թ. հունիսի 26-ի զեկույցը:

319 DE/PA-AA/Bo.Kons. Band 173, Դամասկոսի հյուպատոս Լոյթվեդ Հարդեգից 1916 թ. հունիսի 30-ին Գերմանիայի դեսպանատուն ուղարկված զեկույցը:

320 NA/RG59/867.4016/298, Հալեպի հյուպատոս Ջ. Բ. Ջեքսոնի տիկնոջից՝ միսիս Ջեսսե Ջեքսոնից 1916 թ. հոկտեմբերի 13-ին Արտաքին գործերի նախա-

ժամանակաշրջանում Ռայմոնդ Գևորգյանի կողմից որպես «Ջեմալի հայեր» բնորոշված և հիմնականում Համայնից Դամասկոս ընկած տարածքում ցրված մոտավորապես 150.000 հայեր են բռնի մահմեդականացվել<sup>321</sup>:

Բռնի մահմեդականացման և կոտորածների միջև անմիջական կապ կա: Կոտորածների կատարման փաստի մասին հայտնի լինելը կրոնափոխության ամենամեծ պատճառն է: Հայկական աղբյուրներում այդ բռնի իսլամացման և կոտորածի արքանի վերաբերյալ չափազանց հարուստ նյութ է առկա: Որպես օրինակ կարելի է բերել Ռաքքայում տեղի ունեցած դեպքերը: «Դեր Զորի կոտորածներն սկսել էին: Ռաքքայի չերքեզների մի արյունարբու առաջնորդի ղեկավարությամբ մի խումբ չերքեզներ այդ կողմերում էին կուտակվել՝ կոտորածին ու կողոպուտին մասնակցելու համար: Կոտորածի մասին մեկը մյուսից սարսափելի լուրեր էին հասնում... Դեր Զորից մինչև Խաբուր ձգվող շրջանը վերածվել էր մի աննկարագրելի սպանդանոցի, մահվան վայրի, Ռաքքայի հայերը խորը սգի և վախի մեջ էին... Հանդիպում էին այնպիսիք, ովքեր, այդ կոտորածներից մազապուրծ, անպատի ճանապարհով Ռաքքա էին հասնում... Նրանք պատմում էին իրենց գլխին եկածների, իրենց կրած աննկարագրելի չարչարանքների մասին»: Ահա և այդ մթնոլորտում պետական պաշտոնյաները, մասնավորապես՝ մյուսֆթին հայերին առաջարկում էին իսլամ ընդունել՝ «դեպի Դեր Զոր երկրորդ անգամ քստրվելու հավանականությունից պաշտպանելու պատրվակով»: Մահվան ահն այլընտրանք չէր թողնում հայերին<sup>322</sup>: Մահվան և կյանքի միջև երկընտրանքն այնքան պարտադրող էր, որ Հայոց

րարության ուղարկված նամակը: Տե՛ս **Ara Sarafian**, *United States Official Documents on the Armenian Genocide*, Հատոր I: *The Lower Euphrates*, էջ 119:

321 **Raymond H. Kevorkian** (ed.), *L'extermination des déportés arméniens ottomans*, 51 ve *The Armenian Genocide, A Complete History*, էջ 681-82.

322 **Գուժկան Սեբաստիոյ** (Կ. Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, էջ 472:

պատրիարք Զավենն անգամ նշում է, թե անպատեհություն չի տեսնում վտանգի տակ գտնվող հայերի կրոնափոխության մեջ, մինչև որ փոթորիկն անցնի<sup>323</sup>:

### Ջեմալ փաշայի 1916 թ. օգոստոսի 1-ի հեռագիրը

Ջեմալ փաշայի՝ 1916 թ. օգոստոսի 1-ին Դամասկոսից ուղարկած երկար զեկույցը, ըստ էության, ամփոփում է Սիրիայում հայերի դեմ գործադրված քաղաքականությունը՝ բացառությամբ սպանությունների: Հեռագիրը միևնույն ժամանակ կարելի է ընթերցել նաև որպես այն հարցի մեկնաբանություն, թե ինչու են սպանություններ կատարվել Դեր Զորում: Խնդրի ուշագրավ կողմն այն է, որ Ջեմալ փաշան կատարվածները ներկայացնում է որպես իր կողմից «կիրառված մեթոդ»: Այնինչ, ինչպես կհասկանանք նաև այստեղ մեր կողմից հրապարակվող փաստաթղթերից, փաշան իրականում կատարում է կառավարության հրամանները:

Ջեմալը զեկույցն սկսում է «Զոր ուղարկված հայերի՝ այնտեղ կենտրոնացված վիճակում մնալուն արգելք լինելու դեմ միակ միջոց եմ համարում իմ կողմից Սիրիայում գործադրված մեթոդի անմիջական կիրառումը» նախադասությամբ, ապա այսպես է ամփոփում իր արածները. «Սիրիա ուղարկված այդ հայերին ես զանգվածաբար հավաքել եմ անապատային սահմաններում և իմ կողմից խրախուսված որոշ անձանց միջոցով նրանց մուսուլման դառնալն ապահովելով՝ նրանց միջից առնվազն 10 հազարին մահմեդական եմ դարձրել և ցրել Սիրիայի ավաններում: Այրի կանանց ամուսնացրել եմ մուսուլման տղամարդկանց հետ, իսկ որբերին իմ կողմից հիմնված որբանոցներ ուղարկելով՝ կրթել մահմեդական դաստիարակությամբ»:

Զեկույցի՝ մինչ այս գրված հատվածը շատ բացահայտ է:

323 Զավեն պատրիարքի հուշերի մասին տե՛ս **Raymond Kevorkian**, *The Armenian Genocide: A Complete History*, էջ 677:

Ջենալ փաշան պարծենալով հայտնում է կառավարության ցեղասպանական քաղաքականության ամենակարևոր հիմքերը հանդիսացող այնպիսի արարքների մասին, ինչպիսիք են հարկադիր իսլամացումը, կանանց բռնի ամուսնությունները և երեխաներին հատուկ օջախներում հավաքելը: Ջենալը շարունակելով նշում է, թե «թույլ չեմ տալիս», որ հայերը «որևէ վայրում մեծամասնություն կազմեն», և «այդ մեթոդը, ի վերջո, ամենամեծ կարևորությունն ունեցող Ջորում և շրջակայքում ևս անմիջապես կիրառելն ընկալում եմ որպես անհրաժեշտ հրաման: Սակայն հավելյալ զեկուցում եմ, որ դա այնտեղի մյուսթեսարիֆի վրա չպետք է բարդել: Դա պետք է կատարի պետական այրերի կողմից վստահության արժանացած մեկ այլ խիզախ անձ 10-20 հազար լիրայով, և այդ կերպ բարեփոխումներ արվեն»<sup>324</sup>:

Ջենալի գրածները բացատրում են 1916 թ. ամռանը Դեր Ջորում տեղի ունեցած կոտորածների պատճառը: Դեր Ջորում չափից ավելի հայերի կուտակում էր եղել: Անհրաժեշտ էր այդ զանգվածը փոքրացնել: Եւ Ջենալը այդ գործի համար խնդրում էր «վստահելի, խիզախ մեկին» ուղարկել: Արդեն իսկ այդ օրերից անմիջապես հետո, երբ Ջենալն ուղարկել էր այս հեռագիրը, Դեր Ջորի կոտորածների պատասխանատու Սալիհ Ջեքին նշանակվել էր իր պաշտոնում և զբաղված էր Ջենալի առաջարկածը կազմակերպելու գործով<sup>325</sup>:

324 BOA/DH.ŞFR., nr. 527/19, Ջենալ փաշայից 1916 թ. օգոստոսի 1-ին Ներքին գործերի նախարար Թալեաթին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

325 Թահա Չիչեքն իր վերոնշյալ աշխատության մեջ այս խիստ կարևոր փաստաթուղթը ներկայացնում է որպես ապացույց առ այն, թե Ջենալ փաշայի քաղաքականությունը տարբեր է եղել կենտրոնական կառավարության քաղաքականությունից: Այնինչ այստեղ մեր կողմից մեջբերված օսմանյան փաստաթղթերը ևս ցույց են տալիս, որ Ջենալ փաշան կատարել է կենտրոնից եկած հրամանները: Մեր կարծիքով փաշայի՝ կենտրոնական կառավարությունից տարբեր լինելն ավելի ճիշտ կլինի որոնել ոչ թե այս հեռագրում արտահայտված հանգամանքների, այլ՝ ուրիշ դեպքերում: Տե՛ս **Taha Çiçek, War and State Formation in Syria Cemal Pasha's Governorate During World War I**, էջ 125:

Եթե Ջենալի գրածներն ընթերցենք Թալեաթ փաշայի՝ նույն ամիսներին շրջաններ հղած հեռագրերի հետ միասին, կտեսնենք, որ Ջենալի կողմից հպարտությամբ իրեն վերագրվող գործերն իրականում կենտրոնական կառավարության կողմից արդեն իսկ կազմակերպվածներն էին: Օրինակ՝ Թալեաթ փաշան 1916 թ. հուլիսի 19-ին Դեր Ջոր ուղարկած իր մի հրամանում պահանջում է կանխել հայերի՝ շրջանում հավաքաբար գտնվելը և «անմիջապես ներքին շրջաններ ուղարկել» նրանց: Թալեաթն այդ դրության մասին հաղորդել է նաև «Գլխավոր հրամանատարության ղեկավարությանը»<sup>326</sup>: Հայերի հուշագրություններից հասկանում ենք, որ այդ հրամանն անմիջապես ի կատար է ածվել: 1916 թ. հուլիսի 21-ին մունեստիկները աղաղակում են, թե «...քաղաքում տեղավորված բոլոր հայերը, առանց բացառության, 24 ժամվա մեջ պետք է անպայման դուրս գան քաղաքից և Ջիզինե գնան: 24 ժամ հետո քաղաքում նկատված ամեն մի հայ կգնդակահարվի ոստիկանության կողմից»<sup>327</sup>: Թալեաթը 1916 թ. հուլիսի 29-ին ուղարկված մի հեռագրում բացահայտ կերպով գրում է, թե նպատակը հայերին այս կողմերից այլ վայրեր աքսորելն է, քանի որ նրանց՝ «Եփրատի ավազանում և բանակի անցումային կետում հավաքական կերպով գտնվելը» վտանգավոր է համարվել<sup>328</sup>:

Ջենալ փաշայի հեռագրի վերաբերյալ վերջին հանգամանքը, որ կարելի է հավելել, հետևյալն է. Ջենալը Սիրիայում կատարվածները բնութագրում է որպես «բարեփոխումներ»: Դա իրոք չափազանց կարևոր հանգամանք է: Օսմանյան իշխանությունները «բարեփոխում» էին անվանում այն հանրություններին, որոնց վերաբերյալ կարծում էին, թե խնդիրներ կհարու-

326 BOA/DH.ŞFR., nr. 66/19, Ներքին գործերի նախարար Թալեաթից Ջորի մյուսթեսարիֆին 1916 թ. հուլիսի 19-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

327 **Մ. Աղազարեան**, Աքսորականի յուշեր, էջ 29-31:

328 BOA/DH.ŞFR., nr. 66/94, Ներքին գործերի նախարար Թալեաթից Ջորի մյուսթեսարիֆին 1916 թ. հուլիսի 29-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

ցեն, ֆիզիկական բռնությամբ ու նման այլ մեթոդներով ճնշելը և նրանց այնքան նվազեցնելը, որ դադարեն խնդիր լինելուց: Տվյալ հարցին վերաբերող բոլոր փաստաթղթերում *islahat* բառն օգտագործվում է թե՛ որպես բարեփոխում և թե՛ *islah etmek*՝ ճնշել իմաստներով<sup>329</sup>:

Լուրջ քննարկման խնդիր է այն հարցը, թե Ջեմալ փաշան Սիրիայում իրականում կենտրոնական կառավարության քաղաքականությունն է գործադրել, թե՛, այդ քաղաքականությունից հեռանալով, ձգտել է ուրիշ քաղաքականություն վարել: Կան ուսումնասիրողներ, ովքեր պաշտպանում են այն տեսակետը, թե նա ընդդիմացել է Ստամբուլից եկած հրամաններին և անգամ դրանց դեմ դուրս գալով՝ իր քաղաքականությունն է վարել<sup>330</sup>: Ցանկանում եմ այդ շրջանակում Սիրիայում տեղի ունեցած դեպքերը մեծավ մասամբ մեկնաբանել Թալեաթ-Ջեմալ հակամարտության համատեքստում: Իրականում սխալ չի լինել ասել, թե Ջեմալ փաշան ինքն էլ է ջանքեր գործադրել նման կերպարի ստեղծման ուղղությամբ: Սիրիայի շրջանից զեկույցներ ուղարկող օտարերկրյա հյուպատոսներին նրա ասածներն այդ տարբերության մասին ենթադրության ամենակարևոր աղբյուրներից մեկն են<sup>331</sup>:

329 *Islahat*՝ բարեփոխում և *islah etmek*՝ ճնշել առնչությունն իրականում մի բանալի է, որը կլուծի ամբողջ 19-րդ և 20-րդ դարերի կոտորածների գաղտնիքը: Սույն հարցն ինքնին այնքան կարևոր է, որ արժանի է առանձին ուսումնասիրության:

330 Սույն հարցի վերաբերյալ տե՛ս հետևյալ աշխատությունները՝ **Hilmar Kaiser**, “Regional resistance to central government policies: Ahmed Djemal Pasha, the governors of Aleppo, and Armenian deportees in the spring and summer of 1915”, *Journal of Genocide Research*, 3/4, (2010): 173-218. **Taha Çiçek**, *War and State Formation in Syria Cemal Pasha's Governorate During World War I 1914-1917*; **Nevzat Artuç**, *Cemal Pasha: Askeri ve Siyasi Hayati*, Türk Tarih Kurumu, Ankara, 2008.

331 Գերմանիայի հյուպատոսների՝ Ջեմալ փաշայի վերաբերյալ որոշ խոսքեր տե՛ս **Taner Akçam**, *İnsan Hakları ve Ermeni Sorunu, İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşına*, İmge Yayınları, Ankara, 2014, էջ 265, 289-290:

Առանձին և լուրջ քննարկման թեմա լինելով հանդերձ՝ մինչ այժմ ներկայացված տեղեկությունների լույսի ներքո մենք կողմնակից ենք այն տեսակետին, ըստ որի՝ Ջեմալ փաշայի՝ հայկական քաղաքականության հարցում «կենտրոնական կառավարության քաղաքականությանը հիմնովին դեմ» դուրս եկած մեկը լինելու մասին պնդումը և այդ տարբերությանը խորը իմաստներ հաղորդելը խիստ չափազանցված և սխալ տեսակետ պետք է որակել: Անկասկած, եղել են կետեր, որոնց շուրջ նա համաձայն չի եղել Թալեաթի հետ, բայց դրանց «ռազմավարական» նշանակություն տալը ճիշտ չի թվում: Վերջին վերլուծությունների շնորհիվ սխալ չի լինի ասել, թե նա իրականում եղել է մի քաղաքական գործիչ, որը շարժվել է այնպիսի շրջանակում, որի սահմանները գծվել են կենտրոնական կառավարության կողմից: Եւ այն պահերին, երբ զգացել է, որ դուրս է գալիս այդ շրջանակից, բոլորովին չի վարանել հետքայլ անել:

Փաստ է, որ այդ մեծ շրջանակի մեջ նա աշխատել է որոշ սահմանափակ միջոցներ ձեռնարկել՝ հայերի կենսապայմանները բարելավելու ուղղությամբ, բայց ինչպես դա ցույց տվեց նաև վերոհիշյալ հեռագիրը, որում նա պարծենում է, թե «ես արեցի», որքան էլ նա փորձի բազմաթիվ բաներ ներկայացնել որպես միայն սեփական գործ, իրականում նրա արածն ընդամենը երիտթուրքերի քաղաքականության իրագործումն էր:

1915 թ. հունիսի 16-ին Սիսի կաթողիկոս Սահակ Բ. Խաբայանի հետ հանդիպման ժամանակ նրա ասածները, ըստ էության, մեզ գաղափար են տալիս Ջեմալի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության ընդհանուր գծերի վերաբերյալ: Կաթողիկոսի՝ հայ աքսորյալների սարսափելի վիճակի մասին խոսքերը լսելուց հետո Ջեմալը հատկապես Վանում, Դյորթյուլում և Ջեյթունում տեղի ունեցածների կապակցությամբ իր վրդովմունքն է արտահայտում և հետևյալ խոսքերով ամփոփում հայերի հանդեպ գործադրված քաղաքականությունը. «Կառավարությունը հայերին որպես հայ է ճանաչում. նրանց միջև տարբերություն

չի դնում՝ ավազակ են, կուսակցության անդամ, կովկասցի, թե չուկուրովացի: Նրանց բոլորին իր թշնամին է համարում, ինչպես՝ ռուսներին, անգլիացիներին և ֆրանսիացիներին... [Հայ] քաղաքական կուսակցություններին արմատախիլ անելը և այն շրջանները դատարկելը, որոնցում հոծ հայ բնակչություն կա, կառավարության վճռական ու վերջնական որոշումն է»<sup>332</sup>: Հարկ չկա հավելելու, որ Ջեմալ փաշայի՝ Հայոց ցեղասպանության գործում ունեցած անձնական տեղն ու դերը խիստ կարևոր է և ավելի մանրամասն ուսումնասիրության արժանի:

### Կրոնափոխության քաղաքականությունը որոշող գործոնները

Եթե վերոնշյալ տեղեկություններն ամփոփենք, հետևյալ պատկերը կստանանք. աքսորի սկզբում կրոնափոխությունը թույլատրվել է, և կրոնափոխները ցրվել են իրենց գտնված վայրերում կամ շրջակա վիլայեթների սահմաններում գտնվող տարբեր ավաններում ու գյուղերում և կարողացել ողջ մնալ: 1915 թ. հուլիսի 1-ի դրությամբ կրոնափոխությունն արգելվել է, իսկ նոյեմբերի սկզբից սկսած՝ վերստին թույլատրվել՝ որոշ սահմանափակումներով հանդերձ: Սիրիայում, ուր հասան աքսորյալները, ևս նման մի գործընթաց է տեղի ունեցել. սկզբում գործադրվել է վերաբնակեցման և դրան ենթակա՝ ուծացման քաղաքականություն, բայց կրոնափոխությունը չի կազմել այդ քաղաքականության մի մասը: Սիրիայում նույնպես կրոնափոխությունը թույլատրվել է 1915 թ. նոյեմբերից: Եւ այդ ժամանակ հայ հոգևորականներին հավաքելով՝ ուղարկել են հատուկ ճամբարներ: 1916 թ. սկսած՝ հայերին կանգնեցրել են հետևյալ երկրնտրանքի առաջ՝ իսլամ կամ Դեր Ջոր (մահ): Բռնի իսլամա-

332 Cilician Catholicosate Archives, Dosya 100/1, 4950/95, Սահակ կաթողիկոսի՝ այդ հանդիպումից հուշերը մեջբերել է **Խաչիկ Մուրադյանը**, տես՝ "Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1917", գլուխ առաջին:

ցումը գործադրվել է՝ Սիրիայում ողջ մնացած մի խումբ հայերի բնաջնջմանը զուգահեռ:

Հարկ է պատասխանել հետևյալ հարցին. այդ ամբողջ գործընթացի ժամանակ գործադրված տարբեր քաղաքականության հետևում բանականություն եղել է, թե՞ ոչ: Օսմանյան իշխանությունները կրոնափոխությունն ազատ թողնելիս, արգելելիս կամ էլ մահմեդականությունը որպես մահվան միակ այլընտրանք պարտադրելիս ինչ շարժառիթներով էին առաջնորդվում: Որո՞նք էին այն սկզբունքները, որ գործի էին մղում նրանց:

Առաջին հայացքից նկատելի է, որ նրանց քաղաքականության մեջ լուրջ ալեկոծումներ են եղել: Կարելի է առաջ քաշել այն տեսակետը, թե ոչ միայն գլխավոր ծրագիր չի եղել, այլև ընդհանրապես որևէ ծրագրի մասին խոսք լինել չէր կարող. ալեկոծումներն առավելաբար դա են ցույց տալիս:

Կարծես թե կառավարությունը սույն հարցի վերաբերյալ նախապես մտածված որևէ ծրագիր, քաղաքականություն չի ունեցել, և երբ խնդիր է ծագել, միջամտել է, իսկ երբ պայմանները բարդացել են, իր նախկին քաղաքականությունից հրաժարվել է և փորձել մեկ այլ ելք գտնել: Կարճ ասած՝ համակարգված քաղաքականությունից առավել խոսքը գնում է մի այնպիսի քաոսի մասին, երբ հնարավոր չէ հասկանալ, թե ինչը ինչի համար է արվում:

Հնարավոր է նաև պնդել դրա հակառակը: Կարելի է ենթադրել, որ ըստ երևույթին այդ բոլոր ալեկոծումների և անկարգության հետևում առկա են որոշ լուրջ քաղաքական նախապատվություններ: Օրինակ՝ կրոնափոխություն թույլ տալն ու չտալը կախված է եղել այլ քաղաքական մտտեցումներից, որոնք, կարելի է ասել, ավելի խորքային են: Եթե տեղին է այսպես ասելը, կրոնափոխությունը, գլխավոր քաղաքականության հետ կապված լինելով, փոփոխման ենթակա տարր է: Հետևաբար՝ տեղի ունեցած փոփոխությունները պետք է ընկալել ոչ թե որպես անկարգության, այլ՝ համակարգված կենտրոնական քաղաքա-

կանության գոյություն: Թե մեր այս մոտեցումներից որ մեկն է ճշմարտությանն ավելի մոտ՝ մի հանգամանք է, որը, շահարկումներից հեռու մնալու համար, հնարավոր է որոշել ձեռքի տակ գտնվող փաստաթղթերի և տեղեկությունների միջոցով<sup>333</sup>:

Առաջին բանը, որ կարելի է ասել սույն հարցի վերաբերյալ, այն է, որ ինչպես դա ցույց են տալիս նաև այս բոլոր ակեկոծումները, դժվար է կրոնափոխության քաղաքականությունը բացատրել որպես նեղ հայացքների տեր իսլամական ֆանատիզմի հետևանք: Կարևոր են Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Մետերնիխի՝ այս խնդրի վերաբերյալ արած դիտարկումները: Մետերնիխը 1916 թ. հուլիսի 10-ի իր զեկույցում նշում է. «Թեև այդ փաստը պաշտոնապես մերժվում է, այնուամենայնիվ իսլամացումը մեծ դեր է խաղում հայերի դեմ հետապնդումների այս վերջին ժամանակաշրջանում»: Մետերնիխը հայտնելով, թե «Ճիշտ չէ հայերի բռնի իսլամացումը համարել կրոնական ֆանատիզմից բխող մի միջոց», հաստատում է. «Երիտթուրք ղեկավարների համար նման գաղափարներն օտար են»: Նա կառավարական պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումների վրա հիմնվելով՝ նշում է. «Հայերի բռնի կրոնափոխության հարցում որոշիչ մոտիվ է ոչ թե կրոնական ֆանատիզմը, այլ՝ հայերին կայսրության մուսուլման բնակչությանը խառնելը»<sup>334</sup>: Դեսպանատանը որպես գլխավոր հյուպատոս աշխատող Մորդտմանը ևս ասելով, թե «Բռնի մահմեդականացումը, ըստ իս, ինքնանպատակ չէ, և ըստ էության նպատակադրվել է թուր-

333 Այստեղ չենք կարող սույն հարցը մանրամասնորեն քննարկել: Միայն ցանկանում ենք նշել, որ մեր կարծիքով, անկախ նրանից, թե որքանով են դրանք գործնականում կիրառվել, կրոնափոխության և վերաբնակեցման քաղաքականությունների հետևում սառը հաշվարկ է եղել:

334 DE/PA-AA/R14092, Արտակարգ և լիազոր դեսպան Մետերնիխից կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. հուլիսի 10-ին ուղարկված զեկույցը: Մետերնիխի՝ սեպտեմբերի 18-ին ուղարկված զեկույցում ևս նույն տեղեկություններն են կրկնվում: Տե՛ս DE/PA-AA/R14093, Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Մետերնիխից կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. սեպտեմբերի 18-ին ուղարկված զեկույցը:

քացնել կրոնափոխվածներին», ընդգծում է, որ նպատակը բռնի ուժացումն է<sup>335</sup>:

Այստեղ ծագում է հետևյալ կարևոր հարցը. եթե բռնի ուժացումը եղել է հայերի աքսորի և բնաջնջման անքակտելի մի մասը, ապա ինչ հարաբերության մեջ են գտնվում ուժացումը և ֆիզիկական բնաջնջումը: Մենք հետևյալ թեզն ենք առաջ քաշում. Միություն և առաջադիմություն կուսակցությունը Հայկական հարցը լուծելիս հիմք էր ընդունում «ղեկավարվելու կարողության» սկզբունքը: Նրանց համար էական խնդիրը, հանուն կայսրության պահպանման, հայերին, որոնց գոյությունը նրանք կյանքի սպառնալիք էին համարում, այնպիսի մակարդակի հասցնելն էր, երբ հայերը խնդիր չէին լինի: Երիտթուրքերի նպատակը հայկական համայնքը, որպես մշակութային, քաղաքական և սոցիալական շրջանակ, ոչնչացնելն էր, նրա՝ որպես հավաքական խմբի գոյությունը վերացնելը: Ինչ վերաբերում է այն հայերի իսլամացմանը, ովքեր կարող էին ուժացվել մահմեդական-թուրք բնակչության մեջ, ապա դրանում ևս վտանգ չէին տեսնում, նույնիսկ դրանից որոշ օգուտներ էլ կարող էին լինել: Խնդիրն այն էր, որ իսլամացվող հայերի թիվը չպետք է անցներ այն սահմանը, որի դեպքում նրանք կկարողանային պահպանել իրենց ինքնությունը: Այդտեղ էր վտանգը: Ֆիզիկական բնաջնջումն ահա այդ փուլում էր գործադրվում: Հետևաբար՝ սխալ չի լինի պնդել, թե ուժացման քաղաքականության և ֆիզիկական բնաջնջման միջև հավասարակշռությունը պահվում էր «ղեկավարվելու կարողության» սկզբունքով<sup>336</sup>:

Իսկ այդ հավասարակշռության հաստատման մեջ էականը թվերն են: Մեր կարծիքով՝ թույլ են տվել այնքան հայերի իսլա-

335 DE/PA-AA/Bo.Kons. Band 101, Հալեպի հյուպատոս Ռյուսերից Գերմանիայի դեսպանատուն 1917 թ. ապրիլի 20-ին ուղարկված զեկույցում Մորդտմանի լուսանցքային նշումը:

336 Մեր “Young Turks’ Crime Against Humanity” վերնագրով աշխատության կենտրոնական թեզը դա է, և սույն հարցն ամենայն մանրամասնությամբ քննվում է սովյալ գրքում:

մացումը, որքանը, կարծել են, որ կկարողանան տարրալուծվել մոնուկլան մեծամասնության մեջ: Նրանք համոզված են եղել, որ եթե հայերի թիվը գերազանցի որոշակի հարաբերակցությունը, ապա նրանք կրոնափոխված լինելու դեպքում անգամ կպահպանեն իրենց ազգային ու մշակութային ինքնությունը: Դա կնշանակեր, որ հայերը կշարունակեն վտանգ ներկայացնել՝ որպես հավաքական դերակատար: Այսպես՝ այն դեպքում, երբ օսմանյան փաստաթղթերում 1915 թ. հուլիսի 1-ից հետո կրոնափոխությունն արգելվել է, օգտագործված այնպիսի արտահայտություններից, ինչպիսիք են՝ «իրենց երկրում մնալու հնարավորություն ապահովել», «անձնական շահերի պատճառով», «կեղծ ու ժամանակավոր», դյուրին կերպով կարելի է հասկանալ, որ իթթիհադականները անհանգստանում էին, թե հայերն իրականում մտադիր չեն իրենց կրոնից հրաժարվել և կշարունակեն պահպանել իրենց հայկական ինքնությունը:

Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխը ևս վերոհիշյալ զեկույցում շեշտում է այդ կետը: Դեսպանը հայտնելով, որ հայերը սեփական կամքով կրոնափոխվում են, որպեսզի փրկվեն աքսորից ու մահից և կանխեն իրենց գույքի բռնագրավումը, նաև նշում է, թե «պաշտոնյաները... չնայած դրան, աքսորում են կրոնափոխներին», և հետևյալ կերպ մեկնաբանում այդ քաղաքականության փոփոխության պատճառները. «Ինչպես երևում է, մտավախություն կա, որ եթե զանգվածային կրոնափոխությունը շարունակվի, ապա հայերի աքսորի հիմնական նպատակը՝ հայ ժողովրդին լիովին վնասազերծելը, անիմաստ կդառնա»<sup>337</sup>:

Արտակարգ և լիազոր դեսպանը գերմանացի և ամերիկացի միսիոներների կողմից բացված որբանոցի, հիվանդանոցի և դպրոցի տիպի բարեգործական հաստատությունների հանդեպ ցուցաբերված վերաբերմունքի փոփոխությունը ևս բացատրում

է այն մտավախությամբ, թե հայերը կշարունակեն պահպանել իրենց ազգային ինքնությունը: Մետերնիխը հիշեցնելով, որ սկզբում այդ հաստատությունների աշխատանքների դեմ առարկություն չկար, հայերի բնաջնջման վերջին փուլում այդ հաստատությունները ևս թիրախ դարձնելու պատճառների վերաբերյալ հետևյալ կարևոր դիտարկումներն է անում. «Թուրքական կառավարությունն իրավամբ ըմբռնել է, որ օտարերկրացիների կողմից ղեկավարվող դպրոցներն ու որբանոցները մեծ ազդեցություն են թողել հայկական ազգային գիտակցության զարթոնքի և զարգացման վրա: Նրա տեսակետից տրամաբանական է դրանք կամ շատ խիստ հսկողության տակ վերցնելը, կամ էլ փակելը»<sup>338</sup>:

Կարճ ասած՝ աքսորի և բնաջնջման ողջ գործընթացի ժամանակ ուշադրության արժանի ամենակարևոր հանգամանքն այնպիսի պայմանների վերացումն է, որոնց դեպքում հայերը կկարողանան պահպանել իրենց ազգային գիտակցությունը, սոցիալ-մշակութային ինքնությունը: Դրա ճանապարհն էլ նրանց թիվն այնպիսի մի մակարդակի իջեցնելն է, որի դեպքում նման խնդիր չի ծագի: Երիտթուրքերը չեն քաշվում նաև այդ մասին խոստովանել իրենց ներքին նամակագրության մեջ: Օրինակ՝ Թալեաթը 1915 թ. օգոստոսի 29-ին բազմաթիվ վիլայեթներ ուղարկած մի հեռագրում այդ գաղափարն արտահայտում է բացահայտ կերպով. «Հայերին իրենց գտնված վայրերից հեռացնելով և նշանակված շրջաններ ուղարկելով՝ կառավարության ակնկալած նպատակն է՝ ապահովել, որ այդ տարրը հանդես չգա կառավարության դեմ ուղղված նախաձեռնություններով և գործողություններով և այնպիսի վիճակի հասցվի, որի դեպքում չկարողանա հետևել Հայաստանի կառավարություն ստեղծելուն ուղղված իր ազգային նպատակներին»<sup>339</sup>:

338 Նույն տեղում:

339 BOA/DH.SFR., nr. 55/292, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 29-ին Հյուսիսային-

337 DE/PA-AA/R14092, Արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխի կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. հուլիսի 10-ին ուղարկված զեկույցը:

Անտոնյանի հուշերում Նաիմ բեյը ևս նշում է, որ նման մի հեռագիր է ստացել Թալեաթից: Այդ հեռագրի նախադասությունները գրեթե լիովին համընկնում են վերոնշյալ հեռագրի արտահայտությունների հետ. հայերին «ուղարկելը երկրի ապագա բարօրության ապահովման համար է, որովհետև նրանք, անկախ նրանից, թե որտեղ կվերաբնակեցվեն, չեն հրաժարվի իրենց անիծյալ և տարաբախտ գաղափարներից: Դրա համար նրանց թիվը պետք է հնարավորին չափով նվազեցնել»<sup>340</sup>: Նաիմ բեյը նաև հայտնում է, որ երբ եկել է Հալեպը և շրջակա բնակավայրերը դատարկելու մասին հրահանգը, Հալեպում գտնվող «ժանդարմներին նաև հրամայվել է ամբողջ ճանապարհի ընթացքում գաղթականներին սոված ու ծարավ թողնելով՝ ձգտել հնարավորինս նվազեցնել նրանց թիվը»<sup>341</sup>:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր նրանց թիվն անընդհատ հսկողության տակ պահել և արգելել որոշակի տեղերում խնդրահարույց կուտակումները: Օրինակ՝ 1915 թ. սեպտեմբերի 8-ին Հալեպի վիլայեթ հղված մի հեռագրում ասվում է. «Տարբեր շրջաններից այդտեղ ուղարկված բոլոր հայերին ընդունելուց և կենտրոնում ու շրջակայքում վերաբնակեցնելուց հետո հարմար չէ, որ նրանք սխալմամբ համեմատական մեծամասնություն կազմեն, քանի որ դա կարող է խնդիրներ հարուցել», և պահանջվում է այնտեղ կուտակված հայերին մեկ այլ վայր ուղարկել<sup>342</sup>: Հենց դա է պատճառը, որ ճամբարներում ու բնակավայրերում անընդհատ մարդահամարներ են անցկացվում:

դիգյար, Անկարա, Կոնիա, Իզմիր, Ադանա, Մարաշ, Ուրֆա, Հալեպ, Ջոր, Սվաս, Քյութահիա, Քարեսի, Նիդդե, Մամուրեթյուպահիզ, Դիարբեքիր, Քարահիսար-ը Սահիբ, Էրզրում, Կայսերի ուղարկված ծածկագիր հեռագիրը:

340 Aram Andonian, *The Memoirs of Naim Bey*, A publication of Armenian Historical Research Association, Newton Square, Pa., 1965, էջ 4.

341 Նույն տեղում, էջ 57-58:

342 BOA/DH.ŞFR., nr. 55-A/145, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. սեպտեմբերի 8-ին Հալեպի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Շրջաններ ուղարկված զանազան գրություններում կանոնավոր կերպով հարցում է արվում, թե որքան է հայերի թիվը, և այն ինչ հարաբերակցություն ունի մահմեդական բնակչության թվի հետ: Պահանջված տեղեկությունները ժամանակին չուղարկած կառավարիչները նախազգուշացվում են. պահանջվում է, որ պատասխանը ժամ առաջ ուղարկվի: Օրինակ՝ Թալեաթը 1915 թ. նոյեմբերի 13-ին Անկարա հղած հեռագրում պահանջում է, որ արագ պատասխան տրվի 1915 թ. նոյեմբերի 8-ին իր ուղարկած հեռագրին, որը վերաբերում էր թվի խնդրին<sup>343</sup>: Երբեմն պատասխանի համար անգամ ժամկետ է տրվում: Օրինակ՝ 1916 թ. հունվարի 16-ին Բեյրութ և Դեր Ջոր ուղարկված մի հեռագրում պահանջվում է «Հայերի թվի վերաբերյալ 1331 թ. դեկտեմբերի 23-ի հեռագրի պատասխանը հաղորդել 24 ժամվա ընթացքում»<sup>344</sup>:

Պահանջվում է նաև բավականին մանրամասն տեղեկություններ տալ թվերի վերաբերյալ: Պահանջվում է դեռևս չուղարկված հայերին, աքսորվելու համար դեռ նոր ճանապարհ ընկածներին, ճանապարհին եղողներին, այլ վայրերից այնտեղ եկածներին և բողոքականներին կամ կաթոլիկներին, կրոնափոխվածներին առանձին-առանձին կատեգորիաների մեջ ընդգրկելով՝ մեկ առ մեկ պատասխան տալ: Արված հարցումների մեջ է նաև այն խնդիրը, թե հայերը մահմեդական բնակչության որ մասն են կազմում: Օրինակ՝ 1915 թ. օգոստոսի 25-ին գրեթե բոլոր շրջաններ ուղարկված մի հեռագրում պահանջվում է այդ ցանկը կազմելուց հետո պատասխան տալ 3 օրվա ընթացքում<sup>345</sup>:

343 BOA/DH.ŞFR., nr. 57/402, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. նոյեմբերի 13-ին Անկարայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

344 BOA/DH.ŞFR., nr. 60/32, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. հունվարի 16-ին Բեյրութի վիլայեթ և Ջորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

345 BOA/DH.ŞFR., nr. 55/208, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 25-ին Էրզրումի,



1916 թ. սեպտեմբերի 30-ին բոլոր վիլայեթներ ու սանջակներ հղված մի հրամանով պահանջվում է 6 տարբեր կատեգորիաների վերաբերյալ մի աղյուսակ կազմելով՝ ուղարկել. «Շրջաբերականով հաղորդվում է լիվայի/վիլայեթի ներսում գտնվող՝ (1) տեղացի հայերի, (2) օտարերկրացի հայերի, (3) կաթոլիկ և բողոքական լինելու շնորհիվ չաքսորվածների, (4) որպես զինվորի ընտանիք՝ նույն տեղում թողնվածների, (5) կրոնափոխվելով մնացածների, (6) հատուկ հրամանով թողնված հայերի՝ գավառ առ գավառ թվերն ընդգրկող մի աղյուսակ արագ կազմելով՝ այն ուղարկելու անհրաժեշտության մասին»<sup>346</sup>:

Նախմ բեյն իր հուշերում նշում է, որ ամեն 15 օրը մեկ Ստամբուլ է հաղորդվել ոչ միայն ողջ մնացած, այլև՝ մահա-

Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կարթագոյի, Դիարբեքի, Սվասի, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթյուլազիզի վիլայեթներ, ինչպես նաև՝ Իզմիրի, Ջանիկի, Քարեսի, Քարահիսար-ը Սահիբի, Կայսերի, Մարաշի, Նիղդեի, Քյութահիայի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը, որի կարևորությունը նկատի առնելով՝ մեջբերում ենք ամբողջական տեքստով. «Վիլայեթների/լիվաների ներսում ուղարկված վիճակում քանի հայ է մնացել: Այլ վայրերից որոշված շրջաններ ուղարկվելու համար ներկա պահին որքան հայ է գտնվում այդտեղ: Եւ որտեղ են նրանք: Ճանապարհներին, կայարաններում և ավաններում ուղարկված քանի հայ կա: Վիլայեթներում/լիվաններում քանի կաթոլիկ ու բողոքական հայ է գտնվում: Դրանցից քանիսն են աքսորվել, և ներկա պահին որքան բնակչություն է մնացել: Մնացած բողոքական և կաթոլիկ բնակչությունը, առանձին-առանձին, ինչ հարաբերակցություն ունի մահմեդական բնակչության հետ: Հաղորդվում է՝ շեշտվելով ամենաուշը 3 օրվա ընթացքում պատասխան տալու կարևորության մասին»:

346 BOA/DH.ŞFR., nr. 68/112, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. սեպտեմբերի 24-ին Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Բաղդասի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կարթագոյի (Բուրսա), Դիարբեքի, Սիրիայի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուլազիզի և Մոսուլի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուլուի, Ջանիկի, Չաթալայի, Չորի, Քարեսի, Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշի, Թեքեի, Կայսերի, Քարահիսար-ը Սահիբի, Իչեյի, Քյութահիայի, Մարաշի, Նիղդեի և Էսքիշե-հիրի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

ցած հայերի թիվը<sup>347</sup>: Նախմ բեյը ճշմարտությունն է ասում: Թալեաթ փաշան կանոնավոր կերպով զեկույցներ էր պահանջում ոչ միայն Սիրիայում մահացածների, այլև՝ դեռ ամառային ամիսներին կատարված աքսորների ընթացքում մեռած հայերի մասին: Օրինակ՝ 1915 թ. հուլիսի 26-ին «Լուծել անձամբ» հատուկ դասիչով բազմաթիվ վիլայեթներ ուղարկված հեռագրում Թալեաթն ասում է. «Արագ և հնարավորինս ստույգ կերպով հաղորդել, թե պատերազմի սկզբից մինչ այժմ հիվանդությունների, ապստամբությունների, ռազմական գործողությունների հետևանքով որքան հայ է մահացել վիլայեթների ներսում»<sup>348</sup>: Կարիք անգամ չկա հավելելու, որ եթե կառավարությունը գիտենալով, որ ճանապարհներին մարդիկ սպանվել ու ոչնչացվել են, նրանց թվերն է պահանջում, ապա գործադրված քաղաքականության նպատակը եղել է հայերի բնաջնջումը:

### Երեխաների հավաքումը և ուժացումը

Կրոնափոխությունից և սահմանափակ վերաբնակեցումից բացի՝ բռնի ուժացման քաղաքականության երրորդ հենքը կազմում էին տղա և աղջիկ երեխաների դեմ ուղղված կիրառումները: Այդ քաղաքականության էությունը, եղած հնարավորությունների սահմաններում, աղջիկ և տղա երեխաներին կամ որբանոցներում տեղավորելու և/կամ մուսուլման ընտանիքներում ցրելու միջոցով նրանց իսլամա-թուրքական մշակույթով դաստիարակելն էր: Երիտասարդ աղջիկներին բռնի կերպով մուսուլմանների հետ ամուսնացնելն այդ ծրագրի մի մասն է: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ այդ ուժացման քա-

347 Aram Andonian, *The Memoirs of Naim Bey*, էջ 39.

348 BOA/DH.ŞFR., nr. 54-A/112, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. հուլիսի 26-ին Տրապիզոնի, Էրզրումի, Սվասի, Դիարբեքի, Մամուրեթյուլազիզի, Ադանայի և Բիթլիսի վիլայեթներ, ինչպես նաև՝ Մարաշի ու Ջանիկի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

ղաքականության հիմնական սկզբունքները ծրագրված են եղել՝ դեռ արքունիքը չսկսած:

Հարկ է հավելել, որ այստեղ մենք չենք պնդում, թե տղա և աղջիկ երեխաների դեմ ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն չի գործադրվել: Հակառակը՝ այս ամբողջ գործընթացի ժամանակ նկատված փաստ է, որ աղջիկ և տղա երեխաները, մյուս հայ բնակչության հետ միասին, սպանվել են տարբեր մեթոդներով կամ մահացել սովից ու հիվանդություններից<sup>349</sup>: Տղա-աղջիկ երեխաներին մակույկների մեջ լցնելով ծովում խեղդելը միայն մեկն է այն օրինակներից, որ կարելի է բերել: Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919-1921 թթ., Ստամբուլում հարուցված դատական գործերից ամենակարևորներից մեկի՝ Տրապիզոնի դատավարության ժամանակ ականատեսները մանրամասն տեղեկություններ են տվել այդ հարցի վերաբերյալ<sup>350</sup>:

349 Հատկապես կանանց և երեխաների դեմ կատարված ֆիզիկական բնաջնջման թեմայով տես հետևյալ աղբյուրները՝ **Wolfgang Gust**, *Der Völkermord and den Armeniern 1915-1916, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zu Klampen, Springe*, էջ 22-25; **Vahakn N. Dadrian**, “Children as victims of genocide: the Armenian case”, *Journal of Genocide Research* 5, no. 3, Eylül 2003, էջ 421-427; **Matthias Bjørnlund**, “A fate worse than dying”: sexual violence during the Armenian genocide”, *Dagmar Herzog*, (ed.), *Brutality and Desire: War and Sexuality in Europe's Twentieth Century*, Macmillan, Palgrave, 2009, s. 16-58; **Donald E. Miller ve Lorna Touryan Miller**, *Survivors, An Oral History of the Armenian Genocide*, University of California Press, Berkley, Los Angeles, London, 1993, էջ 94-117; **Ara Sarafian**, “The Absorption of Armenian Women and Children”, էջ 209-221; **Katharine Derderian**, “Common Fate, Different Experience: Gender-Specific Aspects of the Armenian Genocide, 1915-1917”, *Holocaust and Genocide Studies*, 19:1, 2005, էջ 1-25; **Donald E. Miller ve Lorna Touryan Miller**, “Women and Children of the Armenian Genocide”, **Richard G. Hovannisian**, (ed.), *The Armenian Genocide, History, Politics, Ethics*, St. Martin's Press, New York, 1992, էջ 152-172:

350 Դատական գործերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Taner Akçam ve Vahakn N. Dadrian (eds.)**, *Tehcir ve Taktik Divan-i Harb-i Örfi Zabıtları: İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922*, İstanbul Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 2008:

Օրինակ՝ 1919 թ. ապրիլի 3-ի դատական նիստում մի կին, ցուցմունքներ տալով, նշում է, թե Ջեմալ Ազմի բեյը «...տղամարդկանց հավաքել տալով՝ ժանդարմներին հրամայել է նրանց մակույկներով ուղարկել Քումքալեի ուղղությամբ, և նրանց բոլորին սպանել են արքունի ժամանակ՝ մի մասին գնդակահարելով, իսկ մյուսներին՝ ջրախեղդ անելով»: Կինը հայտնում է, որ նահանգապետը հավաքել է տվել նաև երեխաներին և նրանց «մի մասին ուղարկել Դեյիրմենդերեի ուղղությամբ», իսկ մյուս մասին՝ «Նիազի էֆենդուի ղեկավարության տակ գտնվող նավակներով հեռացնելով՝ ծովը գցել»<sup>351</sup>: Ապրիլի 8-ին տեղի ունեցած նիստում ցուցմունքներ տված Տրապիզոնի կաթոլիկ միսիոներների իտալացի հոգևոր առաջնորդ Լորան Միլլը հայտնում է, թե քանի որ ինքը բնակվում էր ծովահայաց մի վայրում, ականատես է եղել, թե ինչպես «...հայ կանանց և երեխաներին նստեցրել են մակույկները և տարել, բայց հետո այդ նավակները դատարկ են վերադարձել»<sup>352</sup>:

Խիստ տարածված կիրառումներ էին նաև կանանց դեմ ամեն տեսակի սեռական բնույթի ոտնձգությունները, այդ նպատակով բացված համապատասխան տները և այլն: Օսմանյան բանակում պաշտոնավարած գերմանական բանակի ներկայացուցիչների սեռական ցանկությունները բավարարելու համար անձամբ գերմանական սպաների ղեկավարության տակ Դեր-Ջորում բացված տունը կարելի է բերել որպես նման մի օրինակ<sup>353</sup>: Փարիզի հաշտության բանակցությունների ընթացքում Ցեղասպանությունից ողջ մնացածների պատմությունների հիման վրա պատրաստված մի զեկույցում անդրադարձ կա համակարգված կերպով կիրառված մի մեթոդի մասին, ըստ որի՝ քարավաններին ուղեկցող ժանդարմները մարդկանց 1-2 օր

351 *Alemdar*, 4 Nisan 1919.

352 *Yeni Gazete*, 9 Nisan 1919.

353 **Yervant Odian**, *Accursed Years: My Exile and Return from Der Zor*, էջ 196-197; 209-211.

քայլեցնելուց հետո մի ջրի աղբյուրի կամ հոսող ջրի մոտ էին կանգնեցնում, բայց ծարավից տանջված այդ խեղճ մարդկանց թույլ չէին տալիս ջուր խմել: «Ծարավից մեռնող մարդկանց՝ ջուր խմելու թույլտվության գինը չգիտեմ քանի կույս կամ էլ երիտասարդ աղջիկների՝ իրենց հանձնվելն էր»<sup>354</sup>: Բազմաթիվ հուշագրություններում հանդիպում է այն փաստը, որ քարավաններին ուղեկցելու համար նշանակված հրամանատարներն իրենց զինվորներին «Նրանց հետ ինչ ուզում եք՝ արեք» ասելով՝ «...հայ կանանց օգտագործելու իրավունք են տվել»<sup>355</sup>: Երիտասարդ կանանց և երեխաների հանդեպ ցանկացած անելու ազատությունն ամբողջ աքսորի ընթացքում, Հաննա Արենդտի խոսքով, վերածվել էր «բացարձակ հսկողության լաբորատորիայի»<sup>356</sup>:

Մի ականատես անիրավացի չէ, երբ ասում է, թե «...կանանց և աղջիկների բռնաբարություններն առօրյա սովորական երևույթ էին դարձել»<sup>357</sup>: Չուկուրովայի շրջանում տեղի ունեցած դեպքերը ներկայացնող մի զեկույցում նշվում է. «[Աղջիկ, տղա] երեխաների դեմ բռնություններն այն աստիճանի էին, որ ոչ

354 Սույն զեկույցը Փարիզի խաղաղության կոնֆերանսի համար պատրաստել է ճանաչված հայ կին՝ ֆեմինիստ գրող և գրականագետ Չապել Եսայանը: Մեր երախտագիտությունն ենք հայտնում մեզ այս զեկույցը կարդալու հնարավորություն ընձեռած Ուֆիթ Քուրթին: **St' u Zabel Yesayan, La liberation des Femmes et Enfants Nonmusulmans en Turquie**, Նուբարյան գրադարան, Ազգային պատվիրակության արխիվ, Պողոս Նուբար փաշային 1919 թ. մարտի 18-ին ներկայացված 11 էջանոց զեկույցը, էջ 2-3:

355 DE/PA-AA/R14086, Արտակարգ և լիազոր դեսպան Վանգենհայմից կանցլեր Բեթման Հոլվեգին 1915 թ. մայիսի 27-ին ուղարկված զեկույցում գերմանացի միսիոներ Բլանկի հաղորդումներն ընդգրկող հավելված 3-ը: Գերմանական զեկույցներում նմանատիպ այլ պատմությունների համար տե՛ս **Wolfgang Gust, Der Völkermord an den Armeniern 1915/16...**, էջ 36-39:

356 **H. Arendt, Essays in Understanding - 1930-1954, New York, 1994**, էջ 304-ից, հղումը պատկանում է՝ **Matthias Bjørnlund, "A fate worse than dying": sexual violence during the Armenian genocide**", էջ 24.

357 **James Bryce u Arnold Toynbee, The Treatment of Armenians**, էջ 551.

հնարավոր է մոտավորապես ենթադրել, ո՛չ էլ՝ նկարագրել»<sup>358</sup>: Հավաքական բռնաբարությունները գրեթե արարողության մթնոլորտում են արվում: «Շեփորը հնչում էր մի հատուկ ոճով: Այդ նշանը... լսած կանայք ստիպված էին հավաքվել նախապես որոշված մի տեղում: Այդ զագրելի նպատակի համար նշանակված զինվորների խմբերը ևս այնտեղ էին գալիս և օրը ցերեկով ու բազմաթիվ անձանց աչքի առաջ, որոնց մեջ լինում էին նաև մահմեդական կանայք և երեխաներ, սկսում էին բռնաբարել այդ կանանց»<sup>359</sup>:

Գրեթե սովորական կիրառումներ էին նաև 8-10 տարեկան աղջիկ երեխաների բռնաբարությունները և սպանությունները<sup>360</sup>, աքսորին և բնաջնջմանը մասնակցած բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից սեփական հարեմների ստեղծումը և սեքս-խնջույքների կազմակերպումը<sup>361</sup>: Օրինակ՝ Տրապիզոնում գտնվող Կարմիր մահիկին պատկանող հիվանդանոցը վերածվել էր մի զվարճատեղիի, որտեղ նահանգապետ Ջեմալ Ազմին և մյուս պաշտոնյաները երիտասարդ աղջիկներին որպես սեքսի օբյեկտներ էին օգտագործում: Տրապիզոնի դատավարության՝ մարտի 26-ի նիստում օրակարգ է բերվել այդ հարցը, և դատավորը հարցրել է, թե ինչ տեղեկություններ ունեն այդ դեպքի մասին դատախազն ու վկաները<sup>362</sup>: Նմանապես չափազանց տարածված էր նաև պաշտոնյաների կողմից երի-

358 NA/RG59/867.4016/190, «Թուրքիայում հայ ժողովրդի բնաջնջումը», Բուխարեստում Դաշնակցության բյուրոյի՝ 1915 թ. սեպտեմբերի 5-ի զեկույցը, որ կցված է արտակարգ և լիազոր դեսպան Մորգենթաուի՝ 1915 թ. սեպտեմբերի 17-ի նամակին, տե՛ս **Ara Sarafian (ed.), United States Official Record on the Armenian Genocide**, էջ 259:

359 **Zabel Yesayan, La liberation des Femmes et Enfants Nonmusulmans en Turquie**, էջ 5.

360 Նույն տեղում, էջ 128: Այլ օրինակներ տե՛ս **Donald E. Miller u Lorna Touryan Miller, Survivors, An Oral History of the Armenian Genocide**, էջ 102-103:

361 **Matthias Bjørnlund, "A fate worse than dying..."**, էջ 23 և հղում 53.

362 **Yeni Gazete, 27 Mart 1919.**

տասարդ աղջիկներին միմյանց նվիրելը: Տրապիզոնում Ամերիկայի հյուպատոսը գրում էր. «Այստեղ կանոն է դարձել կանանց միջից ամենագեղեցիկներին... տներում պահելը՝ չեթեի անդամների [սեռական] հաճույքները բավարարելու նպատակով... Միություն և առաջադիմություն կուսակցության մի անդամ ամենագեղեցիկ աղջիկներից 10 հոգու պահում է քաղաքի կենտրոնում գտնվող մի տանը՝ իր և իր ընկերների կողմից օգտագործելու նպատակով»<sup>363</sup>: Բաղդատի երկաթուղիներում աշխատող 3 գերմանացի պաշտոնյաներ հաղորդում են, թե իրենց ևս թեև էբիադի գավառապետը հայ աղջիկներ է առաջարկել՝ ամբողջ գիշեր զվարճանալու համար<sup>364</sup>: Սրանք ընդամենը մի քանի օրինակ են հազարավոր նման դեպքերից:

Վերջին հանգամանքը, որ պետք է հավելել, այն է, որ կանանց և երեխաների այս սեռական շահագործումներն անհնար է բացատրել միայն որոշ անձանց՝ սեփական հաճույքները բավարարելու ցանկությամբ: Ինչպես իրավամբ նշում է հայ կին գրող Զապել Եսայանը, այդ հանցագործությունները կատարվել են որոշակի կանոնների համաձայն, կանոնավոր կերպով և արվել են հայ ազգը ստորացնելու նպատակով<sup>365</sup>: Հայ կանանց ու աղջիկների մարմինների դեմ ուղղված ոտնձգություններն ընկալվում են որպես այդ ազգի պատվի հետ խաղալ, և այդ

հանցագործությունները կատարածներին «թշնամի ազգին» պատկանող ոլորտ ներխուժելու բավարարությունն են տալիս:

### Սեռական շահագործումն ըստ օսմանյան փաստաթղթերի

Զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների կողմից հայ կանանց ու երեխաների դեմ գործված նման ոճիրների վերաբերյալ օսմանյան պահոցում հնարավոր է հարյուրավոր փաստաթղթեր գտնել: Մեր աշխատության մեջ կբավարարվենք միայն մի քանի օրինակներով, որպեսզի ցույց տանք, թե որքան տարածված և համակարգային են եղել այդ դեպքերը: Առաջին օրինակը վերաբերում է մեկ առ մեկ պետական պաշտոնյաների մասին ստացված բողոքներին և դրանց կապակցությամբ կատարված որոշ հետաքննությունների: Օրինակ՝ 1915 թ. սեպտեմբերի 18-ին «գաղտնի և շտապ» դասիչով Սվասի վիլայեթ առաքված հեռագրում հետևյալ տեղեկություններն են հաղորդվում մի ժանդարմի վերաբերյալ. «Ստույգ լուրեր են ստացվել, որոնց համաձայն՝ Թոքաթի ժանդարմերիայի հրամանատարը կենտրոնից մեկժամյա հեռավորության վրա գտնվող իր Մալքալըսը ամառանոցում ժամանակ է անցկացնում իր մոտ վերցված 4 հայ աղջիկների հետ ու հարբեցողությամբ զբաղվում և շաբաթական մի քանի օր հիվանդ ձևանալով՝ աշխատանքի չի գալիս, մինչ այժմ բազմաթիվ հայ աղջիկների է բռնաբարել, նրա բարոյական խայտառակության մասին լուրերը հասել են մինչև սրճարաններ: Շտապ հաղորդել այս հարցի հետաքննության և արդյունքների մասին»<sup>366</sup>:

Նման տեղեկություն է ստացվել նաև Ամասիայի մյութեսարիֆի վերաբերյալ. «Երրորդ բանակի հրամանատարությունից հաղորդվում է, թե Ամասիայի նախկին մյութեսարիֆ Ռաուֆ բեյը, մի գաղ-

363 294NA/RG59/867.4016/128, Օսկար Ս. Հեյզերից արտակարգ և լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուսին 1915 թ. հուլիսի 28-ին ուղարկված զեկույցը, Ara Sarafian (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 181:

364 DE/PA-AA/R14087, Արևելքում Գերմանիայի քրիստոնեական բարեսիրական (Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient) միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդտից 1915 թ. օգոստոսի 20-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն ուղարկված նամակը: Այլ օրինակներ տե՛ս V. N. Dadrian, "The Armenian Genocide: An Interpretation", Jay Winter (ed.), *America and the Armenian Genocide of 1915*, Cambridge University Press, New York ve Cambridge, 2003, էջ 83-84:

365 Zabel Yesayan, *La liberation des Femmes et Enfants Nonmusulmans en Turquie*, էջ 5.

366 BOA/DH.ŞFR., nr. 56/68, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. սեպտեմբերի 18-ին Սվասի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

թական աղջկա որպես սպասուհի իր տուն տանելով, բռնի կերպով զրկել է կուսությունից, մեկ այլ կնոջ էլ նման ձևով իր տուն տանելով՝ բռնաբարել է և տեղիք տվել այդ կնոջ ինքնասպանությանը: Ըստ այդ արարքի բնույթի՝ եթե պարզվի, որ այդ ստոր հանցագործությունները կատարվել են, ապա հարկ կլինի արագ կերպով իրականացնել արդարադատությամբ պահանջվող հետաքննությունը, և եթե պաշտոնական պարտականությունների հետ առնչվող կողմ եղել է, ապա անմիջապես և անվտանգ կերպով կատարել նախաքննություն և տեղեկություն տալ»<sup>367</sup>:

Հայ կանանց և աղջիկներին տանը փակելը վերին աստիճանի սովորական երևույթ էին դարձել: Այս հարցում ամենաուշագրավ օրինակը հետագայում Թուրքիայի Հանրապետության առաջին արտաքին գործերի նախարար Բեքիր Սամիի հետ է կապված: Երբ Բեքիր Սամին Հալեպի նահանգապետն է եղել, նրա վերաբերյալ նման բողոքներ են ստացվել, և Թալեաթը հարկադրված է եղել անմիջականորեն զբաղվել այդ հարցով: Վերջինս «Գաղտնի է և հարկ է անձամբ լուծել» դասիչով իր ուղարկած մի հեռագրում գրում է. «Դեպքի գրանցումից պարզվել է, որ Հալեպի վալի Բեքիր Սամի բեյն աքսորված հայերի միջից գաղթականների տնօրենի միջոցով մի կին է վերցրել՝ որպես տնային դաստիարակչուհի, այդ գիշեր հարբած լինելով՝ ցանկացել է բռնաբարել այդ կնոջը, և վերջինս էլ մի կերպ իրեն փրկելով՝ վալիի համհարզի օգնությամբ փախել է առանձնատնից, իսկ այդ դեպքի մասին լուրերը տարածվել են երկրամասում: Ցանկալի է շատ մեծ ափսոսանքի տեղիք տվող այդ դրության մասին վերոնշյալ տնօրենից մեկնաբանություններ ստանալով՝ հետաքննություն կատարել և հաղորդել դրա արդյունքի մասին»<sup>368</sup>:

367 BOA/DH.ŞFR., nr. 70/191, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. նոյեմբերին Սվասի (?) վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

368 BOA/DH.ŞFR., nr. 55-A/60, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. սեպտեմբերի 4-ին Ադանայի, Լիբանանի մյութեսարիֆ Ալի Մյունիֆ բեյին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաների կողմից հայ աղջիկների առևանգումներն այն աստիճանի տարածված են եղել, որ ինչպես վերևում էլ նշեցինք, անվտանգության մի տեսուչ զեկույց է պատրաստել սույն խնդրի վերաբերյալ և խնդրել միջոցներ ձեռնարկել: Հայ կանանց և աղջիկներին փախցնելը կանխելու ուղիներից մեկն է հայ իգական սեռի ներկայացուցիչների անձնագրերում այնպիսի կարգավորում անելը, որը հայտնի կդարձնի նրանց հայ լինելը<sup>369</sup>: Սույն խնդրի կարևորությունից ելնելով՝ Թալեաթն ստիպված է լինելու ուղղակի գրել Էնվեր փաշային և 1916 թ. սեպտեմբերի 17-ին «Գաղտնի» դասիչով իր գրած մի գրության մեջ այդ հանցագործությունը կատարած որոշ սպաների անունները և ծառայության վայրերը հիշատակելուց հետո Էնվերից թույլտվություն է հայցելու՝ տվյալ անձանց հաղորդումներ հղելու համար<sup>370</sup>:

Կանանց և մանկամարդ աղջիկների առևանգումների և բռնաբարությունների ոճիրներն այնպիսի մասշտաբի են, որ Թալեաթը շրջաններ ուղարկած մի գրության մեջ անհրաժեշտ է համարել նշել այդ մասին. «Կենտրոնի կողմից բազմիցս բողոք և ափսոսանք է արտահայտվել առ այն, որ պաշտոնյաները, ժանդարմները և բնակիչները միայն անասնական բնազդի մղումով բռնաբարություններ և գողություններ են հանդգնում անել»<sup>371</sup>: Եւ այս հարցի կապակցությամբ դատավարություն սկսելու սպառնալիքներ է հնչեցրել. «Հայտարարվում է, որ քրավանների վրա հարձակումներ և հատկապես կողոպուտ, ինչպես նաև՝ անասնական բնազդին ենթարկվելով՝ թալան ու բռ-

369 BOA/DH.EUM.2.Şube, nr. 28/6, Անվտանգության տեսչից Ընդհանուր անվտանգության տնօրինությանը 1916 թ. օգոստոսի 28-ին ուղարկված զեկույցը:

370 BOA/DH.EUM.2.Şube, nr. 28/6, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1916 թ. սեպտեմբերի 17-ին գլխավոր հրամանատար Էնվեր փաշային ուղարկված ծածկագիր հեռագիրը:

371 BOA/DH.ŞFR., nr. 55/290, Ներքին գործերի նախարար Թալեաթից 1915 թ. օգոստոսի 29-ին Անկարայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

նաբարություն անել հանդգնածների և վերջիններիս առաջնորդ եղած պաշտոնյաների և ժանդարմների վերաբերյալ առանց անփութության և անհապաղ օրինական հետաքննություն կձեռնարկվի, և նրանք խստորեն կպատժվեն, իսկ պաշտոնյաներից նմանատիպ անձինք անմիջապես պաշտոնանկ կարվեն ու կհանձնվեն ռազմական ատյաններին, և նրանց անունները կհաղորդվեն, իսկ նման դեպքերի կրկնության համար պատասխանատու կհամարվեն վիլայեթները/լիվաները»<sup>372</sup>: Որպես տեղեկություն պետք է հավելել, որ Թալեաթն այդ հեռագիրը շրջաններ է ուղարկել գերմանական մարմինների մեծաթիվ բողոքների պատճառով<sup>373</sup>:

Կանանց և աղջիկների՝ համակարգված կերպով սեռական շահագործման ենթարկվելու հարցը քննվել է նաև 1919-1922 թթ. Ստամբուլի դատավարությունների ժամանակ, և, օրինակ, 1919 թ. մայիսի 22-ին կայացված Տրապիզոնի դատավճռում մեղա-

372 BOA/DH.ŞFR., nr. 55/292, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Հյուդավենդիզյար, Անկարա, Կոնիա, Իզմիր, Ադանա, Մարաշ, Ուրֆա, Հալեպ, Ջոր, Սվաս, Քյութահիա, Քարեսի, Նիդնե, Մամուրեթյուլազիզ, Դիարբեքիր, Քարահիսար-ը Սահիբ, Էրզրում, Կայսերի 1915 թ. օգոստոսի 29-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

373 Գերմանիայի կառավարությունը թե՛ անհանգիստ էր հանցագործությունների կապակցությամբ և թե՛ չէր ուզում, որ բողոքական ու կաթոլիկ հայերն էլ աքսորվեն: Թալեաթը գերմանացիների բողոքներին արգելք լինելու նպատակով, այս հեռագրից բացի, ևս երկու հեռագիր է ուղարկել շրջաններ: Բացի այդ՝ օգոստոսի 31-ին այցելել է Գերմանիայի դեսպանատուն, իսկ 1915 թ. սեպտեմբերի 2-ին գերմանացիներին է տվել այդ 3 հեռագրերի պատճենները: Նպատակը եղել է և՛ տպավորություն ստեղծելը, որ տարբեր հանցագործությունների կապակցությամբ հետաքննություն է սկսվել, և՛ ցույց տալը, թե բողոքական ու կաթոլիկ հայերը չեն աքսորվել: Կարիք չկա ավելացնելու, որ թե՛ նման ոճիրների կապակցությամբ ոչ մի լուրջ հետաքննություն չի տարվել, և թե՛ շարունակվել է կաթոլիկ ու բողոքական հայերի աքսորը: Սույն թեմային վերաբերող գերմանական աղբյուրներից տե՛ս DE/PA-AA/Bo.Kons./Band 170, Գյոփփերթի՝ 1915 թ. օգոստոսի 31-ի գեկույցը և DE/PA-AA/R 14087, արտակարգ և լիազոր դեսպան Հոնեմլիտի՝ 1915 թ. սեպտեմբերի 4-ի ելույթը: Ձեկույցում ընդգրկված են նաև հեռագրերի պատճենների գերմաներեն թարգմանությունները:

դրյալների վերաբերյալ պատիժներ սահմանելիս առանձնահատուկ ընդգծվել է նաև այդ հանգամանքը<sup>374</sup>: 1920 թ. օգոստոսին մահապատժի ենթարկված Բայբուրթի կայմական Նուսրեթին վերագրված և նման դատավճռի կայացման հարցում վճռորոշ եղած հանցագործությունների մեջ գլխավոր տեղ էր զբաղեցնում բռնաբարության ոճրագործությունը<sup>375</sup>: Կայսերիում էվերեթի (հետագայում՝ Դեր Ջորի) մյութեսարիֆ Սալիհ Ջեթիի կատարած հանցագործությունների հետաքննության ժամանակ որոշել են նրան դատել կոտանքների, կաշառակերության և բռնաբարությունների համար<sup>376</sup>:

Կանանց ու երեխաների ֆիզիկական բնաջնջման և սեռական շահագործման այս և նման օրինակները կարելի է շարունակել: Սույն օրինակներով ցանկացանք ցույց տալ, որ բռնի ուժացումը ոչ թե պետք է հակադրել ոչնչացման մյուս ձևերին, այլ՝ այն քննել դրանց հետ միասին:

### Կանանց ու երեխաների վաճառքը

Երեխաներին ու կանանց հավաքելը և ուժացման նպատակով թուրքերի տներով մեկ ցրելն իրականացվել է պաշտոնական ու ոչ պաշտոնական ճանապարհներով: Առավելապես հանդիպող

374 **Taner Akçam & V. N. Dadrian**, (eds.), *Tehcir ve Taktıl Divan-i Harb-i Örfi Zabıtları*, էջ 706.

375 Նույն տեղում, էջ 667-668:

376 Կայսերիի տեղահանության ժամանակ կատարված հանցագործությունների կապակցությամբ իրականացված հետաքննության արդյունքների մասին տե՛ս **Hurşit Çalika** (ed.), *Kurtuluş Savaşında Adalet Bakanı Ahmet Rifat Çalika'nın Anıları*, İstanbul, 1992, էջ 33-35: Սալիհ Ջեթին հետագայում նշանակվելու է Դեր Ջորի մյութեսարիֆ և կազմակերպելու այստեղի կոտորածները: Նա Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանի կողմից՝ այդ հանցագործության կապակցությամբ հեռակա կարգով մահապատժի է դատապարտվել: Սույն դատավարության դատավճիռը տե՛ս **Taner Akçam & V. N. Dadrian**, (eds.), *Tehcir ve Taktıl Divan-i Harb-i Örfi Zabıtları*, էջ 715-716:

կիրառումներն էին աքսորի ընթացքում կամ դեռ չաքսորված հայ ընտանիքների՝ «կամավոր կերպով» իրենց երեխաներին մուսուլման ընտանիքներին հանձնելը, աքսորի ժամանակ ընտանիքներին համոզելով՝ երեխաներին «գնելը», պաշտոնյաների աչք փակելու հետևանքով նրանց առևանգվելը կամ էլ բռնի կերպով վաճառքի հանվելը<sup>377</sup>:

Չուկուրովայից ուղարկված մի նամակում ասվում է, թե «... հայ կանայք և աղջիկները վաճառվում են, մեկ հոգին՝ 60 ղուրուշով»<sup>378</sup>: Քարավաններն ուղեկցող ժանդարմների ամենակարևոր եկամտի աղբյուրներից մեկն էլ այդ վաճառքներն էին: Բազմաթիվ հուշերում նշվում է, թե երբ աքսորյալները դադար էին առնում, նրանց մոտ շրջակայքից եկած մահմեդականները, ժանդարմների թույլտվությամբ մտնելով քարավանների մեջ, շրջում էին՝ կանչելով. «Գյավուրներ, ծախու երեխաներ ունե՞ք: Ուզում ենք գնել»<sup>379</sup>: «Դամասկոսում աքսորյալները, որպես սեքսի ստրուկներ աճուրդի հանվելով, մերկ էին վաճառվում, որպեսզի գնորդներն ավելի լավ հասկանային նրանց արժեքը... Միայն մահմեդականներին էր թույլ տրվում գնել նրանց»<sup>380</sup>:

«Արաբական ցեղերի մեջ հայ կանայք, կահույքի մի մասի նման, ծախվում էին խիստ ցածր գներով՝ 1-10 լիրա կամ 1-5 ոչ-

377 Այս հարցի շուրջ որոշ օրինակներ տե՛ս **Donald E. Miller & Lorna Touryan Miller**, *Survivors, An Oral History of the Armenian Genocide*, էջ 100-103; **Richard G. Hovannisian**, "Intervention and Shaded of Altruism during the Armenian Genocide", **Richard G. Hovannisian**, (ed.), *The Armenian Genocide, History, Politics, Ethics*, էջ 173-208:

378 NA/RG59/867.4016/190, Բուխարեստի Դաշնակցության կոմիտեի՝ 1915 թ. սեպտեմբերի 5-ի զեկույցը, **Ara Sarafian** (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 259:

379 Շեղատառով նշվածը ընագրում թուրքերենով է գրված: **Abraham H. Hartunian**, *An Odyssey of Faith, Neither to Laugh nor to Weep, A Memoir of the Armenian Genocide*, NA ASR, Belmont, Massachusetts, 1999, էջ 102; նմանատիպ պատմության մասին տե՛ս նաև **Yervant Odian**, *Accursed Years...*, էջ 99:

380 **Katharine Derderian**, "Common Fate, Different Experience...", էջ 11-12.

խար»<sup>381</sup>: Մուսուլում Գերմանիայի հյուպատոս Հուլշտեյնը հաղորդում է, թե իր շրջած վայրերում մի կնոջ գինը առավելագույնը 5 ղուրուշ է եղել<sup>382</sup>: Խարբերդում տեղավորված հայերի ճամբարներն այցելած Խարբերդում Ամերիկայի հյուպատոս Լեսլի Դեյվիսը հայտնում է. «Երբ մենք ճամբարի երկայնքով քայլում էինք, մայրերը [մեզ] առաջարկում էին իրենց երեխաներին և աղաչում, որ գոնե մեկին վերցնենք: Իրոք էլ թուրքերն իրենց ընտրած այդ մանուկներին և աղջիկներին առնում էին ստրուկության կամ ավելի վատ նպատակներով: Անգամ կային այնպիսիք, ովքեր իրենց հետ բժիշկներ էին բերել՝ ամենալավ աղջիկներին ընտրել կարողանալու համար»<sup>383</sup>: Երբեմն երեխաների ընտրությունը և թուրքերի տներում բաշխումը կատարվում էին անմիջականորեն կառավարական շենքերի մոտ կամ էլ՝ հատուկ խաներում: Բայբուրթի դատական գործի ամբաստանյալներից կայմական Նուսրեթի վերաբերյալ կայացված մահվան դատավճռում հաղորդվում է նաև, որ նա սպանելու համար տարել է հայ ընտանիքների, իսկ նրանց երեխաներին՝ հավաքել ու ցրել: Մի վկայի ցուցմունքների համաձայն՝ Նուսրեթը «150-ի չափ աղջիկ ու տղա հայ երեխաներին հավաքել է Բինբաշը Խան կոչվող տեղում, և բոլորն այնտեղ գնալով՝ վերցնում էին իրենց ուզածին»<sup>384</sup>:

Այդ ժամանակաշրջանի հայոց պատրիարք Զավեն Տեր-եղիայանը 1915 թ. օգոստոսի 15-ի մի զեկույցում, որ նա պատրաս-

381 **Fa'iz el-Ghusein**, *Martyred Armenia*, George H. Doran Company, New York, 1918, էջ 33-34.

382 Հալեպի հյուպատոս Ռյուլերից արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխին 1916 թ. հունվարի 3-ին ուղարկված զեկույցը, որի 2-րդ համարով հավելվածում կցված է Հուլշտեյնի՝ 1915 թ. նոյեմբերի 15-ի նամակը:

383 NA/RG59/867.4016/127, Մամուրթյուպազիզի (Խարբերդ) հյուպատոս Լեսլի Դեյվիսից Ամերիկայի արտակարգ և լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուին 1915 թ. հուլիսի 11-ին ուղարկված զեկույցը, **Ara Sarafian** (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 172:

384 *Tercüman-i Hakikat*, 5 Ağustos 1920.

տել էր օտարերկրյա դեսպանությունների և արտասահմանյան շրջանակների համար, մեջբերում է մի ականատեսի հետևյալ վկայությունը. «Երբ աքսորյալները հասան... քարավանը կանգ առավ կառավարական շենքի մոտ, բոլոր տղա և աղջիկ երեխաները խլվեցին իրենց մայրերից և լցվեցին մի սենյակ, քարավանին բռնի կերպով ստիպեցին շարունակել ճանապարհը: Շրջակա գյուղեր կոչ հղեցին, որ գան և այդ երեխաների միջից իրենց ուզածներին վերցնեն: Այդ կերպ, հենց որ կանանց և երեխաների քարավանները հասել են որևէ ավան կամ բերդ, կառավարական շենքի առաջ ցուցադրվել են, որպեսզի մահմեդականները կարողանան իրենց ցանկությամբ ընտրություն կատարել»<sup>385</sup>:

Վերոնշյալ կիրառումներից բացի՝ դեպքեր են եղել, երբ փոքր երեխաները պաշտոնապես հավաքվել են կառավարության կողմից, մեկտեղվել որոշակի կենտրոններում, որտեղ բռնի ձևով մուսուլման դարձվելուց հետո տեղավորվել են կամ որբանոցներում, կամ էլ՝ մահմեդականների ընտանիքներում:

### Երեխաների ուժացումն ըստ օսմանյան փաստաթղթերի

Երեխաների նկատմամբ գործադրված քաղաքականության դրսևորումներից մեկն էլ նրանց՝ կառավարության ձեռքով հավաքելն ու իսլամա-թուրքական մշակույթի համաձայն «խնամքի և դաստիարակության» կամ «կրթության ու դաստիարակության» ենթարկելով՝ մեծացնելն է: Փաստաթղթերում հիշատակված արտահայտությամբ՝ նպատակը երեխաների ուժացումն է: Առաջին փաստաթուղթը, որ կարողացել ենք գտնել մանուկների՝ պետության ձեռքով թուրքացման վերաբերյալ, կրում է 1915 թ. հունիսի 26-ի ամսաթիվը: Հարկ է հավելել այն կարևոր տեղեկությունը, որ սույն հեռագիրն ստացած

նահանգների մի քանի շրջանից աքսորը դեռևս չէր սկսվել, ինչպես, օրինակ, Տրապիզոնից, Սվասից, Խարբերդից: Ուստի երեխաների հավաքումն ի հայտ չէր եկել որպես աքսորի անսպասելի հետևանք կամ հավելյալ արդյունք, այլ հակառակը՝ ծրագրված էր նախապես: Արդեն իսկ փաստաթղթում ևս բացահայտ կերպով նշվում է, որ այդ քաղաքականությունը կանխամտածված է եղել:

1915 թ. հունիսի 26-ի հեռագրի մեկ այլ առանձնահատկությունն էլ այն է, որ սույն գրությունն ուղարկվել է Ազգային կրթության նախարարության կողմից: Հեռագրում գրված է. «Քանի որ որոշված է, որ տեղափոխված կամ մեկ առ մեկ աքսորված հայերի՝ տասը տարեկանից ցածր տարիքի երեխաներին պետք է հավաքել նորաստեղծ կամ արդեն իսկ գոյություն ունեցող որբանոցներում և նրանց կրթել ու դաստիարակել այնտեղ, շտապ հաղորդել, թե վիլայեթի ներսում քանի նման երեխա կա, և այդտեղ որբանոց հիմնելու համար համապատասխան շենք կամ, թե՛ ոչ»<sup>386</sup>:

Այն փաստերը, որ այս հեռագիրը հղվել է նաև այն նահանգներ, որտեղից աքսորը դեռ չէր սկսվել, և որ ուղարկվել է Ազգային կրթության նախարարության կողմից, մատնանշում են հայ երեխաների վերաբերյալ մինչ այդ ծրագրված և կայացված մի որոշման առկայությունը: Սույն փաստաթուղթը ցույց է տալիս, որ օսմանյան կառավարիչները թե՛ նախապես գիտեին, որ աքսորի ընթացքում երեխաները որբ են մնալու, և թե՛ նախապես որոշել էին նրանց ուժացնել՝ իսլամա-թուրքական մշակույթի համաձայն:

385 Zaven Der Jeghiayan, Armenian Patriarch of Constantinople 1913-1922, *My Patriarchal Memoirs*, Mayreni Publishing, Barrington, RI, 2002, էջ 88.

386 BOA/DH.\$FR., nr. 54/150, Հանրակրթության նախարարության Հատուկ գրասենյակից 1915 թ. հունիսի 26-ին Դիարբեքիրի, Ադանայի, Հալեպի, Տրապիզոնի, Էրզրումի, Սվասի, Բիթլիսի, Մամուրեթյուպահիզի և Վանի վիլայեթներ ու Մարաշի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը: Սույն և մյուս օսմանյան փաստաթղթերում շեղատառ նշումները մեզ են պատկանում:



Դրանից երկու շաբաթ անց Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինության կողմից մեկ այլ հրաման-հեռագիր էլ է ուղարկվում շրջաններ: 1915 թ. հուլիսի 12-ի ամսաթիվը կրող այս հեռագրում նշված է «Երեխաներ, որոնք կարող է ծնողազուրկ ման հայերի տեղափոխման և աքսորի ժամանակ» արտահայտությունը, որը նաև ցույց է տալիս, թե նախապես տեղյակ են եղել, որ հայ երեխաները մնալու են առանց ծնողի, այսինքն՝ նրանց ծնողներն սպանվելու են, և դա հաշվարկված է եղել: Բացի այդ՝ հեռագիրը հաղորդում է, թե այդ երեխաների «խնամքի և դաստիարակության» համար նրանց պետք է ցրել «հայ և օտարերկրացի բնակիչ չունեցող գյուղերում և գավառներում» ապրող պատվելի և հեղինակավոր անձանց տներում, իսկ լավ ֆինանսական դրություն չունեցող ընտանիքներին տրվելիք երեխաների համար ամսական 30 ղուրուշ հատկացնել»<sup>387</sup>:

Սույն փաստաթուղթն ունի ևս մեկ առանձնահատկություն: Վերևում մեր կողմից մեջբերված՝ 1915 թ. հունիսի 22-ի հեռագրի նման, որում նշված էր, թե կրոնափոխված հայերը կարող են մնալ, ինչպես նաև՝ 1915 թ. հունիսի 23-ի հեռա-

387 BOA/DH.\$FR.nr. 54/41, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. հուլիսի 12-ին Ալանայի, Հալեպի, Դիարբեքրի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Տրապիզոնի, Սվասի, Հյուսիսային Կարթագոնի, Էդիրնեի և Մոսուլի վիլայեթներ ու Իզմիրի, Ջանիկի, Կայսերիի, Մարաշի, Ջորի և Ուրֆայի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Շրջաբերականով անհրաժեշտ անձանց հաղորդվում է, որ հայերի տեղափոխության և աքսորի ընթացքում ծնողազուրկ մնալու հավանականություն ունեցող երեխաների խնամքի և դաստիարակության համար նրանց հանձնել հայ և օտարերկրացի բնակիչ չունեցող գյուղերի ու գավառների հարգարժան և հեղինակավոր անձանց, իսկ գոյության միջոցներ չունեցողներին տրվելիք երեխաների համար գաղթականների հատկացումներից հարմար է համարվել հատկացնել ամսական 30 ղուրուշ: Այդ ձևով կատարել ինչ որ անհրաժեշտ է, և տվյալ հեռագիրը համապատասխան անձանց ցույց տալուց հետո ոչնչացնել այն»:

գրի նման, որում ներկայացված էր, թե ինչպես պետք է Սիրիայում վերաբնակեցվեին հայերը, այս հեռագրում ևս պահանջվում է ընթերցելուց հետո ոչնչացնել այն: Կարծես թե կառավարությունը չի ցանկանում մի այնպիսի պաշտոնական փաստաթուղթ թողնել, ըստ որի՝ երեխաները խլվելու էին ընտանիքներից, իսկ ընտանիքները՝ կառավարության ձեռքով գիտակցված կերպով մասնատվելու: Երեխաների խնամքի և դաստիարակության համար առաջարկվող միջոցները ցույց են տալիս, որ կառավարությունը ուժացման լուրջ քաղաքականություն է վարում՝ անկախ նրանից, թե որքանով է դա նրան հաջողվել:

Գիտակցված կերպով ընտանիքների մասնատման ու մանկամարդ աղջիկներին բռնի ամուսնացնելու և մահմեդական սովորույթներով դաստիարակելու մասին ամենաընդգրկուն փաստաթուղթը Ներքին գործերի նախարարության կողմից 1916 թ. ապրիլի 30-ին ուղարկված հեռագիրն է, որի պատճեններից մեկն էլ հղվել է Ռազմական նախարար Էնվեր փաշային: Հեռագրում նշված է. «(1) Այն ընտանիքները, որոնք մենակ և ծնողազուրկ են մնացել, քանի որ տղամարդիկ աքսորվել են կամ էլ գտնվում են զինվորական ծառայության մեջ, ցրված կերպով տարածել այն գյուղերում և ավաններում, որտեղ հայեր և օտարերկրացիներ չկան, և գաղթականների համար նախատեսված հատկացումներից նրանց գոյության միջոցներ ապահովել և վարձեցնել տեղի սովորույթներին: (2) Ամուսնացնել երիտասարդ և այրի կանանց: (3) Մինչև 12 տարեկան երեխաներին հանձնել տեղի որբանոցներ և մանկատներ: (4) Եթե որբանոցները չբավարարեն, ունևոր մուսուլմաններին տալով՝ կրթել և ուժացնել տեղական ավանդույթներով: (5) Եթե նրանց ընդունելու և դաստիարակելու համար ունևոր մուսուլմաններ չգտնվեն, գաղթականների համար նախատեսված հատկացումներից սնդի համար 30 ղուրուշ տալու պայմանով հանձնել գյուղացիներին, և այդ ընթացքում տեղի ունենալիք գործողությունների և ձեռնա-

րկների թվերի մասին քայլ առ քայլ տեղեկություններ հաղորդել»<sup>388</sup>:

Կարելի է այլ բազմաթիվ օրինակներ բերել առ այն, որ կառավարությունը նշանակություն է տվել ուժացման հարցին: Դրանց մեջ ուշադրություն է գրավում կառավարության՝ մահմեդական ընտանիքների կողմից հայ երեխաներին որդեգրելը խրախուսելու համար ներդրած գրավիչ մեխանիզմը: Այդ մեխանիզմի էությունը, որը կարող ենք բնորոշել որպես «Ուժացումը խրախուսող ծրագիր», հայ երեխաներին և ամուսնացած աղջիկներին ընդունած ընտանիքներին նրանց ժառանգորդ համարելն է: Այդպիսով՝ հայ մանուկներին իրենց մոտ վերցրած ընտանիքները կամ հայ աղջիկների հետ ամուսնացած անձինք մեքենայաբար տիրանալու են այդ երեխաների հարստությանը: Այդ առումով խիստ կարևոր է 1915 թ. օգոստոսի 11-ին Լքյալ գույքի բոլոր հանձնաժողովների նախագահներին ուղարկված հետևյալ հեռագիրը. «Կրոնափոխվածների կամ ամուսնացածների, ինչպես նաև՝ կրթվելու և դաստիարակվելու նպատակով վստահելի անձանց մոտ թողնված երեխաների անձնական գույքն այդ անձանց է տրվում, և եթե ժառանգություն թողնողները մահացել են, ապա բաժնետոմսերը նրանց են հանձնվում»<sup>389</sup>:

388 BOA/DH.SFR., nr. 63/142, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. ապրիլի 30-ին Ադանայի, Էրզրումի, Էդիրնեի, Հալեպի, Հյուսիսային Կարթագոնի, Մամուրեթյուլագիզի, Կոնիայի, Կաստամունուի և Տրապիզոնի վիլայեթներ ու Իզմիրի, Ջանիկի, Էսքիշեհիրի, Քարահիսար-ը Սահիբի, Մարաշի, Ուրֆայի, Կայսերիի և Նիղդեի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

389 BOA/DH.SFR., nr. 54-A/382, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինության Վիճակագրության բաժնից Ադանայի, Անկարայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կարթագոնի, Դիարբեքիրի, Սիրիայի, Սվասի, Մամուրեթյուլագիզի, Մուսուլի, Տրապիզոնի, Վանի վիլայեթների և Իզմիրի, Ուրֆայի, Էսքիշեհիրի, Ջորի, Ջանիկի, Կայսերիի, Մարաշի, Քարեսիի, Քալա-ի Սուլթանիեի, Նիղդեի, Քարահիսար-ը Սահիբի սանջակների, ինչպես նաև՝ Ադանա, Հալեպ, Մարաշ, Մամուրեթյուլագիզ, Դիարբեքիր, Տրապիզոն, Սվաս, Ջանիկ և Իզմիր

Թե՛ կառավարությունը և թե՛ տեղի բնակչությունը գիտեին, որ աքսորված յուրաքանչյուր անձ իրականում դատապարտված էր մահվան<sup>390</sup>: Այդ պատճառով դժվար չէ ենթադրել, որ այդ հրամանից անմիջապես հետո մրցակցություն է սկսվել հարուստ հայ ընտանիքի երեխաներին որդեգրելու կամ այն կանանց և երիտասարդ աղջիկների հետ ամուսնանալու համար, ում ամուսիններն աքսորվել էին: Փարիզի խաղաղության բանակցությունների համար պատրաստված վերոնշյալ զեկույցում ասվում է, թե աքսորն սկսվելուն պես տեղացի բնակչության կողմից «ամենահարուստ անձանց ժառանգորդներին... ընտրելով»՝ նրանց քարավաններից առանձնացնելը տարածված պրակտիկա էր, և այս օրինակն է տրվում. «Երզնկայում անվանի թուրքերն անձամբ կամ իրենց հետ օգնական վերցնելով՝ մտան տեղահանվողների քարավանների մեջ և բռնի կերպով առևանգեցին հարուստ ընտանիքների ժառանգորդ աղջիկներին»<sup>391</sup>: Հայերից մնացած գույքը կողոպտելու ուղիներից մեկն էլ դա էր:

Միսիոներների զեկույցները լեցուն են քաղաքի մահմեդական երևելիների միջև հարուստ երեխաներին փախցնելու համար մղված կռիվների օրինակներով: Մի խարբերոցի աղջկա՝ քաղաքի մի անվանի թուրքի կողմից իր հարեմում ընդգրկվելը, Էրզրումի քարավանում գտնվող որոշ հարուստ հայ կանանց բռնի ամուսնացնելը՝ նրանց ունեցվածքն օրինականորեն բռ-

քաղաքների Լքյալ գույքի հանձնաժողովների նախագահներին 1915 թ. օգոստոսի 11-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

390 Ամերիկացի միսիոներ Ռիզալը հայտնում է, որ խարբերոցի նահանգապետն իրեն ասել է, թե «...աքսորի ուղարկված ամեն մի անձ կառավարության կողմից մեռյալ է ընկալվում»: Տե՛ս **Henry H. Riggs**, *Days of Tragedy in Armenia, Personal Experiences in Harpoot, 1915- 1917*, Gomidas Institute, Ann Arbor, Michigan, 1997, էջ 93:

391 **Zabel Yesayan**, *La liberation des Femmes et Enfants Nonmusulmans en Turquie*, էջ 2.

նազավթելու համար ընդամենը մի քանիսն են այն օրինակներից, որ կարելի է բերել<sup>392</sup>:

Իսկ ինչպիսի՞ «կրթություն և դաստիարակություն» էին ստանալու մահմեդականների տներում ցրված կամ որբանոցներում տեղավորված այդ երեխաները: Շրջաններ հղված հեռագրերում բացահայտ կերպով նշված է, թե «կրթության և դաստիարակության» տակ ինչ պետք է հասկանալ: Պահանջվել է, որ երեխաները մեծացվեն իսլամական կրոնի, ավանդույթների և սովորույթների համաձայն, դրա համար պարտադիր պայմաններ են աղջիկ երեխաներին ամուսնացնելը, բռնի իսլամացումը և հարկադիր ամուսնությունը: Անմիջականորեն Թալեաթ փաշայի կողմից 1915 թ. դեկտեմբերի 30-ին ուղարկված մի հեռագրում ասվում է. «Պետք է խնամատար չունեցողներին և անտեր մնացածներին սննդով ապահովել, և երեխաներին իսլամական հիմունքներով դաստիարակելու պայմանով հանձնել որբանոցներին և այն մուսուլմանական գյուղերին, որտեղ հայեր և արտասահմանցիներ չկան, իսկ երիտասարդ կանանց ու աղջիկներին էլ ամուսնացնել մահմեդականների հետ»<sup>393</sup>:

Իշխանությունները ևս գիտեն, որ վերոհիշյալները բռնի ուժացում են նշանակում: Եւ, ինչպես վերևում էլ նշեցինք, բազմաթիվ դեպքերում բացահայտ կերպով կիրառում են *“temsil”* և *“temessül”* բառերը: 1916 թ. ապրիլի 20-ին Կաստամոնու ուղարկված մի հեռագրում բացահայտորեն նշվում է, որ նպատակ է դրվել որոշ շրջաններում միայն տղամարդկանց տեղափոխել, նրանց ընտանիքները մասնատել, իսկ մնացածներին՝ ուժացնել. «Պահանջվում է այն ընտանիքներին, որոնց տղամարդ-

392 Hans-Lukas Kieser, *Der Verpasste Friede, Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Turkey, 1939-1938*, Chronos Verlag, Zürich, 2000, էջ 426-427.

393 BOA/DH.ŞFR., nr. 59/150, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. դեկտեմբերի 30-ին Նիդդեի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

կանց տեղափոխել են, ցրված կերպով վերաբնակեցնել հայ ու արտասահմանցի բնակիչ չունեցող գյուղերում և ավաններում ու նրանց ուժացնել իրենց գտնված վայրերում»<sup>394</sup>:

Դիտավորյալ ուժացման քաղաքականություն իրականացնելու նպատակով մի հանգամանքի վրա էլ է ուշադրություն հատկացվում: Այն մտավախությամբ, թե այդ քաղաքականությանը կարող են արգելք լինել, որոշ շրջանների զգուշացնում են «... որբ երեխաներին հնարավորինս հեռու պահել ամերիկացի միսիոներների աչքերից»<sup>395</sup>: Բացի այդ՝ հանդես են գալիս զգուշացումներով, թե որ վայրերն են հարմար երեխաների «ուժացման» համար, որոնք՝ ոչ: Օրինակ՝ 1915 թ. հոկտեմբերի 27-ին նախարարությունը Դեր Ջորի սանջակ հարցում է ուղղել, թե ինչ է արվել որբ հայ երեխաների համար, և ստացել հետևյալ պատասխանը. «Քանի որ դեռևս (?) արքորը չի ավարտվել (?), և վերաբնակեցման ու սննդի հարցերը լիովին չեն լուծվել, մինչ այժմ որևէ բան չի արվել ծնողազուրկ մնացած հայ երեխաների կրթության և դաստիարակության համար»<sup>396</sup>:

1915 թ. նոյեմբերի 3-ի ամսաթիվը կրող մի գրությունից հասկանում ենք, որ Դեր Ջորի մյութեսարիֆն իրականում ցանկացել է այդ երեխաներին ուղարկել հյուսիսի կողմերը: Կառավարությունը պատասխան գրության մեջ հաղորդում է, թե դա սխալ կլինի, և պահանջում որբերին Դեր Ջորում պահել. «Քանի որ վնասակար կլինի որբ ու անտեր երեխաներին դեպի հյուսիս ուղարկելով՝ այնտեղ նրանց կրթելը և դաստիարակելը,

394 BOA/DH.ŞFR., nr. 63/60, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. ապրիլի 20-ին Կաստամոնուի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

395 BOA/DH.ŞFR., nr. 63/276, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. մայիսի 8-ին Կայսերիի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

396 BOA/DH.ŞFR., nr. 503/50, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. հոկտեմբերի 31-ին Ջորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

նրանց ընդհանուր աքսորի մեջ չընդգրկելով՝ պահել այդտեղ և սնել գաղթականների համար նախատեսված հատկացումներից, նաև շտապ հաղորդել նրանց թիվը»<sup>397</sup>: Երբ պատասխանն անմիջապես չի ստացվում, երկու օր հետո էլ է իր պահանջը կրկնում. պահանջում է հաղորդել «ծնողազուրկ մնացած հայ երեխաների մոտավոր թիվը»<sup>398</sup>: Կառավարության այդ պնդումի արդյունքում Դեր Զորում որբանոց է բացվում: Առաջին օրը 2-12 տարեկան 470 որբ է գրանցվում, և այդ թիվը մի քանի օրվա ընթացքում 1700-ի է հասնում<sup>399</sup>:

Դարձյալ գրություններից հասկացվում է, որ որոշ շրջաններ կենտրոն են ընտրվել այն հայ երեխաների ուժացման համար, ում ընտանիքներն սպանվել են, և իրենք որբ են մնացել: Սվասր և Կոնիան նման կենտրոններից են: 1916 թ. փետրվարի 15-ին Սվասի վիլայեթ ուղարկված մի հեռագրում Սվասի նահանգապետից պահանջվում է. «Հալեպում գտնվող հայ որբերի... կրթության և ուժացման համար ամենահարմար տեղը Սվասն է: Բարեհաճել Հալեպի հետ կապ հաստատելով՝ դրանց այնտեղ ուղարկել և որբանոցներին հանձնել»<sup>400</sup>:

397 8BOA/DH.ՏՖՐ. nr. 60/230, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. նոյեմբերի 3-ին Զորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

398 9BOA/DH.ՏՖՐ., nr. 59/214, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. նոյեմբերի 5-ին Զորի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

399 Մ. Աղազարեան, Աքսորականի յուշեր, էջ 19: Աղազարյանը որբանոցի բացումը ներկայացնում է որպես Ալի Սուաթ բեյի անձնական նախաձեռնություն: Այնինչ, ինչպես տեսանք, սույն հարցը պնդողն իրականում կենտրոնական կառավարությունն է եղել: Քանի որ տեղյակ չեն եղել կառավարության՝ տվյալ հարցի հանդեպ որոշեցրած դիրքորոշման մասին, և շատ դեպքերում տեղական իշխանությունները կատարված գործը ներկայացրել են որպես անձնական հաջողություն, ի հայտ է եկել թե՛ հայկական աղբյուրներում և թե՛ օտարերկրյա դիվանագիտական զեկույցներում հաճախ հանդիպող «լավ կառավարչի» կերպարը:

400 BOA/DH.ՏՖՐ., nr. 61/20, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. փետրվարի

մե «Դարձյալ Սվաս 1916 թ. փետրվարի 22-ին ուղարկված հեռագրում ասվում է. «Հալեպում գտնվող որբերն ըստ էության 500-ից ավելի են»: Եւ նրանց՝ «այնտեղ [Սվասում] գտնվող խմբով հանդերձ, դաստիարակելու և ուժացնելու» համար պահանջվում է «գաղթականների համար նախատեսված հատկացումներից ծախսել անհրաժեշտ գումարը»<sup>401</sup>:

Ընտրված վայրերից մեկն էլ Կոնիան է: 1916 թ. սկզբին շրջանից մի զեկույց ուղարկած Մոսուլի հյուպատոս Հոֆմանը հաղորդում է, որ քաղաքի հայերի տեղավորման գործն ստանձնած մի պետական պաշտոնյա իրեն ասել է, թե որբ երեխաներին շատ կարճ ժամանակ անց սկսել են ուղարկել Կոնիայում հիմնված մի մանկատուն<sup>402</sup>:

Բացված զանազան որբանոցներում երեխաների բաժանումը կամ կատարվում է անմիջապես Ստամբուլից, կամ էլ Ստամբուլը վերահսկում է այն: 1915 թ. նոյեմբերին Սիրիայի և Հալեպի վիլայեթներ ուղարկված մի հեռագրում պահանջվում է. «Վիլայեթի ներսում... եթե անտեր ու որբ երեխաներ կան, նրանց կրթության և դաստիարակության նպատակով տարբեր որբանոցներ ուղարկելու համար Ստամբուլ առաքել»<sup>403</sup>: Իսկ 1917 թ. սկզբին երրորդ բանակի հրամանատարությանն ուղարկված մի շրջաբերականում հարցում է արվում, թե Սամսունից աքսորված հայերի երեխաներին վերցնելով՝ գոյություն ունեցող որբանոցներին բաժանել են, թե ոչ, և նրանց

15-ին Սվասի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

401 BOA/DH.ՏՖՐ., nr. 61/79, Ներքին գործերի նախարարության Աշիրթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. փետրվարի 22-ին Սվասի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

402 DE/PA-AA/R14093, Մոսուլի հյուպատոս Հոֆմանից Ստամբուլում Գերմանիայի դեսպանատուն 1916 թ. սեպտեմբերի 5-ին ուղարկված զեկույցը:

403 BOA/DH.ՏՖՐ., nr. 58/34, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. նոյեմբերի 16-ին Սիրիայի և Հալեպի վիլայեթներ ու Մեդինեի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

դաստիարակության համար միջոցներ ձեռնարկվել են, թե ոչ<sup>404</sup>:

Բացի այդ՝ հասկացվում է նաև, որ երեխաների տարիքը և կարևոր է եղել նրանց՝ որբանոցներում տեղավորել-չտեղավորելու հարցում: Ըստ այդմ՝ պահանջվում է շատ փոքր տարիքի երեխաներին ցրել մահմեդականների տներում, իսկ մյուսներին՝ տեղավորել որբանոցներում: 1915 թ. օգոստոսի 25-ին Սվասի վիլայեթ ուղարկված մի հեռագրում նշվում է. «Փոքր տարիքում գտնվող անտեր հայ երեխաներին պետք է հանձնել իսլամական գյուղերին, ինչպես որ նախապես էլ է հատուկ հաղորդվել»: «Նրանց՝ որբանոցներում տեղավորելը հետագայում հղի է բազմաթիվ վտանգներով»<sup>405</sup>: Անկարա ևս նույն օրերին՝ 1915 թ. օգոստոսի 30-ին, ուղարկված մի հեռագրում ասվում է, թե «հայ երեխաների՝ պաշտոնական հաստատություններում գտնվելը ճիշտ չէ», և պահանջվում «մնացածներին հանձնել իսլամական գյուղերին»<sup>406</sup>: Բացի այդ՝ շրջաններից հաճախ պահանջվում է «Շտապ հաղորդել, թե ծնողազուրկ մնացած հայ երեխաների կրթության ու դաստիարակության համար մինչ այժմ ինչ է արվել, և հայտնել հեղինակավոր անձանց հանձնվածների և ներկայում գոյություն ունեցողների թիվը»<sup>407</sup>:

404 BOA/DH.ŞFR 77/5, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1917 թ. հունիսի 2-ին երրորդ բանակի հրամանատարությանն ուղարկված ծածկագիր հեռագիրը:

405 BOA/DH.ŞFR., nr. 55/206, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 25-ին Սվասի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

406 BOA/DH.ŞFR., nr. 55/323, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 30-ին Անկարայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

407 BOA/DH.ŞFR, nr. 59/111, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1915 թ. դեկտեմբերի 27-ին Ադանայի, Հալեպի, Դիարբեքրի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Տրապիզոնի, Սվասի, Հյուդավենդիգյարի, Էդիրնեի, Մոսուլի վիլայեթներ

Մեկ այլ ուշագրավ հանգամանք էլ այն է, որ հատուկ ուշադրություն է դարձվել կանանց ու երեխաներին մեծ քաղաքներում չցրելու վրա, որպեսզի ուժացման քաղաքականությունն ազդեցություն ունենա: 1915 թ. օգոստոսի 9-ի ամսաթիվը կրող մի հեռագրում ասվում է, թե «տղամարդ չունեցող հայ ընտանիքներին և կանանց՝ մեծ քաղաքներ հանձնելը նպատակահարմար չէ», և կրկնվում այն կանոնը, ըստ որի՝ «...միայն փոքր տարիքի և անտեր մնացած աղջիկ ու տղա երեխաներին, ցրված կերպով, կարելի է տալ իսլամական գյուղերին»<sup>408</sup>: 1916 թ. մայիսի 13-ին Նիդդե ուղարկված հեռագրում պահանջվում է. «երեխաներին կենտրոնում պահելը ճիշտ չէ: Ավելի նպատակահարմար է նրանց այլ վայրեր ուղարկել: Հանձնումն ըստ այդմ կատարել»<sup>409</sup>: Հեռագրերից հասկանում ենք, որ սույն հարցի ուղղությամբ վերին աստիճանի վճռական քաղաքականություն է գործադրվել:

Հատկապես Ստամբուլը գլխավորում է այն քաղաքների շարքը, ուր ո՛չ երեխաներ, ո՛չ էլ երիտասարդ կանայք չպետք է տարվեն: Երբ որոշ պաշտոնյաներ հարցնում են, թե իրենց հետ վերցված երեխաներին կարո՞ղ են Ստամբուլ տանել, կտրուկ բացասական պատասխան է տրվում: Օրինակ՝ Դեր Զորից ուղարկված մի հեռագրում ասվում է. «...որոշ պաշտոնյաներ թույլտվություն են հարցնում անտեր հայ աղջիկ երեխաներին իրենց գնացած վայրեր կամ Ստամբուլ տանելով՝ այնտեղ դաստիարակելու համար» և խնդրում ասել, թե ինչ պետք է արվի<sup>410</sup>:

ու Իզմիթի, Զանկի, Կայսերիի, Մարաշի, Ուրֆայի և Զորի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

408 BOA/DH.ŞFR., nr. 54-A/325, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 9-ին Հալեպի վայի Բեքիր Սամի բեյին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

409 BOA/DH.ŞFR., nr. 64/8, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. մայիսի 13-ին Նիդդեի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

410 BOA/DH.ŞFR, nr. 509/48, Զորի սանջակից Ներքին գործերի նախարարությանը 1916 թ. փետրվարի 13-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

երեք օր հետո տրված պատասխանը բացասական է. «Որոշ պաշտոնյաների՝ դաստիարակելու համար իրենց մոտ վերցրած անտեր հայ աղջիկներին Ստամբուլ տանելը բացարձակապես անթույլատրելի է»: Ինչ վերաբերում է մյուս վիլայեթներ տանելուն, ասվում է, որ այդ հարցում արգելք չկա<sup>411</sup>: Նման պատասխան է ուղարկվում նաև Կայսերի 1916 թ. մայիսի 20-ին. «Խոսքի առարկա եղող երեխաներին Ստամբուլ հրավիրելը նպատակահարմար չէ: Ջանալ վերոհիշյալ մանուկներին հանձնել լիվաների և շրջակա վիլայեթների որբանոցներին»<sup>412</sup>:

Չեն ցանկանում նաև, որ մահմեդական դառնալուց հետո զինվորականների հետ ամուսնացած հայ կանայք ևս Ստամբուլ գան: Ինչ վերաբերում է նրանց՝ այլ քաղաքներ գնալուն, ապա դա թույլատրվում է միայն այն դեպքում, եթե ունեն սպայի կին լինելը հաստատող փաստաթուղթ: «Ռազմական նախարարությունից ի պատասխան հաղորդվել է, որ կրոնը փոխելուց հետո սպաների հետ ամուսնացած հայ կանայք եթե իրենց մոտ ունեն սպայի կին լինելու վերաբերյալ ռազմական կորպուսի հրամանատարություններից տրված փաստաթուղթ, չարգելել նրանց՝ բացի Ստամբուլից այլ վայրեր ուղևորվելը»<sup>413</sup>:

Մահմեդականների հետ հայ աղջիկների ամուսնանալն այնքան տարածված էր, որ այն բանից հետո, երբ որոշ լուրեր հրապարակվեցին, թե կառավարությունը կարող է հետ ուզել այդ աղջիկներին, անգամ դիմումներ հղվեցին կառավարությանը:

411 BOA/DH.SFR., nr. 61/23, Ներքին գործերի նախարար Թալեաթից Ջորի սանջակ 1916 թ. փետրվարի 16-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

412 BOA/DH.SFR., nr. 64/82, Ներքին գործերի նախարարության Աշիրեթների և գաղթականների վերաբնակեցման տնօրինությունից 1916 թ. մայիսի 20-ին Կայսերիի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

413 BOA/DH/SFR., nr. 81/151, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1917 թ. նոյեմբերի 14-ին Կոնիայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը: Նման մի հեռագիր էլ 1917 թ. դեկտեմբերի 12-ին ուղարկվել է Մամուրեթյուլագիզի վիլայեթ, տե՛ս BOA/DH/SFR., nr. 82/87:

Հարկ է այստեղ որպես նման մի օրինակ բերել 1915 թ. հոկտեմբերի 7-ին մի խումբ մուսուլմանների տված դիմումը: Դիմումի տակ ստորագրած անձինք, ովքեր լսել էին, թե կառավարությունը հետ է ուզում հայ աղջիկներին, խնդրում են չանել դա և իրենց այդ խնդրանքն էլ փաստարկում են նրանով, որ այդ ամուսնությունները կատարվել են կառավարության համաձայնությամբ, և որ աղջիկները ներկա պահին հավանաբար հղի են. «Կառավարության թույլտվության վրա հիմնվելով՝ թե իսլամական սուրբ և ճշմարիտ կրոնի հանդեպ մեր պատկառանքը հաստատելու և թե օրինական ու կրոնական կարգով ամուսնանալու նպատակով անտեր մնացած և մինչ այդ սեփական կամքով կրոնափոխված 14-15 տարեկան աղջիկներից մեկական հոգու հետ մեզնից ոմանք՝ 4, ուրիշներն էլ՝ 3 ամիս առաջ շարիաթի դրույթների համաձայն ամուսնանալով՝ օրինական ամուսնություն է կնքել նրանց հետ, և այն դեպքում, երբ հիմա նրանցից միգուցե կան նաև հղի մնացածներ, հիմնվելով այն բանի վրա, որ այդ աղջիկներին կառավարությանը հանձնելը հարմար չի կարող լինել, խնդրում ենք հրամայել և հաղորդել օրենքի պարտադրանքը կիրառելու մասին»<sup>414</sup>:

Կառավարության՝ հայ երեխաների և երիտասարդ աղ-

414 BOA/DH.EUM.2.Sube, nr. 12/20/1, Ներքին գործերի նախարարությանը մի խումբ մուսուլմանների կողմից 1915 թ. հոկտեմբերի 7-ին ուղարկված հեռագիրը, որի տակ ստորագրել են հետևյալ անձինք՝ Ջամի-ի Քեբիր թաղամասից Էբուզեթ Բուհարալը Օսմանը, Հասան Չելեբի թաղամասից Մահմուդ բին Մեհմեդը, վերոհիշյալ թաղամասից Մուստաֆա բին Մեհմեդը, Հաջը Օմեր թաղամասից Բեքչի շեյխ Ջյուլֆիթարը, Բեքիր մուլայի որդի Բեքիրը, Երվանդի որդի Հյուսեինը, Քյուլաբի թաղամասից Քըրանզադե Հյուսեինը, Քյուլաբի թաղամասից Ալի բին Մեհմեդը, Կարո Սալիհը, Դյոշենզի շեյխ Յուսուֆը, Ջամի-ի Քեբիր թաղամասից Մահմուդ բին Սինոուլու Մեհմեդը, նշված թաղամասից Էյուբ Մաքոն, Ջալիլե թաղամասից Քյորիբզադե Մեհմեդը, Քյուլաբի թաղամասից շեյխ Մուստաֆա բին Հյուսեինը, Հաջըօմեր թաղամասից Ալի Սյուլեյմանը, Ջամի-ի Քեբիր թաղամասից Հաջը Օմերը, Ահմեդ բին Բեքիրը, Չելեբի թաղամասից Ալի բին Մուսան, Ջամի-ի Քեբիր թաղամասից Մուստաֆա բին Հաջը Աբիդինը, Ահմեդ բին Բեքոն և Քյուլաբի բյը:

ջիկների նկատմամբ վարած ուժացման քաղաքականությա-  
նը կարելի է հետևել նաև գերմանական ու ամերիկյան հյու-  
պատոսական զեկույցների միջոցով: Տարբեր շրջաններից  
ստացված զեկույցներից հասկացվում է, որ ընտանիքները  
ցանկության դեպքում կարող էին երեխաներին թողնել կա-  
ռավարության կողմից հատկացված վայրերում: Բացի այդ՝  
զանազան շրջաններից հաղորդված այն տեղեկությունները,  
թե որբանոցներում կրթվելիք և դաստիարակվելիք երեխա-  
ները որ տարիքային խմբին պետք է պատկանեն, համապա-  
տասխանում են իրար:

1915 թ. հուլիսի սկզբին Տրապիզոնից գրած ամերիկյան հյու-  
պատոսը հայտնում է. «Ծնողները եթե ցանկանում էին, թող-  
նված երեխաները տեղավորվում էին քաղաքի տարբեր մա-  
սերում գտնվող մեծ տներում: Թուրքերի կողմից «որբանոց»  
անվանվող այդ տներում մոտավորապես 3000-ի չափ երեխա-  
ներ կային: Ընդունվում են մինչև 15 տարեկան աղջիկ և մինչև  
10 տարեկան տղա երեխաները: Դրանից բարձր տարիքում  
գտնվող երեխաները հարկադրվում են գնալ ընտանիքների  
հետ միասին»<sup>415</sup>: Սվասից մինչև Մալաթիա հայերի քարավան-  
ների հետ քայլելու թույլտվություն ստացած ամերիկացի միսի-  
ոներ Մերի Լ. Գրաֆֆամը 1915 թ. օգոստոսի 7-ին Մալաթիայից  
գրած նամակում հաղորդում էր, թե «այստեղ որպես որբ են  
ընդունվում 10 տարեկանից ցածր տղա և 14 տարեկանից ցածր  
աղջիկ երեխաները»<sup>416</sup>:

Սույն զեկույցներից նաև որոշ տեղեկություններ ենք ստանում  
առ այն, թե որ տարիքային խմբերի հետ ինչ էր արվում, փաս-  
տեր, որոնց մանրամասներն առկա չեն օսմանյան փաստաթղ-

թերում: Օրինակ՝ Հալեպում Գերմանիայի հյուպատոսը 1916 թ.  
օգոստոսի 29-ին ուղարկված զեկույցում Հալեպում շվեյցարա-  
ցիների, ամերիկացիների և գերմանացիների օգնությամբ բաց  
պահվող և 800-ի չափ ծնողազուրկ երեխաների խնամող տար-  
բեր որբանոցների փակվելու մասին լուրը հայտնելուց հետո  
այսպես է ամփոփում այն, ինչ պետք է արվի մնացած երեխա-  
ների հետ: «Կառավարությունը մի հատուկ կոմիսար է նշանա-  
կել՝ որբանոցները թուրքերի կառավարմանը փոխանցել տալու  
համար: Որքանով որ կարողացել ենք տեղեկանալ, գործընթա-  
ցն իրականացվելու է հետևյալ հիմքերով. 13-ից բարձր տարի-  
քի տղաներն ուղարկվելու են, երիտասարդ աղջիկներն ամուս-  
նացվելու են (անշուշտ մուսուլմանների հետ): 10-13 տարեկան  
երեխաները, քանի որ դեռևս իրենց ապրումների ազդեցության  
տակ են, ավելի ցածր տարիքի երեխաներից առանձնացվելու  
են և միմիայն թուրքական որբանոցներում են տեղավորվելու,  
որտեղ որևէ արվեստ (մասնագիտություն) են սովորելու: 10 տա-  
րեկանից ցածր երեխաները տեղավորվելու են հատուկ որբա-  
նոցներում: Այլ կերպ ասած՝ թուրքական որբանոցների կառա-  
վարումն ապահովելուն պես 13 տարեկանից բարձր տղաներն  
սպանվելու են, երիտասարդ աղջիկները՝ հարեմներ մտցվելու...  
փոքր երեխաներն էլ իսլամացվելու են»<sup>417</sup>:

Այդ որբանոցներում հավաքված և հետո ողջ մնացած երե-  
խաների հուշերից համոզվում ենք, որ հյուպատոսի հաղորդում-  
ներում չափազանցություն չկա: Խարբերոյի Փերի<sup>418</sup> գավառից  
Համբարձում Մարտիրոս Չիթջյանը, դեռ ընտանիքը չաքսոր-  
ված, երեք եղբայրների հետ թողնվում է իր կողմից «սարսափելի  
չենք» անվանված դպրոցում: Նրանց՝ այնտեղ մնալու ընթաց-

միջև ընկած ժամանակահատվածում, որը երբեմն հանդիպում է նաև Չարսանջաք անունով:

415 NA/RG59/867.4016/103, Տրապիզոնի հյուպատոս Օսկար Ս. Հեյցերից ար-  
տակարգ և լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուին 1915 թ. հուլիսի 7-ին  
ուղարկված զեկույցը: Ara Sarafian (ed.), *United States Official Record on the  
Armenian Genocide*, էջ 126:

416 NA/RG59/867.4016/187, Մորգենթաուի՝ Պետքարտուղարությանը սեպտեմ-  
բերի 13-ին գրած զեկույցի հավելվածը, նույն տեղում, էջ 244:

417 DE/PA-AA/R14093, Հալեպում հյուպատոսարանի ներկայացուցիչ Հոֆմա-  
նից Ստամբուլում Գերմանիայի դեսպանատուն 1916 թ. օգոստոսի 29-ին  
ուղարկված զեկույցը:

418 Ներկայիս անվանումը Աբփազար է: Թունջելիի Մագգիրթ գավառի քա-  
ղաքներից մեկն է, որը երբեմն հանդիպում է նաև Չարսանջաք անունով:

քում գյուղերից անընդհատ 4-16 տարեկան հայ տղա երեխաներ են բերվում: Խմբի թիվը կարճ ժամանակ անց 200-ից ավելի է լինելու<sup>419</sup>:

Հավաքված երեխաների դեմ մի պլանավորված ծրագիր է գործադրվում, և նրանց սկսում են ուծացնել: Համբարձումը շատ լավ է հիշում, թե իրենց նկատմամբ ինչեր էին անում, և ամփոփում է՝ ասելով. «Թուրքացվեցինք»: Նա գրում է. «Նրանց արած առաջին գործը մեր հայկական անունները փոխելն ու մեզ թուրքական անուններ տալն էր: Իմ անունը Ռյուշթյու դարձավ: Հաջորդ օրն արգելվեց, որ մենք հայերեն խոսենք: Մեզ ճշումների ենթարկեցին, որ միայն թուրքերեն խոսենք»: Համբարձումը զարմացել է ոչ թե նրա վրա, թե ինչքան արագ են իրենք թուրքերեն սովորել, այլ՝ որչափ արագ են մոռացել հայերեն խոսելը: Նա նշում է. «Լրիվ մոռացել էինք հայերեն խոսելը»<sup>420</sup>: Ավելի ուշ սկսում է իսլամացման բաժինը. «Մի օր մոլլան եկավ, մյուս օրը՝ խոջան: Երկու շաբաթից ավելի առավոտներն ու երեկոները բռնի կերպով մեզ հարկադրեցին մուսուլմանների աղոթքները կարդալ: Ամեն շաբաթվա վերջ էլ քննություն տվեցինք»<sup>421</sup>:

Մեկ այլ գործադրում է երեխաներին բաժանելն ըստ տարիքային խմբերի: «Երեք շաբաթ անց, առանց նախազգուշացման, առավոտյան ժամը 10-ի կողմերը 3 ժանդարմներ եկան... Առանց որևէ բան ասելու՝ նրանք անմիջապես սկսեցին երեխաներին խմբերի բաժանել՝ ըստ ֆիզիկական կառուցվածքի և տարիքի»: Համբարձումը տեղեկանալու է նաև, թե ինչու է այդ բաժանումը կատարվում. «Պարզվեց, որ բարձր տարիքի երեխաներն առանձնացվում էին՝ նույն օրն սպանվելու համար: Թուրքերը գիտեին, որ տարիքով մեծերը չէին փոխի իրենց կրոնը և չէին

419 Hampartzoum Mardiros Chitjian, *A Hair's Breadth From Death*, Taderon Press, Londra ve Reading, 2003, էջ 98-99.

420 Նույն տեղում, էջ 100:

421 Նույն տեղում, էջ 101: Շեղատառ բառերը բնագրում են այդպես գրված:

թուրքացվի և դրա համար էլ կշարունակեին սպառնալիք լինել... Գիտեինք, որ դատապարտված էինք մահվան»<sup>422</sup>:

Փախչելու շնորհիվ մահից փրկված Համբարձումը 2003 թ.՝ 102 տարեկան հասակում գրած իր գրքում հետևյալն է հայտնում իր հետ միասին ընտրված մյուս երեխաների մասին. «Մինչ օրս ոչ մի բան չեմ լսել մյուս երեխաների ճակատագրի մասին: 88 տարի շարունակ որոնել եմ նրանց, բայց՝ ապարդյուն»<sup>423</sup>: Որբանոցում մնացած մյուս երեխաները հետագայում որպես ծառա տրվել են մուսուլման ընտանիքներին, իսկ որևէ գործի համար ոչ պիտանի փոքրիկներն սպանվել են մեծահասակ երեխաների պես: Սպանվածների մեջ է նաև Համբարձումի ամենափոքր եղբայրը<sup>424</sup>:

Մեր կողմից Համբարձումի պատմությունը մանրամասն ներկայացնելու պատճառն այն է, որ նրա հուշագրությունը կոնկրետ տեղեկություններ է պարունակում այն մասին, թե ինչեր են արվել երեխաների նկատմամբ: Բացի այդ՝ նրա հաղորդած տեղեկությունները համընկնում են թե՛ օսմանյան աղբյուրներից և թե՛ օտարերկրյա դեսպանությունների զեկույցներից մեր ձեռք բերած տեղեկությունների հետ: Այդպիսով ցույց ենք տալիս նաև տարբեր աղբյուրների միջև եղած ներդաշնակությունը:

Այս հարցի վերաբերյալ վերջին տեղեկությունը, որ կարելի է հավելել, երրորդ բանակի հրամանատարության կողմից շրջաններ ուղարկված մի շրջաբերական է, որը հղվել է իթթի-հադականների համար շատ լուրջ համարվող մի խնդրի լուծում տալու նպատակով: Ինչ է լինելու, եթե մահմեդականների տներում ցրված հայ երեխաները վերցվեն ոչ թե ուծացման, այլ միայն նրանց կյանքը փրկելու և թաքցնելու նպատակով, քանզի այդ դեպքում տվյալ երեխաները կշարունակեն պահպանել իրենց հայկական ինքնությունը և ապագայում լուրջ խնդիրներ

422 Նույն տեղում, էջ 104:

423 Նույն տեղում, էջ 105:

424 Նույն տեղում, էջ 156-157:



կհարուցեն: Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլ փաշան այդ հարցի մասին հեռագրում նշում է. «Հաղորդվել է, որ դեպի ներքին շրջաններ ուղարկված հայերին թաքցնողները մահապատժի կենթարկվեն: [Այդ] պատիժը չի վերաբերում կառավարության կողմից պաշտոնապես ցրված... կանանց ու երեխաներին պաշտպանողներին... Սակայն, անկախ նրանից, թե ինչ սեռի են կամ ինչ կրոն են դավանում, բոլոր նրանք, ովքեր առանց կառավարության տեղեկության՝ իրենց տներում հայերի են թաքցնում, ինչպես նաև՝ առանց պաշտոնապես ամուսնանալու՝ իրենց տներում կին ու աղջիկ են պահում, կպատժվեն, ինչպես մինչ այդ էլ հաղորդվել է»<sup>425</sup>:

#### Վերաբերմունքի փոփոխություն միսիոներական դպրոցների հարցում

Օսմանյան պետության սահմանների ներսում գոյություն ունեցող օտարերկրյա միսիոներական դպրոցները խնդիր էին ուծացման քաղաքականությունը հաջող կերպով իրականացնելու հարցում, քանի որ այդ դպրոցներում սովորող հայ երեխաները շարունակում էին պահպանել իրենց էթնիկական-մշակութային ինքնությունը: Պետք էր փակել այդ դպրոցները, և, ի վերջո, հենց այդպես էլ եղավ. դպրոցները փակվեցին, իսկ դրանց շենքերը բռնազավթվեցին: Իրականում օսմանյան իշխանությունները պատմականորեն չափազանց մեծ անհանգստություն էին զգում միսիոներական գործունեությունից, բայց և այնպես չէին կարողանում դա արգելել իրենց թուլության պատճառով<sup>426</sup>:

425 Երրորդ բանակի հրամանատարությունից 1915 թ. օգոստոսի 1-ին Սվասի վիլայեթ ուղարկված շրջաբերականը: St'u Archive of Armenian Patriarchate Jerusalem (A.A.P.J.): Carton 17, File H, Document no: 309:

426 Միսիոներական դպրոցները և դրանց ճակատագիրն ինքնին առանձին ուսումնասիրության թեմա է, որ այստեղ չի հետազոտվում: Սույն հարցի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Hans-Lukas Kieser**, *Der Verpasste Friede, Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Turkey, 1939-1938*,

1914 թ. նոյեմբերին պաշտոնապես պատերազմի մեջ մտնելը թշնամի պետությունների միսիոներներին վնասելու հնարավորություն էր ընձեռել, մի բան, որն արվեց անհապաղ<sup>427</sup>: Հերթը հասավ գերմանացի և ամերիկացի միսիոներների գործունեությունն արգելելուն: Դա էլ արվեց ժամանակի ընթացքում:

1918 թ. «Աթի» թերթում միսիոներական գործունեության մասին մի հոդված հրատարակած էնվեր փաշան, ըստ էության, արտահայտում էր սույն խնդրի վերաբերյալ օսմանյան իշխանությունների համընդհանուր կարծիքը: Փաշան միսիոներներին համարում է «աշխարհի երեսին ոչ մի իսլամական կառավարություն թողնել» չցանկացող անձինք, իսկ նրանց կառավարությունների նպատակն էլ «մեզ [օսմանցիներին, մուսուլմաններին] աշխարհի երեսից վերացնելն է»: Ըստ փաշայի՝ հարկ էր ազատվել Անատոլիայի վրա «օտարերկրյա ազդեցությունից և միջամտությունից», ով նաև ասում էր, թե «...ոչ մի արտասահմանյան կառավարություն միսիոներներ ուղարկելու և այս մայրցամաքում դպրոցներ բացելու իրավունք չունի և չի կարող ունենալ»<sup>428</sup>: Հենց այդպես էլ արեցին:

Սկզբում ամերիկյան և գերմանական միսիոներական դպրոցներին չէին դիպել և թույլ էին տվել, որ դրանք բաց մնան: Դրան կարելի է հետևել նաև օսմանյան աղբյուրներից: 1915 թ. օգոստոսի 17-ին Սվաս է հաղորդվում, թե «Որբանոցում գտնվող ուսուցիչներին և երեխաներին առայժմ թույլ է տրվել այնտեղ մնալ»<sup>429</sup>: Նույն ամսաթվին Ադանա է հրահանգվում, թե «...գերմանական միսիոներների մանկատներում գտնվող հայ

Chronos Verlag, Zürich, 2000, էջ 327-359; **Şamil Mutlu**, *Osmanlı Devletinde Misyoner Okulları*, Gökkuşbu, İstanbul, 2005, էջ 333-371:

427 **Hans-Lukas Kieser**, նշվ. աշխ., էջ 345.

428 Հոդվածն ամբողջությամբ տե՛ս նույն տեղում, էջ 561-564:

429 BOA/DH.ŞFR., nr. 55/42, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 17-ին Սվասի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

երեխաներին չդիպչել...»<sup>430</sup>, իսկ 1915 թ. նոյեմբերին էլ Կայսերի է հրամայվում, որ «...ամերիկյան միսիոներների որբանոցներում գտնվող հայ երեխաներին առայժմ թողնեն, որ այնտեղ մնան»<sup>431</sup>:

Միսիոներների գործունեության դեմ ձեռնարկված առաջին միջոցը եղավ այն, որ հայերի աքսորվելու պատճառով աշակերտ չգտնող այդ դպրոցներին արգելեցին որբանոցների վերածվել: 1915 թ. սեպտեմբերի 9-ին Ազգային կրթության նախարարի ստորագրությամբ և Ներքին գործերի նախարարության գաղտնագրով շրջաններ ուղարկվեց նախազգուշացնող մի գաղտնի գրություն, որով պահանջվում էր թույլ չտալ, որ գոյություն ունեցող արտասահմանյան դպրոցները մանկատների վերածվեն: «Ջգացվում է, որ հայերի գաղթից հետո աշակերտ գտնելու անհնարինությունը հասկացած ամերիկյան և գերմանական դպրոցները, որբանոցների վերածվելով, նորից լցվելու են հայ երեխաներով: Բացի այդ՝ քանի որ դպրոցների՝ մանկատների վերածվելը կախված է սուլթանական հրովարտակով թույլտվություն ստանալուց, հարկ է արգելք լինել առանց թույլտվության նման բան անել հանդգնած դպրոցներին»<sup>432</sup>:

Հեռագիրն ավարտվում է այնպիսի արտահայտություններով, որոնք բացահայտ կերպով նշում են, որ կառավարության իրական նպատակն է միսիոներական գործունեությունից ազատվելը, և որ դրա հնարավորությունն ընձեռվել է, և

430 BOA/DH.SFR, nr. 55/43, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. օգոստոսի 17-ին Ադանայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

431 BOA/DH.SFR., nr. 57/270, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1915 թ. նոյեմբերին Կայսերիի սանջակ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

432 BOA/DH.SFR., nr. 55-A/155, Հանրակրթության նախարարությունից 1915 թ. սեպտեմբերի 9-ին Մամուրեթյուլագի, Սվասի և Դիարբեքիի վիլայեթներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

այն երբեք չպետք է ձեռքից փախցվի. «Խիստ կարևորելով այս հարցը՝ խնդրում եմ հնարավորությունն ու առիթը բաց չթողնել արտասահմանից սնվող այս հաստատություններից ազատվելու համար, որոնք խաբում են երկրին՝ վատը որպես լավ ներկայացնելով»<sup>433</sup>:

Միսիոներներն էլ գիտակցում էին, որ ձեռնարկված միջոցների նպատակն այդ դպրոցները փակելն էր՝ առանց հնարավորություն տալու, որ դրանք որբանոցների վերածվեն: Հալեպի հյուպատոս Ջեքսոնի զեկույցը լիովին ամփոփում է այդ դրությունը. «Ամերիկյան նշանավոր կրոնական ու կրթական հաստատությունները կորցնում են իրենց պրոֆեսորներին, ուսուցիչներին, օգնականներին և աշակերտներին: Մինչև իսկ հարյուրավոր մանուկների օթևան տված որբանոցներն են դատարկվելու: 50 տարի այս ոլորտում ներդրված անգնահատելի ջանքերը ջուրն են թափվում»<sup>434</sup>:

Այդ սպասումն ի վերջո իրականանում է. կառավարությունը, պատերազմի պատճառով ունեցած կարիքները պատրվակ բռնելով, մեկ առ մեկ սկսում է փակել դպրոցներն ու մյուս հաստատությունները և բռնագրավել դրանց շենքերը: Այս ուղղությամբ սկզբում բռնագրավվում են Մերսինի, Տարսուսի և Ադանայի ամերիկյան դպրոցները<sup>435</sup>: Կայսերիում բռնագրավված որբանոցը վերածվում է հիվանդանոցի<sup>436</sup>: Հետագայում

433 Նույն տեղում:

434 NA/RG59/867.4016/126, Հալեպի հյուպատոս Ժ. Բ. Ջեքսոնից Ամերիկայի արտակարգ և լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուին 1915 թ. օգոստոսի 3-ին ուղարկված զեկույցը:

435 Դրա դեմ արտահայտված ամերիկյան բողոքի մասին տե՛ս BOA/HR.HMS. IŞO, 71/1-4 և Şamil Mutlu, նշվ. աշխ., էջ 333:

436 Կայսերիում աշխատող ամերիկացի միսիոներ Հենրի Կ. Վինգեյթի՝ Ամերիկայի արտակարգ և լիազոր դեսպան Մորգենթաուին 1915 թ. նոյեմբերի 16-ին ուղարկված նամակից տեղեկանում ենք, որ փակելուն ուղղված առաջին գործողություններն սկսել են 1915 թ. նոյեմբերին: Տե՛ս LC/HM(Sr.)/Reel 7/770; cited in Ara Sarafian (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 289:

բռնագրավվելու են նաև Բիթլիսում գտնվող ամերիկյան հաստատությունները<sup>437</sup>: Մնացածները խիստ ծանր պայմաններով շարունակեցին իրենց աշխատանքը, և այն բանից հետո, երբ Ամերիկան 1917 թ. գարնանը մտավ պատերազմի մեջ, նրա հաստատությունները հանձնվեցին գերմանական ու շվեյցարական հաստատություններին<sup>438</sup>: Որոշներն էլ բռնագրավվում են կառավարության կողմից, ինչպես, օրինակ, Տրապիզոնում եղած հաստատությունը, որը վերածվեց ոստիկանական դպրոցի<sup>439</sup>: Այլևս անհնար է, որ այդ հաստատություններն արգելք լինեն ուժացման քաղաքականությանը:

Ստամբուլում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխը 1916 թ. հուլիսի 10-ին ուղարկած իր զեկույցում հաղորդում է, որ կառավարությունը հետ է վերցրել բարեսիրական կազմակերպություններին, հատկապես՝ գերմանական որբանոցներին «անցյալ տարի տրված որոշ առավելություններ»: Քանզի, ըստ դեսպանի, «թուրքական կառավարությունը գիտակցեց, որ արտասահմանցիների կողմից ղեկավարվող դպրոցներն ու մանկատները մեծ ազդեցություն են թողնում հայ ազգային գիտակցության զարթոնքի և զարգացման վրա», և այդ պատճառով «ներդաշնակ դիրքորոշում կլինեք այդ հաստատությունները խիստ հսկողության տակ վերցնելը կամ էլ՝ լրիվ փակելը»<sup>440</sup>: Ի վերջո այդպես էլ եղավ: Օգոստոս ամսին Հալեպից գերմանացի հյուպատոսը հաղորդում է, թե կառավարությունը որբանոցների համար պատասխանատու մի կոմիսար

437 BOA/DH.SFR., nr. 68/148, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1916 թ. հոկտեմբերի 1-ին Բիթլիսի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

438 Hans-Lukas Kieser, *Der Verpasste Friede...*, էջ 432.

439 BOA/DH.SFR., nr. 88/147, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1918 թ. հունիսի 16-ին Տրապիզոնի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

440 DE/PA-AA/R14092, Արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխից կանցլեր Բեթման Հոլվեգին 1916 թ. հուլիսի 10-ին ուղարկված զեկույցը:

է նշանակել, որի պարտականությունն է ապահովել, որ կառավարումը թուրքերին փոխանցվի<sup>441</sup>:

1917 թ. գարնանը փակվում է նաև Հալեպում գերմանացիների հսկողության տակ գտնվող որբանոցը, և երեխաները ցրվում են Անատոլիայի զանազան վայրերով մեկ և, հատկապես, Բեյրութի նորաբաց մանկատուն<sup>442</sup>: Այլևս ոչ մի արգելք չի մնացել հայ երեխաների իսլամացման հարցում: Ամերիկացի միսիոներուհի Ստելլա Լաֆրիջի՝ դպրոցների գլխին եկածները ներկայացնող հետևյալ խոսքերը կարծես ամփոփում են ուժացման այդ ամբողջ քաղաքականությունը. «Մեր հաստատությունից վերցված կանայք աքսորվեցին, քանի որ չընդունեցին մուսուլման դառնալու առաջարկը: Նրանցից խլեցին երեխաներին ու նորածիններին: Իսլամ ընդունածներին թույլ տվեցին մնալ, սակայն նրանց երեխաներին էլ խլեցին, իսկ իրենց ցրեցին շրջակա գյուղերով մեկ և իմ բոլոր ճանաչածներին էլ ստիպեցին ամուսնանալ թուրքերի հետ»<sup>443</sup>:

### Թվերի մասին

Չգիտենք, թե ի վերջո քանի կին ու երեխա է ցրվել մուսուլմանների տներով: Վերոհիշյալ զեկույցում ևս Ջապել Եսայանը բռնի առևանգված և մահմեդականների տներում բաժանված

441 DE/PA-AA/R14093, Հալեպում հյուպատոսության ներկայացուցիչ Հոֆմանից Ստամբուլում Գերմանիայի հյուպատոսություն 1916 թ. օգոստոսի 29-ին ուղարկված զեկույցը:

442 Գերմանիայի արտագործնախարարության արխիվում բավականին շատ գրություններ են առկա՝ Հալեպում գտնվող որբանոցի փակման մասին: Տե՛ս DE/PA-AA/R14095, Հալեպի հյուպատոս Ռյոսլերից վարչապետ Բեթման Հոլվեգին 1917 թ. փետրվարի 14-ի զեկույցը, DE/PA-AA/R14095, Արտագործնախարարությունից Ստամբուլի դեսպանատուն 1917 թ. մարտի 1-ի զեկույցը, DE/PA-AA/R14095, Արտակարգ և լիազոր դեսպան Քյոնիգմանից արտաքին գործերի նախարարին 1917 թ. մարտի 7-ի գրությունը:

443 Ստելլա Լաֆրիջի զեկույցը, James L. Barton (ed.), *Turkish "Atrocities" Statements of American Missionaries*, էջ 117:

կանանց, աղջիկ ու տղա երեխաների թիվը սահմանում է 200 հազար, «թեև ստույգ չէ»<sup>444</sup>: Պատերազմից հետո Գերմանիայի խաղաղացած դերը փոքրացնելու նպատակով գերմանական փաստաթղթեր հրապարակած Լեփսիուսը ևս նշում է, թե «Իսլամացված հայերի, առևանգված և վաճառված կանանց, աղջիկ ու տղա երեխաների թիվը կարող է 200 հազարի չափ լինել, բայց այդ թիվը երաշխավորված չէ»<sup>445</sup>:

Իսկապես որ թվերի հիմքում միայն ենթադրություններ են: Աշխատության մեջ ասվում է, թե միգրացիոն 1915 թվականին հաջորդած գործընթացում օսմանահպատակ հայերի 5-10 տոկոսը տարրալուծվել է մուսուլմանների տներում, իսկ դա նշանակում է 100-200 հազարի հասնող մի թիվ<sup>446</sup>:

Ստույգ տեղեկություններ չունենք նաև առ այն, թե այդ երեխաներից քանիսն է պետության հսկողության տակ գտնվող որբանոցներ վերցվել, և քանիսը՝ կառավարության միջոցով մահմեդականների տներում ցրվել: Մեր ձեռքի տակ շատ տարբեր թվեր կան: Օրինակ՝ Մուրադ Բարդաքչիի հրատարակած՝ Թալեաթ փաշային պատկանող պաշտոնական փաստաթղթերի համաձայն, որոնց վրա որևէ ամսաթիվ չկա, մուսուլման բնակչության մեջ բաժանված հայ երեխաների թիվը 6.768 է, իսկ որբանոցներում տեղավորված մանուկներինը՝ 3.501: Չափազանց հեշտ է հաստատել, որ մեր ենթադրությամբ 1918 թ. պատրաստված այդ փաստաթղթի թվերը շատ թերի են: Օսմանյան վիլայեթների և առանձին սանջակների ընդհանուր թիվը 46 է (25 վիլայեթ և 21 սանջակ), և այն դեպքում, երբ դրանցից մոտավորապես 35-ում անմիջականորեն տեղի են ունեցել աքսորներ

444 **Zabel Yesayan**, *La liberation des Femmes et Enfants Nonmusulmans en Turquie*, էջ 1.

445 **Lepsius**, *Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke*, էջ LXV.

446 **Ara Sarafian**, "The Absorption of Armenian Women and Children", էջ 211; **Hikmet Özdemir**, **Kemal Çiçek**, **Ömer Turan**, **Ramazan Çalik**, **Yusuf Halaçoğlu**, *Ermeniler: Sürgün ve Göç, Türk Tarih Kurumu*, Ankara, 2004, էջ 5-53.

ու բաժանումներ, Թալեաթ փաշայի ցանկը 16 (10 վիլայեթ և 6 սանջակ) բնակավայրի հետ կապված թվեր է ընդգրկում և ոչ մի տեղեկություն չի տալիս դրանցից դուրս գտնվողների վերաբերյալ<sup>447</sup>:

1917 թ. օսմանյան սենատում որբանոցների մասին մի օրենքի առաջարկի վերաբերյալ ծավալված քննարկումների ժամանակ Ազգային կրթության նախարարը նշում է, թե 1917 թ. մարտի դրությամբ ընդհանուր թվով 69 որբանոց է առկա, որոնցում երեխաների թիվը մոտ 20 հազար է: Նրանցից 5 հազարը աղջիկ է, մնացածը՝ տղա: Անշուշտ, նրանք միայն հայ որբեր չեն: Նրանց մեջ կան նաև մահմեդական երեխաներ: Նախարարը ևս իր ելույթում ասում է, որ հայտնի չէ, թե այդ երեխաներից քանիսն են զոհված զինվորների ընտանիքներին պատկանել, քանիսը՝ այլոց երեխաները եղել, և ենթադրում, թե «կեսը զինվորականների զավակներն են, կեսն էլ՝ մյուսների»<sup>448</sup>: 1919 թ. Վիլսոնի կողմից Հայաստանում հավանական ամերիկյան մանդատի հաստատման հարցի վերաբերյալ զեկույց պատրաստելու նպատակով Անատոլիա և Կովկաս ուղարկված գեներալ Հարբորդն իր զեկույցում նշում է «այսօր կամ կառավարությունից, կամ էլ մեկ այլ հաստատությունից օգնություն ստացած ուղիղ 50 հազար որբի» գոյության մասին<sup>449</sup>: Հարբորդը, ամենայն

447 Տե՛ս **Murat Bardakçi**, *Talat Paşa'nın Evrak-i Metrukesi*, Everest, İstanbul, 2008, էջ 89: Որպես օրինակ կարելի է բերել այն փաստը, որ այնպիսի էական նշանակություն ունեցող բազմաթիվ վիլայեթներ, ինչպիսիք են Սիրիան, Անկարան, Մամուրեթյուվազիզը, Կաստամունուն, Կոնիան և Բեյրույթը, տեղ չեն գտել այդ ցանկում: Կարելի է նաև հանգիստ կերպով արձանագրել, որ ցանկում ընդգրկված բնակավայրերի վերաբերյալ ներկայացված թվերը թերի են: Օրինակ, ըստ ցանկի, Կայսերիի, Դեր Զորի, Ուրֆայի, Իզմիրի, Մուսուլի և Հալեպի նման տեղերում մուսուլման բնակչությանը հանձնվածների մասին ոչ մի տվյալ չկա: Ավնհայտ է, որ դա ճիշտ լինել չի կարող:

448 *Meclis-i Ayan Zabıt Ceridesi*, Devre: 3, İctima Senesi: 3, 27 Mart 1917 tarihli oturum, s. 397.

449 **Maj. Gen. James G. Harbord**, *Report of the American Military Mission to Armenia*, Government Printing Office, Washington, 1920, էջ 8.

հավանականությամբ, սույն թվի մասին տեղեկությունը ստացել է թուրքական բանակի հրամանատար Քազիմ Կարաբեքիրից, որի հետ հանդիպել է Էրզրումում<sup>450</sup>:

Պոլսո հայոց պատրիարքարանի կողմից 1921 թ. պատրաստված մի զեկույցում ասվում է, թե «դեռ մուսուլմանների տներում չփրկված հայ որբեր ու երիտասարդ աղջիկներ կան», և նշվում, որ նրանց թիվը ենթադրաբար 63 հազար է<sup>451</sup>: Դարձյալ նույն տարում Ազգերի լիգայի կողմից պատրաստված մի զեկույցում ենթադրաբար մուսուլմանների տներում թաքուն պահվող միայն որբ երեխաների թիվը ներկայացվում է 73.350<sup>452</sup>:

Այստեղ հարկ չկա քննարկել այս թվերը, որոնք բոլորն էլ ենթադրությունների վրա են հիմնված: Միայն բավարար է ասել, որ Առաջին աշխարհամարտից հետո, երբ Ստամբուլը գրավվեց դաշնակից ուժերի կողմից, մուսուլմանների տներում ցրված երեխաներին և աղջիկներին հայտնաբերելը խիստ բարդ խնդիր դարձավ<sup>453</sup>:

450 Քազիմ Կարաբեքիրը ևս նույն թիվն է նշում իր հուշերում: Տե՛ս **İbrahim Ethem Atnur**, *Türkiye'de Ermeni Kadınlar ve Çocuklar Meselesi* (1915-1923), (Ankara: Babil Yayıncılık, 2005), էջ 129:

451 NA/RG867/4016/398, փոխանցող՝ **Hikmet Özdemir, Kemal Çiçek, Ömer Turan, Ramazan Çalik, Yusuf Halaçoğlu**, *Ermenileri Sürgün ve Göç*, էջ 120-126:

452 Տե՛ս Ազգերի լիգայի անունից Ստամբուլում պաշտոնավարող տիկին Է. Դ. Քյուլմընի՝ 1921 թ. հուլիսի 16-ի նամակը, League of Nations, Assembly of Fifth Committee, *Deportation of Women and Children in Turkey Asia Minor and the Neighbouring Territories, Report Submitted to the second Assembly by the Fifth Committee*, Ժնև, 22-ը սեպտեմբերի, 1921: Սույն զեկույցն այսուհետև կհիշատակվի միայն որպես զեկույց: Զեկույցի ամբողջական տեքստը տե՛ս [http://www.genocide-museum.am/eng/word/League\\_%20of\\_%20 Nations.doc](http://www.genocide-museum.am/eng/word/League_%20of_%20Nations.doc) (մուտք, 2-ը օգոստոսի, 2014):

453 1918 թ. կնքված Մուդրոսի զինադադարից հետո կրոնափոխված և մուսուլման ընտանիքներին բաժանված հայերի խնդիրն այս ուսումնասիրության սահմաններից դուրս է, որի համար էլ այստեղ չի քննվելու: Այդ մասին ավելի մանրամասն տեղեկություններ տե՛ս **İbrahim Ethem Atnur**, *Türkiye'de Ermeni Kadınlar ve Çocuklar*, էջ 129-194:

## Հրաժարում իթթիհադական քաղաքականությունից

Վերոնշյալի իմաստն այն էր, որ 1916 թ. գարնանից հետո ողջ մնալ թույլ տրված հայերի համար մեկ ընտրություն կար՝ մուսուլման դառնալ, իսկ դրանից բացի՝ մնացած այլընտրանքը մահն էր: Այդ պատճառով կարող ենք շատ հանգիստ ասել, որ 1916 թ. հետո օսմանյան տիրապետության տակ մնացած և Ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերը որպես մահմեդական են ապրել մինչև 1918 թ. հոկտեմբեր, երբ նրանց վերստին թույլ է տրվել քրիստոնյա դառնալ<sup>454</sup>: Ուշագրավ է, որ հայերի հուշագրություններում այդ պարտադրված մահմեդականության վերաբերյալ առանձնապես շատ տեղեկություններ չեն հանդիպում: Ինչպես երևում է, ողջ մնացածները, ընդհանուր առմամբ, նախընտրել են լռել այն փաստի մասին, որ իրենց կյանքի մի մասը որպես մուսուլման են ապրել: Դա կարելի է բացատրել խղճի այն մեծ տանջանքով, որ նրանք ապրել են ողջ մնալու համար իսլամ ընդունելու հետևանքով: Եւ հավանաբար այդ պատճառով են նրանք նախընտրել լռել:

Եթե մի կողմ թողնենք Միություն և առաջադիմություն կուսակցության իշխանության ժամանակաշրջանում՝ 1918 թ. օգոստոսին, ուղևորության արգելքի նկատմամբ վերոհիշյալ մեղմացումը, ապա կարող ենք արձանագրել, որ հայերի հանդեպ գործադրված քաղաքականությունն սկսել է փոխվել 1918 թ. հոկտեմբերին: Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից պատերազմը տանուլ տալու փաստը և երիտթուրքերի՝ 1918 թ. հոկտեմբերի 8-ին իշխանությունից հեռանալը այդ քաղաքականության փոփոխման հիմնական պատճառներն են: 1918 թ. հոկտեմբերի 14-ին վարչապետի պաշտոնն ստանձնած Ահմեթ Իզզեթ փաշայի կառավարության՝ մեզ հետաքրքրող հարցում կատարած առաջին փոփոխությունը հայերի ճամփորդության

454 Այդ կանոնից բացառություն են կազմում աքսորից գերծ մնացած հայերը, ինչպիսիք էին, օրինակ, պոլսահայերը, կամ հատուկ թույլտվությամբ իրենց կրոնը պահպանած հայերը:

վրա դրված արգելքի վերացումն է: 1918 թ. հոկտեմբերի 18-ին բոլոր շրջաններին հաղորդվում է, թե «ռազմական դրության կապակցությամբ և գինվորական որոշմամբ մի վայրից հանվելով՝ մեկ այլ վայր ուղարկված բնակիչներին թույլ է տրվում վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը»: Եւ պահանջվում է ապահովել, որ նրանց վերադարձը կատարվի անվտանգ պայմաններում, և «...սույն հրամանի գործադրման ընթացքում ոչ մի դեպքում թույլ չտալ որևէ արդարացում և ուշացում»<sup>455</sup>:

Ահմեթ Իզզեթ փաշան 1918 թ. հոկտեմբերի 19-ին մեջլիսում ներկայացված կառավարության ծրագրի մեջ ևս անդրադառնում է այդ հարցին և նշում, թե «Որոշվել է ռազմական դրության պատճառով և հարկադրանքով երկրի ներսում մի վայրից մյուսը տեղափոխված և տեղահանված մեր քաղաքացիներին մաս-մաս իրենց նախկին տեղերը վերադարձնել» և հայտնում, որ այդ կիրառումն արդեն սկսվել է<sup>456</sup>: Իզզեթ փաշայի խոսքով՝ «Մեկ-երկու տարուց ի վեր շատ մեծ տառապանքների ենթարկված հայրենիքի այդ զավակների շարժական և անշարժ գույքն իրենց է վերադարձվելու, իսկ նրանց ծախված իրերի արժեքը փոխհատուցվելու է»<sup>457</sup>:

1918 թ. հոկտեմբերի 21-ից սկսած թույլ է տրվում, որ հայերը վերադառնան իրենց նախկին կրոնին: Այդ ամսաթվին բոլոր վիլայեթներ ուղարկված մի հեռագրում նշվում է, թե հայերը մահվան ահից են հարկադրված եղել կրոնափոխվել, և հիմա, երբ ցանկանում են նորից վերադառնալ իրենց նախկին կրոնին, դա թույլ է տրվում: Հեռագրում այդ թույլտվությունը հիմնավորվել է նաև որոշ պաշտոնական փաստարկներով: Հեռագրում

նաև շեշտվում է, որ անհնար է վախի պատճառով արված այդ գործողությունը պաշտոնապես ընդունել, և որ քրիստոնյաների՝ նախկին կրոնին վերադառնալը չափազանց բնական է: Պահանջվում է նաև Սահմանադրության կողմից օսմանահպատակ քաղաքացիների խղճի ազատությունը երաշխավորող հիմնական սկզբունքին ևս հակասող այդ դրությանն անմիջապես վերջ տալով՝ ժամ առաջ կատարել հայերի՝ նախկին կրոնին վերադառնալու գործողությունը<sup>458</sup>:

Դարձյալ 1918 թ. հոկտեմբերի 21-ին բոլոր շրջաններ հղված մեկ այլ հրամանով պահանջվում է տներում բռնի ուժով պահվող հայ կանանց, աղջիկներին և երեխաներին ազատ թողնել և հանձնել մոտ կամ հեռու ազգականներին: Ընդգծվելով, որ

458 BOA/DH.ŞFR., nr. 92/205, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի, Դիարբեքրի, Սվաբի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահիզի, Մոսուլի, Վանի վիլայեթներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Չաթսալայի, Չոքի, Քարեսիի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Մարաշի, Էրզինջանի, Նիղդեի սանջակներ 1918 թ. հոկտեմբերի 21-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Լուր է ստացվել ըստ որի՝ վիլայեթներում որոշ քրիստոնյա բնակիչներ մահվան ահով և ժամանակավորապես կրոնափոխվել են, և թեև նրանք ներկայում ցանկանում են վերադառնալ իրենց նախկին կրոնին, սակայն վախենում են որոշ պաշտոնյաներից: Շրջաբերականով հանձնարարվում է՝ ոչ մի խղճի կարծիքի վրա չհիմնված, միայն մահվան ահից ու հուզմունքից ելնելով կատարված այդ հավանական կրոնափոխությունները չունեն որևէ օրինական արժեք, որը հնարավոր կլինեք ընդունել պաշտոնապես, և քանի որ փորձը ցույց է տալիս, որ այդ ձևով կրոնափոխվածները ցանկություն և հակում են ունենում վերադառնալու իրենց իրական կրոնին, և օսմանյան Սահմանադրության կողմից բոլոր օսմանահպատակներին շնորհված անխտիր բոլոր կրոններն ու հավատքները դավանելու խղճի ազատությանը ևս հակասող այդ դրությանը տեղիք չտալու և չջարունակելու համար, քանի որ դա չի համապատասխանում նաև հայրենական վեհագույն շահերին, անմիջապես լուրջ հետաքննություն կատարելով՝ իրենց անուններն ու կրոնը փոխած անձանց համապատասխան ձևով հաղորդել, որ կարող են ընտրել իրենց իրական կրոնին վերադառնալու տարբերակը»:

455 Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, *Osmanlı belgelerinde Ermenilerin Sevk ve İskanı*, Osmanlı Arşivi Daire Başkanlığı Yayını, Ankara, 2007, s. 396.

456 *Meclis-i Mebusan Zabıt Ceridesi*, Devre: 3, İçtima Senesi: 5, Cilt: 1, 19 Teşrin-i Evvel 1334, T.B.M.M. Basımevi, Ankara, s. 29.

457 Սույն տեղում:

մարդկանց բռնի ուժով տներում պահելը հակասում է օսմանյան սահմանադրությանը, շեշտվում է նաև, որ այդ դրությունը չափազանց վնասակար հետևանքների կարող է հանգեցնել նաև երկրի համար: Պարզ է, որ այստեղ ենթադրվում են հաշտության մասին բանակցությունները<sup>459</sup>:

Հոկտեմբերի 22-ին շրջաններ ուղարկված՝ «Ճանապարհորդելու մասին փաստաթուղթ» գրությամբ նշվում է, թե ճանապարհորդելու մասին կանոնները ծրագրում են հանել, և հարցում է արվում, թե այդ կիրառումը ինչ բացասական հետևանքների կարող է հանգեցնել<sup>460</sup>: 1918 թ. հոկտեմբերի 23-ին պահանջվում է, որ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի արտորված հայերն ու հույները կարողանան ողջ-առողջ իրենց երկիր վերադառնալ, և հաղորդվում է, թե այս գործում թերացած պաշտոնյաները կպատժվեն<sup>461</sup>:

1918 թ. հոկտեմբերի 28-ին գրեթե բոլոր շրջաններ հղված մի հեռագրում պարզաբանվում է հատկապես բռնի ամուս-

նացված հայ կանանց վիճակը, և կանանց ու աղջիկների հետ կնքված ամուսնություններն անօրինական են հռչակվում: Հեռագրում նշվում է. «Մուսուլմանների հետ ամուսնություն կնքած հայ աղջիկներին ու կանանց իրենց ընտանիքներին հանձնելու վերաբերյալ դիմում է տրվել: Ինչպես նշվել է նաև նախկինում, քանի որ Սահմանադրությունն ընդունել ու պարտադրել է խղճի ազատությունը, հաղորդվում է, որ պետք է ազատություն շնորհել այդ կանանցից նրանց, ովքեր ցանկանում են վերադառնալ իրենց նախկին կրոնին, և քանի որ այդ դեպքում նրանց ամուսնությունը բնականաբար չեղյալ կհամարվի, նրանք իրենց ծնողների մոտ վերադառնալով՝ ազատ կլինեն: Մնացյալ խնդիրները կլուծվեն դատարանների կողմից»<sup>462</sup>:

Այս հարցում դժվարություններ հարուցած Կոնիայի վիլայեթ 1918 թ. նոյեմբերի 14-ին ուղարկված մի հեռագրում հիշեցվում է. «Թույլ է տրվել, որ հայերը վերադառնան իրենց բնակավայրեր, իսկ կրոնափոխվածներն էլ՝ իսկական հավատքին, և շրջաբերականով հաղորդվում հայ որբերին ծնողներին հանձնելու անհրաժեշտության մասին»<sup>463</sup>:

Թերևս հարկ է հատուկ նշել, որ սույն հարցի ուղղությամբ ամենակարևոր քայլն արվում է 1918 թ. նոյեմբերի 4-ին: Օսմանյան խորհրդարանում տեղի ունեցած քննարկումների արդյունքում 1915 թ. մայիսի 27-ին ընդունված ժամանակավոր օրենքը

459 BOA/DH.ŞFR., nr. 92/196, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1918 թ. հոկտեմբերի 21-ին Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիգյարի, Դիարբեքրի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի, Վանի վիլայեթներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուլուի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարեսիի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քարահիսար-ը Սահիբի, Էքիշեհիի, Մարաշի, Էրզինջանի, Նիղդեի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

460 BOA/DH.ŞFR., 92/207, Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիգյարի, Դիարբեքրի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի և Վանի վիլայեթներ, ինչպես նաև՝ Ուրֆայի, Իզմիրի, Բուլուի, Ջանիկի, Չաթալջայի, Քարեսիի, Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի, Կայսերիի, Քյուսահիայի, Քարահիսար-ը Սահիբի, Իչելի, Բաթումի, Կարսի, Էրզինջանի, Էքիշեհիի, Նիղդեի սանջակներ 1918 թ. հոկտեմբերի 22-ին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

461 Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, *Osmanlı belgelerinde Ermenilerin Sevk ve İskanı*, s. 397-8.

462 BOA/DH.ŞFR., nr. 93/300, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1918 թ. հոկտեմբերի 28-ին Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հյուղավենդիգյարի, Դիարբեքրի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի, Վանի վիլայեթներ և Էքիշեհիի, Ուրֆայի, Իչելի, Իզմիրի, Բուլուի, Թեքեի, Ջանիկի, Չաթալջայի, Չորի, Քարահիսար-ը Սահիբի, Քալե-ի Սուլթանիյեի, Քարեսիի, Կայսերիի, Քյուսահիայի, Մարաշի, Մենթեշեի և Նիղդեի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

463 BOA/DH.ŞFR., nr. 93/171, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1918 թ. նոյեմբերի 14-ին Կոնիայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

(«Օրենք տեղահանության մասին») հայտարարվում է Սահմանադրությանը հակասող<sup>464</sup>:

Հասկացվում է, որ կրոնափոխվածների՝ իրենց նախկին կրոնին վերադառնալու հարցում Դիարբեքիի նման որոշ շրջաններում դժվարություններ են լինում: Դրանից անմիջապես հետո՝ 1919 թ. հունվարի 28-ին հիշեցվելով, որ բռնի կերպով կատարված կրոնափոխություններն ընդունելի չեն, պահանջվում է. «Զուր տեղը հաղորդումների վրա ժամանակ չվատնելով՝ 20 տարեկանից ցածր հայ որբերին և երեխաներին անմիջապես հանձնել իրենց խնամատարներին»<sup>465</sup>: 1919 թ. փետրվարի 8-ին այս անգամ բազմաթիվ վիլայեթներ հղված մեկ այլ հրամանով բացահայտ կերպով ներկայացվում է, թե ինչպես պետք է արվի այդ կիրառումը: Դրա համաձայն՝ 20 տարին չլրացրած տղամարդկանց ու կանանց կրոնափոխությունն արդեն իսկ անընդունելի է, և դրա համար այդ տարիքը չլրացրած բոլոր հայերը պետք է գրանցամատյաններում որպես հայ արձանագրվեն: Ինչ վերաբերում է մյուսներին, նրանց հանդեպ պետք է վերաբերմունք դրսևորվի ըստ 1918 թ. հոկտեմբերի 21-ի շրջաբերականի: Այստեղ ևս հիմք է ընդունվում այդ մարդկանց՝ իրենց նախկին կրոնին վերադառնալու ցանկությունը<sup>466</sup>:

464 *Meclis-i Mebusan Zabıt Ceridesi*, Devre: 3, İctima Senesi: 5, Cilt I, T.B.M.M. Basımevi, Ankara, s. 114-116.

465 BOA/DH.ŞFR., nr. 95/273, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1919 թ. հունվարի 28-ին Դիարբեքիի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը: Նման մեկ այլ հեռագիր էլ տե՛ս BOA/DH.ŞFR., nr. 93/91:

466 BOA/DH.ŞFR., nr. 96/100, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1919 թ. փետրվարի 8-ին Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդընի, Բիթլիսի, Հյուսիսային Կարսի, Դիարբեքիի, Սվասի, Տրապիզոնի, Կաստամունուի, Կոնիայի, Մամուրեթյուպահի, Մոսուլի, Վանի վիլայեթներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Չաթալցայի, Քարեսիի, Քալար Սուլթանիյեի, Մենթեշի, Թեքեի և Կայսերիի սանջակներ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

Փարիզում 1919 թ. մեկնարկած խաղաղության բանակցություններում ևս բռնի կրոնափոխության և կանանց, աղջիկների և երեխաների՝ մուսուլմանների տներում բռնի ուժով պահվելու հարցը կարևոր տեղ է զբաղեցնում, և արդյունքում ընդունվում է, որ 1914 թ. հետո կատարված բոլոր կիրառումներն անօրինական են: Սևրի պայմանագրում սույն խնդրին անդրադառնում են մի հատուկ հոդվածով: Պայմանագրի 142-րդ հոդվածում բռնի կրոնափոխությունը անօրինական համարելու վերաբերյալ հետևյալ դրույթն է ընդգրկվում. «Նկատի առնելով, որ 1914 թվականի նոյեմբերի 13-ից հետո Թուրքիայում ահաբեկման ռեժիմի մեթոդով չի կարող բնականոն կրոնափոխություն լինել, վերոհիշյալ ամսաթվից հետո կատարված կրոնափոխության դեպքերը չեն ճանաչվում, և այն բոլոր անձինք, ովքեր մինչև 1914 թվականի նոյեմբերի 13-ը մահմեդական չեն եղել, կանվանվեն ոչ մուսուլմաններ: Եթե միայն նրանք, վերականգնելով իրենց ազատությունը, իրենց սեփական կամքով չեն կատարի այն բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են իսլամ ընդունելու համար»<sup>467</sup>:

Դարձյալ նույն հոդվածում անդրադարձ կա նաև կանանց, աղջիկներին և երեխաներին մուսուլմանների տներում պահելու հարցին: Եւ օսմանյան կառավարությունից պահանջվում է վերջ տալ այդ կիրառմանը, և կառավարությունը դրվում է լուրջ պատասխանատվության տակ: Դրա համաձայն՝ օսմանյան կառավարությունը պատասխանատվություն է ստանձնում փոխհատուցել այն բոլոր վնասների դիմաց, որոնք ի հայտ են եկել պատերազմի ընթացքում հատկապես հայերի դեմ կատարված հանցագործությունների և պատճառված կորուստների հետևանքով: Բացի այդ՝ կառավարությունը հարկադրված է գտնել բռնի կերպով մուսուլմանների տներում ցրված հայ երեխա-

467 Տվյալ հոդվածի ամբողջական տեքստը տե՛ս **Nihat Erim**, *Devletlerarası Hukuku ve Siyasi Tarih Metinleri*, Cilt 1, *Osmanlı İmparatorluğu Andlaşmaları*, Türk Tarih Kurumu, Ankara, 1953, էջ 571-572:



ներին և աղջիկներին ու նրանց հանձնել ընտանիքներին, եթե վերջիններս ողջ են: Այդ նպատակով պետք է ապահովել Ազգերի լիգայի կողմից ստեղծվելիք զանազան հանձնաժողովների աշխատանքը և կյանքի կոչել դրանց ընդունած որոշումները<sup>468</sup>:

Սույն պայմանագրից անմիջապես հետո այս խնդիրը քննվել է Ազգերի լիգայի կողմից, և վերջինս որոշել է մի հետաքննիչ հանձնաժողով ստեղծել: Երեք հոգուց բաղկացած այդ հանձնաժողովի անդամներից «Դոկտոր Քեննեդին և տիկին Էմմա Քյուլմընը նշանակվել են Ստամբուլում, իսկ տիկին [Քերըն] Եփփեն՝ Հալեպում»<sup>469</sup>: Պահանջվել է, որ սույն հանձնաժողովն աշխատի՝ Ստամբուլում դաշնակից ուժերի հրամանատարությունից աջակցություն ստանալով: Նաև Հայոց պատրիարքարանի և դաշնակից ուժերի օգնությամբ սկսվել է զանազան աղբյուրներից մուսուլմանների տներից կանանց և երեխաների հավաքումը<sup>470</sup>: Բացի այդ հանձնաժողովից, դաշնակից ուժերը

468 Նույն տեղում: Համապատասխան հոդվածն օգտակար է այստեղ նույնությամբ մեջբերել՝ չնայած երկար լինելուն. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է պատերազմի ամբողջ ընթացքում Թուրքիայում կատարված սպանությունների ժամանակ մարդկանց հասցված վնասներն ամբողջությամբ հատուցելու համար 1914 թ. նոյեմբերի 1-ից սկսած, անկախ նրանից, թե որ ազգությանը կամ կրոնին են նրանք պատկանում, կորած, բռնի կերպով վերցված, անօրինականորեն բանտարկված կամ էլ գերի ընկած բոլոր անձանց հանձնելու համար աջակցել և ապահովել իր պաշտոնյաների օժանդակությունը»: Օսմանյան կառավարությունը պարտավորվում է անձամբ տուժած անձանց ու նրանց ընտանիքների և ազգականների բողոքները լսել, անհրաժեշտ հետաքննությունն իրականացնել և իսկական կայունությամբ վերոնշյալ անձանց ճանապարհին ազատելու որոշումն իրագործելու համար ոլորացնել Ազգերի լիգայի կողմից նշանակվելիք տարբեր հանձնաժողովների կատարումները:

469 League of Nations, Assembly of Fifth Committee, Rapor, էջ 1.

470 Ազգերի լիգայի կողմից սույն հարցի ուղղությամբ կատարված աշխատանքների մասին ավելի մանրամասն տե՛ս հետևյալ երկու հոդվածները՝ **Keith David Watenpaugh**, “Between Communal Survival and National Aspiration: Armenian Genocide Refugees, the League of Nations and the Practice of Interwar Humanitarianism”, *Humanity: An International Journal of Human Rights, Humanitarianism, and Development*, 5:2, 2014 թ. ամառ, էջ 159–181; և **Wa-**

ևս կազմակերպել են իրենց աշխատանքները: Օրինակ՝ Անգլիական բարձր կոմիսարությանը կից ստեղծվել է Armenian-Greek Section-ը (Հայ-հունական սեկցիան): Այս խումբը ևս, մյուս պաշտոնյաների հետ մեկտեղ, զբաղվել է մահմեդականների տներում ցրված հայ երեխաներին հավաքելու գործով<sup>471</sup>:

Այս աշխատանքների ընթացքում հանդիպած բազմաթիվ խնդիրները լուծելու համար դիմել են կառավարությանը, և որոշ դեպքերում երեխաներին միայն կառավարության անմիջական միջամտությամբ են կարողացել մուսուլմանների տնից վերցնել: Որպես օրինակ կարելի է բերել 1919 թ. փետրվարի 25-ին անգլիական գերագույն հրամանատարության հատուկ դիմումով Անկարայում երկու երեխաների փրկելու համար դրսևորված նախաձեռնությունը: Անկարա ուղարկված հեռագրում պահանջվում է. «Անկարայում կրոնափոխ արված և Արվեստների դպրոցում տեղավորված երկու հայ կաթոլիկ երեխաներին, որոնցից մեկը 14 տարեկան է՝ Օննիկ, իսկ մյուսը՝ 12 տարեկան, Թաթյոս Քազյան (?) անվամբ, անմիջապես ազատ արձակելով՝... նրանց հանձնել այնտեղի պատվիրակին»<sup>472</sup>:

Ստամբուլում նշանակված հանձնաժողովի անդամ տիկին Է. Դ. Քյուլմընի կողմից 1921 թ. հուլիսի 16-ին Ազգերի լիգա ուղարկված զեկույցի շնորհիվ հնարավոր է որոշ տեղեկություններ քաղել այդ ուղղությամբ կատարված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ: Քյուլմընի հաղորդած թվերի

**tenpaug**, “The League of Nations’ Rescue of Armenian Genocide Survivors and the Making of Modern Humanitarianism, 1920-1927”, *American Historical Review* 115: 5, 2010, էջ 1315-39:

471 Սույն հանձնաժողովի գործունեության և նիստերի արձանագրությունների մասին տե՛ս **Vartkes Yeghiayan** (ed.), *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919-1922: The Armenian-Greek Section*, Center for Armenian Remembrance, Glendale, California, 2007:

472 BOA/DH.ՏՖՐ., nr. 96/303, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության տնօրինությունից 1919 թ. փետրվարի 25-ին Անկարայի վիլայեթ ուղարկված ծածկագիր հեռագիրը:

համաձայն՝ 1919 թ. սկսած 90.819 որբ երեխա է մուսուլմանների տներից հավաքվել կամ մահմեդականների կողմից հանձնվել: Նրանցից 12.480-ը հավաքվել են դաշնակից ուժերի կողմից չգրավված տարածքներից, իսկ գրավման տակ գտնվող շրջաններում գտնված երեխաների թիվը կազմում է 11.339 հոգի: Ինչ վերաբերում է մնացած 67.000 երեխաներին, ապա նրանք Կիպրոսում, Եգիպտոսում, Հայաստանում և Վրաստանում գտնված որբ մանուկներն են: Ըստ Քյուլմընի՝ այն ժամանակ դեռևս մուսուլմանների տներում ենթադրաբար թաքցված երեխաների թիվը 73.350 է: Ենթադրվում է, որ այդ մանուկներից 60.750-ը գտնվում են դաշնակից ուժերի գրավման տակ չգտնվող տարածքներում, իսկ 12.600-ը՝ գրավյալ շրջաններում<sup>473</sup>:

Ազգերի լիգայի ենթակայության տակ սովյալ հարցով զբաղվելու համար ստեղծված 5-րդ կոմիտեի՝ սեպտեմբերի 21-ի զեկույցի համաձայն՝ Ստամբուլում անգլիական գերագույն կոմիսարությունը կարողացել է 2.300-ի չափ երեխա հավաքել մուսուլմանների տներից: Հայոց պատրիարքարանը համոզված է, որ թուրքական որբանոցներում գտնվող երեխաների կեսը հայ է, և որ միայն Ստամբուլում և վերջինիս շրջակայքում 6 հազարից ավելի հայ երեխա է թաքցվում մահմեդականների տներում:

Խիստ դժվար է ենթադրաբար մուսուլմանների տներում թաքցված այդ մանուկներին և կանանց գտնել: Երեխաները մոռացել են իրենց անցյալը, քանի որ մահմեդականների տներ հանձնվելիս գտնվել են շատ փոքր տարիքում, իսկ մյուսների անձնագրերն ու անունները փոխվել են<sup>474</sup>:

Ի վերջո, չի կարելի ասել, թե տներից հայ երեխաներին հավաքելու համար արված նախաձեռնությունները մեծ հաջողությամբ են պսակվել: Ինչպես նշվում է Հայոց պատրիարքարա-

473 Տիկին Է. Դ. Քյուլմընի՝ 1921 թ. հուլիսի 16-ի նամակը զեկույցի 13-14-րդ էջերում:

474 Տես զեկույցի 2, 9, և 13 էջերը:

նի՝ 1921 թ. զեկույցում, «բազմաթիվ հայեր մահմեդականություն ընդունեցին՝ իթթիհադականների և դրանց նմանների կողմից կազմակերպված անսկարագրելի հանցագործություններից ու հետապնդումներից փրկվել կարողանալու համար... Ապրեցին՝ տարբեր շրջաններում թաքնվելով... Բազմաթիվ հայեր դեռ թաքնված են... և քանի որ վախենում են, թե իրենց դեռ կշարունակեն հետապնդել, չեն խիզախում դուրս գալ [իրենց թաքստոցներից]»<sup>475</sup>:

### Իթթիհադականները և ուժացումը. ընդհանուր որակում

Վերջին հարցը, որին հարկ է պատասխան տալ, հետևյալն է. ինչո՞ւ երիտթուրքերը, թեկուզ և սահմանափակ կերպով, այնուամենայնիվ թույլ տվեցին կրոնափոխությունը, և ավելի կարևորը՝ ինչո՞ւ նրանք, երեխաներին բռնի կերպով մուսուլման դարձնելով, իսկ աղջիկների հարկադրաբար ամուսնացնելով, վարեցին նրանց՝ մուսուլմանների տներում ցրելու քաղաքականություն: Այս հարցերի պատասխանը ենթադրում է նաև այն հարցի պատասխանը, թե իթթիհադականները հիմնականում ինչ դրդապատճառներով են Հայոց ցեղասպանությունն օրակարգ բերել:

Սույն հարցին գոնե սահմանափակ պատասխան տալ փորձելուց առաջ հարկ է պարզություն մտցնել մի կետի վերաբերյալ: Ինչպես այդ մասին բազմիցս շեշտել ենք, այստեղ խոսքը բռնի ուժացման մասին է, որի նպատակը խմբի ոչնչացումն է մշակութային առումով: Դա, ֆիզիկական բնաջնջման հետ մեկտեղ, որևէ ժողովրդի կենսապայմաններն ամբողջությամբ վերացնելու նպատակ հետապնդող համակարգված գործողությունների մի մասն է: Այդ իմաստով այն տարբերվում է բազմաթիվ ազգ-պետությունների կողմից օրակարգ բերված և Լեմկի-

475 NA/RG867/4016/398, Hikmet Özdemir, Kemal Çiçek, Ömer Çalik, Yusuf Halaçoğlu, Ermenileri Sürgün ve Göç, s. 126.

նի կողմից որպես *ապազգայնացում* բնորոշված՝ տիրապետող ազգի կողմից սեփական մշակութային արժեքների բռնի պարտադրման դեպքերից:

Այդ պատճառով հարկ է միմյանցից տարբերել, օրինակ, Թուրքիայի Հանրապետության ամբողջ ժամանակաշրջանում կատարված թուրքացման պրակտիկան և Ցեղասպանության ժամանակ իրականացված բռնի ուժացման պրակտիկան: Եթե անգամ գործնականորեն խոսում ենք նույն գործելաոճի, նույն միջոցների (լեզուն օգտագործելու արգելքը, թուրք-խլամական մշակույթի համաձայն դաստիարակությունը և այլն) մասին, բայց և այնպես այդ միջոցները Ցեղասպանության ժամանակ կիրառվել են որպես ժողովրդի բնաջնջման մի մաս: Օգտակար է նորից հիշել Լեմկինի այն ասածները, որ նա նշել է՝ լեհերի օրինակը տալով. լեհերի գերմանացման ժամանակ «լեհերը, որպես մարդ, պահպանվել են, և գերմանացիները նրանց պարտադրել են միայն սեփական ազգային առանձնահատկությունները»:

Երկրորդը՝ Ցեղասպանության ժամանակ գործադրված բռնի ուժացման քաղաքականությունը «նորմալ» *ապազգայնացման* պրակտիկայից առավել ընդգրկում է բնաջնջմանն ուղղված կիրառումները: Նման գործադրումներից են, օրինակ, հայկական եկեղեցիների և դպրոցների ավերումը, երիտասարդ աղջիկների և կանանց բռնի իսլամացումը կամ հարկադիր ամուսնությունները կամ որպես սեքսի օբյեկտ օգտագործվելը: Ակնհայտ է, որ այս օրինակները սովորական ուժացում չեն համարվի և կսահմանվեն որպես բնաջնջում: Օրինակ՝ բռնի մուսուլմանացված, իր կամքին հակառակ՝ մեկի հետ ամուսնացված կամ որպես սեքսի օբյեկտ օգտագործված որևէ կնոջ հանդեպ կատարվածը որոշ իմաստով նրա ոչնչացումն է: Լեմկինը մշակութային ցեղասպանության և ուժացման միջև տարբերությունը բացատրելիս ցանկում էր հենց այդ հանգամանքներն ընդգծել:

Առաջին պարզ պատասխանը, որ կարելի է տալ այն հարցին, թե ինչո՞ւ իթթիհադականները դիմեցին բռնի ուժացմանը, այն է,

որ երիտթուրքերը գործադրել են ցեղի վրա հիմնված քաղաքականություն: Համակարգված ուժացման քաղաքականության առկայությունը մեկ այլ տեսանկյունից է ապացուցում արդեն իսկ գիտնականների կողմից վաղուց ընդունված մի տեսակետ. այն է՝ հայերի բնաջնջումը չի եղել ցեղապաշտական գաղափարախոսության հետևանք:

Թեև, ինչպես դա տեսնում ենք նացիստների օրինակով, ցեղի տեսությունը հիմք ընդունելը ևս իր տրամաբանության մեջ դուրս չի մղում ուժացումը: Ինչպես դա երևում է սլավոնների դեմ գործադրված նացիստական քաղաքականության դեպքում, ուժացումը կարող է օրակարգ բերվել նաև որպես մի որոշակի ցեղային տեսության վրա հիմնված քաղաքականություն: Սակայն Հայոց ցեղասպանության դեպքում կարող ենք ասել, որ ցեղապաշտական գաղափարախոսությունը որոշիչ մոտիվ չի եղել:

Կարելի է արձանագրել, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարած գիտնականների շրջանում 1915 թ. վերաբերյալ քննարկումներում իթթիհադականության ու ցեղապաշտության փոխառնչությունը մեծ տարածայնությունների տեղիք չի տվել: Նույնիսկ այն հեղինակները, ովքեր կարծում են, թե Ցեղասպանության մասին որոշումն ընդունվել է պատերազմից շատ ավելի առաջ, և անգամ այն կարելի է կապել աբդուլհամիդյան ժամանակաշրջանի հետ, վերոնշյալ հարցի վերաբերյալ պարզ համոզմունք ունեն. «Վերջին վերլուծությունների համաձայն՝ հայերի ցեղասպանությունն իրավասությամբ օժտած և այն օրիկանացրած գաղափարախոսության մեջ ցեղապաշտությունը շատ քիչ տեղ էր գրավում»<sup>476</sup>:

Մեկ այլ էական հանգամանք, որ կարելի է հավելել երիտթուրքերի վերաբերյալ, այն փաստն է, որ տվյալ ժամանակա-

476 **Vahakn N. Dadrian**, "The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians", *Holocaust and Genocide Studies*, 1/2, 1986, էջ 184.

շրջանի քննարկումներում «ցեղ» հասկացությունը կենսաբանական ցեղ հասկացությունից շատ ավելի լայն կիրառում է ունեցել: Ցեղը շատ դեպքերում կիրառվել է «ցեղ» կամ «ազգ» իմաստով՝ որպես էթնիկ ծագումը բնորոշող մի հասկացություն և այդպես էլ սահմանվել է: Օրինակ՝ տվյալ ժամանակաշրջանի ամենակարևոր գաղափարական մամլո օրգանը համարվող «Թյուրք Յուրդու» պարբերականի գրեթե բոլոր հեղինակները ժողովուրդ, ազգություն և ցեղ հասկացություններն օգտագործել են՝ առանց դրանց միջև որևէ տարբերություն դնելու, երբեմն նույնիսկ մեկը մյուսի փոխարեն կիրառելով<sup>477</sup>: Անկասկած, իթթիհադականների շարքերում կային ցեղապաշտական կամ սոցիալ-դարվինիստական գաղափարների հակված անձինք: Նրանց ազգայնամոլությանը, որը կարող ենք բնութագրել որպես «մշակութային էսենցիալիզմ», հնարավոր է տալ նաև «մշակութային ցեղապաշտություն» բնորոշումը<sup>478</sup>: Սակայն մենք ցանկանում ենք պնդել, որ Հայոց ցեղասպանության մեջ ևս կարևոր դեր կատարած և նրանց մտավոր աշխարհը որոշած գլխավոր երակը մեկ այլ տեղից էր սնվում:

Իթթիհադականները մեծացել էին մի այնպիսի իսլամական մշակութային մթնոլորտում, որի արմատները հասնում էին դարերի խորքը, և որը քրիստոնյաներին ընդհանրապես համարում

477 Այն մասին, թե ինչպես է տվյալ ժամանակաշրջանի աղբյուրներում, հատկապես «Թյուրք Յուրդու» պարբերականում օգտագործվել ցեղ հասկացությունը, ավելի մանրամասն տե՛ս **Ümit Kurt**, "Türk'ün Büyük, Biçare Irkı" *Türk Yurdu'nda Milliyetçiliğin Esasları (1911-1916)* İletişim Yayınları, İstanbul, 2012: Այս թեմայի շուրջ ծավալված մի քանակե՛րի մասին տե՛ս Suavi Aydın, 'Nazan Maksudyan'ın kitabı 'Türklüğü Ölçmek' üzerine', *Tarih ve Toplum*, 2, Güz 2005, էջ 155-184; **Nazan Maksudyan**, "The Turkish Review of Anthropology and the Racist Face of Turkish Nationalism", *Cultural Dynamics*, 17, 2005, էջ 291-322:

478 **Ümit Kurt**, "Türk'ün Büyük, Biçare Irkı", 49: Օսմանյան մտավորականների վրա այնպիսի գաղափարների ազդեցության մասին, ինչպիսիք են՝ սոցիալ-դարվինիզմն ու ցեղապաշտությունը, տե՛ս **Atilla Doğan**, *Osmanlı Aydınları ve Sosyal Darwinizm*, İstanbul Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 2006:

էր երկրորդ դասի քաղաքացիներ և նրանց ենթարկում մշակութային, քաղաքական ու իրավական խտրականության: Այդ պատճառով իսլամական գաղափարի հիմնական վարդապետությունը հանդիսացող «տիրապետող միլլեթի» գաղափարից անցումը ավելի աշխարհիկ կերպով սահմանված՝ թուրք ազգի «տիրապետող միլլեթ» լինելու գաղափարին նրանց համար բարդ չի եղել: Արդեն իսկ այդ պատճառով է, որ նրանք իսլամ չղավանողների՝ ավելի ցածր կարգավիճակում լինելն ընդունող և ընդհանուր հավասարության սկզբունքն արհամարհող հաստատությունների տեր օսմանյան քաղաքական-մշակութային կառուցվածքը փոխելու ընդունակություն չկարողացան ցուցաբերել: Իսլամական աշխարհիկության խառնուրդը (թուրք-իսլամական սինթեզը) հանդիսացող գաղափարախոսությունը, որի ռահվիրան եղել է Ջիյա Գյոքալփը, միայն ամրապնդել է կարգավիճակի այն տարբերությունը, որ նրանց համոզմունքով առկա էր իրենց և քրիստոնյաների միջև: Այդ գաղափարախոսության հետևանքով էլ չափազանց դյուրին եղավ քրիստոնյաների «օտարացումը» և նրանց «թշնամի» հռչակելը:

Ցեղասպանության նման զանգվածային կոտորածը ենթադրում է այնպիսի վրեժխնդրության և ատելության զգացումների առկայություն, որոնք խնդիր չեն տեսնում տարբեր եղող մի խմբի բնաջնջման մեջ: Այդ դեպքում հետևյալ հարցն է ծագում. Միություն և առաջադիմություն կուսակցության շարժումը վրեժխնդրության և ատելության ինչ աղբյուրներից էր սնվում, որը նրանց մղել էր հայերի բնաջնջման որոշումը կայացնելուն: Որտեղի՞ց էին նրանք այդ սնունդը ստանում: Մեր կարծիքով՝ այս հարցում երկու կարևոր աղբյուր է եղել: Առաջինն այն մշակութային հետևաբեմն էր, որի արմատները ձգվում էին մինչև իսլամական գաղափարախոսություն և ծվարել օսմանյան հասարակության հյուսվածքներում: Ինչպես վերևում էլ նշեցինք, կայսրությունում տարբեր մահմեդական հասարակությունների գոյությունը և թրքության՝ որպես բացահայտ-որոշակի օբյեկ-

տիվ չափանիշների վրա հիմնված մի էթնիկ ինքնություն բնորոշելու հարցում ի հայտ եկած բարդությունները երիտթուրքերին մղել էին կանգնել մշակութային ազգայնամոլության հասկացությանը մոտ մի տեղում: Այդ մշակութային ազգայնամոլությունն ուներ նաև ամուր կրոնական տարրեր և մի տեսակ «ամուսնություն» էր կնքել նրանց հետ: Այդ պատճառով իթթիհադականներին ցեղասպանության մասին որոշում կայացնելուն մղած վրեժխնդրության և ատելության զգացումները և վերջիններիս հետևանքով նրանց կողմից զարգացրած «արհամարհանքի», «օտարացման և բնաջնջման» քաղաքականությունը, ի տարբերություն ցեղապաշտության, նաև անցումայնության հնարավորություն էր ստեղծում: Այսինքն՝ «օտարին» ապրելու իրավունք էր տրվում միայն «օտար» լինելուց հրաժարվելու դեպքում: Կրոնը կարևոր խորհրդանշան էր այդ անցումներում: Այդ ընկալումը ձևավորեց Ցեղասպանության ժամանակ կիրառված ուժացման քաղաքականության մտավոր հետևաբանը:

Հայերի դեմ սնուցված ատելության և վրեժխնդրության զգացումների երկրորդ կարևոր աղբյուրը քաղաքական էր: Այն ի հայտ էր եկել առավելապես որպես քաղաքական զարգացումների հետևանք: Դա բացատրել կարողանալու համար հարկ է ընդգծել Միություն և առաջադիմություն կուսակցության մեկ այլ առանձնահատկություն ևս: Երիտթուրքերը ոչ այնքան խիստ զտված և հստակեցված մի գաղափարախոսության կամ վարդապետության կույր հետևորդներն էին, որքան՝ 600 տարին լրացրած Օսմանյան պետության ավանդույթի վրա բարձրացած պրագմատիկներ: Իթթիհադականների համար ամեն բանի սկիզբն ու վերջը որոշվում էր այն խնդրով, թե «ինչպես էր պահպանվելու իրենց ձեռքում գտնվող պետությունը», և մնացած ամեն բան այդ մեծ սկզբունքին ենթակա փոփոխականն էր: Այդ պատճառով նրանք մի այնպիսի հարաբերությունների ոճ էին ստեղծել, որը հնարավորություն էր ընձեռում փարվել տվյալ ժամանակաշրջանի այնպիսի տարբեր գաղափարախոսություն-

ների, ինչպիսիք են օսմանիզմը, թյուրքիզմը, պանթյուրքիզմը, իսլամիզմը և արևմտականացումը: Այդ տարբեր ոճը ամեն տեսակի գաղափարախոսության միջև տարածություն պահելը և այդ գաղափարախոսություններին օգտապաշտության սկզբունքով մոտենալն էր: Երիտթուրքերը պրագմատիկներ էին, ովքեր առանձնապես խնդիր չէին տեսնում մի գաղափարախոսությունից մյուսին անցնելու մեջ՝ ըստ անհրաժեշտության<sup>479</sup>:

Նրանք իհարկե ազգայնամուլ էին, սակայն, ինչպես նշեցինք, նրանց ազգայնամոլությունը ոչ այնքան էթնիկական հիմք ունեցող այն ազգայնամոլությունն էր, որը ձևավորվել էր օբյեկտիվ չափանիշներով, այլ՝ մշակութային ազգայնամոլությունը, որն իր բոլոր կապերը կտրել էր կրոնի հետ<sup>480</sup>: Սակայն, դրա-

479 Միություն և առաջադիմություն կուսակցության՝ գաղափարախոսությունների հետ ունեցած առնչությունները բավականին քննարկված թեմա է: Դրա վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների և աղբյուրների մասին տե՛ս **Taner Akçam**, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, Metropolitan Books, New York, 2006, էջ 82-109: Սույն հարցի վերաբերյալ առավել մանրամասն ուսումնասիրություններ կատարած գիտնականներից մեկը Յակոբ Մ. Լանդաուն է: Տե՛ս **J. M. Landau**, *The Politics of Pan-Islamism, Ideology and Organization*, Oxford, 1990; **J. M. Landau**, *Pan-Turkism in Turkey, A Study of Irredentism*; Londra, 1981 և **J. M. Landau**, *Pan-Turkism, From Irredentism to Cooperation*, Indiana University Press, Bloomington ve Indianapolis, 1995:

480 Թուրքական ազգայնամոլության առաջացումը, անցած տարբեր փուլերը, իթթիհադական և քեմալիստական ազգայնամոլությունը, թուրքական ազգայնամոլության՝ ցեղապաշտության հետ ունեցած առնչությունը լայնորեն քննարկված թեմաներ են, որոնց վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, տե՛ս **Masami Arai**, *Jön Türk Dönemi Milliyetçiliği*, İletişim Yayınları, İstanbul, 1994; Masami Arai, "The Genç Kalemler and the Young Turks: A Study in Nationalism", *METU Studies in Developments*, 12, 3-4, 1985, s. 194-244; **Tanil Bora**, *Türk Milliyetçiliğinin Üç Hali*, Birikim, 2009, s. 13-52; **Tanil Bora**, "Nationalist Discourses in Turkey", **Ayşe Kadioğlu ve Fuat Keyman** (ed.), *Symbiotic Antagonisms: Competing Nationalisms in Turkey*, The University of Utah Press, Salt Lake City, 2010; **Ahmet Yildiz**, "Ne Mutlu Türküm Diyebilene" *Türk Ulusal Kimliğinin Etno-Seküler Sınırları (1919-1938)*, İletişim Yayınları, İstanbul, 2001, s. 47-87; **Fuat Dünder**, *Modern Türkiye'nin Şifresi, İttihat Ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918)*, İletişim, İstanbul, 2008, 41-85; **Ayhan Aktar**, *Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları*, İletişim, İstanbul,

նից առավել, նրանց ազգայնամոլության սահմանները միայն նրանց վարդապետական նախապատվությունները չեն որոշել, այլ, որ թերևս ավելի կարևոր է, «պետական շահերը»: Երիտթուրքերը մի տեսակ «պետական ազգայնամոլներ» էին: Պետականակենտրոն ազգայնամոլության և քաղաքական-գաղափարախոսական հոսանք հանդիսացող ազգայնամոլության միջև եղած զանազանությանը կարող ենք անդրադառնալ որպես մի կարևոր տարբերության, որն ի հայտ է եկել իթթիհադականների կողմից քաղաքական որոշումներ կայացնելու դեպքում<sup>481</sup>:

Կարծում ենք, որ այդ տարբեր ազգայնամոլության ոճերի առկայությունը մեզ կօգնի նաև այն հարցը մեկնաբանելու գործում, թե որ գլխավոր մոտիվներն են երիտթուրքերին մղել բնաջնջման մասին որոշում կայացնելուն: Անշուշտ, ցեղասպանության նման մեծ զանգվածային ոչնչացումը միայն մեկ տարրով կամ միայն մեկ որոշիչով բացատրելը ճիշտ չէ: Ավելի ճիշտ կլինի խոսել գաղափարական, սոցիալական, քաղաքական և տնտեսական տասնյակ գործոնների համակցման մասին: Չնայած այդ բոլոր նախասահմանումներին՝ դարձյալ ուզում ենք պնդել, որ իթթիհադականները բնաջնջման մասին որոշումը կայացրել են որպես պետականակենտրոն մի գաղափարախոսության հետևանք, որը կարող ենք անվանել նաև «պետության տևա-

2000, s. 71-101; **Ayhan Aktar**, *Türk Milliyetçiliği, Gayrimüslimler ve Ekonomik Dönüşüm*, İletişim, İstanbul, 2006; **Etienne Copeaux**, *Tarih Ders kitaplarında (1931-1993) Türk Tarih tezinden Türk-İslâm Sentezine*, Tarih VakfıYurt Yayınları, İstanbul, 1998; **Büşra Ersanlı Behar**, *İktidar ve Tarih: Türkiye’de “Resmi Tarih” Tezinin Oluşumu (1929-1937)*, Afâ Yayınları, İstanbul, 1992:

481 Ըստ էության՝ այդ տարբեր ազգայնամոլության ոճերը միշտ էլ եղել են թուրքական քաղաքական կյանքում, և դրանք բացատրվել են տարբեր հասկացություններով: Օրինակ՝ մի աշխատության մեջ հանրապետական շրջանում քեմալիզմի և վերջինիս ազգայնամոլության և գաղափարական առումով թյուրքիզմի գաղափարը պաշտպանող ազգայնամոլական հոսանքների միջև տարբերություն դնել կարողանալու համար օգտագործվում են «թուրքական ազգայնականություն» և «թյուրքիզմ» հասկացությունները: Տե՛ս **Günay Güksu Özdoğan**, *“Turan”dan “Bozkurt”a, Tek Parti Döneminde Türkçülük*, İletişim Yayınları, İstanbul, 2006:

կանության պահպանում»: Նրանք, իշխանության գալու պահից սկսած, համոզված էին, որ կանգնած են իրենց պետության վերացման վտանգին դեմ հանդիման, և որ իրենց առաջնային պարտականությունն է մի լուծում գտնել այդ սպառնալիքի դեմ: «Սպառնալիքը և անվտանգությունը» նման են նրանց՝ Ցեղասպանության մասին որոշում կայացնելուն մղած բանալի հասկացություններին:

Հենց դա էր երիտթուրքերի մեջ տիրապետող վրեժխնդրության և ատելության զգացումի երկրորդ կարևոր աղբյուրը: Հայերը, մի շարք կրոնական-գաղափարախոսական դուրսմղման մեխանիզմներից բացի, նաև սկսեցին ընկալվել պետության գոյության դեմ մի մեծ սպառնալիք: Դա միանգամից չձևավորվեց և իրականում սահմանափակված չէր միայն հայերով: Թերևս ավելի ճիշտ կլինի ասել, որ հայերն ընկալվեցին որպես այդ սպառնալիքի ամենավերջին ներկայացուցիչներ:

Այդ սպառնալիքի ընկալումը խորը արմատներ ուներ: Այստեղ ուզում ենք անդրադառնալ իթթիհադականների մտային աշխարհը որոշող, մի պարզ գաղափարախոսության նախապատվությունից ավելին եղող կուտակված տեղեկությանը: Այդ *կուտակված տեղեկությունն* ամբողջ 19-րդ դարը տևած և կոտորածներով շարունակված, ի վերջո տվյալ քրիստոնյա-ազգային խմբի՝ կայսրությունից անջատվելով ավարտված՝ անվերջանալի բարեփոխումների մասին բանակցությունների փորձերի վրա խարսխված *սպառնալիք-անվտանգություն* ընկալումն էր: Կարելի է խոսել մի ամբողջ հարյուրամյակ տևած համընդհանուր մոդելի առկայության մասին: Կայսրության քրիստոնյա հանրությունները (սերբեր, հույներ, ռումիններ և բուլղարներ) նախ՝ բարենորոգումներ էին պահանջել, այդ պահանջին կենտրոնական ռեժիմը պատասխանել էր խիստ ճնշումներով և կոտորածով, ջարդերը տեղիք էին տվել թե՛ արտաքին միջամտության և թե՛ ավելի մեծ բարեփոխումների պահանջի, և գործընթացն ավարտվել էր տվյալ քրիստոնյա խմբի անջատմամբ: Խոսքի



նից հայերի և հրեաների միջև, ըստ էության, տարբերություն չկա: Թե երիտթուրքերը, թե նացիստները գործում էին՝ իրենց համար իրական սպառնալիքի գոյությունից ելնելով: Իսկ այդ սպառնալիքի՝ ոչ թե պարանոյայի արդյունք լինելու, այլ՝ իսկապես գոյություն ունենալու մասին պնդումը որպես կոտորածների հիմնավորում օգտագործելը մի այնպիսի տեսակետ է, որը չարժե անգամ քննարկել:

Երիտթուրքերի վերաբերյալ կարող ենք հավելել, որ այդ կուտակված տեղեկության առկայությունը նրանց մղել է վարվել ոչ այնքան որպես գաղափարախոս, որքան՝ որպես «հասարակության ինժեներ»: Դա էր ընկած նրանց՝ բնակչության թվի հարցով այդքան զբաղվելու, Ցեղասպանությունը թվերի շուրջ կազմակերպելու հետևում: Այդ պատճառով երբ նրանք բնաջնջում էին հայերին մինչև այն աստիճանի, որ վերջիններս այլևս «խնդիր չլինեն», շատ մեծ կարևորություն չտվեցին հասարակության մեջ մնացածների՝ տարրալուծվելով գոյատևելուն: Հարցը ոչ թե ցեղապաշտական կամ նմանատիպ մեկ այլ գաղափարախոսության բոլոր պահանջները բավարարելն էր, այլ ավելի կարևոր էր խնդիր համարված խմբի (հայերի) վրա բացարձակ հսկողություն սահմանելը: Այդ պատճառով ուժացումը, ֆիզիկական բնաջնջման հետ մեկտեղ, օգտագործվեց որպես խմբի վրա բացարձակ հսկողություն ապահովող միջոց, և մեծ խնդիր չհամարվեց այն, որ մի որոշակի խումբ հայեր, մահմեդական դառնալով, թուրքացան, կամ հայ երեխաներն անհետացան մուսուլմանների տներում: Ընդհակառակը, նրանք համարեցին, որ նման քաղաքականությունը ձեռնտու եղավ շատ ավելի կարևոր այլ մտահոգություններ հաղթահարելու հարցում: Բռնի ուժացումը որոշ առավելություններ էր ընձեռում երիտթուրքերին:

Իթթիհադականների տեսանկյունից գլխավոր խնդիրը Անատոլիայում եղած քրիստոնյա մեծամասնությունն էր, և հարկ էր նրանց Անատոլիայից դատարկելով՝ ստեղծել իսլամա-թուրքա-

կան մեծամասնությամբ մի ժողովրդագրական կառուցվածք: Նրանք գիտեին, որ հայերով հոծ բնակեցված շրջանները նրանցից դատարկելով, բնակչությունը լրջորեն կնվազեր: Բացի այդ՝ տեղի մահմեդական բնակչության 20-45 տարեկան խմբին պատկանող տղամարդիկ էլ բանակ էին զորակոչվել, և անհայտ էր, թե երբ կվերադառնային: Այդ շրջանների մուսուլման բնակչության թիվը մեծացնելը խիստ կարևոր էր հատկապես շարունակվող պատերազմի և ռուսական սպառնալիքի համատեքստում: Հայերին արքորելու հարցում ամենաէական պատճառներից մեկը 1914 թ. փետրվարին կնքված Բարենորոգումների մասին պայմանագիրն էր, և եթե տվյալ շրջանների գրեթե ամբողջ բնակչությունը մահմեդական դառնար, ապա ինքնավար հայկական վիլայեթների ստեղծումը նախատեսող սույն պայմանագիրը դյուրին կերպով կկորցներ իր իմաստը: Կրոնափոխությունը և հայ երեխաների իսլամացումը կարող էին որոշ ժամանակի կտրվածքով էականորեն նպաստել շրջանի մուսուլման բնակչության ավելացմանը:

Մյուս կարևոր պատճառն այդ տարածքներում աշխատուժի խիստ պակասն էր: Արևելյան Անատոլիայի գյուղատնտեսական հասարակության մեջ էժան աշխատուժի մեծ կարիք էր զգացվում նաև նորմալ ժամանակներում: Այս տողերի հեղինակը քանի որ մեծացել է այդ մթնոլորտում, տեղյակ է, որ եղել են աշխատուժի պակասը լրացնելն ապահովող զանազան հաստատություններ, որոնց վերաբերյալ շատ տարբեր հասկացություններ են կիրառվել: Օրինակ՝ *Morbed*-ը, *Nöker*-ը, *Yanaşma*-ն երեք տարբեր հասկացություններ են, որոնք բնութագրում են աշխատուժի բացը լրացնելուն ուղղված երեք տարբեր հաստատություններ: *Morbed*-ը նշանակում է մի տեսակ սեզոնային բանվոր. այն ունի որոշակի վճարի դիմաց որոշակի ժամանակահատվածում մի ժամանակավոր գործ անելու իմաստ: *Nöker*-ն այն է, երբ հարաբերականորեն չքավոր մի երեխա մի տեսակ խորթ զավակի կարգավիճակով աշխատում է մի ունևոր ընտա-



նիքում: Ընդհանրապես որք ու անտեր երեխաները որպես *Nöker* են վերցվում: Շատ դեպքերում *Nöker*-ն այն մանուկն է, որին վերցրել են մի ծանոթ ընտանիքից: Ինչ վերաբերում է *Yanaşma*-յին, ապա վերջինս այդ ցանկում թերևս ամենաստորին տեղում է: Նրա կարգավիճակը նմանվում է ֆեոդալական հասարակության մեջ ճորտի ունեցած կարգավիճակին: Եթե *Nöker*-ը ինչ-որ դեպքում կարող է իրեն վարձած ընտանիքի հետ մտերիմ հարաբերություններ ստեղծել, ապա *Yanaşma*-յի դեպքում դրա մասին խոսք անգամ լինել չի կարող: Նրան խնամում են, բայց դրա դիմաց նա ստիպված է կատարել իրեն հանձնարարված ամեն տեսակի գործ: Սակայն, մյուս կողմից, *Nöker*-ը և *Yanaşma*-ն միևնույն ժամանակ սոցիալական համերաշխության հաստատություն են, քանզի այլ կերպ գոյատևելու հնարավորություն չունեցող մարդիկ դրա շնորհիվ են կարողացել ողջ մնալ: Հայ երեխաներն այն ընտանիքներում, որոնք նրանց վերցրել են, ապրել են *Nöker*-ի և *Yanaşma*-յի միջև տատանվող սոցիալական կարգավիճակներով՝ ըստ տվյալ ընտանիքի վերաբերմունքի:

Պատերազմն ավելի էր լրջացրել այդ աշխատուժի բացի խնդիրը: Բազմաթիվ վայրերում, դեռ արտերում բերքը չհասած, մարդիկ բանակ էին զորակոչվել, իսկ հայերն էլ հենց տարվա այդ եղանակին էին աքսորվել: Հայ երեխաներին մահմեդականների կողմից վերցնելու թույլտվությունը կարող էր լրացնել նաև պատերազմի պատճառով ավելի զգալի դարձած այդ աշխատուժի պակասը: Երբ նացիստները հավաքում էին որպես ցեղ իրենց կողմից զարգացած համարվող սլավոն երեխաներին, նրանց նպատակներից մեկն էլ բնութագրվում է որպես «պատերազմի պատճառած կորուստների հատուցում»<sup>484</sup>: Սխալ չի լինի իթթիհադականների՝ երեխաների նկատմամբ վարած քաղաքականությունը այդ տեսանկյունից որակել: Ամենայն հավանականությամբ նրանք ևս, թեկուզ և սահմանափակ կերպով, այնուամենայնիվ նպատակ կարող էին ունենալ այդ

մեթոդով լուծում գտնել պատերազմի հարուցած խնդիրներից մեկի համար:

Բացի այդ՝ կարելի է ենթադրել, որ այդ քաղաքականությունը կարող էր երիտթուրքերին մասամբ զանգվածային աջակցություն ապահոված լինել: Լուրջ հարց էր, թե հայերի դեմ գործադրված նրանց քաղաքականությունը որքանով աջակցություն կգտներ արդեն իսկ դժվարին պայմաններում ապրող գյուղացիների կողմից: Քանի որ մահմեդական հանրությունները հայերին կրոնական և մշակութային առումներով «օտար» էին համարում, որոշ նյութական խրախուսանքներով հնարավոր էր նրանց հեշտ կերպով տրամադրել հայերի դեմ: Իր մոտ երեխա վերցնող ընտանիքին շնորհված այնպիսի առավելություններ, ինչպիսիք են երեխայի ժառանգությանը տեր կանգնելը կամ սահմանափակ կերպով ամսավճար ստանալը, նման են նյութական խրախուսանքի մեխանիզմներին: Այդ տեսանկյունից իթթիհադականների կողմից տրված՝ հայ երեխաներին մուսուլմանների տներ վերցնելու թույլտվությունը կարելի է համարել մի տեսակ կաշառք՝ առաջարկված տեղի բնակչությանը: Դեպքերի զարգացումը ցույց է տալիս, որ երիտթուրքերը չեն սխալվել այդ հարցում:

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև իթթիհադականների կողմից հայ երեխաներին մուսուլմանների տներում ցրելու պատճառների վերաբերյալ երկու տարբեր մեկնաբանությունների, որոնք մի փոքր «հակառակ կողմից ցեղապաշտություն» են հիշեցնում: Օրինակ՝ Վ. Ն. Տատրյանը երիտթուրքերի վարած այդ քաղաքականությունը բացատրում է այն հանգամանքով, որ իթթիհադականները գիտեին հայկական գենի արժեքը. «Հակառակ նացիստների, օրինակ, օսմանցի թուրքերը բավականին գնահատում էին հայ երեխաների մեջ մարմնավորված գենային պահեստի արժեքը»<sup>485</sup>: Իսկ Մաթիաս Բյորլանդը, առանց սեփական կարծիքը հայտնելու, որպես մեկ ուրիշի

484 Isabel Heinemann, "The Kidnapping of 'Racially Valuable' Children..."; էջ 257.

485 V. N. Dadrian, "Children as victims of genocide..", էջ 423.

մեկնաբանություն՝ փոխանցում է այս ցեղապաշտական գաղափարը. «Ըստ որոշ ժամանակակից արևմտյան դիտորդների՝ Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից կրոնափոխության հանցագործությանը նախապատվություն տալու պատճառն այն էր, որ նրանք համոզված էին՝ եթե հայերի որոշ ցեղական առանձնահատկությունների՝ իրական հայկականության հետ կապերը խզվեն, ապա վերջիններս արժեքավոր կդառնան»<sup>486</sup>: Բյուրլանդը չի նշում, թե ովքեր են այդ դիտարկումն արած անձինք, բայց կարիք էլ չկա ասելու, որ հակառակ կողմից ցեղապաշտություն հիշեցնող նման մեկնաբանությունների ոճն անընդունելի է<sup>487</sup>:

Եթե ամփոփելու լինենք, ապա մեր կարծիքով՝ երիտթուրքերի՝ հայ երեխաներին հավաքելու և իսլամա-թուրքական մշակույթի համաձայն դաստիարակելու քաղաքականության ենթակառուցվածքը կազմում էին նրանց՝ նաև իսլամական գաղափարից սնունդ ստացող մշակութային ազգայնամոլությամբ սնված «օտարացման» մտայնության՝ տարբեր կրոնների միջև անցումները թույլ տվող շերտը և նրանց մեջ տիրապետող պետական պրագմատիզմը:

Մեկ այլ էական մեկնաբանություն, որ կարելի է դրան հավելել, այդ գործողության՝ ազգայնամոլության համատեքստում կրած խորհրդանշական հատկանիշն է: Ինչպես վերևում էլ կրկնեցինք, օսմանյան տարածքներում 19-րդ դարում զարգացած ազգայնամոլությունը ոչ միայն կրոնը չի արհամարհել,

486 Matthias Bjornlund, "A fate worse than dying", էջ 38.

487 Թե երիտթուրք առաջնորդներն իրենք իրենց շրջանակներում ինչպես էին մեկնաբանում հայ երեխաների հանդեպ գործադրված քաղաքականությունը, իհարկե առանձին ուսումնասիրության թեմա է: Իր հուշերում Ջեմալ փաշայի հետ ունեցած իր մի հանդիպման մասին պատմող Հալիդե Էդիբը հաղորդում է մեզ համար թերևս կարևոր եղող մի տեղեկություն: Ջեմալ փաշան ասում է, թե «մի քանի հարյուր հայ տղա և աղջիկ երեխաներին մուսուլման դարձնելու գործը չի անում նրա համար, որ օգուտ բերի թուրքական ցեղին»: Տե՛ս Halide Edip, *Memoirs of Halide Edib*, Gorgias Press LLC, London և New York, 2004, էջ 429:

այլ հակառակը՝ մի տեսակ «ամուսնություն է կնքել» նրա հետ: Կրոնն այդ հարյուրամյակում կատարել է թե մահմեդական և թե քրիստոնյա ժողովուրդների ազգայնամոլության ցեմենտի գործառույթ: Կրոնի և ազգայնամոլության միջև կնքված այդ ամուսնությունը շատ ավելի նոր բովանդակություն է հաղորդել կրոնափոխությանը, և Դերինգիլի խոսքով՝ հավատափոխությունը սկսել է համարվել «ազգի արյան կորուստ»<sup>488</sup>:

Կրոնափոխության թույլ տալը նշանակում է թուլացնել ուրիշ ազգի. այդ պատճառով ամեն հաջողված կրոնափոխություն նման է մեկ այլ ազգի նկատմամբ տարած խորհրդանշական հաղթանակի, մի տեսակ նրա ինքնիշխանությունից տարածք խլելուն: Եւ քանի որ ուրիշ ազգից ինչ-որ բան է պոկվել, ապա կրոնափոխությունը նույնիսկ կարող է համարժեք ընկալվել նրա պատվի հետ խաղալուն: Միայն թե կրոնափոխվածները կարողանան լիովին տարրալուծվել նոր խմբի մեջ: Եթե երիտթուրքերի՝ կրոնափոխության թույլտվությանն անդրադառնանք հայ կանանց և աղջիկների հանդեպ տարածված պատվազրկության համատեքստում, ապա կարող ենք արձանագրել, որ այդ գործողությունները «թշնամի ազգին» պատկանած ինչ-որ բաների զավթումն են, տվյալ ժողովրդի դեմ տարած հաղթանակ, որ նման է տարածք գրավելուն<sup>489</sup>: Կարելի է ասել, որ այդ քաղաքականությունը իթթիհադականներին խորհրդանշական առումով հաղթանակի զգացում է պարգևել:

Անկախ նրանից, թե ինչ հիմնավորումներով է դա արվել, հաստատ է, որ երիտթուրքերը վարել են կրոնափոխության, հայ երեխաներին բռնի կերպով հավաքելու և իսլամա-թուրքական ավանդույթներով դաստիարակելու, ինչպես նաև՝ հայ աղջիկներին հարկադրաբար մուսուլմանների հետ ամուսնացնելու

488 S. Deringil, *Conversion and Apostasy in the Late Ottoman Empire*, էջ 2-3.

489 Դերինգիլի՝ Իրվին Ջեմիլ Չիքի, Չորան Միլուսիտովիչի և Դեյվիդ Նիրենբերգի պես գիտնականների վրա հիմնվելով՝ արած այդ և նման տեսական մեկնաբանության փորձերի մասին տե՛ս նույն տեղում, էջ 38:



Փաստաթղթերը կեղծ են .....	75
Թորոսյանի վերաբերյալ քննարկումների առաջին շրջանի ավարտը .....	78
Նոր մաղթանք՝ նոր շրջանի վերաբերյալ .....	82
<b>ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ՏԱՐՐԸ՝ ԲՈՆԻ ՈՒԾԱՑՈՒՄ</b>	
Ներածություն .....	85
Ինչո՞ւ է անտեսվել բռնի ուժացման հարցը .....	86
Լեմկինի՝ ցեղասպանության սահմանումը և 1948 թ. կոնվենցիան .....	87
Հոլոքոստի ուսումնասիրությունների բացասական կողմի հետևանքը .....	94
Բռնի ուժացման և ցեղասպանության՝ Լեմկինի սահմանումը .....	97
Երկու կարևոր գործոն Հայոց ցեղասպանության առանցքում .....	107
Կրոնափոխությունը 19-րդ դարում .....	111
որոշ ընդհանուր դիտարկումներ .....	111
Հայերի բռնի իսլամացումը .....	116
Ցեղասպանությունը և բռնի ուժացման քաղաքականությունը .....	129
Կրոնափոխությունը Ցեղասպանության սկզբում .....	132
Աքսորի սկզբնական ժամանակաշրջանը:	
Կրոնափոխները մնում են .....	135
1915 թ. հուլիսի 1. Աքսորեք, եթե անգամ կրոնափոխվել են .....	142
Կրոնափոխությունը դարձյալ թույլ է տրվում. 1915 թ. նոյեմբերի 4 ...	149
Մահմեդական դարձած հայերին արգելվում է ճանապարհորդել .....	156
Ինչպե՞ս է տարբերակվելու մահմեդական դարձած հայը .....	164
Աքսորյալների հասած վայրերը. սահմանափակ վերաբնակեցման քաղաքականություն .....	168
Վերաբնակեցման մասին առաջին որոշումները .....	173
Վերաբնակեցման վերաբերյալ որոշ դիտարկումներ .....	179
Սահմանափակ վերաբնակեցման քաղաքականությունը	
չի կարող չընդգրկել մահվան դեպքերը .....	184
Միջանկյալ ամփոփում .....	189
Ուժացման քաղաքականության հիմքերը .....	191

Նոյեմբերի 4-ը և դրանից հետո տեղի ունեցած դեպքերը կրոնափոխության ժամանակ .....	200
Վերջին քայլը կրոնափոխության ուղղությամբ. կան իսլամ, կան աքսոր .....	202
Ջեմալ փաշայի՝ 1916 թ. օգոստոսի 1-ի հեռագիրը .....	209
Կրոնափոխության քաղաքականությունը որոշող գործոնները .....	214
Երեխաների հավաքումը և ուժացումը .....	223
Սեռական շահագործումն ըստ օսմանյան փաստաթղթերի .....	229
Կանանց ու երեխաների վաճառքը .....	233
Երեխաների ուժացումն ըստ օսմանյան փաստաթղթերի .....	236
Վերաբերմունքի փոփոխություն միսիոներական դպրոցների հարցում .....	254
Թվերի մասին .....	259
Հրաժարում իթթիհադական քաղաքականությունից .....	263
Իթթիհադականները և ուժացումը. ընդհանուր որակում .....	273

